ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՄԱՅԻՍ 2014

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Կանչվել են նոր Յոթանասունականներ և Կիրակնօրյա Դպրոցի նոր Գերագույն Նախագահություն

Մի Հովիվ, Հովարդ Լայըն

Այստեղ Հիսուս Քրիստոսն այցելում է Նեփիացիներին Ամերիկաներում, որով իրականանում է մարգարեությունը, որը Նա տվել էր նրանց, ովքեր Երուսաղեմում էին. «Եւ ուրիշ ոչխարներ էլ ունիմ, որ այս գաւիթիցը չեն, եւ նորանց էլ պէտք է բերեմ. Եւ իմ ձայնին կլսեն, եւ մի հօտ եւ մի հովիւ կլինին» (Հովհաննես 10.16; տես նաև 3 Նեփի 15.21):

© HOWARD LYON, ՉՐԱՏԱՐԱԿՎԱԾ

Բովանդակություն մայիս 2014

Հատոր 15 • Համար 2

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

4 Բարի գալուստ համաժողով
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

6 Աշակերտ լինելու գինը և օրհնությունները
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

9 Աշակերտության հաճելի բեռը
Երեց Ռոնալդ Ա. Ռասբանդ

12 Քրիստոս Քավիչը
Երեց Կառլոս Հ. Ամադո

15 Պաշտպանություն պոռնոգրաֆիայից՝ Քրիստոսակենտրոն տուն
Լինդա Ս. Ռիվս

18 Հոգևոր պտտահողմեր
Երեց Նիլ Լ. Անդերսեն

22 Հույսի անգին ժառանգությունը
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

26 Եկեղեցու պաշտոնյաների հաստատում
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

28 Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2013
Քեվին Ռ. Յերգենսեն

28 Վիճակագրական հաշվետվություն, 2013
Բրուք Պ. Հեյլս

29 Ցույց տվեք ձեր հավատքը
Երեց Ռասսել Մ. Նելսոն

32 «Ես ձեզ օրինակ տուի»
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

35 «Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք»
Երեց Ռոբերտ Դ. Հեյլս

39 Եկեք չբռնենք սխալ ճանապարհը
Երեց Կլաուդիո Դ. Զիվիկ

41 Դուք ի՞նչ եք կարծում:
Երեց Վ. Քրեյգ Զվիք

44 Արմատներ ու ճյուղեր
Երեց Քվենթին Լ. Քուք

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

49 Քահանայության բանալիները և իշխանությունը
Երեց Դալլին Հ. Օուքս

53 Ինչպիսի՞ մարդ եք դուք:
Երեց Դոնալդ Լ. Հոլստրոմ

56 Ընտրություն ունեցող սերունդ
Ռենդալ Լ. Դիդ

58 Դուք քնա՞ծ եք Վերականգնման ընթացքում
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

62 Քահանայություն կրող տղամարդը
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

66 Զորացիր և քաջ եղիր
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

70 Երախտապարտ լինել ցանկացած պայմաններում
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

78 Հետևեք ընթացքին
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

81 «Մի վախենար, որովհետեւ ես քեզ հետ եմ»
Ջին Ա. Սթիվենս

84 Ձեր չորս որպեն
Եպիսկոպոս Գարի Է. Սթիվենսոն

87 Իրենց բեռները հեշտությամբ տանեին
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

91 Սեր՝ Ավետարանի էությունը
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

94 Վկայություն
Նախագահ Բոդ Ք. Փաքեր

97 Ապրիր հավատքին հավատարիմ
Երեց Վիլիամ Ռ. Վոքեր

100 Հնազանդություն՝ մեր հավատարմությամբ
Երեց Լ. Թոմ Փերի

103 Մարգարե Ջոզեֆ Սմիթը
Երեց Լորենս Ի. Քորբրիջ

106 Որտեղ ձեր գանձն է
Երեց Մայքլ Ջոն Ու. Թեհ

108 Եթե իմաստության պակաս ունեք
Երեց Մարկոս Ա. Այդուկայտիս

111 Հիսուս Քրիստոսի Հարությունը
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

115 Մինչև նոր հանդիպում
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԱՆԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

116 Պատվիրանները պահելը պաշտպանում է մեզ, պատրաստում է մեզ և հզորացնում է մեզ
Ռոզմարի Մ. Վիքսում

119 Քույրություն՝ Օհ, որքան մենք միմյանց կարիքն ունենք
Բոնիի Լ. Օսկարսոն

122 Պահանջվում են ձեռքեր և սրտեր աշխատանքն արագացնելու համար
Լինդա Ք. Բըրթն

125 Դուստրեր ուխտի մեջ
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

72 Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները և Բարձրագույն Պաշտոնյաները

129 Համաժողովի պատմությունների ցուցիչ

130 Նրանք խոսեցին մեզ հետ. համաժողովը մեր կյանքի մասը դարձնելը

132 Եկեղեցու նորությունները

184-րդ կիսամյա գերագույն համաժողովի ամփոփում

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏ, 5 ԱՊՐԻԼԻ, 2014, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացման աղոթք. Երեց Քարլ Բ. Քուք: Փակման աղոթք. Երեց Վ. Քրիսթոֆեր Վադել: Երաժշտությունը՝ Մորմոնական Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայըն Մըրֆի, երգեհոնահարներ՝ Քլեյ Քրիսչենսեն և Ռիչարդ Էլիոթ. "How Firm a Foundation," *Hymns*, no. 85; "Press Forward, Saints," *Hymns*, no. 81, arr. Wilberg, unpublished; "Lead, Kindly Light," *Hymns*, no. 97, arr. Wilberg, unpublished; "Choose the Right," *Hymns*, no. 239; "A New Commandment I Give unto You," Gates, pub. by Jackman; "Come, O Thou King of Kings," *Hymns*, no. 59, arr. Murphy, unpublished:

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿ, 5 ԱՊՐԻԼԻ, 2014, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացման աղոթք. Երեց Յան Ս. Արդերն: Փակման աղոթք. Լինդա Ք. Բըրթն: Երաժշտությունը՝ Օրեմ Յուտա Ինստիտուտի միացյալ երգչախումբ, խմբավար՝ Ռաբն Էգեթ, երգեհոնահարներ՝ Բոնի Գուդլիֆ և Լինդա Մարջեթս. "Glory to God on High," *Hymns*, no. 67, arr. Manookin, pub. by Jackman; "I Lived in Heaven," *Children's Songbook*, 4, arr. Beebe, pub. by Larice Music; "We Thank Thee, O God, for a Prophet," *Hymns*, no. 19; "High on the Mountain Top," *Hymns*, no. 5, arr. Duffin, pub. by Duffin:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈ, 5 ԱՊՐԻԼԻ, 2014, ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացման աղոթք. Երեց Լեգրան Ռ. Քըրթիս Կրտսեր: Փակման աղոթք. Ռասսել Թ. Օսգութորփ: Երաժշտությունը՝ Այդահոյի Բրիգամ Յանգ Համալսարանի քահանայության երգչախումբ, խմբավարներ՝ Ռանդալ Քեմփթոն և Քեվին Բրաուեր, երգեհոնահար՝ Էնդրյու Անսվորթ. "Saints, Behold How Great Jehovah," *Hymns*, no. 28, arr. Kempton, unpublished; "Secret Prayer," *Hymns*, no. 144, arr. Kasen, pub. by Jackman; "Rejoice, the Lord Is King," *Hymns*, no. 66; "Abide with Me!" *Hymns*, no. 166, arr. Kempton, unpublished:

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏ, 6 ԱՊՐԻԼԻ, 2014, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ: Բացման աղոթք. Երեց Լ. Վիթնի Քլեյթոն: Փակման աղոթք. Նեյլ Ֆ. Մերիոթ: Երաժշտությունը՝ Մորմոնական Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝ Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Անսվորթ. "Come, We That Love the Lord," *Hymns*, no. 119; "On This Day of Joy and Gladness," *Hymns*, no. 64; "Let Us All Press On," *Hymns*, no. 243, arr. Elliott, unpublished; "Teach Me to Walk in the Light," *Hymns*, no. 304; "A Child's Prayer," *Children's Songbook*, 12, arr. Perry, pub. by Jackman; "Guide Us, O Thou Great Jehovah," *Hymns*, no. 83, arr. Wilberg, unpublished:

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿ, 6 ԱՊՐԻԼԻ, 2014, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացման աղոթք. Եպիսկոպոս Դին Մ. Դեվիես: Փակման աղոթք. Երեց Բենջամին Դե Հոյոս: Երաժշտությունը՝ Մորմոնական Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայըն Մըրֆի, երգեհոնահարներ՝ Լինդա Մարջեթս և Բոնի Գուդլիֆ. "Sweet Is the Work," *Hymns*, no. 147, arr. Murphy, unpublished; "I Stand All Amazed," *Hymns*, no. 193, arr. Murphy, unpublished; "Hark, All Ye Nations!" *Hymns*, no. 264; "Come, Let Us Anew," *Hymns*, no. 217, arr. Wilberg, unpublished:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԱՆ, 29 ՄԱՐՏԻ, 2014, ԿԱՆԱՆՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ

Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Բոնի Լ. Օսկարսոն: Բացման աղոթք. Էմրի Էլիզաբեթ Սմիթ: Փակման աղոթք. Օֆա Կաուֆուսի: Երաժշտությունը՝ Երեխաների Միության, Երիտասարդ Կանանց և Սփոփող Միության միացյալ երգչախումբ Վասաչ Ֆրոնտ տարածքի ցցերից, խմբավար՝ Էմիլի Վեղլի, երգեհոնահար՝ Բոնի Գուդլիֆ. "Hark, All Ye Nations!" *Hymns*, no. 264; "Daughters in His Kingdom," Creamer, unpublished, accompanied by organ, flute, violin, and cello; "I Am a Child of God," *Hymns*, no. 301, arr. DeFord, unpublished; medley, arr. Mohlman, unpublished: "Lord, I Would Follow Thee," *Hymns*, no. 220, and "Love One Another," *Hymns*, no. 308; "Let Us All Press On," *Hymns*, no. 243, arr. Huff, unpublished:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Գերագույն համաժողովի ելույթները համացանցում տարբեր լեզուներով գտնելու համար այցելեք conference.lds.org և ընտրեք լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library բջջային հավելվածներում:

Սովորաբար, գերագույն համաժողովին հաջորդող վեց շաբաթների ընթացքում ձայնագրությունները մատչելի են բաշխման կենտրոններում:

ՏՆԱՅԻՆ ԵՎ ԱՅՑԵԼՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐ

Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար խնդրում ենք ընտրեք այն ելույթը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում այցելում եք:

ԿԱՋՄԻ ՎՐԱ

Առջևում. Լուսանկարը՝ Քրիստինա Սմիթի: Ետևում. Լուսանկարը՝ Լեսլի Նիլսոնի:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

Գերագույն համաժողովը լուսանկարել են. Սոլթ Լեյք Սիթիում՝ Վելդեն Ս. Անդերսենը, Քոդի Բելը, Ռենդի Քոլյերը,Վեսթոն Քոլթոնը, Սքոթ Դեյվիսը, Քրեյգ Դայմոնդը, Նաթանիել Ռեյ Էդվարդսը, Լոյդ Էլդրիջը, Էշլի Լարսենը, Զոն Լյուքը, Լեսլի Նիլսոնը, Քրիստինա Սմիթը և Բրաուն Վորները; Գիլբերտում, Արիզոնա, ԱՄՆ՝ Զեմի Դեյլ Զոնսոնը; Հայլենդ Ռենչում, Կոլորադո, ԱՄՆ՝ Ռեբեկա Մորգենեգը; Մեխիկո Սիթիում, Մեքսիկա՝ Իսրայել Գուտյերեզը; Նորքրոսում, Ջորջիա, ԱՄՆ՝ Դեյվիդ Վինթերսը; Պալմիրայում, Նյու Յորք, ԱՄՆ՝ Բրենթ Վորլթոնը; Փլեզանթ Գրովում, Յուտա, ԱՄՆ՝ Ջերեմի Հոլը; Ռեյմոնդում, Ալբերտա, Կանադա՝ Ռոնդա Սթիդը; Սանկտ Պետերբուրգում, Ռուսաստան՝ Վլադիմիր Եգորովը; Սան Պաուլոյում, Բրազիլիա՝ Լաուրենի Ֆոչետոն; Միդնեյում, Ավստրալիա՝ Ֆրանկ Հելմրիչը; և Վաշինգտոնում, Յուտա, ԱՄՆ՝ Զեյմս Իլիֆ Զեֆրին:

ԱՊՐԻԼ 2014 ՀԱՏՈՐ 15 ՀԱՄԱՐ 2
ԼԻԱՀՈՆԱ 10985 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Քրեյգ Ա. Քարդոն

Խորհրդատուներ. Խոսե Լ. Ալոնսո, Մերվին Բ. Առնոլդ, Շեյն Մ. Բոուեն, Սթենլի Գ. Էլլիս, Քրիստոֆել Գոլդեն

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Տ. Ուորներ

Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Վիսսենթ Ա. Վոգն

Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ

Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն

Գլխավոր խմբագիր օգնական. Ռայան Քար

Գրողներ և խմբագրողներ. Սյուզան Բարթ, Բրիթանի Բիթի, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Մինդի Ռեյ Ֆրիդմեն, Լորի Ֆուլեր, Գարեթ Հ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Ջենիֆեր Գրեյս Ջոնս, Մայքլ Ռ. Մորիս, Սալլի Ջոնսոն Օդրիք, Ջոշուա Ջ. Փերքի, Ջեն Փիլբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Փոլ Վանդենբերգ, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն

Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն

Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մենդի Մ. Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Նեյթ Ջինս, Քոլլին Հինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Մարք Վ. Ռոբինսոն, Բրեդ Թիրը, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն

Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս

Հրատարակում. Քեվին Ս. Բենքս, Քոնոնի Բոթորտի Բրիջ, Ջուլի Բըրդեթ, Բրայըն Վ. Գիջի, Դենիզ Քըրբի, Գինոնի Ջ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Ռաֆերթի

Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ

Բաշխման տնօրեն. Սթեֆեն Ռ. Քրիսչենսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.orgstore.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոերեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2014 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և տեսողական նյութերը կարո՛ն են բազմացվել եկեղեցում կամ տանը առանձին, ոչ-առևտրային օգտագործման նպատակով: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սեփականության հատուկ նշում է արված: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: May 2014 Vol. 15 No. 2. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 707.4.12.5). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

ԽՈՍՆԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ամադո, Կառլոս Հ., 12
Այդակայտիս, Մարկոս Ա., 108
Այրինգ, Հենրի Բ., 22, 62, 125
Անդերսեն, Նիլ Լ., 18
Բալլարդ, Մ. Ռասսել, 78
Բեդնար, Դեյվիդ Ա., 87
Բըրթըն, Լինդա Ք., 122
Զիվիք, Կլաուդիո Դ., 39
Թեհ, Մայքլ Ջոզ Ու., 106
Հեյլս, Ռոբերտ Դ., 35
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 6
Հոլսթրոմ, Դոնալդ Լ., 53
Մոնսոն, Թոմաս Ս., 4, 66, 91, 115
Նելսոն, Ռասսել Մ., 29
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 26, 58, 70
Ռասբանդ, Ռոնալդ Ա., 9
Ռիդ, Ռանդալ Լ:, 56
Ռիվս, Լինդա Ս., 15
Սթիվենս, Ջին Ա., 81
Սթիվենսոն, Գարի Ի., 84
Սքոթ, Ռիչարդ Գ., 32
Վիքսոմ, Ռոզմարի Մ., 116
Վոքեր, Վիլիամ Ռ., 97
Ցվիք, Վ. Քրեյգ, 41
Փաքեր, Բոյդ Ք., 94
Փերի, Լ. Թոմ, 100
Քորբրիջ, Լորենս Ի., 103
Քուք, Քվենթին Լ., 44
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 111
Օուքս, Դալլին Հ., 49
Օսկարսոն, Բոնոնի Լ., 119

ԹԵՄԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ազնվություն, 62
Ազնվություն, 29, 66
Աղոթք, 15, 56, 62, 81
Ամուսնություն, 18, 41, 49
Անդամ միսիոներներ, 78
Աշակերտություն, 6, 9, 18, 122
Ապաշխարություն, 39, 84
Առաջնահերթություններ, 58, 106
Արարողություններ, 94
Արդարակեցություն, 6
Արդարություն, 111
Արժանավորություն, 53
Բարություն, 91
Գերագույն համաժողով, 4, 115
Գթություն, 91
Եկեղեցու անունը, 78
Եսասիրություն, 58
Երախտագիտություն, 70
Զոհաբերություն, 97
Ընտանեկան պատմություն, 44
Ընտանիք, 44, 49
Ընտրություն, 35, 56, 100
Իմաստություն, 103, 108
Ինքնակարգապահություն, 84
Իշխանություն, 49
Խոնարհություն, 106
Ծառայություն, 9, 32, 53, 58, 62, 119, 122
Ծնողներ, 94
Կանայք, 49, 119
Կարեկցանք, 91
Հալածանք, 6
Հակում, 15, 58
Հաղորդակցում, 41
Հայտնություն, 103, 108
Հայր Աստված, 81, 94
Հավատք, 29, 90, 81, 97, 100, 108
Հավերժական կյանք, 22
Հարություն, 12, 111
Հիսուս Քրիստոս, 6, 9, 12, 18, 22, 29, 32, 35, 39, 58, 70, 87, 94, 103, 111
Հնազանդություն, 6, 18, 35, 84, 100
Հույս, 22
Զախորդություն, 9, 18, 70, 81, 87, 106
Ճշմարտություն, 29, 94, 103, 108
Մահ, 12, 111
Մարգարեներ, 97, 103, 108
Միսիոներական աշխատանք, 32, 78
Մորմոնի Գիրք, 18
Ներում, 91
Ուխտեր, 22, 84, 87, 116, 122, 125
Չարիք, 29
Պիոներներ, 70, 97
Պոռնոգրաֆիա, 15, 53, 58
Ջոզեֆ Սմիթ, 22, 39, 66, 103
Սեր, 6, 32, 41, 58, 91, 115, 119
Սուրբ Հոգի, 22, 94, 100
Սուրբ գրություններ, 29, 56
Վերականգնում, 58
Վկայություն, 94
Տաճարներ, 4, 44, 97, 116
Տեխնոլոգիա, 44, 56, 108
Քահանայություն, 49, 53, 62
Քաջություն, 6, 18, 66
Քավություն, 12, 15, 18, 87, 111
Քույրություն, 119, 125
Օրինակ, 32, 62

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Բարի գալուստ համաժողով

Մենք . . . միասնական ենք մեր հավատքի և ցանկության մեջ՝ լսելու և սովորելու այն ուղերձներից, որոնք մեզ կներկայացվեն:

Ամ սիրելի եղբայրներ և քույրեր, որքան հաճելի է ինձ ողջունել ձեզ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու այս համաշխարհային համաժողովին: Մենք հավաքվել ենք որպես մի մեծ ընտանիք, ավելի քան 15 միլիոն մարդ՝ ամուր, միասնական մեր հավատքի և ցանկության մեջ՝ լսելու և սովորելու այն ուղերձներից, որոնք մեզ կներկայացվեն:

Վերջին վեց ամիսները արագ անցան, մինչ Եկեղեցու աշխատանքն անխոչընդոտ առաջ էր շարժվում: Միայն մեկ ամիս առաջ ես պատիվ ունեցա նվիրագործելու Գիլբերտ Արիզոնա Տաճարը՝ հրաշագեղ մի կառույց: Նվիրագործման նախօրեին մշակութային միջոցառում կազմակերպվեց մոտակա Դիսքավերի Այգում: Տասներկու հազար երիտասարդներ ներկայացրեցին 90 ռոպեանոց մի ծրագիր: Պարերը, երգերը և երաժշտական կատարումները հիանալի էին:

Այս տարածքը հատկապես խիստ երաշտ ապրեց, և ես համոզված եմ, որ շատ աղոթքներ ուղարկվեցին երկինք նախորդ մի քանի շաբաթների ընթացքում՝ անչափ անհրաժեշտ անձրևի համար: Դժբախտաբար այն տեղաց հենց ներկայացումից առաջ և տևեց ներկայացման ամբողջ ընթացքում: Թեև երիտասարդները մինչև ոսկորները թրջված էին և սառած հով եղանակի հետևանքով, բոլորս զգում էինք Տիրոջ Հոգին: «Ապրիր հավատքին հավատարիմ» ծրագրի թեման (մտածեք այս մասին՝ «Ապրիր հավատքին հավատարիմ») հրաշալիորեն ներկայացվեց ժպտացող և խանդավառ երիտասարդ տղամարդկանց և կանանց կողմից: Չնայած ցրտին և անձրևին, դա հավատքով լցված և ոգեշնչող փորձառություն դարձավ, որն այդ երիտասարդները միշտ կփայփայեն և կպատմեն իրենց զավակներին և թոռներին հետագա տարիներին:

Հաջորդ օրը տեղի ունեցավ Գիլբերտ Արիզոնա Տաճարի նվիրագործումը: Այն դարձավ Եկեղեցու 142-րդ գործող տաճարը: Ի տարբերություն նախորդ երեկոյին, օրը սքանչելի էր և պայծառ: Նիստերը իսկապես ոգեշնչող էին: Ինձ հետ ներկա էին Նախագահ Հենրի Բ. Այրինգը, Երեց և Քույր Թեդ Ռ. Քալիսթերները, Երեց և Քույր Վիլիամ Ռ. Վոքերները և Երեց և Քույր Քենթ Ֆ. Ռիչարդսները:

Մայիսին կնվիրագործվի Ֆորտ Լոդերդեյլ Ֆլորիդա Տաճարը: Մինչև տարվա վերջ ծրագրված է ավարտել և նվիրագործել այլ տաճարներ: 2015թ. մենք ակնկալում

ենք ավարտել և նվիրագործել նոր տաճարներ աշխարհի տարբեր մասերում: Այս գործընթացը շարունակվելու է: Երբ արդեն հայտարարված բոլոր տաճարները պատրաստ լինեն, մենք կունենանք ամբողջ աշխարհով մեկ 170 գործող տաճար:

Թեև ներկայումս մենք կենտրոնացնում ենք մեր ջանքերը նախկինում հայտարարված տաճարները ավարտելու վրա և չենք հայտարարի նոր տաճարների կառուցման մասին մոտ ապագայում, մենք կշարունակենք գալիք տաճարների կարիքները որոշելու և դրանց համար վայրեր գտնելու գործընթացը: Դրանց մասին հայտարարություններ կարվեն ապագա գերագույն համաժողովներին: Մենք տաճար կառուցող և տաճար հաճախող ժողովուրդ ենք:

Այժմ, եղբայրներ և քույրեր, մենք անհամբերությամբ սպասում ենք ուղերձներին, որոնք կներկայացվեն մեզ այսօր և վաղը: Նրանք, ովքեր կդիմեն մեզ, փնտրել են երկնքի օգնությունը և առաջնորդությունը՝ իրենց ուղերձները պատրաստելիս:

Թող որ մենք, բոլորս՝ այստեղ և ամենուրեք, լցվենք Տիրոջ Հոգով, վեհանանք և ոգեշնչվենք, լսելով և սովորելով: Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի անունով, ամեն: ■

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Աշակերտ լինելու գինը և օրինությունները

Եղեք ուժեղ: Հավատարմորեն ապրեք ավետարանով, եթե նույնիսկ ուրիշները ձեր շրջապատում դրանով ընդհանրապես չեն ապրում:

Ախագահ Մոնսոն մենք սիրում ենք ձեզ: Դուք տվել եք ձեր սիրտը և ձեր առողջությունը ամեն մի կոչումի, որ Տերը երբևէ տվել է ձեզ, հատկապես այն սրբազան պաշտոնը, որը դուք այժմ զբաղեցնում եք: Ողջ այս Եկեղեցին շնորհակալ է ձեզ՝ ձեր անսասան ծառայության և ձեր պարտավորության հանդեպ ձեր նվիրվածության օրինակի համար:

Հիացմունքով և խրախուսանքով յուրաքանչյուրի հանդեպ, ով կարիք կունենա անսասան մնալու այս վերջին օրերին, ես ասում եմ բոլորին և հատկապես Եկեղեցու երիտասարդությանը, որ եթե դուք դեռ չեք կանչվել, դուք մի օր կանչված կգտնեք ձեզ՝ պաշտպանելու ձեր հավատքը կամ հավանաբար նույնիսկ դիմանալու անձնական անարգանքի, պարզապես այն բանի համար, որ դուք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եք: Այդպիսի պահերը կպահանջեն ձեր կողմից ինչպես քաջություն այնպես էլ բարեկրթություն:

Օրինակ մի քույր միսիոներ վերջերս գրել էր. «Ընկերակիցս և ես տեսանք մի մարդու քաղաքի հրապարակում նստարանին նստած ուտում էր իր նախաճաշը: Երբ մենք մոտեցանք նա վեր նայեց և տեսավ մեր միսիոներական կրծքանշանները: Աչքերում սոսկալի հայացքով, նա վեր ցատկեց և բարձրացրեց ձեռքը՝ ինձ հարվածելու համար: Ես ճիշտ պահին խուսափեցի, նա հասցրեց միայն իր ուտելիքը թքել ամբողջապես ինձ վրա և սկսեց հայհոյել մեզ ամենասոսկալի բառերով: Մենք հեռացանք առանց որևէ բան ասելու: Ես փորձում էի սրբել ուտելիքը երեսիցս, երբ զգացի կարտոֆիլի պյուրեն հարվածեց գլխիս ետևի մասից: Երբեմն դժվար է լինել միսիոներ, որովհետև հենց այդ պահին ես ցանկացա ետ գնալ, բռնել այդ փոքրահասակ մարդուն և ասել «ՆԵՐԻՐ ԻՆՁ», բայց ես չարեցի»:

Այս նվիրված միսիոներին ես ասում եմ, սիրելի զավակ, դու քո իսկ խոնարհ ձևով մտել ես նշանավոր կանանց և տղամարդկանց մի շրջանակի մեջ, ինչպես Մորմոնի Գրքի մարգարե Հակոբն է ասել, ովքեր. «ըմբռնեցին [Քրիստոսի] մահը, և կրեցին նրա խաչը, և տարան աշխարհի ծաղրը»:[1]

Իրականում Իր՝ Հիսուսի մասին, Հակոբի եղբայր Նեփին գրել է. «Եվ աշխարհը, իր անօրինությունների պատճառով, կդատի նրան՝ որպես ոչ պիտանի մի բանի. ուստի, նրանք կխարազանեն նրան, և նա կտանի դա: Այո, նրանք կթքեն նրա վրա, և նա դա կտանի՝ մարդկանց զավակների հանդեպ իր ողորմության և երկայնամտության շնորհիվ»:[2]

Բացի Փրկչի սեփական փորձառությունից, եղել է մերժման երկարատև մի պատմություն և ցավալի բարձր գին, որը վճարվել է մարգարեների, առաքյալների, միսիոներների և անդամների կողմից յուրաքանչյուր սերնդում, բոլոր նրանք, ովքեր փորձել են հարգել Աստծո կանչը՝ բարձրացնելու մարդկության ընտանիքը դեպի «էլ ավելի գերազանց ճանապարհ»:[3]

«Էլ ի՞նչ ասեմ [նրանց մասին]» ասում է Եբրայեցիս գրքի գրողը.

«[Նրանք] . . . ովքեր առյուծների բերաններ խցկեցին,

Կրակի զորութիւն անցրին, սրի բերանից պրծան. . . . պատերազմի մէջ զորաւոր եղան բանակներն փախցրին, . . .

[Տեսան] իրենց մեռելները հարություն առած . . . ի կյանք [մինչդեռ] ուրիշներն էլ խիստ չարչարուեցան . . .

Միւսներն էլ . . . նախատինքների և ծեծերի, կապանքների և բանտի . . . փորձը առան.

Քարկոծուեցան, . . . սողոցուեցան, փորձանքի մէջ ընկան, սրով սպանուած մեռան . . . ոչխարի մորթերով եւ այծի կաշիներով ման եկան. կարօտութիւն քաշելով, նեղուած, [և] չարչարուած,

([Նրանք] որ աշխարհքը նորանց արժանի չէր. . . . անապատներում մոլորուեցան եւ սարերում եւ այրերում եւ երկրի խոռոչներում»:[4]

Անկասկած երկնքի հրեշտակները արտասվեցին, երբ նրանք արձանագրեցին աշակերտության այս գինը աշխարհում, որը հաճախ թշնամական էր Աստծո պատվիրաններին: Փրկիչն Ինքը թափեց Իր իսկ արցունքները նրանց վրա, ովքեր հարյուրավոր տարիներ մերժված էին և սպանված Նրա ծառայության մեջ: Եվ այժմ Նա էր մերժվում և մոտ էր սպանվելու:

«Երուսաղէմ, Երուսաղէմ,- աղաղակեց Հիսուսը,- մարգարէները կոտորող, եւ քեզ մոտ ուղարկուածները քարկոծող. Քանի անգամ կամեցայ քո երեխաները ժողովել, ինչպէս հաւը ժողովում է իր ձագերը թեւերի տակը. Եւ դուք չկամեցաք:

Ահա ձեր տունն աւերուած կթողուի ձեզ»:[5]

Եվ այնտեղ դրված է մի ուղերձ յուրաքանչյուր երիտասարդ տղամարդու և յուրաքանչյուր երիտասարդ կնոջ համար այս Եկեղեցում: Դուք զարմանք կապրեք, թե արդյոք արժէ քաջարի բարոյական դիրքորոշում ընդունել ավագ դպրոցում, թե գնալ միսիայի միայն ձեր ամենափայփայած հավատամքները հայհոյված տեսնելու կամ պայքարելու հասարակության մեջ շատ բաների դեմ, որ երբեմն ծաղրում է կրոնին նվիրաբերված կյանքը: Այո, հանուն դրա արժէ, որովհետև դրա հակադիրն այն է, որ մեր «տները» մեզ «աւերուած» կթողվեն՝ ավերված անձնավորություններ, ավերված ընտանիքներ, ավերված հարևանություն և ավերված ազգեր:

Այսպիսով մենք ունենք նրանց բեռը, ովքեր կանչվել են կրելու մեսիայական ուղերձը: Բացի ուսուցանելուց, խրախուսելուց և մարդկանց ուրախացնելուց (որը աշակերտության հաճելի մասն է), ժամանակ առ ժամանակ այս նույն սուրհանդակներին բաժին է ընկնում անհանգստանալ, նախազգուշացնել, և երբեմն ուղղակի արտասվել (դա ցավոտ կողմն է աշակերտության): Նրանք լիովին լավ գիտեն, որ դեպի «կաթ և մեղր բխող»[6] խոստացված երկիրն առաջնորդող ուղին անպայման անցնում է Սինայ սարի ճանապարհով՝ բխելով «դու պետք է» և «դու չպետք է»-ով:[7]

Դժբախտաբար աստվածայնորեն լիազորված պատվիրանների սուրհանդակները, այսօր հաճախ այլևս ավելի ժողովրդականություն չեն վայելում, քան նրանք հին դարերում էին, ինչպես առնվազն երկու թքված, կարտոֆիլի պյուրեով շաղ տրված քույր միսիոներները կարող են հաստատել այժմ: *Ատելը* տգեղ բառ է, սակայն կան այնպիսիք այսօր, ովքեր կասեին

այլասերված Աքաաբի հետ. «Ես ատում եմ [Միքիային], որովհետեւ ինձ համար մարգարէութիւն չէ անում դէպի բարին, այլ ամեն ժամանակ [մարգարեանում է] դէպի չարը»:[8] Մարգարեի ազնվության պատճառով այդպիսի ատելությունը արժեցավ Աբինադիի կյանքը: Երբ նա ասաց Թագավոր Նոյին. «Քանի որ ես ասացի ձեզ ճշմարտությունը, դուք բարկացած եք ինձ վրա: . . . Քանի որ ես խոսեցի Աստծո խոսքը, դուք դատապարտեցիք ինձ, որ ես խելագար եմ»,[9] կամ մենք կարող ենք ավելացնել՝ գավառական եմ, նահապետական եմ, մոլեռանդ եմ, դաժան, սահմանափակ, ոչ ժամանակակից և հասակավոր:

Դա այնպես է, ինչպես Տերն Ինքը գանգատվեց մարգարե Եսայիային.

«[Այս] որդիքը . . . չեն ուզում լսել Տիրոջ օրէնքը.

[Նրանք] ասում են տեսանողներին. Մի տեսնեք և մարգարէներին թէ մեզ համար ուղիղ բաներ մի մարգարէանաք. Մեզ կակուղ բաներ ասեցէք, խաբէութիւններ մարգարէացէք.

Հեռացէք ճանապարհիցը, ծռեցէք ուղիիցը, վերցրէք մեր առաջից Իսրայէլի Սուրբին»:[10]

Դժբախտաբար, իմ երիտասարդ ընկերներ մեր դարի համար, հատկանշական է, որ եթե մարդիկ կամենում են որևէ աստվածներ ընդհանրապես, նրանք ուզում են, որ նրանք լինեն աստվածներ, ովքեր շատ չեն պահանջում. «հարմարավետ աստվածներ», ովքեր ոչ միայն չեն ցնցում նավակը, այլ նույնիսկ չեն էլ թիավարում այն, աստվածներ, ովքեր շոյում են մեր գլուխը, մեզ ծիծաղեցնում են, ապա մեզ ասում վազել և նարգիզներ քաղել:[11]

Դա իսկապես խոսում է մարդու մասին, որը Աստված է ստեղծում իր իսկ պատկերով: Երբեմն և սա բոլորից մեծագույն ծաղրն է, այս մարդիկ կանչում են Հիսուսի անունը որպես մեկը, ով այսպիսի «հարմարավետ» Աստված էր: Իսկապե՞ս: Նա, ով ասել է ոչ միայն մենք չպետք է խախտենք պատվիրանները, այլ նույնիսկ չպետք է *մտածենք* դրանք խախտելու մասին: Եվ եթե մենք մտածում ենք դրանք խախտելու մասին, մենք արդեն խախտել ենք դրանք մեր սրտում: Մի՞թե դա «հարմարավետ վարդապետություն է հնչում, հեշտ ականջի համար և ժողովրդականություն

վայելող գյուղական հաճելի զրույցներում:

Իսկ ինչ կասեք նրանց մասին, ովքեր ուզում են ուղղակի նայել մեղքի վրա կամ ձեռք տալ դրան հեռավորությունից: Հիսուսը կտրուկ ասաց, եթե ձեր աչքը գայթակղում է ձեզ, հանեք այն: Եթե ձեր ձեռքը գայթակղում է ձեզ, կտրեք այն:[12] «Չեկայ խաղաղութիւն գցելու, այլ սուր»:[13] Նա զգուշացրեց նրանց, ովքեր մտածում էին, որ Նա խոսում էր միայն հանգստացնող անիմաստ արտահայտություններ: Զարմանալի չէ, որ քարոզ քարոզի ետևից, տեղական համայնքները «սկսեցին աղաչել նորան, որ իրանց սահմաններիցը դուրս գնայ»:[14] Զարմանալի չէ, հրաշք հրաշքի ետևից Նրա զորությունը վերագրվում էր ոչ թե Աստծուն, այլ դևին:[15] Ակնհայտ է, որ ծանոթ լոզունգի հարցը «Ի՞նչ կաներ Հիսուսը» միշտ չէ, որ կբերի հանրամատչելի պատասխան:

Իր մահկանացու ծառայության գագաթնակետին Հիսուսն ասաց. «Իրար սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի»:[16] Որոշակի դարձնելու, որ նրանք հասկանային ճշգրիտ, թե ինչպիսի սեր էր դա, Նա ասաց. «Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք»[17] «ով որ . . . այս ամենափոքր պատուիրանքներից մէկը քանդէ, *և մարդկանց այնպէս սովորեցնէ,* նա . . . փոքրագույն կկոչուի երկնքի արքայութիւնումը»:[18] Քրիստոսանման սերը մեծագույն կարիքն է, որ մենք ունենք այս երկրագնդի վրա, մասնավորապես այն պատճառով, որ ակնկալվում է, որ արդարակեցությունը պետք է միշտ ուղեկցի դրան: Այսպիսով, եթե սերը լինի մեր նշանաբանը, ինչպես այն *պետք է* լինի, ապա Նրա խոսքով, ով մարմնավորված սեր է, մենք պետք է թողնենք օրինազանցությունը և ուրիշների մեջ դրա քաջալերանքի որևէ ակնարկ: Հիսուսը հստակորեն հասկանում էր, որը շատերը մեր ժամանակակից մշակույթում թվում է թե մոռանում են, որ էական տարբերություն կա մեղքը ներելու պատվիրանի (որը Նա անսահման կարողություն ուներ անելու) և այն հանդուրժելու դեմ նախազգուշացման միջև (որը նա երբևէ, նույնիսկ, մեկ իսկ անգամ չարեց):

Ընկերներ, հատկապես իմ երիտասարդ ընկերներ, սրտապնդվեք: Մաքուր Քրիստոսանման սերը, որը հորդում է ճշմարիտ արդարակեցությունից կարող է փոխել աշխարհը: Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ և կենդանի Եկեղեցին երկրի վրա է և դուք Նրա ճշմարիտ և կենդանի Եկեղեցու անդամներն եք, փորձելով կիսվել դրանով: Ես բերում եմ վկայություն այդ ավետարանի մասին և այդ Եկեղեցու, վերականգված քահանայության բանալիների մասին հատուկ վկայությամբ, որոնք բացում են փրկարար արարողությունների զորությունն ու արդյունավետությունը: Ես ավելի եմ համոզված, որ այդ բանալիները վերականգված են և այդ արարողությունները մեկ անգամ ևս մատչելի են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միջոցով, քան համոզված,

որ կանգնած եմ ձեր առջև այս ամբիոնում և դուք նստած եք իմ առջև այս համաժողովում:

Եղեք ուժեղ: Հավատարմությամբ ապրեք ավետարանով, եթե նույնիսկ ուրիշները ձեր շրջապատում ընդհանրապես չեն ապրում դրանով: Պաշտպանեք ձեր համոզմունքները բարեկրթորեն և կարեկցանքով, բայց պաշտպանեք դրանք: Ոգեշնչված ձայների մի երկար պատմություն, ներառյալ նրանք, որոնք կլսեք այս համաժողովում և Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի ձայնը, որ դուք լսեցիք հենց նոր, մատնանշում են ձեզ դեպի Քրիստոնեական աշակերտության արահետը: Դա նեղ արահետ է և անձուկ արահետ, առանց մեծ չափի հանդուրժողության ինչ որ տեղ, բայց դրանով կարելի է հրճվանքով և հաջողությամբ ճանապարհորդել «Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ . . . հույսի կատարյալ պայծառությամբ և սիրով Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ»:[19] Այդպիսի ուղղությանը քաջաբար հետամուտ լինելով դուք կկոփեք անսասան հավատք, դուք կգտնեք ապահովություն փորձությունների քամիների դեմ, որոնք փչում են, նույնիսկ, նետերի դեմ պտտահողմում, և դուք կզգաք ապառաժանման ուժը մեր Քավչի, ում վրա, եթե դուք կառուցեք ձեր անխոնջ աշակերտությունը, դուք *չեք կարող ընկնել:*[20] Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հակոբ 1.8:
2. 1 Նեփի 19.9:
3. Ա Կորնթացիս ԺԲ.31, Եթեր 12.11:
4. Եբրայեցիս ԺԱ.32–38:
5. Մատթեոս ԻԳ.37–38:
6. Ելից Գ.8:
7. Տես Ելից Ի.3–17:
8. Բ Մնացորդաց ԺԸ.7:
9. Մոսիա 134:
10. Եսայիա Լ.9–11:
11. Տես Henry Fairlie, *The Seven Deadly Sins Today* (1978), 15–16:
12. Տես Մատթեոս Ե.29–30:
13. Մատթեոս Ժ.34:
14. Մարկոս Ե.17:
15. Տես Մատթեոս Թ.34:
16. Հովհաննես ԺԵ.12:
17. Հովհաննես ԺԴ.15:
18. Մատթեոս Ե.19, շեշտադրումն ավելացված է:
19. 2 Նեփի 31.20:
20. Տես Հելաման 5.12:

Երեց Ռոնալդ Ա. Ռասբանդ
Յոթանասունի Նախագահությունից

Աշակերտության հաճելի բեռը

Մեր ղեկավարներին հաստատելը արտոնություն է, որը գալիս է անձնական պարտավորության հետ միասին՝ կիսելու նրանց բեռը և լինելու Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտները:

Անցած տարի մայիսի 20-ի վիթխարի պտտահողմը հարվածեց Օկլահոմա Սիթիի արվարձաններին Ամերիկայի սրտում, ավերելով մեկ մղոնից ավելի (1.6 կմ) լայնություն և 17 մղոն (27 կմ) երկարություն ունեցող տարածք: Այս փոթորիկը՝ ավերիչ պտտահողմերի հորձանքը, իր ճանապարհին փոխեց երկրի պատկերը և մարդկանց կյանքը:

Վիթխարի փոթորկի հարվածից ընդամենը մեկ շաբաթ անց ինձ հանձնարարեցին այցելել այն տարածքը, որտեղ տներն իրենց ողջ ունեցվածքով ցիրուցան էին եղել գետնին հավասարված, ավերված շրջակայքերով մեկ:

Նախքան մեկնելը ես խոսեցի մեր սիրելի մարգարե՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետ, ով հաճույքով է կատարում նման հանձնարարություններ Տիրոջ համար: Հարգանքով, որն իմ մեջ առաջացել է ոչ միայն նրա պաշտոնից, այլ նաև նրա բարությունից ելնելով, ես հարցրեցի. «Ի՞նչ եք ուզում, որ ես անեմ: Ի՞նչ եք ուզում, որ ես ասեմ»:

Նա քնքշորեն բռնեց իմ ձեռքը, ինչպես նա կաներ տուժածներից և ավերվածությունների ժամանակ օգնության հասածներից յուրաքանչյուրի հետ, եթե նա այնտեղ լիներ, և ասաց.

«Առաջինը, ասեք, որ ես սիրում եմ նրանց:

Երկրորդը, ասեք, որ ես աղոթում եմ նրանց համար:

Երրորդը, խնդրում եմ, շնորհակալություն հայտնեք բոլոր նրանց, ովքեր օգնում են»:

Որպես Յոթանասունի Նախագահության անդամ ես կարողացա իմ ուսերի վրա զգալ Մովսեսին ասված Տիրոջ խոսքերի զորությունը.

«Ինձ համար Իսրայէլի ծերերից եօթանասուն հոգի ժողովիր, որոնք որ դու գիտես թէ ժողովրդի ծերերն ու գլխաւորներն են. . . .

Եվ ես այնտեղ կիջնեմ եւ կխօսեմ քեզ հետ. եւ քեզ վերայ եղած հոգուցը կառնեմ եւ նորանց վերայ կդնեմ եւ ժողովրդի բեռը վեր կառնեն քեզ հետ, եւ դու մենակ չես վեր առնիլ»:[1]

Սրանք հնում ասված խոսքեր են, սակայն Տիրոջ ուղիները չեն փոխվել:

Ներկայումս Եկեղեցում Տերը կանչել է 317 Յոթանասունականների, ովքեր ծառայում են 8 քվորումներում, որպեսզի աջակցեն Տասներկու Առաքյալներին կրելու այն բեռը, որ դրված է Առաջին Նախագահության վրա: Ես ուրախությամբ զգում եմ այդ պարտականությունը իմ հոգու խորքում, ինչպես զգում են իմ ընկերակից Եղբայրները: Այնուամենայնիվ, միայն մենք չէ, որ աջակցում ենք այս փառահեղ գործին: Որպես Եկեղեցու անդամներ մենք բոլորս էլ հիանալի հնարավորություն ունենք օրհնելու ուրիշների կյանքն ամենուր:

Ես սովորեցի մեր թանկագին մարգարեից, թե ինչ է պետք փոթորկից տուժածներից՝ սեր, աղոթքներ և երախտագիտություն օգնող ձեռքերի համար:

Այսօր մեզանից յուրաքանչյուրը կբարձրացնի իր աջ ձեռքը և կհաստատի Առաջին Նախագահությանը և Տասներկու Առաքյալների Քվորումին որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ: Սա սոսկ ընդունված կարգ չէ, ոչ էլ այն առանձնացված է նրանց համար, ովքեր կանչված են բարձրագույն ծառայության: Մեր ղեկավարներին հաստատելը արտոնություն է, այն գալիս է անձնական պարտավորության հետ միասին՝ կիսելու նրանց բեռը և լինելու Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտները:

Նախագահ Մոնսոնն ասել է.

«Մեր շրջապատում կան կարիքի մեջ գտնվող մարդիկ, ովքեր մեր ուշադրության, մեր քաջալերման, մեր աջակցության, մեր սփոփման և մեր բարյացակամության կարիքն ունեն՝ լինեն ընտանիքի անդամներ, ընկերներ, ծանոթներ, թե անծանոթներ: Մենք այստեղ՝ երկրի վրա Տիրոջ ձեռքերն ենք՝ Իր զավակներին ծառայելու և բարձրացնելու պարտավորությամբ: Նա կախված է մեզանից յուրաքանչյուրից, . . .

«. . . որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք» [Մատթեոս ԻԵ.40]»»:[2]

Մենք սիրով կարձագանքե՞նք, երբ մեր առջև հնարավորություն կլինի այցելություն կատարել կամ զանգահարել, գրել երկտող կամ մեկ օր տրամադրել մեկ ուրիշի կարիքները հոգալու համար: Թե՞ մենք կլինենք երիտասարդի նման, ով խուսափեց հետևել Աստծո բոլոր պատվիրաններին.

«Այդ ամենն իմ երեխայութիւնիցը պահեցի. Էլ ի՞նչ բանով եմ պակաս:

Յիսուսը նորան ասեց. Եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա ունեցածներդ ծախիր եւ տուր աղքատներին, եւ գանձ կունենաս երկնքումը, եւ եկ հետեւիր ինձ»:[3]

Երիտասարդը Տիրոջ կողմից կանչվում էր ավելի մեծ ծառայության, անելու Աստծո արքայության աշխատանքը երկրի վրա, սակայն նա հեռացավ, «որովհետեւ շատ ստացուածք ունէր»:[4]

Ի՞նչ կասենք մեր աշխարհիկ հարստությունների մասին: Մենք կարող ենք տեսնել, թե ինչ կարող է անել պտտահողմը դրանց հետ ընդամենը րոպեների ընթացքում: Շատ կարևոր է մեզանից յուրաքանչյուրի համար, որ փորձենք մեր գանձերը դիզել երկնքում՝ օգտագործելով մեր ժամանակը, տաղանդները և ազատ ընտրությունը՝ Աստծուն ծառայելով:

Հիսուս Քրիստոսը շարունակում է կանչել՝ «Եկ հետեւիր ինձ»:[5] Նա Իր հետևորդների հետ քայլում էր Իր հայրենիքում անձնուրաց կերպով: Նա շարունակում է քայլել մեզ հետ, կանգնել մեր կողքին և առաջնորդել

մեզ: Նրա կատարյալ օրինակին հետևելը նշանակում է ճանաչել և պատվել Փրկչին, ով տարել է մեր բոլոր բեռները Իր սուրբ և փրկարար Քավության միջոցով, որը ծառայության գերագույն դրսևորումն էր: Նա մեզանից յուրաքանչյուրից խնդրում է, որ կարողանանք և հոժար լինենք վերցնելու աշակերտության հաճելի «բեռը»:

Մինչ Օկլահոմայում էի, ես հնարավորություն ունեցա հանդիպել մի քանի ընտանիքների հետ, ովքեր տուժել էին հզոր պտտահողմից: Երբ ես այցելեցի Սորրելս ընտանիքին, ինձ հատկապես հուզեց նրանց դստեր՝ Թորիի փորձառությունը, ով այդ ժամանակ հինգերորդ դասարանի աշակերտուհի էր Պլազա Թովերս Տարրական Դպրոցում: Նա և նրա մայրը այստեղ մեզ հետ են այսօր:

Թորին և նրա մի քանի ընկերները պատսպարվելու համար խմբվել էին զուգարանում, երբ պտտահողմն անցավ դպրոցի միջով: Լսեք, մինչ ես կկարդամ Թորիի խոսքերը այդ օրվա իրադարձությունների մասին.

«Ես լսեցի, որ ինչ-որ բան հարվածեց տանիքին: Կարծեցի, որ պարզապես կարկուտ էր տեղում: Ձայնը գնալով ավելի ու ավելի էր բարձրանում: Ես աղոթեցի, որ Երկնային Հայրը պաշտպաներ մեզ բոլորիս և ապահովության մեջ պահեր: Հանկարծ մենք լսեցինք փոշեկուլի բարձր ձայն և տանիքն անհայտացավ հենց մեր գլխավերևից: Մեծ քամի և շինարարական աղբ էր պտտվում մեր շուրջբոլորը և հարվածում մարմնիս բոլոր մասերին: Դրսում շատ մութ էր և թվում էր, թե երկինքը սև էր, սակայն դա այդպես չէր. դա պտտահողմն էր: Ես պարզապես փակեցի իմ աչքերը, հուսալով և աղոթելով, որ այն շուտով ավարտվեր:

Հանկարծ ամեն ինչ լռեց:

Երբ բացեցի աչքերս, անմիջապես իմ առջև տեսա կանգառի նշանը: Այն գրեթե դիպչում էր իմ քթին»:[6]

Թորին, նրա մայրը, նրա քույրերից ու եղբայրներից երեքը և ընկերներից շատերը, ովքեր նույնպես դպրոցում էին նրա հետ, հրաշքով փրկվեցին այդ պտտահողմից. նրանց դասընկերներից յոթը՝ ոչ:

Այդ շաբաթվա վերջում քահանայության եղբայրները շատ օրհնություններ տվեցին այն անդամներին, ովքեր տուժել էին փոթորկից: Ես հնարավորություն ունեցա օրհնություն տալու Թորիին: Երբ ես ձեռքերս դրեցի նրա գլխին, սուրբ գրություններից մի սիրած հատված եկավ միտքս. «Ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»:[7]

Ես Թորիին խորհուրդ տվեցի հիշել այն օրը, երբ Տիրոջ ծառան դրեց իր ձեռքերը նրա գլխին և ասաց, որ նա փոթորկի ժամանակ պաշտպանվել էր հրեշտակների կողմից:

Ցանկացած իրավիճակում իրար օգնության հասնելը սիրո հավերժական չափանիշ է: Սա է ծառայությունը, որին ես ականատես եղա Օկլահոմայում այդ շաբաթ:

Հաճախ մեզ հնարավորություն է տրվում օգնել ուրիշներին իրենց կարիքի պահին: Որպես Եկեղեցու անդամներ մեզանից յուրաքանչյուրն ունի սրբազան

պարտավորություն՝ «կրելու մեկը մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն»,[8] «սգալու նրանց հետ, ովքեր սգում են»[9] և «բարձրացնելու ընկած ձեռքերը և ամրացնելու տկար ծնկները»:[10]

Եղբայրներ և քույրեր, որքան շնորհակալ է Տերը ձեզանից յուրաքանչյուրին ծառայության համար անհարմար ժամերին և գործերի համար, լինեն դրանք մեծ, թե՝ փոքր, որ դուք շատ առատաձեռնորեն և գթասրտորեն տալիս եք ամեն օր:

Բենիամին թագավորը Մորմոնի Գրքում սովորեցրել է. «Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք»:[11]

Մեր եղբայրներին և քույրերին ծառայելու վրա կենտրոնանալը օգնում է մեզ աստվածային որոշումներ կայացնել մեր ամենօրյա կյանքում և նախապատրաստում է մեզ գնահատել և սիրել այն, ինչ Տերն է սիրում: Սա անելով, մենք վկայում ենք մեր իսկ կյանքով, որ մենք Նրա աշակերտներն ենք: Երբ մենք ներգրավվում ենք Նրա աշխատանքում, մենք զգում ենք Նրա Հոգին մեզ հետ: Մեր վկայությունը, հավատքը, վստահությունը և սերն աճում են:

Ես գիտեմ, որ իմ Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, ապրում է, և որ Նա խոսում է Իր մարգարեի՝ մեր սիրելի Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հետ և նրա միջոցով մեր օրերում:

Թող որ մենք բոլորս էլ ուրախություն գտնենք, որը գալիս է իրար բեռները՝ նույնիսկ, հասարակ և փոքր բեռները կրելու սրբազան ծառայությունից, իմ աղոթքն է Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թվոց ԺԱ.16–17:
2. Թոմաս Ս. Մոնսոն, «Ի՞նչ եմ ես արել ինչ-որ մեկի համար այսօր», *Լիահոնա,* նոյեմբեր 2009, 86, 87:
3. Մատթեոս ԺԹ.20–21:
4. Մատթեոս ԺԹ.22:
5. Մատթեոս ԺԹ.21:
6. Վիկտորիա (Թորի) Սորրելսի փորձառությունը՝ գրառված հունիսի 16-ին, 20014թ.:
7. Վարդապետություն և Ուխտեր 84.88:
8. Մոսիա 18.8:
9. Մոսիա 18.9:
10. Վարդապետություն և Ուխտեր 81.5:
11. Մոսիա 2.17:

Երեց Կառլոս Հ. Ամադո
Յոթանասունից

Քրիստոս Քավիչը

[Փրկչի] զոհաբերությունը օրհնել է բոլորին, սկսած Ադամից մինչև վերջին մարդը:

Հիսուս Քրիստոսը՝ Աստծո որդին, ծնվեց և մահացավ բացառիկ հանգամանքներում: Նա ապրեց և մեծացավ համեստ պայմաններում՝ առանց նյութական բաների: Նա Իր մասին ասել է. «Աղուէսները որջեր ունին, եւ երկնքի թռչունները բոյներ. Բայց մարդի Որդին տեղ չ'ունի, որ գլուխը դնէ:» (Ղուկաս 9.58):

Նա երբեք պարգևներ, շնորհներ, ճանաչում չի ստացել, ոչ էլ նախընտրելի օգնություն երկրի քաղաքական ղեկավարներից կամ Իր օրերի եկեղեցական ղեկավարներից: Ոչ էլ նա նստել է ժողովարանների բարձր աթոռներում:

Նրա քարոզները պարզ էին, և չնայած որ բազմություններ հետևեցին նրան, Նրա ծառայությունը մարդկանց մեկ առ մեկ օրհնելն էր: Նա անհամար հրաշքներ գործեց նրանց մեջ, ովքեր ընդունեցին Նրան որպես Աստծուց Ուղարկվածի:

Նա Իր Առաքյալներին հրաշքներ գործելու «և մեծ գործերի» իշխանություն և զորություն տվեց, ապա նա արեց դրանք (Հովհաննես 14.12), սակայն Նա երբեք մեղքերը ներելու արտոնությունը չպատվիրակեց նրանց: Նրա թշնամիները բարկացան Նրան լսելիս. «Գնա՛, այսուհետեւ մի՛ մեղանչիր» (Հովհաննես 8.11) կամ «Քո մեղքերը թողուած լինին քեզ» (Ղուկաս 7.48): Դրա իրավունքը միայն իրեն էր պատկանում, քանի որ Նա է Աստծո Որդին և Նա Իր քավությամբ պետք էր վճարեր այդ մեղքերի համար:

Մահվան հանդեպ Նրա իշխանությունը

Մահվան հանդեպ Նրա իշխանությունը մեկ այլ աստվածային հատկանիշ էր: Մեծ Յայրոսը՝ ժողովարանի իշխանը, աղաչեց նրան «որ իր տունը մտնէ, որովհետեւ մի միածնունդ աղջիկ ունէր եւ նա մեռնում էր» (Ղուկաս 8.41–42): Վարդապետը լսեց նրա աղաչանքը, և մինչ նրանք քայլում էին, ծառաներից մեկը մոտեցավ նրանց և ասաց. «Աղջիկդ մեռաւ. Մի աշխատացնիր վարդապետին» (Ղուկաս 8.49): Տուն մտնելուն պես Հիսուսը բոլորին խնդրեց դուրս գնալ և անմիջապես նրա ձեռքից բռնելով Նա ասաց. «Վե՛ր կաց» (Ղուկաս 8.54):

Մի ուրիշ առիթով Նային քաղաք ուղևորվելիս Նա հանդիպեց մի թաղման, որտեղ այրի կինը ողբում էր միակ որդու մահվան համար: Ողորմածությամբ լեցուն՝ Նա դիպավ դագաղին և ասաց. «Երիտասարդ, քեզ եմ ասում՝ Վեր կաց» (Ղուկաս 7.14): Մարդիկ տեսնելով այդ հրաշքն աղաղակեցին. «Մի մեծ մարգարէ է վեր կացել մեր մէջ, եւ . . . Աստուած իր ժողովրդին այցելել է» (Ղուկաս 7.16): Այդ հրաշքն առավել ուշագրավ է, քանի որ նրանք արդեն պաշտոնապես հայտարարել էին, որ պատանին մեռած է և տանում էին թաղման: Երկու երիտասարդներին կյանքի վերադարձնելով՝ մահվան հանդեպ Նրա հեղինակության և իշխանության վկայությունը, զարմացրեց հավատացյալներին և իրեն չհավատացողների սրտերը լցրեց վախով:

Երրորդ դեպքն ամենատպավորիչն էր: Իր զարմիկներ Մարթային, Մարիամին և Ղազարոսին Քրիստոսը հաճախ էր այցելում: Երբ մարդիկ Նրան տեղեկացրեցին, որ Ղազարոսի մահամերձ է, չորս օր տևեց մինչ Նա հասավ ընտանիք: Մարթային մխիթարելով իր եղբոր մահվան կապակցությամբ՝ Նա հաստատապես վկայեց նրան. «Ես եմ յարութիւնը եւ կեանքը. ինձ հաւատացողը թէեւ մեռնի էլ, կ'ապրի» (Հովհաննես 11.25):

Երբ Փրկիչը սգավորներին հանձնարարեց հեռացնել գերեզմանի քարը, Մարթան անվստահ շշնջաց Նրան «Տէ՛ր, հիմա արդէն նեխած կը լինի, քանի որ չորս օրուայ է» (Հովհաննես 11.39):

Այնուհետև Հիսուսը սիրով հիշեցրեց նրան «Քեզ չասացի՞. եթէ հաւատաս, կը տեսնես Աստծու փառքը» (Հովհաննես 11.40), այս ասելով՝ Նա բարձր ձայնով աղաղակեց.

«Ղազարոս, դուրս եկ:

Եւ մեռելը դուրս եկաւ» (Հովհաննես 11.43–44):

Չորս օր գերեզմանում մնալուց հետո Աստծո Որդու թշնամիները բախվեցին այնպիսի անժխտելի ապացույցների, որոնք չէին կարող հերքել, աղճատել կամ աղավաղել և նրանք անիմաստ ու չարամտորեն «այն օրուանից խորհուրդ արեցին, որ նրան սպանեն» (Հովհաննես 11.53):

Նոր պատվիրան

Ավելի ուշ, կենդանի Քրիստոսը Իր Առաքյալների հետ Երուսաղեմում նշեց Զատիկի վերջին տոնը, հաստատեց հաղորդության արարողությունը, և նրանց պատվիրան

տվեց անկեղծ ծառայության միջոցով սիրել միմյանց:

Նրա տառապանքը Գեթսեմանիում

Իր ամենավսեմ սերը մարդկությանը ցույց տալուց և Իր ողջ կամքը կիրառելուց հետո, Նա խիզախորեն ու վճռականորեն քայլեց հանդիպելու Իր ամենախիստ փորձությանը: Գեթսեմանիի այգում, լիակատար մենության մեջ Նա կրեց ամենաուժեղ տառապանքը՝ արյուն հեղելով յուրաքանչյուր ծակոտիից: Լիովին ենթարկվելով Իր Հորը՝ Նա քավեց մեր մեղքերը և Իր վրա վերցրեց մեր ցավերն ու չարչարանքները, որպեսզի կարողանա իմանալ, թե ինչպես սատարել մեզ (տես Ալմա 7.11–14):

Մենք պարտական ենք Նրան և մեր Երկնային Հորը, քանի որ Նրա զոհաբերությունը օրհնել է բոլորին, սկսած Ադամից մինչև վերջին մարդը:

Փրկչի դատապարտությունն ու խաչելությունը

Գեթսեմանիում Իր տառապանքից հետո, Նա ինքնակամ հանձնվեց իր թշնամիներին: Դավաճանվելով իրենցից մեկի կողմից, նա անարդար ու անօրինական ձևով արագորեն դատապարտվեց անազնիվ ու ոչ լիարժեք դատով: Այդ նույն երեկո նա մեղադրվեց հայհոյանքի համար և դատապարտվեց մահվան: Քանի որ Նա վկայել էր, որ Նա Աստծո Որդին էր, Նրա թշնամիները, ատելությունից դրդված ու վրեժխնդրության ծարավով լեցուն, դավեցին, որ Պիղատոսը դատապարտեր Նրան: Այդ իսկ պատճառով նրանք հայհոյանքի մեղադրանքը խռովարարի մեղադրանքի փոխեցին, որպեսզի Նրա դատաստանը խաչելությունը լիներ:

Հռովմեացիների շրջանում Նրա դատապարտումն ավելի դաժան էր. Նրանց ծաղրանքներն ու արհամարական վերաբերմունքը Նրա հոգևոր թագավորության նկատմամբ,

ստորացուցիչ թագադրությունը փշե պսակով, նրա ցավոտ խարազանումը և համընդհանուր խաչելիության Նրա երկարատև հոգևարքի տառապանքը պարզ նախազգուշացում էր նրանց համար ովքեր կփորձեին իրենց հայտարարել Նրա աշակերտը:

Իր տառապանքների յուրաքանչյուր պահին աշխարհի Քավիչը ցույց տվեց բացառիկ ինքնատիրապետում: Նա միշտ ուրիշների օրհնության մասին էր մտածում: Բարությամբ ու քնքշանքով լեցուն Նա խնդրեց Հովհաննեսին հոգ տանել Իր մոր՝ Մարիամի մասին: Նա խնդրեց Իր Երկնային Հորը ներել Իրեն խաչողներին: Երկրի վրա Իր աշխատանքը կատարելուց հետո, Նա Իր հոգին ավանդեց Աստծուն և վերջին շունչը տվեց: Քրիստոսի մարմինը տեղափոխվեց գերեզման և երեք օր մնաց այնտեղ:

Քավչի աշխատանքը մահացածների մեջ

Մինչ Նրա աշակերտները տանջվում էին տխրությունից, հուսահատությունից և անորոշությունից, մեր Փրկիչը Իր Հոր ծրագրի մեկ այլ փուլում նոր ձևով կատարում էր իր ծառայությունը: Այդ երեք օրերի կարճ ժամանակահատվածում Նա անդադար աշխատեց, որպեսզի մահացածների մեջ կազմակերպեր փրկության այդ հսկայական աշխատանքը: Այդ օրերը Աստծո ընտանիքի համար դարձան հույսով լեցուն օրեր: Այդ այցելության ընթացքում Նա նշանակեց իր հավատարիմ հետևորդներին, որ փրկագնման ուրախ լուր ավետեին նրանց, ովքեր իրենց կենդանի ժամանակ չէին լսել փառահեղ ծրագրի մասին կամ մերժել էին այն: Այժմ նրանք հնարավորություն կունենային ազատվել իրենց գերությունից՝ փրկագնվելով ապրողների և մահացածների Աստծո կողմից (տես ՎևՈ 138.19, 30–31):

Հարության առաջին պտուղները

Իր աշխատանքը հոգևոր աշխարհում ավարտելուց հետո Նա վերադարձավ երկիր , որպեսզի իր հոգին ընդմիշտ միավորի մարմնի հետ: Նույնիսկ որ նա բացարձակապես ցույց էր տվել իր իշխանությունը մահվան հանդեպ՝ սուրբ գրություններում գրված այն մարդկանց պատմություններով, ում Նա կյանքի է բերել մինչև Իր հարությունը, ցույց են տալիս, որ նրանց կյանքը միայն հրաշքով երկարացվել է, քանի որ նրանք դեռ կմահանային:

Քրիստոսը առաջինն էր, որ հարություն առավ և երբեք այլևս չմահացավ, ունենալով կատարյալ՝ հավերժական մարմին: Նա հայտնվեց Մարիամին, ով Նրան ճանաչելուն պես սկսեց երկրպագել Նրան: Մեր Քավիչը մեծ քնքշությամբ նրան զգուշացրեց Իր նոր և փառահեղ վիճակի մասին. «Մի դպչիր ինձ, որովհետեւ դեռ չեմ վեր ելլել իմ Հօր մօտ» (Հովհաննես 20.17), ևս մեկ անգամ վկայելով, որ Նրա ծառայությունը հոգևոր աշխարհում իրական էր ու լիարժեք: Ավելի ուշ իր իրական լինելը հաստատելու համար, Նա ասաց. «Ես վեր եմ ելնում իմ Հօր մօտ եւ ձեր Հօր մօտ, իմ Աստուծոյ մօտ եւ ձեր Աստուծոյ մօտ:» (Հովհաննես 20.17): Իր Հոր մոտ գնալուց հետո Նա կրկին վերադարձավ ու հայտնվեց Իր առաքյալներին. «նրանց ցոյց տուեց իր ձեռքերը եւ կողը. եւ աշակերտներն ուրախացան, երբ տեսան Տիրոջը» (Հովհաննես 20.20):

Քավիչը կվերադառնա

Ես վկայում եմ, որ Քրիստոսը կվերադառնա շատ ավելի տարբեր ձևով, քան Նրա առաջին գալուստն էր: Նա կվերադառնա փառքի ու իշխանության մեջ, բոլոր արդար ու հավատարիմ Սրբերի հետ: Նա կվերադառնա որպես թագավորների Թագավոր և տերերի Տեր, որպես Խաղաղության Իշխան, խոստացված Մեսիա, Փրկիչ և Քավիչ, որպեսզի դատի կենդանիներին ու մահացածներին: Ես իմ ողջ սրտով սիրում ու ծառայում եմ Նրան և աղոթում եմ, որպեսզի մենք կարողանանք ծառայել ուրախությամբ ու նվիրվածությամբ, և որ մենք մինչև վերջ մնանք հավատարիմ Նրան: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Լինդա Ս. Ռիվս
Սփոփող Միության Գերագույն Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Պաշտպանություն պոռնոգրաֆիայից՝ Քրիստոսակենտրոն տուն

Աշխարհի ամենամեծ զոհիչը՝ . . . ներքին անձնական զոհիչն է, որը գալիս է . . . խորը և հաստատուն վկայությունից։

Թանկագին եղբայրներ և քույրեր, այսօր ես օրհնված եմ ունենալու իմ 13 ավագ թոռներին հավաքվածների մեջ։ Այդ իսկ պատճառով ես ինձ տվել եմ հետևյալ հարցը. «Ի՞նչ եմ ես ուզում, որ իմ թոռներն իմանան»։ Այս առավոտ ես կցանկանայի անկեղծորեն խոսել իմ ընտանիքի և ձեր ընտանիքների հետ։

Որպես ղեկավարներ մենք մեծապես մտահոգված ենք կործանումով, որը պոռնոգրաֆիան բերում է Եկեղեցու անդամների կյանք և նրանց ընտանիքներ։ Սատանան հարձակվում է աննախադեպ կատաղությամբ։

Պատճառներից մեկը, որ մենք այստեղ երկրի վրա ենք, այն է, որ սովորենք կառավարել մեր մահկանացու մարմինների կրքերն ու զգացումները։ Աստծո կողմից տրված այս զգացումները օգնում են մեզ ցանկանալ ամուսնանալ և ունենալ երեխաներ։ Ամուսնության ժամանակ ինտիմ հարաբերությունները տղամարդու և կնոջ միջև, որի արդյունքում երեխաները գալիս են մահկանացու աշխարհ, նաև նախատեսված են լինելու գեղեցիկ, քնքուշ փորձառություն, որը միացնում է երկու նվիրված սրտեր, միավորում է և հոգին, և մարմինը, և բերում է լիակատար ուրախություն և երջանկություն, երբ մենք սովորում ենք առաջին տեղում դնել միմյանց։ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է, որ ամուսնության մեջ «կողակիցը . . . ամենակարևոր տեղն է զբաղեցնում ամուսնու կամ կնոջ կյանքում, և [ոչ մի] ուրիշ հետաքրքրություն [կամ] անձ [կամ] առարկա երբեք չպետք է ավելի կարևոր լինի, քան կողակիցը։ . . .

Ամուսնությունն ակնկալում է բացարձակ նվիրվածություն և բացարձակ հավատարմություն»։[1]

Շատ տարիներ առաջ մեր երեխաներից մեկը զգալիորեն մտահոգված էր։ Ես մտա նրա ննջասենյակ, որտեղ նա բացեց ինձ իր սիրտը և բացատրեց ինձ, որ նա եղել էր ընկերներից մեկի տանը, և պատահականորեն հեռուստացույցով տեսել էր վախեցնող և տագնապալի պատկերներ և գործողություններ՝ առանց հագուստների տղամարդու և կնոջ միջև։ Նա սկսեց լաց լինել և արտահայտեց, թե ինչ նողկանք էր զգում այն ամենի վերաբերյալ, ինչ նա տեսել էր, և կցանկանար հանել այդ ամենն իր մտքից։ Ես շատ երախտապարտ էի, որ նա վստահեց ինձ այդ գաղտնիքը, տալով ինձ հնարավորություն հանգստացնել նրա անմեղ և ցավացող սիրտը, և օգնել նրան իմանալ, թե ինչպես սփոփանք ստանալ մեր Փրկչի Քավության միջոցով։ Ես հիշում եմ նվիրական զգացմունքները, որ ունեցա, երբ մենք միասին ծնկի իջանք որպես մայր և դուստր, և խնդրեցինք մեր Երկնային Հոր օգնությունը։

Շատ երեխաներ, պատանիներ և չափահասներ պատահաբար բախվում են պոռնոգրաֆիայի հետ, սակայն, գնալով, մեծանում է այն տղամարդկանց և կանանց թիվը, ովքեր ընտրում են դիտել այն և շարունակ վերադառնում են այդ ամենին, մինչև այն դառնում է կախվածություն։ Այս անհատները, միգուցե, իրենց ողջ սրտով ցանկանում են դուրս գալ այս ծուղակից, սակայն հաճախ չեն կարողանում հաղթահարել այն ինքնուրույն։ Որքան երախտապարտ ենք մենք, երբ այս սիրելի անձնավորություններն ընտրում են վստահել մեզ՝ ծնողներիս կամ Եկեղեցու ղեկավարներիս։ Մենք իմաստուն կվարվենք, եթե չարձագանքենք վրդովմունքով, զայրույթով կամ մերժումով, որը կստիպի նրանց կրկին լռություն պահպանել։

Որպես ծնողներ և ղեկավարներ մենք պետք է խորհրդակցենք մեր երեխաների և երիտասարդների հետ կրկին ու կրկին՝ լսելով սիրով և հասկացողությամբ։ Նրանք

Ռեյմոնդ, Ալբերտա, Կանադա

պետք է իմանան պոռնոգրաֆիայի վտանգների մասին և թե ինչպես է այն սկսում ղեկավարել մարդկանց կյանքերը, որը պատճառ է դառնում Հոգու կորստի, զգացմունքների խեղաթյուրման, ստի, հարաբերությունների վատթարացման, ինքնակառավարման պակասի և գրեթե սպառում է ողջ ժամանակը, միտքը և էներգիան:

Պոռնոգրաֆիան ավելի զազրելի, տհաճ և մանրամասն է դարձել, քան երբևէ նախկինում: Եթե մենք խորհրդակցենք մեր երեխաների հետ, միասին մենք կարող ենք կազմել ընտանեկան ծրագիր՝ իր չափանիշներով և սահմաններով, հանգամանքներին ընդառաջ գնալով կարող ենք պաշտպանել մեր տները էլեկտրոնային սարքավորումների կարգավորիչների և զտիչների միջոցով: Ծնողներ, մենք տեղյա՞կ ենք, որ համացանցի հնարավորություն ունեցող շարժական սարքավորումները, ոչ համակարգիչները, այս չարիքի ամենամեծ պատճառն են:[2]

Երիտասարդներ և չափահասներ, եթե դուք հայտնվել եք Սատանայի պոռնոգրաֆիայի ծուղակում, հիշեք, թե որքան ողորմած է մեր սիրելի Փրկիչը: Դուք գիտակցո՞ւմ եք, թե որքան խորն է Տիրոջ սերը և հոգատարությունը ձեր հանդեպ, նույնիսկ այժմ: Մեր Փրկիչն ունի ձեզ մաքրագործելու և օգնելու զորություն: Նա կարող է հեռացնել ցավը և վիշտը, որ դուք զգում եք, և ձեզ կրկին մաքուր դարձնի Իր Քավության զորության միջոցով:

Որպես ղեկավարներ՝ մենք նաև մեծապես մտահոգված ենք պոռնոգրաֆիայի կախվածությունից տառապողների կողակիցների և ընտանիքների համար: Երեց Ռիչարդ Գ. Սքոթը խոստացել է. «Եթե դուք անձամբ ազատ եք լուրջ մեղքերից, զուր տեղը մի տառապեք ուրիշի մեղքերի հետևանքով: . . . Դուք կարող եք կարեկցանք զգալ: . . . Սակայն դուք չպետք է ձեզ պատասխանատու զգաք այդ արարքների համար»:[3] Իմացեք, որ դուք մենակ չեք: Կա օգնություն:



Ամուսինների համար մատչելի են կախվածությունից ազատվելու ժողովներ, ներառյալ հեռախոսային ժողովները, որոնք թույլ են տալիս ամուսիններին զանգահարել ժողովի ժամանակ և մասնակցել իրենց իսկ տնից:

Եղբայրներ և քույրեր, ինչպե՞ս ենք մենք պաշտպանում մեր երեխաներին և երիտասարդներին: Զտիչներն օգտակար գործիքներ են, սակայն աշխարհի ամենամեծ զտիչը, միակը, որը վերջիվերջո կգործի, ներքին անձնական զտիչն է, որը գալիս է մեզանից յուրաքանչյուրի հանդեպ մեր Երկնային Հոր սիրո և մեր Փրկչի քավող զոհաբերության մասին խորը և հաստատուն վկայությունից:

Ինչպե՞ս ենք մենք առաջնորդում մեր երեխաներին, որպեսզի խորությամբ դարձի գան և օգտվեն մեր Փրկչի Քավությունից: Ես սիրում եմ Նեփի մարգարեի հայտարարությունն այն մասին, թե ինչ արեց իր ժողովուրդը՝ իր օրերի երիտասարդներին զոտեպնդելու համար. «Մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին [և] մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին, . . . որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»:[4]

Ինչպե՞ս մենք կարող ենք անել սա մեր տներում: Ձեզանից ոմանք լսել են ինձ, երբ պատմել եմ այն մասին, թե որքան դժվար է եղել իմ ամուսնու՝ Մելի և ինձ համար լինել չորս փոքրիկների ծնող: Երբ մենք հանդիպեցինք ծնող լինելու և կյանքի բոլոր պահանջները կատարելու խնդիրներին, մենք անհապաղ օգնության կարիք զգացինք: Մենք աղոթում էինք և խնդրում, որպեսզի իմանայինք, թե ինչ անել: Պատասխանը, որ եկավ, պարզ էր. «Նորմալ է, եթե տանը որոշ բաներ իրենց տեղում չեն և երեխաները դեռևս իրենց գիշերանոցներով են և որոշ պարտականություններ կատարված չեն: Միակ բաները, որոնք իսկապես պետք է կատարվեն տանը, ամենօրյա սուրբ գրությունների

ուսումնասիրությունը և աղոթքն են ու ամեն շաբաթ տնային ընտանեկան երեկոներ անցկացնելը»:

Մենք փորձում էինք անել այս բաները, սակայն դրանք միշտ չէ, որ առաջին տեղում էին դրվում և քառսի մեջ երբեմն անտեսվում էին: Մենք փոխեցինք մեր կիզակետը և փորձեցինք չմտահոգվել քիչ կարևոր բաների մասին: Մեր կիզակետը դարձավ խոսելը, հրճվելը, քարոզելը և վկայելը Քրիստոսի մասին՝ փորձելով ամեն օր աղոթել և ուսումնասիրել սուրբ գրությունները և անցկացնել տնային ընտանեկան երեկո:

Ընկերներիցս մեկը վերջերս զգուշացրեց. «Երբ դուք խնդրում եք քույրերին ավելի շատ կարդալ սուրբ գրությունները և աղոթել, դա լարվածություն է պատճառում նրանց: Նրանք արդեն իսկ զգում են, որ շատ բան ունեն անելու»:

Եղբայրներ և քույրեր, իմ սեփական փորձից և իմ ընտանիքի անդամների փորձից ելնելով, ես պետք է վկայեմ ամեն օր սուրբ գրությունները կարդալու, աղոթելու և ընտանեկան երեկոների օրհնությունների մասին: Սրանք հենց այն փորձառություններն են, որոնք օգնում են հեռացնել լարվածությունը, մեր կյանքին ուղղվածություն են տալիս և ավելացնում են մեր տների պաշտպանվածությունը: Ապա, եթե պոռնոգրաֆիան կամ այլ խնդիրները հարձակում գործեն մեր ընտանիքների վրա, մենք կարող ենք օգնություն խնդրել Տիրոջից և մեծ առաջնորդություն ակնկալել Հոգուց, իմանալով, որ մենք արել ենք այն, ինչ մեր Հայրը խնդրել է մեզ անել:

Եղբայրներ և քույրեր, եթե մենք չենք ունեցել նման փորձառություններ մեր տանը, մենք բոլորս էլ կարող ենք սկսել անել դրանք այժմ: Եթե մեր երեխաները ավելի մեծ են և հրաժարվում են միանալ մեզ, մենք կարող ենք սկսել մեզանից: Երբ մենք անենք դա, Հոգու ազդեցությունը կսկսի լցնել մեր տունը և մեր կյանքը, և ժամանակի ընթացքում երեխաները կարող են արձագանքել:

Հիշեք, որ ապրող Առաքյալները նաև խոստացել են, որ եթե մենք գտնեք մեր նախնիներին և պատրաստենք մեր իսկ ընտանիքի անունները տաճարի համար, մենք պաշտպանված կլինենք այժմ և մեր ողջ կյանքի ընթացքում, եթե արժանի պահենք մեր անձերը տաճարային երաշխավորագրին:[5] Ինչպիսի խոստում:

Երիտասարդներ, պատասխանատու եղեք ձեր իսկ հոգևոր բարեկեցության համար: Անհրաժեշտության դեպքում անջատեք ձեր հեռախոսը, երգեք Երեխաների խմբի որևէ երգ, աղոթեք օգնության համար, խորհեք մի սուրբ գրության մասին, հրաժարվեք ֆիլմի դիտումից, պատկերացրեք Փրկչին, արժանիորեն վերցրեք հաղորդությունը, ուսումնասիրեք *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկը, օրինակ եղեք ձեր ընկերների համար, վստահեք ծնողին, հանդիպեք ձեր եպիսկոպոսի հետ, խնդրեք օգնել ձեզ և, անհրաժեշտության դեպքում,

փնտրեք մասնագիտացված խորհրդատվություն:

Ի՞նչ եմ ես ուզում, որ իմ թոռներն իմանան: Ես ուզում եմ, որ նրանք և դուք իմանաք, որ ես գիտեմ, որ Փրկիչն ապրում և սիրում է ձեզ: Նա վճարել է մեր մեղքերի գինը, սակայն մենք պետք է ծնկի գանք մեր Երկնային Հոր առաջ մեծ խոնարհությամբ, խոստովանելով մեր մեղքերը, և ներում աղերսենք Նրանից: Մենք պետք է ցանկանանք փոխել մեր սրտերը և ցանկությունները, և լինել բավականաչափ խոնարհ՝ փնտրելու օգնությունը և ներումը նրանց, ում, միգուցե, ցավ ենք պատճառել կամ լքել:

Ես գիտեմ, որ Ջոզեֆ Սմիթը տեսավ Աստծուն՝ մեր Երկնային Հորը, և մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին: Ես վկայում եմ, որ մենք ունենք ապրող մարգարե երկրի վրա՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին: Ես նաև վկայում եմ, որ մենք երբեք չենք շեղվի ճանապարհից, եթե լսենք Աստծո մարգարեի խորհրդին: Ես վկայում եմ մեր ուխտերի զորության և տաճարային օրհնությունների մասին:

Ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Ես չեմ կարող բացատրել այս հրաշալի գրքի զորությունը: Ես միայն գիտեմ, որ աղոթքի հետ միասին Մորմոնի Գիրքը զորություն ունի պաշտպանելու ընտանիքներին, ամրապնդելու հարաբերությունները և տալու անձնական վստահություն առ Տերը: Ես վկայում եմ այս բաների մասին Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 199–200.
2. Տես Clay Olsen, "What Teens Wish Parents Knew" (address given at Utah Coalition Against Pornography Conference, Mar. 22, 2014); utahcoalition.org:
3. Richard G. Scott, "To Be Free of Heavy Burdens," *Liahona,* Nov. 2002, 88.
4. 2 Նեփի 25.26:
5. Տես Դեյվիդ Ա. Բեդնար, «Զավակների սրտերը կդառնան», *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 24–27, Ռիչարդ Գ. Սքոթ, «Մահացածներին փրկելու ուրախությունը», *Լիահոնա,* նոյեմբեր 2012, 93–95, Նիլ Լ. Անդերսեն, "Find Our Cousins!" (address given at RootsTech 2014 Family History Conference, Feb. 8, 2014); lds.org/prophets-and-apostles/unto-all-the-world/find-our-cousins:

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հոգևոր պտտահողմեր

Թույլ մի տվեք, որ պտտահողմերը տապալեն ձեզ: Սա որպես Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտներ ամուր կանգնելու ձեր ժամանակն է:

Ողջունում եմ ձեզ այս երեկո, հատկապես երիտասարդներին, ովքեր այստեղ են Համաժողովների Կենտրոնում և ողջ աշխարհում: Դուք ընտրյալ սերունդ եք, և ես խոսքս հիմնականում ուղղում եմ ձեզ:

Տարիներ առաջ, երբ մենք այցելել էինք մեր ընտանիքին Ֆլորիդայում, մի պտտահողմ բարձրացավ մեզանից ոչ շատ հեռու: Շարժական տնակում ապրող մի կին ապահովության համար մտել էր լողասենյակ: Տնակը սկսել էր ցնցվել: Մի քանի րոպե անցավ: Ապա նա լսեց իր հարևանի ձայնը. «Ես այստեղ եմ, նախասենյակում»: Լողասենյակից դուրս գալով, ի զարմանս իրեն, նա պարզել էր, որ պտտահողմը իր տնակը բարձրացրել էր և օդի միջով տեղափոխելով իջեցրել ուղիղ իր հարևանի տնակի վրա:

Իմ երիտասարդ ընկերներ, աշխարհը սահուն չի գնա դեպի Փրկչի Երկրորդ Գալուստը: Սուրբ գրություններն ասում են, որ «բոլոր բաները կլինեն խառնաշփոթության մեջ»:[1] Բրիգամ Յանգն ասել է. «Այս Եկեղեցու կազմավորման սկզբում ինձ հայտնի է դարձվել, որ Եկեղեցին կտարածվի, կբարգավաճի, կաճի և կընդլայնվի, և երկրի ազգերի մեջ ավետարանի տարածմանը զուգընթաց սատանայի զորությունը կաճի»:[2]

Մարգարեացած երկրաշարժերից և պատերազմներից[3] առավել մտահոգիչ են հոգևոր պտտահողմերը, որոնք կարող են պոկել ձեզ ձեր հոգևոր հիմքից և ձեր հոգին իջեցնել ձեզ համար աներևակայելի վայրում, երբեմն էլ չնկատելով, որ տեղաշարժվել եք:

Այդ սոսկալի մրրիկները հակառակորդի գայթակղություններն են:

Քամոտ միջավայրում աճող ծառերն ավելի ամուր են դառնում:

Մեղքը միշտ գոյություն է ունեցել այս աշխարհում, բայց այն երբեք չի եղել այդքան հասանելի, անհագուրդ և ընդունելի: Անշուշտ, գոյություն ունի հզոր ուժ, որը կարող է զսպել մեղքի մրրիկները: Դա կոչվում է ապաշխարություն:

Կյանքում ոչ բոլոր մրրիկներն են ձեր պատճառով առաջանում: Որոշները գալիս են ուրիշների սխալ ընտրությունների արդյունքում, իսկ որոշներն էլ մահկանացու կյանքի արդյունք են:

Մանուկ հասակում Նախագահ Բոյդ Կ. Փաքերը հիվանդացել է պոլիոմելիտով: Երբ Երեց Դալլին Հ. Օուքսը յոթ տարեկան էր, նրա հայրը հանկարծամահ եղավ: Երբ Քույր Քերոլ Ֆ. Մակքոնկիին՝ Երիտասարդ կանանց գերագույն նախագահը, դեռահաս էր, նրա ծնողները բաժանվեցին: Խնդիրներ կծառանան ձեր առաջ, բայց եթե դուք վստահեք Աստծուն, դրանք կամրացնեն ձեր հավատքը:

Բնության մեջ, քամոտ տարածքում աճող ծառերն ամուր են լինում: Երբ քամիները հարվածում են նոր տնկված շյուղին, ծառի ներսում ուժերը երկու ուղղությամբ են աշխատում: Նախ, նրանք ուժ են տալիս արմատներին, որ արագ աճեն և տարածվեն: Երկրորդ, ծառի ուժերը սկսում են ստեղծել այնպիսի բջջային կառուցվածք, որի շնորհիվ բունը և ճյուղերը դառնում են ավելի հաստ և ճկուն՝ քամու ճնշմանը դիմակայելու համար: Ամուր արմատներն ու ճյուղերը պաշտպանում են ծառին քամիներից:[4]

Աստծո համար դուք ծառից շատ ավելի թանկ եք: Դուք Նրա որդին կամ դուստրն եք: Նա է ստեղծել ձեր հոգին՝ լինելու ամուր և ճկուն կյանքի պտտահողմերի դեմ: Ինչպես քամիները շյուղի համար, պտտահողմերը երիտասարդ տարիքում կարող են ավելացնել ձեր հոգևոր ուժը, պատրաստելով ձեզ գալիք տարիներին:

Ինչպե՞ս եք պատրաստվում ձեր պտտահողմերին: «Հիշե՛ք, . . . դա մեր Քավիչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, . . . իր նետերը պտտահողմում, . . . երբ նրա ողջ կարկուտը և նրա զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն չի ունենա զորություն . . . քաշելու ձեզ վար . . . այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք»:[5] Դա է ձեր ապավենը պտտահողմից:

Նախագահ Թոմաս Ս. Մորսոնն ասել է. «Եթե մի ժամանակ Եկեղեցու չափանիշները և հասարակության չափանիշները հիմնականում համատեղելի էին, այժմ մի մեծ ճեղք է գոյացել դրանց մեջ, որը գնալով մեծանում է»:[6] Ոմանց համար այդ ճեղքը հոգևոր ուժգին պտտահողմեր է բարձրացնում:

Անցյալ ամիս Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը մի նամակ հղեցին Եկեղեցու ղեկավարներին ամբողջ աշխարհում: Այնտեղ մասնավորապես ասվում է. «Քաղաքացիական օրենքում կատարվող փոփոխություններն իրականում չեն կարող փոխել Աստծո կողմից հաստատված բարոյական օրենքը: Աստված ակնկալում է, որ մենք պահենք և պահպանենք Նրա պատվիրանները, անկախ հասարակության տարամետ կարծիքներից կամ միտումներից: Նրա մաքրաբարոյության օրենքը հստակ է՝ սեռական հարաբերությունները պատշաճ են միայն տղամարդու և կնոջ միջև, ովքեր օրենքով և օրինապես ամուսնացած են որպես ամուսին և կին: Մենք կոչ ենք անում ձեզ՝ վերանայել . . . «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագրում տրված վարդապետությունը»:[7]

Երբ աշխարհն ավելի ու ավելի է հեռանում Տիրոջ ողջախոհության օրենքից, մենք չենք հեռանում: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Մարդկության Փրկիչը՝ իր մասին խոսելով ասել է, որ լինելով աշխարհում, այս աշխարհից չէ: Մենք ևս կարող ենք լինել աշխարհում, սակայն ոչ աշխարհից, եթե մերժենք կեղծ հասկացողությունները ու կեղծ ուսմունքները, և հավատարիմ մնանք Աստծո պատվիրաններին»:[8]

Թեպետ շատ պետությունների կառավարություններ և բարեպաշտ անհատներ վերասահմանում են ամուսնությունը, Տերը՝ երբեք: Ի սկզբանե, Աստված հիմնեց ամուսնությունը տղամարդու և կնոջ՝ Ադամի և Եվայի միջև: Նա նախատեսեց, որ ամուսնության նպատակները պետք է վեր լինեն անձնական բավարարվածությունից և չափահասների կայացումից, իսկ որ առավել կարևոր է, պետք է զարգանան, ստեղծելով կատարյալ միջավայր՝ երեխաներ ունենալու, մեծացնելու և դաստիարակելու համար: Ընտանիքները երկնքի գանձն են:[9]

Ինչո՞ւ ենք մենք շարունակում խոսել այս մասին: Ինչպես Պողոսն է ասել. «Մենք երևող բաներին չենք մտիկ անում, այլ աներևույթներին»:[10] Որպես Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալների մեր պարտականությունն է ուսուցանել մեր Արարչի ծրագիրը Իր զավակներին և զգուշացնել Նրա պատվիրաններն արհամարհելու հետևանքների մասին:

Վերջերս, ես զրուցում էի Միացյալ Նահանգներից մի դափնի աղջկա հետ: Ես մեջբերում կանեմ նրա նամակից.

«Անցյալ տարի իմ մի քանի ընկերներ Facebook-ում սկսեցին գրել իրենց դիրքորոշումը ամուսնության վերաբերյալ: Շատերը կողմ էին

համասեռ ամուսնությանը, իսկ մի քանի ՎՕՍ երիտասարդներ նշել էին, որ հավանում են այդ գրառումները: Ես ոչ մի կարծիք չգրեցի:

Որոշեցի ավանդական ամուսնության մասին իմ համոզմունքը հայտնել խելամիտ ձևով:

Ավանդական ամուսնության մասին իր համոզմունքը հայտնելուց հետո Դափնին բացասական ուղերձներ է ստանում իր ընկերներից:

Իմ անձնական տվյալների մեջ նկարիս տակ ես ավելացրեցի հետևյալ գրառումը՝ «Ես հավատում եմ տղամարդու և կնոջ միջև ամուսնությանը»: Գրեթե անմիջապես ես սկսեցի ստանալ հաղորդագրություններ: «Դու եսասեր ես»: «Դու քննադատող ես»: Նրանցից մեկն ինձ նմանեցրեց ստրկատիրոջ: Եվ ես ստացա հետևյալ գրառումը իմ ընկերոջից, ով Եկեղեցու ամուր անդամ է. «Դու պետք է ժամանակին համընթաց քայլես: Ժամանակները փոխվում են, դու ևս պետք է փոխվես»:

«Ես չպայքարեցի,- ասում է նա,- բայցև չհանեցի իմ գրառումը»:

Նա եզրափակում է. «Երբեմն, ինչպես Նախագահ Մոնսոնն է ասում, դու պետք է միայնակ կանգնես»: Հուսով եմ, որպես երիտասարդներ, մենք կկանգնենք միասին՝ հավատարիմ Աստծուն և Նրա ապրող մարգարեների ուսմունքներին»:[11]

Մենք հատկապես պետք է մտահոգվենք նրանց համար, ովքեր մաքառում են համասեռամոլության դեմ: Դա հսկայական արագությամբ պտտահողմ է: Ես ցանկանում եմ իմ սերն ու հիացմունքն արտահայտել նրանց, ովքեր խիզախորեն դիմակայում են հավատքի այդ փորձությանը և հավատարիմ են մնում Աստծո պատվիրաններին:[12] Բայց անկախ իրենց որոշումներից և համոզմունքներից, ամեն ոք պետք է արժանանա մեր բարեկիրթ և հարգալից վերաբերմունքին:[13]

Փրկիչն ուսուցանել է մեզ, որ սիրենք ոչ միայն մեր ընկերներին, այլ նաև նրանց, ովքեր համաձայն չեն մեզ հետ, և անգամ չեն ընդունում մեզ: Նա ասել է. «Որովհետև՝ եթե ձեզ սիրողներին սիրեք, ի՞նչ վարձք ունիք . . . Եվ եթե միայն ձեր եղբայրներին բարև տաք, ի՞նչ ավելի բան եք անում»:[14]

Մարգարե Ջոզեֆ Սմիթը նախազգուշացրել է մեզ, որ «զգուշանանք ինքնահավան արդարակեցությունից» և սիրով ու հարգանքով վերաբերվենք բոլոր տղամարդկանց և կանանց, մինչև իսկ ցանկություն ունենանք «բարձրացնել նրանց մեր ուսերին»:[15] Հիսուս Քրիստոսի ավետարանում տեղ չունեն ծաղր ու ծանակը, կռվարարությունը կամ մոլեռանդությունը:

Եթե Եկեղեցու ղեկավարների տված խորհուրդների վերաբերյալ հարցեր ունեք, խնդրում եմ ձեր անկեղծ մտահոգություններով կիսվեք ձեր ծնողների և ղեկավարների հետ: Դուք ուժի կարիք ունեք, որը գալիս է Տիրոջ մարգարեներին վստահելուց: Նախագահ Հարոլդ Բ. Լին ասել է. «Որպես այս եկեղեցու անդամներ . . . ապահով կլինենք միայն այն դեպքում, երբ . . . սովորենք ուշադրություն դարձնել խոսքերին և պատվիրաններին, որ Տերը տալիս է Իր մարգարեի միջոցով: . . . Կլինեն դեպքեր, երբ համբերություն և հավատք կպահանջվի: Գուցե ձեզ դուր չգա, այն ինչ կասվի: . . . Դա գուցե հակասի ձեր քաղաքական տեսակետներին, . . . ձեր սոցիալական տեսակետներին, . . . միջամտի . . . ձեր սոցիալական կյանքին: Բայց եթե լսեք այդ խոսքերը, ասես դրանք դուրս են եկել հենց Իր՝ Տիրոջ բերանից, . . . «դժոխքի դռները չեն հաղթի ձեզ . . . և Տեր Աստված ձեր առջևից կցրի խավարի զորությունները . . .» (ՎԱՌ 21.6)»:[16]

Կյանքի պտտահողմերից պաշտպանվելու հզոր միջոց է Մորմոնի Գիրքը:

Երբ Նախագահ Հենրի Բ. Այրինգը դեռահաս էր, նրա ընտանիքը տեղափոխվեց մի նոր քաղաք: Սկզբում նրա համար տեղափոխությունն անչափ տհաճ էր, և նա քիչ ընկերներ ուներ: Նա իրեն օտար էր զգում ավագ դպրոցի իր ընկերական միջավայրում: Պտտահողմերը մոլեգնում էին: Ի՞նչ արեց նա: Նա իր էներգիան դրեց Մորմոնի Գրքում, որը կարդաց մի քանի անգամ:[17] Տարիներ անց, Նախագահ Այրինգը վկայել է. «Ես [հաճույքով] էի գնում ետ Մորմոնի Գրքին՝ անհագ ըմպելով դրանից»:[18] «[Դա] մեր ունեցած առավել հզոր գրավոր վկայությունն է, որ Հիսուսը Քրիստոսն է»:[19]

Տերը ձեզ տվել է ամուր կանգնելու մեկ այլ եղանակ՝ հոգևոր պարգև, որը հակառակորդի

պտտահողմերից առավել զորավոր է: Նա ասել է. «Կանգնեք սուրբ տեղերում և մի շարժվեք»:[20]

Երբ ես դեռահաս էի, Եկեղեցում կար միայն 13 տաճար: Այժմ կա 142 տաճար: Եկեղեցու անդամների ութսունհինգ տոկոսն ապրում են տաճարից 200 մղոն հեռավորության վրա: Աշխարհի պատմության մեջ ի տարբերություն մյուս սերունդների, Տերը ձեր սերնդի համար ավելի հասանելի է դարձրել Իր սուրբ տաճարները:

Երբևէ կանգնե՞լ եք տաճարում, ճերմակ հագած, մկրտություններ կատարելուն պատրաստ: Ինչպե՞ս եք ձեզ զգացել: Տաճարում առկա է սրբության զգացումը: Փրկչի խաղաղությունը ճնշում է աշխարհի պտտահողմերին:

Տաճարում ձեր զգացողությունն օրինակ է հանդիսանում, թե ինչպես կցանկանայիք ձեզ զգալ կյանքում:[21]

Գտեք ձեր մահացած պապիկներին, տատիկներին և բարեկամներին: Նրանց անունները ձեզ հետ տարեք տաճար:[22] Ձեր նախնիների մասին սովորելիս կտեսնեք կյանքի, ամուսնության, երեխաների, արդարակեցության օրինակներ, իսկ երբեմն էլ այնպիսի օրինակներ, որ կուզենաք անտեսել»:[23]

Ավելի ուշ տաճարում դուք ավելին կսովորեք աշխարհի Արարման, Ադամի և Եվայի կյանքի օրինակի, իսկ, ամենակարևորն է, մեր Տեր Հիսուս Քրիստոսի մասին:

Իմ երիտասարդ եղբայրներ և քույրեր, մենք շատ ենք սիրում ձեզ, հիանում ենք ձեզանով և աղոթում ենք ձեզ համար: Թույլ մի տվեք, որ պտտահողմերը տապալեն ձեզ: Սա որպես Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտներ ամուր կանգնելու ձեր ժամանակն է:[24]

Ավելի ամուր կառուցեք ձեր հիմքը ձեր Քավչի վեմի վրա:

Ավելի լիարժեքորեն գնահատեք Նրա անզուգական կյանքը և ուսմունքները:

Ավելի ջանասիրաբար հետևեք Նրա օրինակին և Նրա պատվիրաններին:

Առավել խորը ընկալեք Նրա սերը, Նրա ողորմածությունն ու

շնորհը, և Նրա Քավության զորավոր պարգևները:

Այդ դեպքում, ես խոստանում եմ ձեզ, դուք իրականում կտեսնեք, որ պտտահողմերն իրենցից ներկայացնում են փորձություններ, գայթակղություններ, շեղումներ կամ մարտահրավերներ, որոնք կօգնեն ձեզ աճել: Եվ ես ձեզ վստահեցնում եմ, որ եթե տարեցտարի մշտապես արդար կյանքով ապրեք, ձեր փորձություններն ամեն անգամ կհաստատեն ձեզ, որ Հիսուսը Քրիստոսն է: Ձեր ոտքերի տակի հոգևոր վեմը կլինի ամուր և ապահով: Դուք ուրախ կլինեք, որ Աստված բերել է ձեզ այստեղ՝ Քրիստոսի փառահեղ վերադարձից առաջ վերջին նախապատրաստական գործի մասնակիցը լինելու:

Փրկիչն ասել է. «Ձեզ որբ չեմ թողիլ. կգամ ձեզ մոտ»:[25] Սա ձեզ ուղղված Նրա խոստումն է: Ես գիտեմ, այդ խոստումն իրական է: Ես գիտեմ, որ Նա ապրում է, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 88.91:
2. *Discourses of Brigham Young,* sel. John A. Widtsoe (1954), 72.
3. Տես Dallin H. Oaks, “Preparation for the Second Coming,” *Liahona,* May 2004, 7–10:
4. Տես A. Stokes, A. H. Fitter, և M. P. Coutts, “Responses of Young Trees to Wind and Shading: Effects on Root Architecture,” *Journal of Experimental Botany,* vol. 46, no. 290 (Sept. 1995), 1139–46:
5. Հելաման 5.12:
6. Թոմաս Ս. Մոնսոն, «Քահանայության զորություն», *Լիահոնա,* մայիս 2011, 66:
7. Առաջին Նախագահության նամակ, մար. 6, 2014; տես նաև Դեյվիդ Ա. Բեդնար, «Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն», *Լիահոնա,* մայ. 2013, 41–44; Դալլին Հ. Օուքս, «Ուրիշ աստվածներ չունենաս», *Լիահոնա,* նոյ. 2013, 72–75; *Երիտասարդներին զորացնելու հասկաց* (գրքույկ, 2011), 35–37:
8. Թոմաս Ս. Մոնսոն, *Լիահոնա,* մայիս 2011, 67:
9. Երեց Ռասսել Մ. Նելսոնն ասել է. «Ամուսնությունը սոցիալական կարգի ձուլվածքն է: . . . Այդ միությունը ոչ միայն ամուսնու և կնոջ միջև է, այն ընդգրկում է նաև Աստծո հետ ընկերակցությունը» (“Nurturing Marriage,” *Liahona,* May 2006, 36): Տես նաև Մատթեոս 19.5–6
10. Բ Կորնթացիս 4.18:
11. Անձնական նամակագրություն և զրույց, մար. 17, 2014; տես նաև Թոմաս Ս. Մոնսոն, «Խիզախություն ունեցեք կանգնելու միայնակ», *Լիահոնա,* նոյ. 2011, 60–67:
12. Տես Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Օգնեա նրանց, ովքեր պայքարում են համասեռամոլության դեմ», *Լիահոնա,* հոկտ. 2007, 40–43:
13. Նույնիսկ երբ հակաքրիստոս Կորիհորը ջանում էր կործանել մարդկանց հավատքը, Աստծո օրենքները պաշտպանեցին նրան արժանի պատժի դեմ. «Մարդու հավատքի դեմ ոչ մի օրենք չկար, քանզի դա խստորեն հակասում էր Աստծո հրամաններին, որ լիներ օրենք, որը կբերեր մարդկանց անհավասար դիրքերի: . . . Եթե մարդը ցանկանում էր ծառայել Աստծուն, դա նրա արտոնությունն էր. . . . բայց, եթե նա չէր հավատում նրան, չկար օրենք նրան պատժելու համար» (Ալմա 30.7, 9): Հավատո տասնմեկերորդ հանգանակն ասում է. «Մենք պահանջում ենք մեր իսկ խղճի թելադրանքով Ամենազոր Աստծուն երկրպագելու արտոնությունը, և նույն արտոնությունը վերապահում ենք բոլոր մարդկանց. թող նրանք երկրպագեն ինչպե՛ս, որտե՛ղ կամ ինչ որ կամենում են»:
14. Մատթեոս 5.46–47
15. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 427, 429:
16. *Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* (2000), 84–85; տես նաև Ռոբերտ Դ. Հեյլս, «Գերագույն համաժողով. Ամրացնել հավատքը և վկայությունը», *Լիահոնա,* նոյ. 2013, 6–8:
17. Տես Robert I. Eaton and Henry J. Eyring, *I Will Lead You Along: The Life of Henry B. Eyring* (2013), 40.
18. Henry B. Eyring, *Choose Higher Ground* (2013), 38.
19. Henry B. Eyring, *To Draw Closer to God* (1997), 118.
20. Վարդապետություն և Ուխտեր 87.8; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 45.32:
21. Տես Վարդապետություն և Ուխտեր 52.14:
22. Տես Neil L. Andersen, “Find Our Cousins!” (address given at RootsTech 2014 Family History Conference, Feb. 8, 2014); lds.org/prophets-and-apostles/unto-all-the-world/find-our-cousins:
23. Տես Դեյվիդ Ա Բեդնար, «Ձավակների սրտերը կդառնան», *Լիահոնա,* նոյ. 2011, 24–27:
24. Տես Հելաման 7.9:
25. Հովհաննես 14.18:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Հույսի անգին ժառանգությունը

Աստծո հետ ուխտ կապելու և ձեր ուխտերը պահելու ընտրությամբ, դուք ընտրում եք հույսի ժառանգություն թողնել նրանց, ովքեր հնարավոր է հետևեն ձեր օրինակին:

Իմ սիրելի քույրեր ու եղբայրներ, ձեզանից ոմանք այս ժողովին հրավիրվել են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներների կողմից: Այդ միսիոներները, հավանաբար, արդեն ձեզ հորդորել են մկրտվելով ուխտ կապել Աստծո հետ:

Մյուսներդ ունկնդրում եք, քանի որ ընդունել եք ձեր ծնողի, ամուսնու կամ գուցե զավակի ձեզ ուղղված հրավերը, որոնք հուսով են, որ դուք Աստծո հետ կապած ձեր ուխտերը կրկին կդարձնեք ձեր կյանքի առանցքը: Ձեզանից ոմանք էլ, ովքեր ունկնդրում են, արդեն կատարել են Փրկչի մոտ վերադառնալու ընտրությունը և այսօր զգում են Նրա ողջույնի ուրախությունը:

Ով էլ որ լինեք և որտեղ էլ որ լինեք, դուք կարող եք ավելի շատ մարդկանց երջանկացնել, քան այժմ պատկերացնում եք: Ամեն օր և ամեն ժամ դուք կարող եք ընտրել Աստծո հետ ուխտ կապել կամ պահել ձեր ուխտերը:

Ուր էլ որ լինեք հավերժական կյանքի ժառանգության ճանապարհին, դուք հնարավորություն ունեք ցույց տալու շատերին ավելի մեծ երջանկության ուղին: Աստծո հետ ուխտ կապելու և ձեր ուխտերը պահելու ընտրությամբ, դուք ընտրում եք հույսի ժառանգություն թողնել նրանց, ովքեր հնարավոր է հետևեն ձեր օրինակին:

Դուք և ես օրհնված ենք այդպիսի ժառանգության խոստումով: Իմ երջանկության մեծ մասի համար ես պարտական եմ մի մարդու, որին երբեք չեմ հանդիպել մահկանացու կյանքում: Նա մի որբ էր, ով դարձավ իմ նախապապերից մեկը: Նա ինձ կտակեց հույսի թանկագին ժառանգությունը: Թույլ տվեք պատմել այդ ժառանգությունն ինձ թողնելու նրա դերի մասին:

Նրա անունը Հենրիխ Այրինգ էր: Նա ծնվեց մեծ հարստության մեջ: Նրա հայրը, Էդվարդը, մեծ գույք ուներ Քոբուրգում, որը ներկայիս Գերմանիայի տարածքում է: Նրա մայրը դերկոմսուհի Շարլոտ Վոն Բլոմբերգն էր: Նրա հայրը Պրուսիայի թագավորի հողերի կառավարիչն էր:

Հենրիխը Շարլոտի և Էդվարդի առաջնեկն էր: Շարլոտը մահացավ 31 տարեկան հասակում՝ իր երրորդ զավակի լույս աշխարհ գալուց հետո: Շատ չանցած Էդվարդը նույնպես մահացավ ձախողված ներդրումների արդյունքում կորցնելով իր ողջ ունեցվածքն ու հարստությունը: Այդ ժամանակ նա 40 տարեկան էր: Նա թողեց երեք որբացած երեխաներ:

Իմ նախապապ Հենրիխը կորցրեց ծնողներին և մեծ աշխարհիկ ժառանգություն: Նա մնաց առանց գրոշի: Նա իր պատմության մեջ գրել է, որ իր ամենալավագույն հույսը Ամերիկա գնալն էր: Չնայած նա այնտեղ չուներ ոչ ընտանիք, ոչ էլ ընկերներ, նա հույսի զգացում ունեցավ գնալու Ամերիկա: Սկզբում նա գնաց Նյու Յորք քաղաք: Ավելի ուշ նա տեղափոխվեց Սենտ Լուիս՝ Միսսուրի նահանգ:

Սենտ Լուիսում նրա աշխատողներից մեկը Վերջին Օրերի Սուրբ էր: Նրանից նա ստացավ մի գրքույկ՝ գրված Երեց Փերլի Փ. Պրատի կողմից: Նա կարդաց այն և ուսումնասիրեց Վերջին Օրերի Սրբերի մասին ամեն ինչ: Նա աղոթեց իմանալու համար, թե արդյոք հրեշտակներ էին հայտնվել մարդկանց, թե արդյոք կար կենդանի մարգարե և արդյոք ինքը գտել էր ճշմարիտ և հայտնությամբ ստացված կրոնը:

Երկու ամիս մանրազնին ուսումնասիրությունից և աղոթելուց հետո Հենրիխը երազ տեսավ, որտեղ նրան ասված էր, որ նա պետք է մկրտվեր: Այն մարդը, ում անունն ու քահանայությունը ես այսօր պատիվ ունեմ կրելու, Երեց Վիլիամ Բրաունը, կատարեց այդ արարողությունը: Հենրիխը մկրտվեց անձրևաջրերից գոյացած լճի մեջ, 1855թ. մարտի 11-ին՝ առավոտյան 7.30:

Ես հավատում եմ, որ Հենրիխ Այրինգն այն ժամանակ գիտեր, որ այն ինչ ես այսօր ձեզ ուսուցանում եմ, ճշմարիտ է: Նա գիտեր, որ հավերժական կյանքում երջանկությունը հասանելի է միայն ընտանեկան կապերի միջոցով, որոնք ձգվում են հավերժ: Չնայած, որ նա նոր էր գտել երջանկության Տիրոջ ծրագիրը, նա գիտեր, որ հավերժական երջանկության իր

հույսը կախված է իր օրինակին հետևելու ուրիշների ազատ կամքից: Հավերժական երջանկության իր հույսը կախված էր դեռևս չծնված մարդկանցից:

Որպես մեր ընտանիքի հույսի ժառանգության մի մաս նա իր սերունդներին թողեց մի պատմություն:

Այդ պատմությունը կարդալիս ես զգում եմ սեր բոլորիս հանդեպ, ովքեր կհետևեն նրան: Նրա խոսքերում ես զգում եմ նրա հույսը, որ իր ժառանգները կհետևեն նրան դեպի ետ՝ երկնային տուն վերադառնալու ճանապարհը: Նա գիտեր, որ դա անելու համար մեծ որոշում պետք չէր լինի կայացնել, այլ բազմաթիվ փոքր որոշումներ: Ես վկայակոչում եմ նրա պատմությունից.

«Առաջին անգամ Երեց Էնդրյուսի ելույթը լսելուց հետո . . . ես միշտ հաճախել եմ Վերջին Օրերի Սրբերի ժողովները և շատ հազվադեպ է եղել, որ ես չեմ հաճախել ժողովները, քանի որ ժողովները հաճախելը կարծես իմ պարտականությունն էր:

Ես սա գրում եմ իմ պատմության մեջ, որպեսզի իմ զավակները կարողանան հետևել իմ օրինակին և երբեք չմերժեն այդ կարևոր պարտականությունը հավաքվել Սրբերի հետ»:[1]

Հենրիխը գիտեր, որ հաղորդության ժողովներին մենք կարող էինք թարմացնել մեր ուխտերը և միշտ հիշել Փրկչին և Նրա Հոգին մեզ հետ ունենալ:

Այդ նույն Հոգին էր, որ սատարեց նրան իր միսիայում, որին նա կանչվեց մկրտվելուց մի քանի ամիս անց: Որպես ժառանգություն նա թողեց վեց տարի միսիայում հավատարիմ ծառայելու իր օրինակը, կանչված լինելով ծառայելու հնդկացի ցեղերի տարածքներում: Իր միսիայից հետ կանչվելու համար նա ոտքով քայլեց Օկլահոմայից դեպի Սոլթ Լեյք Սիթի՝ անցնելով շուրջ 1100 մղոն (1,770 կմ) տարածություն և միանալով սայլակների շարասյանը:

Շատ չանցած Աստծո մարգարեն նրան հանձնարարեց տեղափոխվել Յուտայի հարավային տարածք:

Այնտեղ նա ևս մեկ անգամ միսիայի կանչ ստացավ՝ ծառայելու իր հայրենի Գերմանիայում: Այնուհետև նա ընդունեց Տեր Հիսուս Քրիստոսի Առաքյալի հրավերը՝ ամրացնելու Վերջին Օրերի Սրբերի գաղութները Մեքսիկայի հյուսիսում: Այդտեղից, կրկին որպես լիաժամկետ միսիոներ՝ նա կանչվեց Մեխիկո քաղաք: Նա հարգում էր այդ կոչումները: Նրա աճյունը հանգչում է Մեքսիկայի, Չիհուահուայի, Կոլոնիա Խուարեսի մի փոքրիկ գերեզմանատանը:

Ես վկայակոչում եմ այս փաստերը ոչ թե նրա մեծությունը ցույց տալու համար, կամ նրա համար, թե ինչ է արել նա իր ժառանգների համար: Ես այս փաստերը վկայակոչում եմ, որպեսզի պատվեմ նրան այն հավատքի ու սիրո համար, որ նա ուներ իր սրտում:

Նա իր կոչումներն ընդունեց, քանի որ հավատում էր, որ հարություն առած Քրիստոսն ու Երկնային հայրը Նյու Յորք նահանգի ծառերի պուրակում հայտնվել են Ջոզեֆ Սմիթին: Նա ընդունեց դրանք, քանի որ հավատում էր, որ Տիրոջ Եկեղեցում քահանայության բանալիները վերականգնվել են ընտանիքները հավերժորեն կնքելու զորությամբ, եթե միայն նրանք բավարար հավատք ունենային պահելու իրենց կապած ուխտերը:

Իմ նախահայր Հենրիխ Այրինգի նման հնարավոր է դուք առաջինն եք ձեր ընտանիքում, ով հավատքով և ջանասիրությամբ կապած ու պահած սրբազան ուխտերի ուղու հետ միասին գծում է հավերժական կյանքի ուղին: Բոլորիս համար, ինչպես Հենրիխի համար էր, այս պարտականությունները երբեմն պարզ են, բայց հաճախ դժվարին: Սակայն հիշեք, որ պարտականությունները երբեմն պետք է դժվարին լինեն, քանի որ դրանց նպատակը մեզ ճանապարհով առաջ տանելն է՝ հավերժ ապրելու Երկնային Հոր և Նրա սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի հետ:

Հիշեք Աբրահամի գրքի խոսքերը.

«Եվ նրանց մեջ կանգնած էր մեկը, որն Աստծո նման էր, և նա ասաց նրանց, ովքեր իր հետ էին. Մենք կիջնենք ներքև, քանզի մի տարածություն կա այնտեղ, և մենք կվերցնենք այս նյութերից և կստեղծենք մի երկիր, որի վրա սրանք կկարողանան բնակվել

Եվ դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց

Եվ նրանց, ովքեր պահում են իրենց առաջին վիճակը, կտրվի ավելին. իսկ նրանք, ովքեր չեն պահում իրենց առաջին վիճակը, փառք չեն ունենա այն նույն թագավորության մեջ, նրանց հետ, ովքեր պահում են իրենց առաջին վիճակը. և նրանք, ովքեր կպահեն իրենց երկրորդ վիճակը, նրանց գլխին փառք կավելացվի հավիտյանս հավիտենից»:[2]

Երկրորդ վիճակը պահելը կախված է Աստծո հետ ուխտեր կապելուց և կապված պարտականությունները հավատարմորեն կատարելուց: Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք է անհրաժեշտ սրբազան ուխտերը կյանքում պահելու համար:

Ադամի ու Եվայի անկման պատճառով որպես մեր համընդհանուր ժառանգություն մենք ունենք

գայթակղություններ, փորձություններ և մահ: Այնուամենայնիվ, մեր սիրելի Երկնային Հայրը տվեց մեզ Իր սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի՛ մեր Փրկչի պարգևը: Հիսուս Քրիստոսի Քավության այդ մեծ պարգևը ստեղծում է համընդհանուր ժառանգություն՝ Հարության խոստումը և հավերժական կյանքի հնարավորությունը բոլոր նրանց համար, ովքեր ծնվել են:

Հավերժական կյանքը՛ որպես Աստծո ամենամեծ օրհնություններից մեկը, մեզ կտրվի միայն, եթե մենք ուխտեր կապենք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցում՝ մատուցված Նրա լիազորված ծառաների կողմից: Անկման պատճառով մենք բոլորս էլ մկրտության մաքրագործող հատկության և ձեռնադրմամբ Սուրբ Հոգու ստացման կարիքն ունենք: Այդ արարողությունները պետք է իրականացվեն նրանց կողմից, ովքեր ունեն համապատասխան քահանայության իշխանություն: Այնուհետև, Քրիստոսի լույսի և Սուրբ Հոգու օգնությամբ մենք կարող ենք պահել Աստծո հետ կապած մեր բոլոր ուխտերը, հատկապես նրանք, որոնք կատարվել են Նրա տաճարներում: Միայն այդ կերպ և այդ օգնությամբ որևէ մեկը կարող է իր օրինական ժառանգությունը պահանջել հավերժական ընտանիքում որպես Աստծո զավակ:

Նրանք, որոնց համար իմ ասածները կարող են թվալ գրեթե անհույս մի երազանք:

Դուք տեսել եք հավատարիմ ծնողների, ովքեր տխրում են իրենց այն զավակների համար, ովքեր մերժել են կամ ովքեր որոշել են դրժել Աստծո հետ կապած իրենց ուխտերը: Սակայն այդ ծնողները կարող են մխիթարվել և հույս ունենալ այլ ծնողների փորձից:

Ալմայի որդին և Թագավոր Մոսիայի որդիներն ապաշխարեցին Աստծո հետ կապած ուխտերի և պատվիրանների դեմ կատաղի ապստամբությունից: Ալմա կրտսերը տեսավ, թե ինչպես իր որդի Կորիանթոնը կեղտոտ մեղքից փոխվեց դեպի հավատարիմ ծառայություն: Մորմոնի Գրքում նաև գրված է Լամանացիների հրաշքների մասին, ովքեր մի կողմ դրեցին արդարադատությունն ատելու ավանդույթներն ու ուխտեցին մեռնել խաղաղությունը պահպանելու համար:

Հրեշտակ ուղարկվեց երիտասարդ Ալմային ու Մոսիայի որդիներին: Հրեշտակը հայտնվեց նրանց հայրերի և Աստծո ժողովրդի աղոթքների շնորհիվ: Մարդկային սրտերում գործող այս Քավության զորության օրինակներից դուք կարող եք քաջություն և մխիթարություն ստանալ:

Տերը մեզ է տվել հույսի ողջ աղբյուրը, մինչ մենք փորձում ենք օգնել մեր հարազատներին ստանալ իրենց հավերժական ժառանգությունը: Նա մեզ խոստումներ է տվել, մինչ մենք փորձում ենք բերել մարդկանց Իր մոտ, նույնիսկ եթե նրանք մերժում են Նրա հրավերքը: Նրանց դիմադրությունը վշտացնում է Նրան, սակայն Նա չի հանձնվում, ոչ էլ մենք պետք է հանձնվենք: Նա մեզ համար Իր համառ սիրո կատարյալ օրինակ է. «Եվ բացի այդ, որքա՜ն հաճախ հավաքած կլինեի ես ձեզ, ինչպես հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին, այո, ո՜վ դուք, Իսրայելի տան ժողովուրդ, որ ընկել եք, այո, ո՜վ դուք, Իսրայելի տան ժողովուրդ, դո՜ւք, որ ապրում եք Երուսաղեմում,

ինչպես նաև դո՜ւք, որ ընկել եք. այո, որքա՜ն հաճախ հավաքած կլինեի ես ձեզ, ինչպես հավն է հավաքում իր ճտերին, և դուք չկամեցաք»:[3]

Մենք կարող ենք ապավինել Փրկչի այդ անսպառ ցանկությունից՝ Իր հետ դեպի իրենց տուն հետ բերելու Երկնային Հոր հոգևոր զավակներին: Ամեն մի հավատարիմ ծնող, տատիկ ու պապիկ և նախահայր ունի այդ ցանկությունը: Երկնային Հայրը և Փրկիչը մեր կատարյալ օրինակն են այն բանի, թե ինչ մենք կարող ենք և պետք է անենք: Նրանք երբեք չեն պարտադրում արդարակեցությունը, քանի որ արդարակեցությունը պետք է ընտրությամբ լինի: Նրանք արդարակեցությունը նշմարելի են դարձնում մեզ համար և թույլ տալիս, որ մենք տեսնենք, որ դրա պտուղները համեղ են:

Երկրի վրա ծնված յուրաքանչյուր մարդ ստանում է Քրիստոսի Լույսը, որը մեզ օգնում է մեզ տարբերել ճիշտը սխալից: Աստված մահկանացու ծառաներ է ուղարկել, ովքեր Սուրբ Հոգու օգնությամբ կարող են մեզ օգնել հասկանալ, թե ինչ է Նա ցանկանում, որ մենք անենք և ինչն է Նա արգելում: Աստված ճիշտն ընտրելու որոշումը գրավիչ է դարձնում մեզ համար, որպեսզի թույլ տա մեզ զգալու մեր որոշումների հետևանքները: Եթե մենք ընտրում ենք ճիշտը, մենք ժամանակին գտնում ենք երջանկություն: Եթե մենք ընտրում ենք չարը, դրան ի վերջո հետևում է վիշտն ու ափսոսանքը: Այդ հետևանքները անխուսափելի են: Այնուամենայնիվ, դրանք հաճախ ուշանում են՝ նպատակով: Եթե օրհնություններն անմիջապես տրվեին, ճիշտն ընտրելը հավատք չէր ձևավորի: Եվ քանի որ վիշտը նույնպես երբեմն շատ է ուշանում, ապա հավատք է պահանջվում ավելի շուտ մեղքի ներում փնտրել, քան այն բանից հետո, երբ մենք զգում ենք դրանց վշտագին և ցավագին հետևանքները:

Հայր Լեքին վշտանում էր իր որդիների և նրանց ընտանիքների կատարած որոշումների համար: Նա արդարակյաց և լավ մարդ էր՝

Աստծո մարգարե: Նա հաճախ էր նրանց վկայում մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին: Նա հնազանդության և ծառայության օրինակ էր, երբ Տերը նրան հանձնարարեց թողնել իր աշխարհիկ ունեցվածքն ու ազատել իր ընտանիքը կործանումից: Նույնիսկ իր կյանքի վերջում նա դեռ վկայում էր իր զավակներին: Փրկչի նման, – չնայած որ զորություն ուներ նրանց սրտերը զանազանելու և նրանց ապագան տեսնելու՝ թե տխո՛ւր, թե հիանալի ապագան, – Լեքին շարունակում էր իր ձեռքը մեկնած պահել և ընտանիքին առաջնորդել դեպի փրկություն:



Այսօր Հայր Լեքիի միլիոնավոր ժառանգներ արդարացնում են նրա տածած հույսերը:

Ի՞նչ կարող ենք մենք վերցնել Լեքիի օրինակից: Մենք կարող եք նրանից օրինակ վերցնել՛ աղոթքով և ուշադրությամբ ուսումնասիրելով սուրբ գրությունները:

Ես առաջարկում եմ, որ դուք թե կարճաժամկետ և թե երկարաժամկետ տեսանկյունից նայեք ձեր ընտանիքին հույսի ժառանգություն տալու ձեր փորձերին: Կարճաժամկետ տեսանկյունից նայելիս կլինեն խնդիրներ և Սատանան կփորձի գայթակղել: Եվ կլինեն բաներ, որոնց պետք է սպասել համբերատար, հավատքով և իմանալով, որ Տերը գործում է Իր ժամանակին և Իր եղանակով:

Կան բաներ, որոնք դուք կարող եք շուտ անեք, քանի դեռ այն մարդիկ որոնց դուք սիրում եք երիտասարդ են: Հիշեք, որ ամենօրյա ընտանեկան աղոթքը, ընտանիքով սուրբ գրությունների ուսումնասիրությունը և հաղորդության ժողովներին մեր վկայություններով կիսվելն ավելի հեշտ և ավելի արդյունավետ է, երբ երեխաները դեռևս փոքր են: Փոքր երեխաներն ավելի զգայուն են Հոգու հանդեպ, քան մենք պատկերացնում ենք:

Երբ նրանք մեծանան, նրանք կհիշեն այն երգերը, որոնք երգել են ձեր հետ: Երաժշտությունից առավել նրանք կհիշեն սուրբ գրությունների բառերն ու վկայությունը: Սուրբ Հոգին բոլոր բաները կարող է արթնացնել նրանց հիշողության մեջ, սակայն սուրբ գրությունների խոսքերն ու օրհներգերը ամենաերկարը կհիշվեն: Եթե նրանք շեղվեն ճանապարհից ինչ-որ ժամանակ, հնարավոր է տարիներով, այդ հիշողությունները նրանց վրա կներգործեն՝ վերադարձնելով տուն՝ դեպի հավերժական կյանք:

Մենք երկարաժամկետ տեսանկյունից պետք է նայենք, երբ նրանք ում մենք սիրում ենք, զգում են աշխարհի ազդեցությունը և կասկածի զգացումը կարծես ճնշում է նրանց հավատքը: Մենք ունենք հավատք, հույս ու գթություն մեզ առաջնորդելու և նրանց ամրացնելու համար:

Ես դա տեսել եմ Աստծո երկու մարգարեների խորհրդական եղած ժամանակ: Նրանք առանձին բնավորության տեր անհատներ են: Սակայն նրանք երկուսն էլ ունեին հետևողական լավատեսություն: Երբ ինչ-որ մեկն ահազանգում էր Եկեղեցու գործերի մասին, նրանց հաճախակի տրվող պատասխանն էր. «Օ՜, ամեն ինչ լավ կլինի»: Սովորաբար նրանք ավելի շատ գիտեին ահազանգվող խնդրի մասին, քան այդ ահազանգը հնչեցնող մարդիկ:

Նրանք նաև գիտեն Տիրոջ ուղին և այսպիսով, նրանք մշտապես հույսով լեցուն են Նրա թագավորության հանդեպ: Նրանք գիտեն, որ Նա է ղեկավարում Եկեղեցին: Նա ամենակարողն է և Նա հոգ է տանում: Եթե դուք թույլ տաք, որ Նա լինի ձեր ընտանիքի առաջնորդը, ապա ամեն ինչ լավ կլինի:

Հենրիխ Այրինգի հետնորդներից ոմանք կարծես թե մոլորվել էին: Բայց նրա ծոռներից շատերը գնում են տաճար առավոտյան ժամը 6:00, որպեսզի արարողություններ կատարեն այն նախնիների համար, որոնց երբեք չեն տեսել: Նրանք գնում են, քանի որ նա թողել է հույսի ժառանգություն: Նա այնպիսի ժառանգություն է թողել, որը հայցում են նրա հետնորդներից շատերը:

Հավատքով գործելուց հետո Տերը մեր ընտանիքների համար կարդարացնի օրհնություններ ունենալու մեր հույսերը ավելի շատ, քան մենք կարող ենք պատկերացնել: Մեզ և նրանց՝ որպես Իր զավակների, Նա ցանկանում է ամենալավը:

Մենք բոլորս էլ կենդանի Աստծո զավակներն ենք: Հիսուս Նազովրեցին Նրա Սիրելի Որդին է և մեր հարություն առած Փրկիչը: Սա Նրա Եկեղեցին է: Այստեղ են քահանայության բանալիները և այստեղ ընտանիքները կարող են հավերժ լինել: Սա է մեր հույսի անգին ժառանգությունը: Ես վկայում եմ, որ դա ճշմարիտ է, Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՆԵՌՈՒՄՆԵՐ

1. Henry Eyring, Reminiscences, circa 1880–1896, typescript, Church History Library, 16–21.
2. Աբրահամ 3.24–26:
3. 3 Նեփի 10.5:

Ներկայացնող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատում

Առաջարկվում են հաստատման Թոմաս Սպենսեր Մոնսոնը՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ; Հենրի Բենյոն Այրինգը՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆը՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, կարող են քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Բոյդ Քեննեթ Փաքերը՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, և հետևյալ անձինք՝ որպես այդ քվորումի անդամներ. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն և Նիլ Լ. Անդերսեն:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդականները և Տասներկու Առաքյալները՝ որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, արտահայտեք նույն կերպ:

Այսօր մենք անկեղծ երախտագիտությամբ ազատում ենք Երեց Թեդ Ռ. Քալիսթերին որպես Բարձրագույն Իշխանություն և Յոթանասունի Քվորումի Նախագահության անդամ:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և երախտագիտություն հայտնել, խնդրում ենք, քվեարկել:

Առաջարկվում է հաստատման Երեց Լին Գ. Ռոբինսը՝ որպես Յոթանասունի Քվորումների Նախագահության անդամ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Առաջարկվում է ազատել հետևյալ Տարածքային Յոթանասունականներին 2014թ. մայիսի 1-ից. Պեդրո Ե. Աբուլարախ, Ջուլիո Ա. Անգուլո, Վիկտոր Ա. Ասկոնավիետա, Դաք Սու Բեյ, Խուան Ս. Բարոս, Քոլին Հ. Բրիքնել, Դենիս Ս. Բրիմհալ, Թոմաս Մ. Չերինգտոն, Կիմ Բ. Քլարկ, Վին Ռ. Դյուսնապ: Ռոդոլֆո Ս. Ֆրանկո, Գ. Գուլերմո Գարսիա, Խուլիո Ս. Գոնզալես, Մաուրո Յունոտ ԴեՄարիա, Լարի Ս. Կախեր, Դեյվիդ Ե. Լեսյուր, Պաուլո Ս. Լուրեյրո, Սթիվեն Ջ. Լանդ, Աբրահամ Մարտինեզ, Հյուգո Ե. Մարտինեզ, Սերգեյ Ն.

Վաշինգտոն, Յուտա, ԱՄՆ

Միկուլին, Քրիստոֆեր Բ. Մանդեյ, Հիրոֆումի Նակացուկա, Չիկաո Օիշի, Ալեխանդրո Ս. Պատանիա, Ռենատո Մ. Պելտա, Անատոլի Կ. Ռեշետնիկով, Ջոնաթան Ս. Ռոբերտս, Ջ. Քրեյգ Ռոու, Ռոբերտ Բ. Սմիթ, Վորեն Գ. Թեյթ, Հեսբոն Օ. Ուսի, Թանիելա Բ. Վակոլո, Ռենդի Վ. Վիլկինսոն և Չի Հոնգ (Սեմ) Վոնգ:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս եղբայրների հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում է խորը երախտագիտության քվեով ազատել Եղբայրներ Ռասսել Թ. Օսգութորփին, Դեյվիդ Մ. Մակքոնկիին և Մեթյու Օ. Ռիչարդսոնին որպես Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահությունից:

Նմանապես ազատվում են Կիրակնօրյա Դպրոցի գերագույն խորհրդի բոլոր անդամները:

Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս եղբայրներին և քույրերին նրանց հիանալի ծառայության և նվիրվածության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում են հաստատման որպես Յոթանասունի Առաջին Քվորումի նոր անդամներ՝ Չի Հոնգ (Սեմ) Վոնգը և Յորգ Քլեբինգատը, և որպես Յոթանասունի Երկրորդ Քվորումի նոր անդամներ՝ Լարի Ս. Կախերը և Հյուգո Ե. Մարտինեզը:

Ովքեր կողմ են, խնդրում ենք, քվեարկել:

Ովքեր դեմ են, նմանապես:

Հետևյալ անձինք առաջարկվում են հաստատման որպես Տարածքային նոր Յոթանասունականներ. Խուլիո Սեզար Ակոստա, Բլեյք Ռ. Ալդեր, Ալեյն Ս. Ալլարդ, Թաիչի Առբա, Կառլոս Ֆ. Առեդոնդո, Վլադիմիր Ն. Աստաշով, Յորգ Տ. Բեկերա, Մայքլ Հէ. Բուրն, Ռոմուլո Վ. Կաբրերա, Խոսե Կլաուդիո Ֆ. Կամպոս, Նիկոլաս Կաստանեդա, Վալտեր Չատորա, Ֆուկ Չուեն Զենո Չոու, Ջ. Քեվին Էնս, Կ. Մարկ Ֆրոստ, Մաուրիչիո Գ. Գոնզագա, Լեոնարդ Դ. Գրիեր, Խոսե Իսագիեր, Մայքլ Ռ. Ջենսեն, Ադոլֆ

Յոհան Յոհանսոն, Թե Գուլ Յունգ, Վիսիտ Խանախամ, Մերհի Ա. Կովալով, Սերժիո Կրասնոսելսկի, Միլան Ֆ. Կունց, Բրայըն Ռ. Լարսեն, Ջերալդո Լիմա, Վ. Ջան-Պյեր Լոնո, Տասարա Մակասի, Խումբուլանի Մդլեչե, Դեյլ Հ. Մանկ, Էդուարդո Ա. Նորամբուենա, Յուտակա Օնդա, Ռայմունդո Պաչեկո ԴեՊինհո, Մարկո Անտոնիո Ռեյս, Սթիվեն Կ. Ռանդալ, Ռ. Սքոթ Ռունիա, Ալեքսեյ Վ. Սամայկին, Էդվին Վ. Սեքստոն, Ռաուլ Հ. Սպիտալե, Կառլոս Վալտեր Տրեվինո և Խուան Ա. Ուռա:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել:

Դե՞մ:



Առաջարկվում են հաստատման որպես Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահ՝ Թեդ Ռ. Քալիսթերը, որպես առաջին խորհրդական՝ Ջոն Ս. Թաները, և երկրորդ խորհրդական՝ Դեվին Գ. Դյուրանը:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվերակել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Հարկ ենք համարում նշել, որ Եղբայրներ Թաները և Դյուրանը՝ երկուսն էլ ծառայում են որպես միսիաների նախագահներ, հետևաբար, ներկա չեն այստեղ՝ Համաժողովների Կենտրոնում:

Նրանք կսկսեն իրենց ծառայությունը Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահությունում 2014թ. հուլիսին, երբ ազատվեն որպես միսիաների նախագահներ:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանությունները, Տարածքային Յոթանասունականները և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:.

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր հաստատող ձայնի և մեզ համար ձեր մշտական հավատքի և աղոթքների համար:

Մենք հրավիրում ենք նոր կանչված Բարձրագույն Իշխանություններին առաջ գալ և զբաղեցնել իրենց տեղերը բեմահարթակում: ■

Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2013թ.

Ներկայացնող՝ Քեվին Ռ. Յերգենսեն
Եկեղեցու աուդիտի բաժնի գործադիր տնօրեն

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությանը

Հարգելի Եղբայրներ, ինչպես ասվում է Վարդապետություն և Ուխտերի 120-րդ բաժնում տրված հայտնության մեջ, Եկեղեցու ֆոնդերի ծախսերը հաստատում է Տասանորդների տնօրինման խորհուրդը, որը կազմված է Առաջին Նախագահությունից, Տասներկու Առաքյալների Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից: Եկեղեցու բաժինները ծախսում են ֆոնդերը ըստ հաստատված բյուջեների և համաձայն Եկեղեցու քաղաքականությանը ու ընթացակարգերին:

Եկեղեցու աուդիտի բաժինը, որը բաղկացած է հավաստագրյալ մասնագետներից և գործում է Եկեղեցու մյուս բաժիններից անկախ, պատասխանատվություն է կրում կատարելու աուդիտներ, որպեսզի խելամիտ վերահսկողություն հաստատվի ստացվող նվիրատվությունների, կատարվող ծախսերի և Եկեղեցու ակտիվները պահպանելու ուղղությամբ:

Հիմնվելով կատարված հաշվեստուգումների վրա, Եկեղեցու աուդիտի բաժինն այն կարծիքին է, որ 2013 թվականին բոլոր նյութական հարցերին առնչվող ստացված նվիրատվությունները, կատարված ծախսերը և Եկեղեցու ակտիվները հաշվառվել և տնօրինվել են համապատասխան Եկեղեցու հաշվապահական գործառույթների, հաստատված բյուջեի, քաղաքականությանը և ընթացակարգերին: Եկեղեցին հետևում է իր անդամներին ուսուցանվող քաղաքականությանը՝ ապրել բյուջեի սահմաններում, խուսափել պարտքից և խնայողություններ կատարել կարիքի ժամանակի համար:

Հարգանքներով ներկայացրեց
Եկեղեցու աուդիտի բաժինը
Քեվին Ռ. Յերգենսեն
Գործադիր տնօրեն ■

Վիճակագրական հաշվետվություն, 2013թ.

Ներկայացնող՝ Բրուք Պ. Հեյլս
Առաջին Նախագահության
Քարտուղար

Հ տեղեկություն Եկեղեցու անդամության վերաբերյալ, Առաջին Նախագահությունը հրապարակել է Եկեղեցու 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալ վիճակագրական հաշվետվությունը Եկեղեցու աճի և կարգավիճակի մասին:

Եկեղեցու միավորներ

Ցցեր	3,050
Միսիաներ	405
Շրջաններ	571
Ծխեր և ճյուղեր	29,253

Եկեղեցու անդամություն

Անդամների ընդհանուր թիվը՝	15,082,028
Նոր գրանցված երեխաներ՝	115,486
Մկրտված նորադարձներ՝	282,945

Միսիոներներ

Լիաժամկետ միսիոներներ՝	83,035
Եկեղեցում ծառայող միսիոներներ՝	24,032

Տաճարներ

2013թ. նվիրագործված տաճարներ (Թեգուսիգալպա Հոնդուրաս Տաճար)՝	1
Գործող տաճարներ տարեվերջին՝	141



Երեց Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Ցույց տվեք ձեր հավատքը

Օրեցօր, դեպի ձեր հավերժական ճակատագիրը տանող ուղով քայլելիս, ավելացրեք ձեր հավատքը: Հոչակեք ձեր հավատքը: Ցույց տվեք ձեր հավատքը:

Սիրելի եղբայրներ և քույրեր, մենք մեր խորը սերն ու երախտագիտությունն ենք հայտնում ձեզ: Մենք երախտապարտ ենք, որ ձեր մեջ ենք ծառայում:

Վերջերս թռիչքի ժամանակ, մեր օդաչուն հայտարարեց, որ վայրէջքի պահին օդանավը կսկսի թափահարվել և խնդրեց բոլոր ուղևորներին ամրացնել իրենց անվտանգության գոտիները: Անշուշտ, օդանավը սկսեց թափահարվել, իրականում շատ ուժեղ: Մյուս շարքում մեզանից մի քիչ հեռու մի կին սարսափահար խուճապի էր մատնվել: Ամեն թափահարումից նա բարձրաձայն գոռում էր: Նրա ամուսինը փորձում էր հանգստացնել նրան, բայց՝ ապարդյուն: Նրա խուճապահար բղավոցները շարունակվեցին, մինչև որ մենք, անցնելով այդ անհանգիստ գոտին, ապահով վայրէջք կատարեցինք: Նրա համար անհանգիստ պահերին ես կարեկցում էի նրան: Քանի որ հավատքը վախի հակաթույնն է, ես մտքում ցանկանում էի, որ կարողանայի ամրացնել նրա հավատքը:

Ավելի ուշ, երբ ուղևորները դուրս էին գալիս օդանավից, այդ



կնոջ ամուսինը խոսեց ինձ հետ, ասելով. «Կներեք, որ կինս այդքան սարսափած էր: Ես նրան կարողանում էի սփոփել միայն, ասելով՝ «Երեց Նելսոնն այս օդանավի մեջ է, այնպես որ անհանգստանալու կարիք չկա»:

Չեմ կարծում, որ իմ ներկայությունն այդ օդանավում նրան պետք է սփոփեր, սակայն կասեմ, որ մահկանացու կյանքի իրականություններից մեկն այն է, որ մեր հավատքը փորձարկվում և փորձվում է: Երբեմն այն փորձվում է, երբ հայտնվում ենք կյանքի և մահու կռվում: Այդ սարսափահար կնոջ համար ուժգին թափահարվող ինքնաթիռը այդ պահերից մեկն էր, երբ ստուգվում է, թե որքան ուժեղ է մեր հավատքը:

Երբ խոսում ենք հավատքի մասին՝ հավատքի, որը կարող է սարեր տեղաշարժել, մենք չենք խոսում ընդհանրապես հավատքի, այլ առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքի մասին: Առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքը կարող է ամրանալ, երբ սովորում ենք Նրա մասին և ապրում մեր կրոնով: Հիսուս Քրիստոսի վարդապետությունը նախասահմանվել է Տիրոջ կողմից, որպեսզի օգնի մեզ մեծացնել մեր հավատքը: Ինչևէ, այսօրվա բնորոշմամբ *կրոն* բառը կարող է տարբեր մարդկանց համար տարբեր նշանակություն ունենալ:

Կրոն բառացիորեն նշանակում է՝ «կրկին կապվել» Աստծո հետ:[1] Ինքներս մեզ կարող ենք հարցնել, արդյո՞ք ամուր կապված ենք Աստծո հետ, որը մեր հավատքով է դրսևորվում, թե՞ իրականում կապված ենք ուրիշ ինչ-որ բանի հետ: Օրինակ, երկուշաբթի առավոտյան ես լսեցի մեկնաբանություններ սպորտային խաղերի մասին, որոնք տեղի էին ունեցել նախորդ կիրակի: Մտածում եմ, գուցե որոշ մոլի մարզասերների համար իրենց «կրոնը» իրենց «կրկին կապում է» միայն ինչ-որ թռչկոտող գնդակի հետ:

Յուրաքանչյուրս կարող ենք հարցնել ինքներս մեզ՝ ինչի՞ մեջ է մեր հավատքը: Այն արտահայտվում է թիմի՞, ապրանքանիշի՞, թե՞ հանրաճանաչ մարդու մեջ: Լավագույն թիմերն անգամ կարող են ձախողվել: Հանրաճանաչ մարդիկ կարող են խամրել: Կա միայն Մեկը, ում մեջ ձեր հավատքը միշտ ապահով է, իսկ դա Տեր Հիսուս Քրիստոսն է: Եվ դուք պետք է ցույց տաք ձեր հավատքը:

Իր Տաս պատվիրաններից *առաջինում* Աստված հայտարարեց.

«Բացի ինձանից ուրիշ աստուածներ չունենաս»։[2] Նա նաև ասաց. «Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք»։[3] Այդուհանդերձ, շատ մարդիկ խաղաղություն են գտնում, նայելով իրենց բանկի մնացորդին կամ ընկերներին՝ օրինակ վերցնելով նրանցից։

Բժիշկների, ակադեմիկոսների և քաղաքական գործիչների հավատքը հաճախ է փորձության ենթարկվում։ Իրենց նպատակներին հետամուտ լինելիս արդյոք նրանց կրոնը կարտահայտվի՞, թե կթաքցվի։ Արդյոք նրանք կապված են Աստծո՞, թե՞ մարդու հետ։

Ես նման փորձություն անցա տարիներ առաջ, երբ իմ բժիշկ գործընկերներից մեկն ինձ հանդիմանեց, որ չեմ զատում իմ մասնագիտական գիտելիքը կրոնական համոզմունքներից։ Նա պահանջեց, որ ես *չմիացնեմ* այդ երկուսը։ Ինչպե՞ս կարող էի դա անել։ Ճշմարտությունը ճշմարտություն է։ Դա անբաժանելի է, և դրա մասերից ոչ մեկը չի կարող անտեսվել։

Անկախ նրանից, թե ճշմարտությունը ի հայտ է գալիս գիտական լաբորատորիայում, թե հայտնության միջոցով, ողջ ճշմարտությունը գալիս է Աստծուց։ Ողջ ճշմարտությունը հանդիսանում է Հիսուս Քրիստոսի ավետարանի մասը։[4] Չնայած որ իմ գործընկերը խնդրեց ինձ թաքցնել իմ հավատքը, ես չկատարեցի նրա խնդրանքը։ Ես ցույց տվեցի իմ հավատքը։

Բոլոր մասնագիտություններում էլ խիստ ճշգրիտ չափանիշներ են պահանջվում։ Գիտնականները փայփայում են իրենց մտքերն արտահայտելու ազատությունը։ Բայց լիարժեք ազատություն չես կարող զգալ, եթե քո գիտելիքի մի մասը չի ընդունվում մարդկանց օրենքներով։

Հոգևոր ճշմարտությունը չի կարող անտեսվել՝ հատկապես աստվածային պատվիրանները։ Աստվածային պատվիրանները պահելու արդյունքում օրհնություններ են գալիս՝ ամեն անգամ։ Աստվածային պատվիրանները խախտելու արդյունքում օրհնություններ են կորսվում՝ ամեն անգամ։[5]

Խնդիրները շատ են այս աշխարհում, որովհետև այն լի է անկատար մարդկանցով։ Նրանց նպատակների և ցանկությունների վրա մեծապես ազդում է իրենց հավատքը կամ դրա պակասը։ Շատերն այլ առաջնահերթություններ են դնում Աստծուց առաջ։ Ոմանք էլ արդի կյանքում կրոնը տեղին չեն համարում։ Ինչպես ամեն դարաշրջանում, այնպես էլ այսօր կան այնպիսիք, ովքեր ծաղրում կամ քննադատում են հավատքի ազատ դավանումը։ Ոմանք անգամ համարում են, որ կրոնը հանդիսանում է աշխահում շատ չարիքների պատճառ։ Ճիշտ է եղել են ժամանակներ, երբ վայրագություններ են տեղի ունեցել կրոնի անվան տակ։ Բայց Տիրոջ անարատ կրոնով ապրելը, ինչը նշանակում է՝ ձգտել դառնալ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտ, կենսակերպ է և ամենօրյա պարտավորվածություն, որը կպարգևի աստվածային առաջնորդություն։ Ապրելով ձեր կրոնով, դուք գործադրում եք ձեր հավատքը։ Դուք ցույց եք տալիս ձեր հավատքը։

Տերը գիտեր, որ Իր զավակներին անհրաժեշտ կլիներ իմանալ, ինչպես կարող էին գտնել Իրեն։ «Քանզի նեղ է դուռը,- ասել է Նա,- և անձուկ է ճանապարհը, որ տանում է դեպի վեհացում, . . . և քչերը կլինեն, որ կգտնեն այն»։[6]

Սուրբ գրությունները ներկայացնում են մեր ուղին գտնելու և դրանից չշեղվելու լավագույն եղանակները։ Սուրբգրքյան գիտելիքը նաև անգին պաշտպանություն է ապահովում։ Օրինակ,

պատմության ընթացքում, վարակները, ինչպիսին ծննդաբերական տենդն է, բազմաթիվ անմեղ մայրերի և երեխաների կյանքեր է խլել: Սակայն ավելի քան 3 000 տարի առաջ գրված Հին Կտակարանում վարակված մարդկանց բուժելու ճիշտ սկզբունքներ են տրված:[7] Շատ մարդիկ մահացան, որովհետև մարդը գիտելիքի իր փնտրտուքներում ուշադրություն չի դարձրել Տիրոջ խոսքին:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ինչ ենք մենք կորցնում մեր կյանքում, եթե մենք «ամեն ժամանակ սովորում ենք, [բայց] և երբեք դեպի ճշմարտության գիտությունը չենք կարողանում գալ»:[8] Մենք կարող ենք մեծ գիտելիք ձեռք բերել սուրբ գրություններից և ոգեշնչվել հավատքով ասված աղոթքներից:

Դա կօգներ մեզ ամենօրյա որոշումներ կայացնելիս: Հատկապես, երբ մարդու կողմից օրենքներ են ստեղծվում և գործադրվում, Աստծո օրենքները պետք է միշտ լինեն մեր չափանիշը: Հակասական խնդիրներին առնչվելիս մենք պետք է նախ փնտրենք Աստծո առաջնորդությունը:

Մենք պետք է «բոլոր սուրբ գրությունները վերագրենք մեզ, . . . որպեսզի դա լինի մեր օգտի և ուսման համար»:[9] Վտանգ է սողոսկում, երբ մենք փորձում ենք բաժանել մեզ, օրինակ՝ «իմ անձնական կյանքը» կամ նույնիսկ «իմ լավագույն վարքը» արտահայտություններով: Եթե մեկը ցանկանում է իր կյանքն այդպես մասնատել, նա երբեք որպես անձ լիովին չի դրսևորվի, այսինքն՝ երբեք չի հասնի իր *ճշմարիտ* ինքնությանը:

Հանրաճանաչ դառնալու գայթակղությունը կարող է հասարակական կարծիքը վեր դասել Աստծո խոսքից: Քաղաքական քարոզարշավները և շուկայական ռազմավարությունները իրենց ծրագրերը կազմելու նպատակով լայնորեն կիրառում են հասարակական կարծիքի հարցումներ: Այդ հարցումների արդյունքները տեղեկատվական բնույթ են կրում: *Սակայն* դժվար թե կարողանան հիմք հանդիսանալ՝ արդարացնելու Աստծո պատվիրաններին անհնազանդությունը: Անգամ եթե «ինչ-որ մեկն անում է դա», սխալը երբեք ճիշտ չէ: Չարիքը, սխալը և խավարը երբեք ճշմարտություն չեն, անգամ եթե հանրաճանաչություն են վայելում: Նույնն է հայտարարում այս սուրբգրքյան զգուշացումը. «Վա՜յ նրանց, որ չարին ասում են բարի, և բարիին՝ չար. որ խավարը շինում են լույս, և լույսը՝ խավար»:[10]

Առաջին Համաշխարհայինից հետո, մի բավականին վտանգավոր երգ էր տարածված: Անբարոյականությունը գովազդելով այն խոստանում էր, որ 50 միլիոն մարդ չի կարող սխալ լինել: Բայց իրականում, 50 միլիոն մարդ *կարող* է սխալ լինել՝ լիովին սխալ: Անբարոյականությունը դեռևս անբարոյականություն է Աստծո աչքում, ով մի օր կդատի մեր բոլոր գործերը և ցանկությունները:[11]

Ի տարբերություն այսօր աշխարհում տիրող վախին և անհավատությանը, հավատքով և քաջությամբ լի էր իմ սիրելի դուստր Էմիլին, ով այժմ ապրում է վարագույրից այն կողմ: Երբ մահկանացու կյանքը լքում էր նրա քաղցկեղից կեղեքված մարմինը, նա հազիվ էր կարողանում խոսել: Բայց ժպիտը դեմքին նա ինձ ասաց. «Հայրի՛կ, մի անհանգստացիր ինձ համար: Ես գիտեմ, որ ինձ հետ ամեն ինչ լավ է լինելու»: Էմիլիի հավատքը փայլում էր, փայլում էր պայծառ, այդ հուզիչ պահին, երբ մենք դրա կարիքը շատ ունեինք:

Հինգ զավակների այդ հրաշալի երիտասարդ մայրը անտարակույս հավատում էր իր Երկնային Հորը, Նրա ծրագրին և իր ընտանիքի հավերժական բարօրությանը: Նա ամուր կապված էր Աստծո հետ: Նա լիովին հավատարիմ էր Տիրոջ և իր ամուսնու հետ կապած ուխտերին: Նա սիրում էր իր զավակներին, սակայն խաղաղ էր, չնայած որ նրանցից իր անջատումն անխուսափելի էր: Նա հավատում էր իր և նրանց ապագային, որովհետև նա հավատք ուներ առ մեր Երկնային Հայրը և Նրա Որդին:

1986թ. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Անշուշտ, մենք կդիմակայենք վախին, մեզ կծաղրեն և կընդիմանան: Եկեք քաջություն ունենանք արհամարհելու միակարծությունը, քաջություն՝ կանգնելու սկզբունքի համար: Ոչ թե փոխզիջումը, այլ քաջությունն է արժանանում Աստծո հավանությանը: . . . Հիշեք, որ բոլոր մարդիկ ունեն իրենց վախերը, բայց նրանք, ովքեր դիմակայում են իրենց վախերին [հավատքով], նաև քաջություն ունեն»:[12]

Նախագահ Մոնսոնի խորհուրդը հավիտենական է: Այնպես որ, խնդրում եմ ձեզ, իմ սիրելի եղբայրներ և քույրեր, օրեցօր, դեպի ձեր հավերժական ճակատագիրը

տանող ուղով քայլելիս ավելացրեք ձեր հավատքը: Հռչակեք ձեր հավատքը: Ցույց տվեք ձեր հավատքը:[13]

Ես աղոթում եմ, որ դուք կրկին ամուր կապվեք Աստծուն, որ Նրա հավերժական ճշմարտությունները փոխանցվեն ձեր սրտում հավետ: Եվ աղոթում եմ, որ կյանքում դուք ցույց տաք ձեր հավատքը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Երբ երեխան ծնվում է, պարտալարը երկու տեղից կապում են և կտրում այդ երկու կապերի մեջտեղից: Պորտալարը կապ է՝ ապահով կապ: *Կրոն* բառը լատինական արմատներ ունի, այն նշանակում է *կրկին կապվել*: Այսպիսով, մենք հասկանում ենք, որ կրոնը «հավատացիալներին կապում է Աստծո հետ»:
2. Ելից 20.3: Նաև Տերն ասում է. «Դարձի եկեք և ետ դարձեք ձեր կուռքերիցը, և ձեր բոլոր պղծություններիցը ետ դարձրեք ձեր երեսները» (Եզեկիել 14.6):
3. Վարդապետություն և Ուխտեր 6.36:
4. Տես Spencer W. Kimball, *The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball (1982), 391:
5. Տես Մոսիա 2.41; Վարդապետություն և Ուխտեր 58.30–33; 82.10: Այս սկզբունքը վերաբերում է բոլորին, քանզի «Աստված աչառ չէ» (Գործք 10.34; տես նաև Մորոնի 8.12):
6. Վարդապետություն և Ուխտեր 132.22:
7. Տես Ղևտացոց 15.13:
8. Բ Տիմոթեոս 3.7:
9. 1 Նեփի 19.23:
10. Եսայիա 5.20:
11. Սուրբ գրություններն ուսուցանում են. «Եկե՛ք դեպի Տերը՝ Սուրբը: Հի՛շեք, որ նրա շավիղներն արդար են: Ահա, ճանապարհը մարդու համար նեղ է, բայց այն ձգվում է ուղիղ հունով նրա առջև, և դարպասի պահապանը Սուրբն է Իսրայելի. և այնտեղ նա չի պահում ոչ մի ծառա. և չկա ոչ մի ուրիշ ճանապարհ, բացի այդ դարպասից. քանզի նա չի կարող խաբվել, քանզի Տեր Աստված է նրա անունը» (2 Նեփի 9.41):
12. Թոմաս Ս. Մոնսոն, “Courage Counts,” *Ensign,* Nov. 1986, 41: Մեկ այլ առիթով Նախագահ Մոնսոնն այս ոգեշնչող հորդորն է հղել. «Լավ ապրելու համար, մենք պետք է զարգացնենք ունակություն անհանգստությունը արիությամբ դիմակայելու, հուսահատությունը՝ ուրախությամբ, իսկ հաղթանակը՝ խոնարհությամբ: . . . Մենք որդիներն ու դուստրերն ենք կենդանի Աստծո, որի պատկերով մենք ստեղծվեցինք: . . . Մենք չենք կարող մեր սրտում կրել այդ համոզմունքը, եթե չունենանք ուժի և զորության լիովին նոր զգացում, այսինքն՝ Աստծո պատվիրաններով ապրելու ուժ և սատանայի գայթակղություններին դիմակայելու զորություն» (“Yellow Canaries with Gray on Their Wings,” *Ensign,* July 1973, 43):
13. «Հրաժարվեք ամեն անաստվածությունից» (Մորոնի 10.32): Մի վախեցեք մարդուց առավել, քան Աստծուց (տես Վարդապետություն և Ուխտեր 3.7; 59.5):

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ
Տասներկու Առաքյալների Քվորումից

«Ես ձեզ օրինակ տուի»

Ամենամեծ օրինակը, ով երբևէ քայլել է երկրի վրա, մեր Փրկիչն է՝ Հիսուս Քրիստոսը: . . . Նա մեզ հրավիրում է հետևել Իր կատարյալ օրինակին:

Ավետարանով կիսվելու իմ պարտականության մասին խորհելիս, ես մտածում էի իմ սիրելի մարդկանց մասին, ում գորովալից ազդեցություններն օգնել են ինձ գտնել ի վերուստ նշանակված ուղին, որը նպաստել է իմ հոգևոր առաջընթացին: Իմ կյանքի կարևոր պահերին Երկնային Հայրն օրհնել է ինձ հանդիպել մեկին, ով բավականաչափ գութ է ունեցել իմ նկատմամբ, որպեսզի պատշաճ կերպով առաջնորդի իմ ընտրությունները: Նրանք հետևել են Փրկչի այս խոսքերին. «Որովհետև ես ձեզ օրինակ տուի, որ ինչպէս ես ձեզի արի, դուք էլ անէք»:[1]

Երբ ես երեխա էի, հայրս Եկեղեցու անդամ չէր, իսկ մայրս դարձել էր ավելի քիչ ակտիվ: Մենք ապրում էինք Վաշինգտոն քաղաքում, իսկ մայրիկիս ծնողներն ապրում էին Վաշինգտոն նահանգում, որը մեզանից 2,500 մղոն (4000կմ) հեռավորության վրա էր: Իմ ութերորդ տարեդարձից մի քանի ամիս անց Ուիթլ տատիկը երկրի մի ծայրից մյուսը եկավ, որպեսզի այցելեր մեզ: Տատիկին անհանգստացնում էր այն, որ ոչ ես, ոչ էլ իմ ավագ եղբայրը մկրտված չէինք: Ես չգիտեմ, թե նա ինչ ասաց իմ ծնողներին այս մասին, բայց ես գիտեմ, որ մի առավոտ նա եղբորս ու ինձ այգի տարավ ու մեզ հետ կիսվեց մկրտվելու ու Եկեղեցու ժողովներին պարբերաբար հաճախելու կարևորության մասին: Ես չեմ հիշում այն մանրամասներն, ինչ նա ասաց, բայց նրա խոսքերը սրտումս ինչ-որ բան արթնացրեցին, և շուտով իմ եղբայրն ու ես մկրվեցինք:

Տատիկը շարունակում էր աջակցել մեզ: Ես հիշում եմ, որ ամեն անգամ, երբ եղբորս կամ ինձ հանձնարարվում էր ելույթ ունենալ եկեղեցում, մենք զանգահարում էինք նրան և խնդրում մտքեր առաջարկել: Մի քանի օրվա ընթացքում փոստով ձեռագիր մտքեր էինք ստանում: Որոշ ժամանակ անց նրա մտքերը վերածվում էին մի համառոտ շարադրանքի, որը մեզանից ավելի շատ ջանք էր պահանջում:

Տատիկը պարզապես գործադրեց ճիշտ չափով խիզախություն ու հարգանք, որպեսզի օգներ մեր հայրիկին ընդունել մեր ժողովների համար մեզ եկեղեցի տանելու

կարևորությունը: Նա օգնում էր մեզ զգալ ավետարանի անհրաժեշտությունը մեր կյանքում ամեն համապատասխան ձևով:

Ամենակարևորն այն էր, որ մենք գիտեինք, որ տատիկը սիրում էր մեզ, և որ նա սիրում էր ավետարանը: Նա սքանչելի՜ օրինակ էր: Որքա՜ն երախտապարտ եմ այն վկայության համար, որ նա կիսվեց ինձ հետ, երբ շատ երիտասարդ էի: Նրա ազդեցությունը փոխեց իմ կյանքի ուղին, որը բերեց հավերժական օրհնություններ:

Ավելի ուշ, երբ ես պատրաստվում էի ավարտել համալսարանը, ես սիրահարվեցի մի գեղեցիկ աղջկա, ում անունը Ջենին Վոտքինս էր: Ես կարծում էի, որ նա նույնպես սկսել էր խորը զգացմունքներ տածել իմ նկատմամբ: Մի երեկո, երբ մենք խոսում էինք ապագայի մասին, նա զգուշորեն զրույցի մեջ մտցրեց մի համոզմունք, որն ընդմիշտ փոխեց իմ կյանքը: Նա ասաց. «Երբ ես ամուսնանամ, ապա դա կլինի տաճարում՝ հավատարիմ, վերադարձած միսիոների հետ»:

Ես այդքան էլ չէի մտածել միսիայի մասին դրանից առաջ: Այդ երեկո միսիոներական ծառայության մասին մտածելու իմ դրդապատճառը կտրուկ փոխվեց: Ես գնացի տուն և չէի կարողանում այլ բանի մասին մտածել: Ես արթուն էի ողջ գիշերվա ընթացքում: Հաջորդ օրն ամբողջովին մտացիր էի դասերիցս: Շատ աղոթքներից հետո ես որոշեցի հանդիպել իմ եպիսկոպոսի հետ և սկսել իմ միսիոներական դիմումը:

Ջենինը երբեք չի խնդրել ինձ ծառայել միսիայում *իր համար*: Նա բավականաչափ սիրում էր ինձ, որպեսզի կիսվեր իր համոզմունքով և այնուհետև հնարավորություն տար ինձ ծրագրել իմ սեփական կյանքը: Մենք երկուսս էլ ծառայեցինք միսիայում և ավելի ուշ կնքվեցինք տաճարում: Ջենինի խիզախությունն ու նվիրվածությունն իր հավատքին մեր միասնական կյանք բերեցին մեծ տարբերություն: Ես վստահ եմ, որ մենք չէինք գտնի այն երջանկությունը, որը մենք վայելում էինք, եթե չլիներ առաջին հերթին Տիրոջը

ծառայելու սկզբունքի նկատմամբ նրա ամուր հավատքը: Նա հրաշալի, արդարացի օրինակ է:

Ուիթլ տատիկն ու Ջենինը սիրում էին ինձ բավականաչափ, որպեսզի կիսվեին իրենց համոզմունքներով, որ ավետարանի արարողություններն ու Երկնային Հորը ծառայելն օրհնելու էին իմ կյանքը: Նրանցից ոչ ոք չստիպեց ինձ և ոչ էլ այնպես արեց, որ վատ զգայի իմ անձի համար: Նրանք պարզապես սիրում էին ինձ և սիրում էին Երկնային Հորը: Երկուսն էլ գիտեին, որ Նա կարող էր ավելին անել իմ կյանքում, քան ես կարող էի անել ինքնուրույն: Նրանցից յուրաքանչյուրն ինձ համարձակությամբ ու սիրալիր կերպով օգնեց գտնել ամենամեծ երջանկության ուղին:

Ինչպե՞ս կարող է մեզանից յուրաքանչյուրը դառնալ նման կարևոր ազդեցություն: Մենք պետք է համոզված լինենք, որ ի սրտե սիրում ենք նրանց, ում անկեղծորեն ցանկանում ենք օգնել, ապա նրանք կկարողանան սկսել զարգացնել վստահություն Աստծո սիրո նկատմամբ: Շատերի համար ավետարանն ընդունելու առաջին դժվարությունը Երկնային Հոր նկատմամբ հավատք զարգացնելն է, ով սիրում է նրանց կատարելապես: Ավելի հեշտ է զարգացնել այդ հավատքը, երբ նրանք ունեն ընկերներ կամ ընտանիքի անդամներ, ովքեր սիրում են նրանց նման սիրով:

Օգնելով նրանց զարգացնել վստահություն ձեր սիրո նկատմամբ՝ կարող եք օգնել նրանց զարգացնել հավատք Աստծո սիրո նկատմամբ: Այնուհետև, ձեր սիրալիր, խոհեմ զրույցների միջոցով կօրհնվի նրանց կյանքը, երբ կիսվեք այն դասերով, որ սովորել եք, փորձառություններով, որ ունեցել եք և սկզբունքներով, որոնց հետևել եք, որպեսզի գտնեք լուծում ձեր խնդիրների համար: Ցուցաբերեք ձեր անկեղծ հետաքրքրվածությունը նրանց բարեկեցության նկատմամբ, այնուհետև կիսվեք Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին ձեր գիտելիքով:

Դուք կարող եք օգնել սկզբունքի և վարդապետության մեջ հիմնավորված եղանակներով: Նրանց, ում սիրում եք, խրախուսեք փորձել հասկանալ այն, ինչ Տերը կուզենար, որ նրանք անեին: Դա անելու եղանակներից մեկը նրանց այնպիսի հարցեր տալն է, որոնք նրանց մտորելու առիթ կտան, և այնուհետև բավականաչափ ժամանակ տրամադրելը՝ ժամեր, օրեր, ամիսներ կամ ավելին, որպեսզի խորհեն ու ինքնուրույն հասկանան դրանց պատասխանները: Դուք կարող եք օգնել նրանց սովորել ինչպես աղոթել և ինչպես ճանաչել իրենց աղոթքների պատասխանները: Օգնեք նրանց հասկանալ, որ սուրբ գրությունները կարևոր աղբյուր են պատասխաններ ստանալու և ճանաչելու համար: Այսպիսով, դուք կօգնեք նրանց նախապատրաստվել հետագա հնարավորություններին ու դժվարություններին:

Աստծո նպատակն է «իրականացնել մարդու անմահությունն

ու հավերժական կյանքը»:[2] Այն կազմում է մեր բոլոր գործողությունների հիմքը: Երբեմն մենք այնքան ենք խորասուզվում մեզ հրապուրիչ թվացող բաների մեջ, կամ այնքան ենք կլանվում երկրային պատասխանատվություններով, որ մեր տեսադաշտից կորցնում ենք Աստծո նպատակները: Եթե դուք հետևողականորեն կենտրոնացնեք ձեր կյանքն առավել հիմնական սկզբունքների վրա, դուք ձեռք կբերեք պատկերացում այն մասին, թե ինչ պետք է անեք, և ավելի շատ պտուղներ կունենաք Տիրոջ համար, և ավելի մեծ ուրախություն՝ ձեզ համար:

Եթե դուք կենտրոնացնեք ձեր կյանքը փրկության ծրագրի հիմնական սկզբունքների վրա, դուք ավելի լավ հետամուտ կլինեք ձեր գիտելիքով կիսվելուն, քանի որ դուք կհասկանաք ավետարանի արարողությունների հավերժական կարևորությունը: Դուք կկիսվեք ձեր գիտելիքով այնպես, որը կխրախուսի ձեր ընկերներին հոգեպես ամրանալու ցանկություն ունենալ: Դուք կօգնեք ձեր սիրելիներին ցանկություն ունենալ նվիրվել ու հնազանդվել Նրա բոլոր պատվիրաններին և իրենց վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը:

Հիշեք, որ մարդկանց դարձի գալը կազմում է աշխատանքի միայն մի մասը: Միշտ ձգտեք ամրացնել ընտանիքները: Ուսուցանեք՝ հիշելով ընտանիքների տաճարում կնքվելու կարևորության մասին: Որոշ ընտանիքների դեպքում այն կարող է տևել տարիներ: Այսպես էր իմ ծնողների դեպքում: Իմ մկրտությունից շատ տարիներ անց հայրս մկրտվեց, և ավելի ուշ իմ ընտանիքը կնքվեց տաճարում: Հայրս տաճարում ծառայեց որպես կնքող, իսկ մայրս այնտեղ ծառայեց նրա հետ: Երբ դուք ունենաք տաճարային կնքման արարողության մտապատկերը, դուք կօգնեք կառուցել Աստծո արքայությունը երկրի վրա:

Հիշե՛ք, սիրելու միջոցով է, որ կկարողանաք ազդեցություն ունենալ նրանց վրա, ում ցանկանում եք օգնել: Իմ Ուիթլ տատիկի ու իմ կնոջ՝ Ջենինի ազդեցությունները

կլինեին աննշան, եթե ես առաջին հերթին չիմանայի, որ նրանք սիրում են ինձ ու ցանկանում են ինձ համար կյանքում լավագույնը:

Որպես այդ սիրո ուղեկից՝ վստահե՛ք նրանց: Որոշ դեպքերում հնարավոր է վստահելը դժվար թվա, բայց նրանց վստահելու որևէ եղանակ գտեք: Երկնային Հոր զավակները կարող են զարմանալի բաներ անել, երբ նրանք զգում են, որ իրենց վստահում են: Աստծո յուրաքանչյուր զավակ, ով ապրում է այս մահկանացու կյանքում, ընտրել է Փրկչի ծրագիրը: Վստահեք, որ եթե նրանց հնարավորություն տրվի, նրանք կրկին այդպես կվարվեն:

Սիդնեյ, Ավստրալիա

Կիսվեք այնպիսի սկզբունքներով, որոնք կօգնեն նրանց, ում սիրում եք, առաջ գնալ դեպի հավերժական կյանք տանող ճանապարհով: Հիշեք, մենք բոլորս աճում ենք տող առ տող: Դուք հետևել եք միևնույն օրինակին ավետարանի ըմբռնման մեջ: Ավետարանով ձեր կիսվելը *պարզ* դարձրեք:

Հիսուս Քրիստոսի Քավության մասին ձեր անձնական վկայությունը հզոր գործիք է: Դրան ուղեկցող միջոցներն են աղոթքը, Մորմոնի Գիրքն ու մյուս սուրբ գրությունները և քահանայության արարողությունների նկատմամբ ձեր նվիրվածությունը: Այս ամենը կնպաստեն Սուրբ Հոգու առաջնորդությանը, որին ապավինելը չափազանց կարևոր է ձեզ համար:

Արդյունավետ լինելու և Քրիստոսի նման գործելու[3] համար կենտրոնացեք ավետարանի այս հիմնական սկզբունքի վրա. Հիսուս Քրիստոսի *Քավությունը հնարավոր է դարձնում, որ մենք ավելի նմանվենք մեր Երկնային Հորը, այնպես որ մենք հավերժ կարող ենք ապրել մեր ընտանեկան միավորներում:*

Մեր աշխատանքի համար չկա ավելի հիմնարար վարդապետություն, քան Հիսուս Քրիստոսի Քավությունը: Ամեն պատշաճ

հնարավորության դեպքում վկայեք Փրկչի և Նրա Քավիչ զոհաբերության մասին: Կիրառեք սուրբ գրությունների այնպիսի հատվածներ, որոնք ուսուցանում են Նրա մասին, և թե ինչու է Նա հանդիսանում կատարյալ օրինակ կյանքում բոլորի համար:[4] Դուք պետք է ջանասիրաբար ուսումնասիրեք: Այնքան մի խորասուզվեք աննշան բաների մեջ, որպեսզի բաց թողնեք վարդապետությունն ու Տիրոջ ուսմունքները սովորելը: Ունենալով ամուր անձնական վարդապետական հիմք, դուք կլինեք զորեղ աղբյուր ուրիշների հետ այս կարևոր ճշմարտությամբ կիսվելու հարցում, ովքեր շատ ունեն դրա կարիքը:

Մենք արդյունավետ կերպով ծառայում ենք մեր Երկնային Հորը՝ արդարությամբ ներգործելով ուրիշների վրա ու ծառայելով նրանց:[5] Ամենամեծ օրինակը, ով երբևէ քայլել է երկրի վրա, մեր Փրկիչն է՝ Հիսուս Քրիստոսը: Իր ծառայությունը մահկանացու կյանքի ընթացքում լի էր ուրիշներին ուսուցանելով, ծառայելով և սիրելով: Նա սեղանի շուրջ էր նստում այնպիսի մարդկանց հետ, ովքեր արժանի չէին Նրա ընկերակցությանը: Նա սիրում էր ամենքին: Նա նկատում էր նրանց կարիքները և ուսուցանում էր Իր ավետարանը: Նա մեզ հրավիրում է հետևել Իր կատարյալ օրինակին:

Ես գիտեմ, որ Նրա ավետարանը խաղաղության ու երջանկության ուղին է այս կյանքում: Թող որ մենք հիշենք անել այնպես, ինչպես Նա է արել՝ կիսվելով մեր սիրով, վստահությամբ և ճշմարտության մասին մեր գիտելիքով ուրիշների հետ, ովքեր դեռ չեն ընդունել ավետարանի պայծառ լույսը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Յովհաննու 13.15:
2. Մովսես 1.39:
3. Տես Յովհաննու 13.15:
4. Տես, օրինակ, Ղուկաս 22.39–46; Յովհաննու 8.3–11; Փիլիպպեցիս 4.13; Հակոբոս 5.15–16; 1 Ա. Յովհաննէսի 1.7; 2 Նեփի 1.15; 2; 25.17–30; 31; Հակոբ 4; Ալմա 7; 42; 3 Նեփի 11–30; Մորոնի 10.32–33; Վարդապետություն և Ուխտեր 18.10–16; 19.13–19; 29.3; 88.1–13; 138.2–4; Մովսես 5.6–12:
5. Տես Մատթէոս 22.35–40; Մոսիա 2.17:

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորումից

«Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք»

Հնազանդվելու համար մեր ազատ ընտրությունն օգտագործելը նշանակում է ընտրել «գործիր շիտակ, ինչ էլ որ պատահի»:

Եղբայրներ և քույրեր, Փրկչի կյանքից սովորած բոլոր դասերից ոչ մեկն այնքան պարզ և զորավոր չէ, որքան հնազանդության դասը:

Փրկչի օրինակը

Նախաերկրային կյանքում Երկնային խորհրդի ժամանակ Լյուցիֆերն ապստամբեց Երկնային Հոր ծրագրի դեմ: Նրանք, ովքեր հետևեցին Լյուցիֆերին, վերջ դրեցին իրենց հավերժական զարգացմանը. զգույշ եղեք, թե ում եք հետևում:

Ապա Հիսուսն արտահայտեց հնազանդվելու Իր պատրաստակամությունը, ասելով. «Հայր, քո կամքը կատարվի, և փառքը քոնը լինի հավիտյան»:[1] Իր ծառայության ընթացքում «նա կրեց գայթակղություններ, սակայն ուշք չդարձրեց դրանց»:[2] Իսկապես, «[նա] այն չարչարանքներիցը հնազանդութիւնը սովորեց»:[3]

Քանի որ մեր Փրկիչը հնազանդ էր, Նա քավեց մեր մեղքերը, հնարավոր դարձնելով մեր հարությունը և ուղի նախապատրաստելով մեզ համար, որ վերադառնանք մեր Երկնային Հոր մոտ, ով գիտեր, որ մենք սխալներ կկատարեինք, երբ մահկանացու կյանքում սովորեինք հնազանդություն: Երբ մենք հնազանդվում ենք, մենք ընդունում ենք Նրա զոհաբերությունը, քանի որ մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով վետարանի օրենքներին, արարողություններին և պատվիրաններին, որոնք տրված են ավետարանում:[4]

Հիսուսը հասարակ լեզվով սովորեցրեց մեզ հնազանդվել, որը հեշտ է հասկանալ. «Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք»[5] և «Եկ հետեւիր ինձ»:[6]

Երբ մենք մկրտվում ենք, մենք «[մեզ] վրա ենք վերցնում Քրիստոսի անունը» և մտնում ենք «ուխտի մեջ Աստծո հետ, որ [մենք կլինենք] մինչև [մեր] կյանքի վերջը հնազանդ»:[7] Ամեն կիրակի մենք նորոգում ենք մկրտության այդ ուխտը հաղորդություն ընդունելով

և վկայելով, որ մենք հոժար ենք պահելու պատվիրանները: Մենք ներում ենք փնտրում ցանկացած մտքի, զգացմունքի կամ արարքի համար, որը ներդաշնակ չէ մեր Երկնային Հոր կամքի հետ: Երբ մենք ապաշխարում ենք, անհնազանդությունից հրաժարվելով և կրկին սկսելով հնազանդվել, մենք ցույց ենք տալիս մեր սերը Նրա համդեպ:

Հնազանդության տեսակները

Երբ մենք ապրում ենք ավետարանին համաձայն, հնազանդության մեր հասկացողությունն աճում է: Երբեմն մենք կարող ենք գայթակղվել, գործադրելու, ինչպես ես եմ կոչում, «բնական մարդու հնազանդություն», ըստ որի մենք անհնազանդությամբ մերժում ենք Աստծո օրենքը՝ հօգուտ մեր իմաստության կամ ցանկությունների, կամ նույնիսկ հանրաճանաչության: Քանի որ սա լայն կիրառություն ունի շատերի կողմից, հնազանդության այս աղավաղումը պակասեցնում է Աստծո չափանիշները մեր մշակույթում և մեր կյանքում:

Երբեմն անդամները կարող են կիրառել «ընտրողական հնազանդություն», պնդելով, որ սիրում են Աստծուն և պատվում են Աստծուն, մինչդեռ ընտրում են, թե Նրա պատվիրաններից և ուսմունքներից, և Նրա մարգարեների ուսմունքներից և խորհուրդներից որոնց նրանք ամբողջությամբ կիետևեն:

Ոմանք հնազանդվում են ընտրողաբար, քանի որ չեն կարողանում ըմբռնել պատվիրանի բոլոր պատճառները, ճիշտ ինչպես երեխաները միշտ չէ, որ հասկանում են իրենց ծնողների խորհուրդների և օրենքների պատճառները: Սակայն, մենք միշտ գիտենք պատճառը, թե ինչու ենք հետևում մարգարեներին, քանի որ սա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է, և Փրկիչն է, որ բոլոր տնտեսություններում ղեկավարում է Իր մարգարեներին:

Երբ հնազանդության վերաբերյալ մեր հասկացողությունը խորանում է, մենք հասկանում ենք ազատ ընտրության հենակետային նշանակությունը: Երբ Հիսուսը Գեթսեմանիի այգում էր, Նա երեք անգամ աղոթեց Իր Երկնային Հորը. «Իմ Հայր, եթէ կարելի չէ, որ այս բաժակն ինձանից անցնի առանց իմ նորան խմելուս, քո կամքը լինի»:[8] Աստված չշրջանցեց Փրկչի ազատ ընտրությունը, այլ Նա ողորմածաբար հրեշտակ ուղարկեց, որ ամրացներ Իր Սիրելի Որդուն:

Փրկիչը հանդիպեց մեկ այլ փորձության Գողգոթայում, որտեղ Նա կարող էր կանչել հրեշտակների գնդեր, որպեսզի Նրան խաչից վայր իջեցնեին, սակայն Նա կատարեց Իր ընտրությունը՝ հնազանդորեն համբերելու մինչև վերջ և ավարտին հասցնելու Իր քավող զոհաբերությունը, չնայած որ այն պահանջում էր մեծ տառապանք, նույնիսկ մահ:

Հոգևորապես հասուն հնազանդությունը «Փրկչի հնազանդությունն է»: Այն հիմնվում է Երկնային Հոր և Նրա Որդու հանդեպ անկեղծ սիրո վրա: Երբ մենք հոժարությամբ հնազանդվում ենք, ինչպես արեց մեր Փրկիչը, մենք փայփայում ենք մեր Երկնային Հոր խոսքերը. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցի»:[9] Եվ մենք ակնկալում ենք, որ մեր Երկնային Հոր ներկայությունը մտնելիս կլսենք այս խոսքերը. «Լա՜ւ, բարի եւ հաւատարիմ ծառայ. . . . մտիր քո տիրոջ ուրախութիւնը»:[10]

Հնազանդվելու համար մեր ազատ ընտրությունն օգտագործելը

նշանակում է ընտրել «գործիր շիտակ, ինչ էլ որ պատահի»:[11] Այն պահանջում է ինքնատիրապետում և բերում է վստահություն, հավերժական երջանկություն և գոհունակության զգացողություն մեզ և մեր օրինակի շնորհիվ նրանց, ովքեր մեր շուրջն են, և այն միշտ ներառում է խորը անձնական պարտավորություն՝ աջակցելու քահանայության ղեկավարներին և հետևելու նրանց ուսմունքներին և խորհրդին:

Հետևանքներ

Երբ որոշում ենք հնազանդվել, թե ոչ, միշտ էլ օգտակար է հիշելը մեր մեղքերի հետևանքները: Արդյո՞ք Լյուցիֆերը և նրա հետևորդները հասկանում էին Երկնային Հոր ծրագիրը մերժելու ընտրության հետևանքները: Եթե այո, ապա ինչո՞ւ նրանք կատարեցին այդպիսի կործանարար ընտրություն: Մենք կարող ենք նմանատիպ հարց տալ ինքներս մեզ՝ Ինչո՞ւ է մեզանից որևէ մեկն ընտրում լինել անհնազանդ, երբ մենք գիտենք մեղքի հավերժական հետևանքները: Սուրբ գրությունները տալիս են պատասխանը. Կայենը և Ադամի ու Եվայի որոշ զավակներ ընտրեցին չհնազանդվել այն պատճառով, որ «նրանք Սատանային ավելի շատ սիրեցին, քան Աստծուն»:[12]

Փրկչի հանդեպ մեր սերը Փրկչի նման հնազանդվելու բանալին է: Մինչ մենք փորձում ենք հնազանդ լինել այսօրվա աշխարհում, մենք հայտարարում ենք մեր սերը և հարգանքը Երկնային Հոր բոլոր զավակների հանդեպ: Այնուամենայնիվ, անհնարին է, որ ուրիշների հանդեպ այս սերը փոխի Աստծո պատվիրանները, որոնք տրվել են մեր օգտի համար: Օրինակ, «մի սպանիր, ոչ էլ նման որևէ բան գործիր»[13] պատվիրանը հիմնված է հոգևոր օրենքի վրա, որը պաշտպանում է Աստծո բոլոր զավակներին, նույնիսկ չծնվածներին: Տարիների երկար փորձը ցույց է տալիս, որ երբ մենք անտեսում ենք այս օրենքը, արդյունքում անսահման ցավալի իրադարձություններ են առաջ գալիս: Այնուամենայնիվ, շատերը հավատում են, որ ընդունելի է ընդհատել դեռևս չծնված երեխայի կյանքը նախապատվության կամ հարմարության պատճառներով:

Անհնազանդությունը պատճառաբանելը չի փոխում հոգևոր օրենքը կամ դրա հետևանքները, այլ տանում է դեպի շփոթություն, անկայունություն, թափառում անծանոթ ճանապարհներով, մոլորություն և դժբախտություն: Որպես Քրիստոսի հետևորդներ, մենք ունենք սուրբ պարտավորություն՝ հաստատելու Նրա օրենքները և պատվիրանները, և ուխտերը, որոնք մենք վերցնում ենք մեզ վրա:

1831թ. դեկտեմբերին որոշ եղբայրներ կանչվեցին օգնելու մեղմացնել անբարյացակամ զգացմունքները, որ զարգացել էին Եկեղեցու դեմ: Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերն առաջնորդեց նրանց անսովոր, նույնիսկ անակնկալ ձևով.

«Կարկամեցրեք ձեր թշնամիներին. կանչեք նրանց՝ հանդիպելու ձեզ հետ՝ թե հրապարակավ, թե առանձին: . . .

Ուստի, թող նրանք առաջ բերեն իրենց զորավոր փաստերը Տիրոջ առաջ:

. . . Չկա ձեր դեմ պատրաստված զենք, որ հաջողություն ունենա.

Եվ եթե որևէ մարդ իր ձայնը բարձրացնի ձեր դեմ, նա պիտի կործանվի ինձ հարմար ժամանակ:

Ուստի, պահեք իմ պատվիրանները. դրանք ճշմարիտ են և հավատարիմ»:[14]

Դաս սուրբ գրություններում

Սուրբ գրությունները լի են մարգարեների օրինակներով, ովքեր հնազանդության դասեր են սովորել իրենց իսկ փորձառությունից:

Ջոզեֆ Սմիթը սովորեց իր բարերար, ընկեր և դպիր Մարտին Հարրիսի ճնշումներին զիջելու հետևանքները: Ի պատասխան Մարտինի խնդրանքներին՝ Ջոզեֆը թույլտվություն էր խնդրել Տիրոջից փոխ տալ Մորմոնի Գրքի առաջին 116 ձեռագիր էջերը, որպեսզի Մարտինը կարողանար ցույց տալ դրանք իր ընտանիքին, սակայն Տերն ասաց Ջոզեֆին ասել ոչ: Մարտինն աղերսեց Ջոզեֆին կրկին հարցնել Տիրոջը: Ջոզեֆի երրորդ խնդրանքից

հետո Տերը թույլ տվեց, որ հինգ որոշակի մարդիկ տեսնեին ձեռագրերը: «Ամենասրբազան ուխտով Մարտինը խոստացավ հետևել այս համաձայնությանը: Երբ նա տուն հասավ և ճնշումներ գործադրվեցին նրա վրա, նա մոռացավ իր սրբազան երդումը և թույլ տվեց ուրիշներին տեսնել ձեռագիրը, և արդյունքում նա կորցրեց ձեռագիրը»[15]: Որպես հետևանք, Ջոզեֆը հանդիմանվեց Տիրոջ կողմից և արգելվեց շարունակել Մորմոնի Գրքի թարգմանությունը: Ջոզեֆը տանջվեց և ապաշխարեց ուրիշների ճնշումներին զիջելու իր օրինազանցությունից: Որոշ ժամանակ անց Ջոզեֆին թույլ տրվեց վերսկսել իր թարգմանության աշխատանքը: Ջոզեֆը սովորեց հնազանդության արժեքավոր դաս, որն օգտակար եղավ նրան իր կյանքի մնացած օրերում:

Մովսես Մարգարեն տալիս է մեկ այլ օրինակ: Երբ Մովսեսը հնազանդորեն եթովպացուն կին վերցրեց իրեն, Մարիամը և Ահարոնը նրա դեմ խոսեցին: Սակայն Տերը հանդիմանեց նրանց, ասելով. «[Մովսեսի] հետ բերանէ բերան եմ խոսում»:[16] Տերն օգտագործեց այս անհավանական միջադեպը, որ սովորեցներ Եկեղեցու անդամներին մեր տնտեսությունում: 1830թ. Հայրում Փեյջը պնդում էր, որ հայտնություն է ստանում Եկեղեցու համար: Տերն ուղղեց նրան և սովորեցրեց Սրբերին. «Դու պետք է հնազանդ լինես այն բաներին, որոնք ես կտամ [Ջոզեֆին], ճիշտ ինչպես Ահարոնը»,[17] «քանզի նա ստանում է դրանք, ճիշտ ինչպես Մովսեսը»:[18]

Հնազանդությունը օրհնություններ է բերում, «եվ եթե մենք ինչ-որ օրհնություն ենք ստանում Աստծուց, դա այն օրենքին հնազանդվելով է, որի վրա հիմնված է այն»:[19]

Հնազանդությունն ուսուցանվում է օրինակի միջոցով: Մեր ապրելակերպով մենք սովորեցնում ենք մեր երեխաներին. «Սովորիր իմաստություն քո երիտասարդության տարիներին. այո, քո երիտասարդության տարիներին սովորիր պահել Աստծո պատվիրանները»:[20]

Հնազանդությունը մեզ դարձնում է ավելի ու ավելի ուժեղ, ունակ հավատարմորեն տանելու ապագայի փորձությունները: Գեթսեմանիում հնազանդ լինելը նախապատրաստեց Փրկչին հնազանդվելուն և համբերելուն Գողգոթայում մինչև վերջ:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, Ալմայի խոսքերն արտահայտում են իմ սրտի զգացմունքները.

«Եվ արդ, իմ սիրելի եղբայրներ, ես ասացի այս բաները ձեզ, որ ես կարողանայի զարթնեցնել ձեզ ի զգացումն ձեր պարտականության առ Աստված, որպեսզի դուք կարողանաք քայլել անարատ նրա առաջ . . .

Եվ արդ, ես կկամենայի, որ դուք լինեիք խոնարհ, և լինեիք հլու ու մեղմ, . . . լինելով ջանասեր Աստծո պատվիրանները պահելիս բոլոր դեպքերում»:[21]

Ես բերում եմ իմ հատուկ վկայությունը, որ մեր Փրկիչն ապրում է: Քանի որ Նա հնազանդվեց, «ամեն ծունկ պիտի ծալվի և ամեն լեզու խոստովանի . . . որ նա է [մեր Փրկիչը]»:[22] Թող որ մենք այնքան խորը սիրենք Նրան և այնքան լիարժեքորեն հավատանք Նրան, որ մենք նույնպես հնազանդվենք, պահենք Նրա պատվիրանները և վերադառնանք ապրելու Նրա հետ հավերժ մեր Աստծո թագավորության մեջ, սա իմ աղոթքն է Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 4.2:
2. Վարդապետություն և Ուխտեր 20.22:
3. Եբրայեցիս Ե.8:
4. Տես Հավատո Հանգանակ 1.3:
5. Հովհաննես ԺԴ.15:
6. Ղուկաս 18.22:
7. Մոսիա 5.8:
8. Մատթեոս ԻԶ.39, տես նաև հատվածներ 42, 44:
9. Մատթեոս Գ.17, տես նաև 3 Նեփի 11.7:
10. Մատթեոս ԻԵ.21:
11. «Գործիր շիտակ», *Օրհներգ,* համար 237:
12. Մովսես 5.13:
13. Վարդապետություն և Ուխտեր 59.6:
14. Վարդապետություն և Ուխտեր 71.7–11:
15. Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ, *Essentials in Church History,* (1922) 65, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 3:
16. Թվոց ԺԲ.8:
17. Վարդապետություն և Ուխտեր 28.3:
18. Վարդապետություն և Ուխտեր 28.2:
19. Վարդապետություն և Ուխտեր 130.21, տես նաև հատված 20:
20. Ալմա 37.35:
21. Ալմա 7.22–23:
22. Մոսիա 27.31:

Երեց Կլաուդիո Դ. Ջիվիկ
Յոթանասունից

Եկեք չբռնենք սխալ ճանապարհը

Ես աղոթում եմ, որ մենք չկորցնենք մեր տեսադաշտից ճանապարհը, որպեսզի միշտ կարողանանք կապված լինել երկնքի հետ, որպեսզի աշխարհի հոսանքը չքշի-տանի մեզ:

Մի փոքր տղա պարապում էր դաշնամուր, երբ վաճառքի գործակալը տեսավ նրան պատուհանից և հարցրեց. «Մայրդ տա՞նն է»:

Երեխան պատասխանեց. «Իսկ . . . ի՞նչ եք կարծում»:

Մեր հինգ թանկարժեք երեխաները դաշնամուր են նվագում ի շնորհիվ իմ կնոջ ոգևորվածության: Երբ ուսուցիչը գալիս էր մեր տուն մեր տղան՝ Ադրիանը փախչում և թաքնվում էր, որպեսզի բաց թողներ դասը: Բայց մի օր մի հրաշալի բան տեղի ունեցավ: Նա սկսեց այնքան սիրել երաժշտությունը, որ շարունակեց պարապել ինքնուրույն:

Եթե մենք կարողանանք մեր դարձի ընթացքում հասնել այդ կետի, դա հրաշալի կլինի: Հիանալի կլինի, եթե մենք մեր սրտի խորքում ցանկություն ունենանք պահելու պատվիրանները առանց որևէ մեկի անդադար հիշեցման և ունենանք հաստատուն համոզվածություն, որ եթե հետևենք ճիշտ ուղուն, կունենանք սուրբ գրություններում խոստացված օրհնությունները:

Մի քանի տարի առաջ ես գնացել էի Արչիս Ազգային Այգի կնոջս, մեր դստեր՝ Էվելինի և մեր ընտանիքի ընկերներից մեկի հետ: Այնտեղի ամենահայտնի կամարներից մեկը կոչվում է Փխրուն Կամար: Մենք որոշեցինք քայլել մոտ 2 կմ, բարձրանալով սարը՝ Փխրուն Կամարին հասնելու համար:

Մենք մեծ խանդավառությամբ սկսեցինք մեր ճանապարհը, սակայն կարճ տարածություն անցնելուց հետո նրանք հանգստանալու կարիք զգացին: Այնտեղ հասնելու իմ ցանկության պատճառով ես որոշեցի շարունակել մենակ: Առանց ուշադրություն դարձնելու այն ուղուն, որով պետք է գնայի, ես հետևեցի իմ առջևում գնացող մարդուն, ով, կարծես, ամենայն վստահությամբ առաջ էր շարժվում: Ճանապարհը դառնում էր ավելի ու ավելի դժվար և ես ստիպված էի ցատկել քարերի վրայով: Տեսնելով դժվարությունները, ես համոզված էի, որ իմ խմբի կանայք երբեք չէին կարող անցնել այն: Հանկարծ ես տեսա Փխրուն Կամարը, սակայն, ի մեծ զարմանս ինձ, տեսա նաև, որ այն մի վայրում էր, որն անհասանելի էր ինձ համար:

Մեծ հիասթափությամբ ես որոշեցի ետ դառնալ: Ես անհամբերությամբ սպասում էի, թե երբ էինք մենք հանդիպելու: Անհամբեր հարցրեցի. «Դուք հասա՞ք Փխրուն Կամարին»: Նրանք ուրախ պատասխանեցին, որ հասան: Նրանք բացատրեցին, որ հետևում էին ճանապարհը ցույց տվող նշաններին և ուշադիր ու ջանասեր լինելով, հասան իրենց նպատակակետին:

Դժբախտաբար ես գնացել էի սխալ ճանապարհով: Ինչպիսի մեծ դաս ես սովորեցի այդ օրը:

Որքա՞ն հաճախ ենք մենք սխալ ուղով ընթանում, երբ թույլ ենք տալիս մեզ տարվել աշխարհի ուղղություններով: Մենք պետք է շարունակ հարցնենք ինքներս մեզ, թե արդյոք մենք Հիսուս Քրիստոսի խոսքը կատարողներն ենք:

Զարմանահրաշ ուսմունք է տրվում Հովհաննեսի գրքում.

«Կացէք ինձանում՝ եւ ես ձեզանում. Ինչպէս որ ճիւղն իր անձիցը կարող չէ պտուղ բերել, եթէ որթումը չ'մնայ, այսպէս ոչ էլ դուք՝ եթէ ինձանում չ'մնաք:

Ես որթն եմ՝ դուք ճիւղերը. Նա որ ինձանում մնում է, եւ ես նորանում, նա շատ պտուղ է բերում. Որովհետեւ առանց ինձ չէք կարող ոչինչ անել» (Հովհաննես 15.4–5):

Այս նմանեցումն օգտագործելով, մենք կարող ենք տեսնել շատ սերտ և կատարյալ կապ, որը գոյությունի ունի Հիսուս Քրիստոսի հետ, և այն կարևորությունը, որը Նա տալիս է մեզանից յուրաքանչյուրին: Նա է արմատը և ցողունը, որով կենդանի ջուրը հասնում է մեզ, հյութը, որը սնուցում կտա մեզ, որպեսզի մենք շատ պտուղ տանք: Հիսուս Քրիստոսն ուսուցանել է մեզ այնպիսի ձևով, որ որպես ճյուղեր, կամ Իրենից կախված էակներ մենք երբեք չթերագնահատենք Նրա ուսմունքների արժեքը:

Կան սխալներ, որոնք լուրջ են, և եթե մենք չուղղենք դրանք ժամանակին, դրանք անընդհատ կշեղեն մեզ ճիշտ ուղուց: Եթե մենք ապաշխարենք և ընդունենք տրվող ուղղումը, ապա այդ փորձառությունները թույլ կտան խոնարհեցնել ինքներս մեզ, փոխել մեր արարքները և կրկին մոտենալ մեր Երկնային Հորը:

Ես ուզում եմ այս սկզբունքի վերաբերյալ մի օրինակ բերել, հղում կատարելով առավել ողբերգական պահերից մեկին, որն ապրել է Մարգարե Ջոզեֆ Սմիթը: Այդ փորձառության միջոցով Փրկիչը մեզ անգնահատելի ուսմունքներ է տվել այն սկզբունքների վերաբերյալ, որոնք մենք պետք է պահենք մեր մտքում մեր ողջ կյանքի ընթացքում: Դա տեղի ունեցավ, երբ Մարտին Հարիսը կորցրեց Մորմոնի Գրքի առաջին մասի 116 թարգմանված էջերը:

Աստծո խորհրդին չհետևելու համար ապաշխարելուց հետո Մարգարեն ստացավ հայտնություն, որը գտնվում է Վարդապետություն և Ուխտերի բաժին 3-ում (տես *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 69–71): 1-ից 10 հատվածներից ես կցանկանայի առանձնացնել երեք սկզբունք, որոնք մենք միշտ պետք է հիշենք.

1. Աստծո գործերը և նպատակները չեն կարող կանգնեցվել:
2. Մենք չպետք է վախենանք մարդուց ավելի, քան Աստծուց:
3. Գոյություն ունի անընդհատ ապաշխարության կարիք:

Հատված 13-ում Տերը մեզ ուսուցանում է, թե ինչ չորս գործողություններ մենք երբեք չպետք է կատարենք.

1. Արհամարհենք Աստծո խորհուրդները:
2. Խախտենք Աստծո առաջ տված առավել սրբազան խոստումները:
3. Հիմնվենք մեր սեփական դատողության վրա:
4. Ապավինենք մեր սեփական իմաստությանը:

Ես աղոթում եմ, որ մենք չկորցնենք մեր տեսադաշտից ճանապարհը, որպեսզի միշտ կարողանանք կապված լինել երկնքի հետ, որպեսզի աշխարհի հոսանքը չքշի-տանի մեզ:

Եթե ձեզանից որևէ մեկը հասնում է այն կետին, երբ լքում է Տիրոջ ուղին, այդ ճանապարհի ցանկացած կետում, ապա մեծ զղջանքով նա կզգա դառնությունը, որը գալիս է Աստծո խորհուրդներն

արհամարհելուց, Աստծո առաջ կատարած առավել սրբազան խոստումները խախտելուց, սեփական դատողությանը վստահելուց կամ սեփական իմաստությանը ապավինելուց:

Այս դեպքում ես հորդորում եմ ձեզ ապաշխարել և վերադառնալ ճիշտ ուղու վրա:

Մի անգամ թոռնիկը զանգահարեց իր պապիկին՝ ծնունդը շնորհավորելու համար: Նա նրան հարցրեց, թե քանի տարեկան է: Պապիկն ասաց, որ դարձել է 70 տարեկան: Թոռնիկը մի պահ մտածեց, ապա հարցրեց. «Պապիկ, դու սկսել ես վերադարձի ճանապարհը մեկ տարեկանո՞ւմ»:

Մանկության և պատանեկության տարիներին մարդիկ մտածում են, թե երբեք չեն ծերանա, մահվան միտքը երբեք իրական չի թվում՝ դա շատ ծեր մարդկանց համար է, և այդ կետին հասնելը դեռ հավերժություն է թվում: Ժամանակի հետ, երբ անցնում են ամիսներ և տարիներ, սկսում են հայտնվել կնճիռներ, եռանդը նվազում է, բժշկին այցելությունները դառնում են ավելի ու ավելի հաճախ, և այլն:

Կգա օրը, երբ մենք կրկին կհանդիպենք մեր Քավիչ և Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Ես աղերսում եմ, որ այդ սուրբ և հրաշալի օրը մենք ճանաչենք Նրան այն գիտելիքի շնորհիվ, որն ունենք Նրա մասին, և որովհետև հետևել ենք Նրա ուսմունքներին: Նա ցույց կտա մեզ Իր ձեռքերի և ոտքերի վերքերի տեղերը և մենք կմիանանք իրար, երկար գրկախառնվելով, լաց լինելով՝ Նրա ուղով հետևելու ուրախությունից:

Ես վկայում եմ աշխարհի չորս ծայրերին, որ Հիսուս Քրիստոսն ապրում է: Նա մեզ հորդորում է. «Ականջ դրեք, ով դուք, երկրի ազգեր, և լսեք խոսքերն այն Աստծո, որն արարել է ձեզ» (ՎԵՈՒ 43.23): Թող որ մենք ունենանք «այն Աստծո, որն արարել է» մեզ ուղերձը ըմբռնելու, լսելու, հասկանալու և ճիշտ մեկնաբանելու կարողությունը, որպեսզի չշեղվենք Նրա ճանապարհից, ես աղերսում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Վ. Քրեյգ Ցվիք
Յոթանասունից

Դուք ի՞նչ եք կարծում:

Ես աղերսում եմ ձեզ սովորություն դարձնել, մեղմ հարգանքով մեկ ուրիշի փորձառության հանդեպ, հարցնել այս հարցը. «Դուք ի՞նչ եք կարծում»:

Քառասունմեկ տարի առաջ ես մագլցեցի 18-անիվով կիսաբեռնատարի վարորդի նստատեղը իմ զեղեցիկ կնոջ՝ Ջենիի և մեր մանկիկ որդու՛ Սքոթիի հետ: Մենք տանում էինք շինարարական նյութերի ծանր մի բեռ՝ անցնելով մի քանի նահանգներով:

Այդ օրերում նստատեղերի ապահովության գոտիների օգտագործման կանոններ կամ մանկիկների համար նստատեղեր չկային: Կինս մեր թանկագին որդուն նստացրել էր իր գրկում: Նրա դիտողությունը. «Մենք գետնից այնքան բարձր ենք գտնվում», ինձ պետք է որ տված լիներ պատկերացում նրա նեղսրտվածության զգացումների մասին:

Երբ մենք Դոնների պատմական կիրճով անցնում էինք զառիվայրը, մայրուղու մի զառիթափ հատվածով, կիսաբեռնատարի խցիկը հանկարծ և անսպասելիորեն խիտ ծխով լցվեց: Տեսնելը դժվարացավ և մենք հազիվ էինք կարողանում շնչել:

Ծանր բեռնատարով միայն արգելակները բավական չեն սրընթաց արագությունը նվազեցնելու համար: Օգտագործելով շարժիչի արգելակները և դանդաղեցնելով արագությունը, ես խելահեղորեն փորձում էի կանգ առնել:

Հենց այն պահին, երբ ես քաշում էի մեքենան դեպի ճանապարհի եզրը, բայց դեռ լրիվ կանգ չէի առել, կինս բացեց խցիկի դուռը և երեխային գրկած դուրս թռավ: Ես անօգնական նայում էի, թե ինչպես նրանք թավալվեցին հողի մեջ:

Հենց որ բեռնատարը կանգնեցրեցի, ես վար նետվեցի ծխացող խցիկից: Շատ վախեցած ես վազեցի քարերի և մոլախոտերի միջով և գիրկս առա նրանց: Ջենիի ձեռքերն ու արմունկները վիրավորվել էին և արնահոսում էին, բայց բարեբախտաբար նա և մեր որդին երկուսն էլ շնչում էին: Ես ուղղակի սեղմած պահեցի նրանց գրկումս, մինչ մայրուղու եզրին փոշին աստիճանաբար նստեց:

Երբ սրտիս բաբախոցը նորմալացավ և շունչ առա, ես պոռթկացի. «Ինչպե՞ս կարողացար, ի՞նչ մտածեցիր: Գիտե՞ս արդյոք, թե որքան վտանգավոր էր դա: Դու կարող էիր մեռնել»:

Նա ետ նայեց ինձ արցունքները վար հոսելով ծխից սևացած այտերով և ասաց մի բան, որը ծակեց սիրտս և դեռ զրնգում է ականջներումս. «Ես ուղղակի փորձում էի փրկել մեր որդուն»:

Այդ պահին ես հասկացա, որ նա կարծել էր, մեր շարժիչը հրդեհվել է

և վախեցել, որ բեռնատարը պայթելու էր և մենք կմահանայինք: Սակայն ես գիտեի, որ դա էլեկտրական խափանում էր, վտանգավոր, բայց ոչ մահացու: Ես նայեցի իմ թանկագին կնոջը, մեղմորեն տրորելով մեր փոքրիկ որդու գլուխը և մտածեցի, թե ինչ տեսակի կինը կարող էր անել այդքան քաջարի մի բան:

Այս իրավիճակը կարող էր նույնքան վտանգավոր լինել հուզականորեն, որքան տառացիորեն մեր շարժիչի խափանումը: Բարեբախտաբար, բավականին երկար ժամանակ տոկալով առանց խոսելու, մեզանից յուրաքանչյուրը հավատալով, որ մյուսն էր մեղավոր, մենք ի վերջո արտահայտեցինք մեր զգացումները, որոնք մեր էմոցիոնալ պոռթկումների պատճառն էին: Սիրո և մեկս մյուսի ապահովության համար վախի զգացումներով կիսվելը, այդ վտանգավոր պատահարը հեռու պահեց մեր փայփայած ամուսնությունը կործանելուց:

Պողոսը նախազգուշացրել է. «Ոչ մի գէշ խոսք չդուրս գայ ձեր բերանից. Բայց այն՝ որ բարի է՝[և] շինության համար հարկաւոր, որ շնորհք տայ լսողներին» (Եփեսացիս Դ.29): Նրա խոսքերն արձագանքում են որոշակի մաքրությամբ:

Ի՞նչ է «ոչ մի գէշ խոսք» արտահայտությունը նշանակում ձեզ համար: Մենք բոլորս կանոնավորապես զգում ենք բարձր լիցքավորում ունեցող բարկության զգացումներ՝ մեր սեփականը և ուրիշներինը: Մենք տեսել ենք անվերահսկելի բարկության ժայթքումներ հասարակական վայրերում: Մենք զգացել ենք դա որպես ինչ որ էմոցիոնալ «էլեկտրական բռնկում» սպորտային իրադարձությունների ժամանակ, քաղաքական ասպարեզում և նույնիսկ մեր տներում:

Երբեմն երեխաները խոսում են իրենց սիրելի ծնողների հետ ածելու սայրի պես սուր լեզվով: Կողակիցները, ովքեր կիսել են կյանքի որոշակի ամենահարուստ և ամենաքնքուշ փորձառություններ, կորցնում են ուղղությունը և համբերությունը միմյանց հետ և բարձրացնում են իրենց ձայները: Մենք բոլորս, չնայած սիրառատ Երկնային Հոր ուխտի որդիներն ենք, զղջացել ենք մեր բարձր դիրքից ինքնահավան արագ դատողություններ անելու համար և խոսել ենք վիրավորկան խոսքեր, նախքան կհասկանայինք իրավիճակը մեկ ուրիշի տեսանկյունից: Մենք բոլորս ունեցել ենք հնարավորություն սովորելու, թե ինչպես կործանարար խոսքերը կարող են դարձնել վտանգավոր իրավիճակը ճակատագրական:

Առաջին Նախագահության վերջերս ուղարկված մի նամակ հստակորեն նշում է. «Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանում է մեզ սիրել և վարվել բոլոր մարդկանց հետ բարությամբ և քաղաքակիրթ ձևով, նույնիսկ, երբ մենք համաձայն չենք» (Առաջին Նախագահության նամակը, հունվ., 10, 2014): Ինչպիսի իմաստուն հիշեցում, որ մենք կարող ենք և պետք է մասնակցենք շարունակվող քաղաքակիրթ երկխոսությանը, հատկապես, երբ մենք նայում ենք աշխարհին տարբեր տեսանկյուններից:

Առակաց գրքի գրողը խորհուրդ է տալիս. «Մեղմ պատասխանը կհանգստացնէ բարկութիւնը, բայց վիրաւորիչ խոսքը բարկութիւն կգրգռէ» (Առակաց ԺԵ.1): Դա չի նշանակում, որ մենք երբեք չենք կարող խոսել շիտակորեն կամ որ մենք փոխզիջում ենք անում վարդապետական ճշմարտություններում: Խոսքերը, որոնք կարող են ուժեղ լինել տեղեկության մեջ, կարող են փափուկ լինել ոգով:

Մորմոնի Գիրքը նույնպես պարունակում է ամուսնական տարաձայնության ենթատեքստում դրական խոսելաձևի մասին մի հիանալի օրինակ: Սարիայի և Լեքիի որդիները ետ ուղարկվեցին Երուսաղեմ վերցնելու արույրե թիթեղները և չէին վերադարձել: Սարիան հավատում էր, որ իր որդիները փորձանքի մեջ էին ընկել և նա լցված էր բարկությամբ և պետք է ինչ որ մեկին մեղադրեր:

Լսեք պատմությունը նրա որդու՝ Նեփիի աչքերով. «Քանզի [մայրս] ենթադրել էր, որ մենք մահացել էինք անապատում. և նաև դժգոհել էր իմ հոր դեմ, ասելով նրան, որ նա տեսիլատես մարդ էր, ասելով. Ահա դու դուրս ես բերել մեզ մեր ժառանգության հողից, և իմ որդիներն այլևս չկան, և մենք մեռնում ենք անապատում» (1 Նեփի 5.2):

Այժմ եկեք հաշվի առնենք, թե ինչ կարող էր Սարիան մտածել: Նա նեղսրտվածությամբ էր լցված իր կռվարար որդիների վերադարձի կապակցությամբ, որովհետև նրանք վերադարձել էին այն տեղը, որտեղ նրա ամուսնու կյանքը եղել էր սպառնալիքի տակ: Նա փոխել էր իր գեղատեսիլ տունը և ընկերներին մի վրանի հետ մեկուսի անապատում, մինչդեռ իր երեխաներ ունենալու տարիքում էր: Մղված իր երկյուղներից առաջացած մեծ լարվածությունից, Սարիան թվում է հերոսաբար ցատկեց, եթե ոչ խելամտորեն, սլացող բեռնատարի բարձունքից՝ փորձելով պաշտպանել իր ընտանիքը: Նա արտահայտեց ճիշտ մտահոգություններ իր ամուսնուն՝ բարկության և կասկածի ու մեղադրանքի լեզվով, մի լեզու, որում ողջ մարդկային ցեղը թվում է զարմանալիորեն հմուտ է:

Մարգարե Լեքին լսեց վախը, որն իր կնոջ բարկության աղբյուրն էր: Ապա նա պատասխանեց կարգավարժված կարեկցանքի լեզվով: Առաջինը նա ուներ ճշմարտությունը, թե ինչպես էին իրերը երևում նրա տեսակետից: «Եվ . . .հայրս խոսել էր նրա հետ՝ ասելով. Ես գիտեմ, որ ես տեսիլատես մարդ եմ, . . . բայց [եթե ես] մնացած լինեի Երուսաղեմում, [մենք] կմեռնեինք եղբայրներիս հետ» (1 Նեփի 5.4):

Ապա նրա ամուսինը վերագրեց նրա երկյուղները կապված իրենց որդիների բարօրության հետ, քանի որ Սուրբ Հոգին անկասկածորեն վկայեց նրան ասելով.

«Բայց ահա, ես ձեռք եմ բերել խոստումի երկիր, բաներ, որոնցով ցնծում եմ. Այո, և ես գիտեմ, որ Տերը կազատի իմ որդիներին Լաբանի ձեռքից . . .

Եվ այս խոսելաձևով էր իմ հայրը . . . հանգստացրել իմ մորը, . . . մեր վերաբերյալ» (1 Նեփի 5.5–6):

Այսօր գոյություն ունի մեծ պահանջ տղամարդկանց և կանանց համար՝ հարգանք զարգացնել միմյանց հանդեպ հավատքի և վարքի լայն տարածության վրայով և հակասող օրակարգերի խորն անդունդների վրայով: Անհնար է իմանալ այն բոլորը, ինչ մեր

ուղեղն ու սիրտն է հաղորդում կամ նույնիսկ լիովին հասկանալ փորձությունների և ընտրությունների ենթատեքստը, որոնց դիմակայում է մեզանից յուրաքանչյուրը:

Սակայն ինչ կպատահի «գէշ խոսքի հետ», որի մասին խոսում է Պողոսը, եթե մեր սեփական դիրքորոշումը առաջինը ներառի ուրիշների դրության մեջ մտնելը: Լիովին ունենալով իմ սեփական թերությունները սահմանափակումները և կոշտ եզրերը, ես աղերսում եմ ձեզ սովորություն դարձնել, մեղմ հարգանքով մեկ ուրիշի փորձառության հանդեպ, հարցնել այս հարցը. «Դուք ի՞նչ եք կարծում»:

Հիշեք, երբ Տերը զարմացրեց Սամուելին և Սավուղին՝ ընտրելով մի փոքրիկ հովիվ տղայի՝ Բեթլեհեմցի Դավթին, որպես Իսրայելի թագավոր: Տերն ասաց Իր մարգարեին.

«Որովհետեւ մարդը տեսնում է աչքի առաջինը, բայց Տէրը սրտին է նայում» (Ա Թագավորաց ԺԶ.7):

Երբ մեր բեռնատարի խցիկը ծխով լցվեց, կինս գործեց ամենաքաջարի ձևով, որ կարող էր պատկերացնել՝ պաշտպանելու մեր որդուն: Ես ևս գործեցի որպես պաշտպան, երբ կասկածի տակ դրեցի նրա ընտրությունը: Լինելով ցնցված նշանակություն չուներ, թե ով էր ավելի ճիշտ: Այն ինչ կարևոր էր, միմյանց լսելն էր և մյուսի տեսակետը հասկանալը:

Միմյանց աչքերով տեսնելու պատրաստակամությունը կփոխակերպի «գէշ խոսքը» «շնորհք տալով[ն]»: Պողոս Առաքյալը հասկացել էր այս և որոշ չափով մեզանից յուրաքանչյուրը դա ևս կարող է զգալ: Դա չի կարող փոխել կամ լուծել խնդիրը, բայց ամենակարևորը հնարավորություն կարող է ընձեռել, թե արդյոք տրված շնորհքը կարող է մեզ փոխել:

Ես բերում եմ խոնարհ վկայություն, որ մենք կարող ենք «շնորհք տալ» գթառատ խոսելաձևով, երբ Սուրբ Հոգու մշակված պարգևը ծակում է մեր սրտերը ուրիշների զգացումների և ենթատեքստի վերաբերյալ մտահոգությամբ: Դա հնարավորություն է տալիս մեզ՝ փոխակերպել վտանգավոր իրավիճակները սուրբ վայրերի: Ես վկայում եմ սիրառատ Փրկչի մասին, ով «նայում է [մեր] սրտին» և հոգ անում, թե ինչ ենք մենք մտածում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորումից

Արմատներ ու ճյուղեր

Մեր օրերում ընտանեկան պատմության ու տաճարային աշխատանքն արագացնելը կարևոր է ընտանիքների փրկության ու վեհացման համար:

Աղցկեղի հետևանքով մահացած հակասական գրող Վիլյամ Սարոյանը մահվանից առաջ 1981թ.-ին ասել է մամուլին. «Բոլորը պետք է մեռնեն, բայց ես միշտ հավատացել եմ, որ իմ դեպքում բացառություն է տեղի ունենալու: Հիմա ի՞նչ է լինելու»:[1]

«Հիմա ի՞նչ է լինելու» արտահայտությունն այս կյանքում մահվանը դեմ առ դեմ կանգնած լինելու և մահից հետո կյանքի մասին մտորելու դեպքում գտնվում է հոգուն վերաբերող հարցերի կենտրոնում, որին Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանն այնքա՜ն գեղեցիկ կերպով է պատասխանում Հոր երջանկության ծրագրում:

Այս կյանքում մենք ծիծաղում ենք, լալիս ենք, աշխատում ենք, խաղում ենք, ապրում ենք ու այնուհետև մահանում ենք: Հոբը տալիս է այս հակիրճ հարցը. «Եթէ մարդս մեռաւ, մի՞թե կկենդանանայ»:[2] Պատասխանն է՛ հստակ այո՛ Փրկչի քավիչ զոհաբերության շնորհիվ: Հոբի՛ այդ հարցին վերաբերող տարամետ նախաբանի մի մասը հետաքրքիր է. «Կնկանից ծնուած մարդը կարճ կեանք ունի: . . . Ծաղկի պէս ծլում է և թոթափում է: . . . Ծառն էլ տակաւին յոյս ունի, եթէ կտրուի, դարձեալ կծլի, և նորա ճիւղերը չեն պակասիլ . . . և ճիւղեր կարձակէ նոր տնկուածի պէս»:[3]

Մեր Հոր ծրագիրն ընտանիքների համար է: Մեր սուրբ գրությունների ամենահուզական հատվածներից մի քանիսը որպես այլաբանություն օգտագործում են ծառի գաղափարն իր արմատներով ու ճյուղերով:

Հին Կտակարանի վերջին գլխում Մաղաքիան, Փրկչի Երկրորդ Գալուստը նկարագրելիս, վառ կերպով կիրառում է այս այլաբանությունը: Հպարտների ու ամբարիշտների մասին խոսելիս՝ նա նշում է, որ նրանք այրվելու են հարդի պես, և «նորանց համար արմատ և ոստ պիտի չթողէ»:[4] Մաղաքիան ավարտում է այս գլուխը Տիրոջ հավաստի խոստումով.

«Ահա ես կուղարկեմ ձեզ համար Եղիա մարգարէն, Տիրոջ մեծ և ահեղ օրը գալուց առաջ.

Եւ նա պիտի դարձնէ հայրերի սիրտը դէպի որդիքը և որդկանց սիրտը՝ դէպի իրանց հայրերը. որ միգուցէ ես գամ և երկիրը զարկեմ անէծքով»:[5]

Վերականգնման սկզբում Մորոնին 1923թ.-ին երիտասարդ Ջոզեֆ Սմիթին ուղղված իր առաջին հորդորում կրկին ընդգծեց այս ուղերձը:[6]

Ողջ աշխարհի քրիստոնյաներն ու հրեաներն ընդունում են Հին Կտակարանում Եղիայի պատմությունը:[7] Նա վերջին մարգարեն էր, ով կրում էր Մելքիսեդեկյան Քահանայության կնքման զորությունը նախքան Հիսուս Քրիստոսի ժամանակները:[8]

Եղիան վերականգնում է բանալիները

Եղիայի վերադարձը տեղի ունեցավ Կիրթլենդի տաճարում 1836թ.-ի ապրիլի 3-ին: Նա հայտնեց, որ իրականացնում է Մաղաքիայի խոստումը: Նա հանձնեց քահանայության բանալիները, որպեսզի ընտանիքները կնքվեն այս տնտեսությունում:[9] Եղիայի առաքելությանը նպաստում է այն, ինչը երբեմն անվանում են Եղիայի ոգի, որը, ինչպես ուսուցանել է Երեց Ռասսել Մ. Նելսոնը, «Սուրբ Հոգու դրսևորումն է ընտանիքի աստվածային էության մասին վկայելիս»:[10]

Փրկիչը հաստատուն էր մկրտության անհրաժեշտության մասին: Նա ուսուցանել է. «Եթէ մէկը ջրից և Հոգուց չծնուի, նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնը մտնել»:[11] Փրկիչն անձամբ մկրտվեց, որպեսզի օրինակ սահմաներ: Ի՞նչ կասեք մահացած մարդկանց մասին, ովքեր չեն մկրտվել:

Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի վարդապետություն

1840թ.-ի հոկտեմբերի 11-ին Նավույում Վայլեյթ Քիմբալը մի նամակ գրեց իր ամուսնուն՝ Երեց Հեբեր Չ. Քիմբալին, ով Տասներկուսի մյուս անդամների հետ մեկտեղ միսիա էր ծառայում Մեծ Բրիտանիայում: Մի քանի օր առաջ տեղի էր ունեցել հոկտեմբեր ամսվա գերագույն համաժողովը:

Ես մեջբերում կանեմ Վայլեյթի անձնական նամակի որոշ հատվածներից. «Մենք վայելեցինք ամենամեծ ու ամենահետաքրքիր համաժողովը Եկեղեցու կազմավորումից ի վեր: . . . Նախագահ [Ջոզեֆ] Սմիթը խոսեց մի նոր ու հիանալի թեմայի շուրջ: . . . Դա մահացածների համար մկրտվելու

մասին էր: Պողոսը խոսում է այդ մասին Ա Կորնթացիս 15-րդ գլխի 29-րդ հատվածում: Ջոզեֆը հայտնության միջոցով ավելի լիարժեք բացատրություն է ստացել այդ մասին: Նա ասում է, որ այս Եկեղեցու անդամների արտոնությունն է մկրտվել իրենց բոլոր նախնիների համար, ովքեր մահացել են նախքան այս ավետարանի առաջ գալը: . . . Այսպես անելով մենք հանդես ենք գալիս որպես գործակալներ նրանց համար և Առաջին Հարության մեջ առաջ գալու արտոնություն ենք տալիս նրանց: Նա ասում է, որ ավետարանը բանտում քարոզվելու է նրանց»:

Վայլեյթն ավելացրել էր. «Ես ուզում եմ մկրտվել մայրիկիս համար: . . . Մի՞թե սա հիանալի վարդապետություն չէ»:[12]

Ընտանիքներ միավորող կարևոր վարդապետությունը հայտնի դարձավ տող առ տող և ցուցում առ ցուցում: Փոխարինող արարողությունները գտնվում են հավերժական ընտանիքները միասին կապելու՝ ճյուղերը արմատներին միացնելու կենտրոնում:

Ընտանիքի վարդապետությունն ընտանեկան պատմության ու տաճարային աշխատանքի հարցում հստակ է: Տերն իր տված նախնական հայտնությունում նշել է «*ձեր* մահացածների [մկրտություն]»[13] արտահայտությունը: Մեր վարդապետական պարտավորվածությունը մեր սեփական նախնիների նկատմամբ է: Պատճառն այն է, որ երկնքի սելեստիալ կազմակերպությունը ընտանիքակենտրոն է:[14] Առաջին Նախագահությունը խրախուսել է անդամներին, հատկապես երիտասարդներին ու երիտասարդ ամուրիներին, հատուկ նշանակություն տալ ընտանեկան պատմության աշխատանքին ու արարողություններին իրենց սեփական ընտանիքի անդամների համար կամ իրենց ծխի ու ցցի անդամների նախնիների համար:[15] Մենք պետք է կապված լինենք և՛ մեր արմատների, և՛ մեր ճյուղերի հետ: Հավերժական արքայության հետ առնչություն ունենալու միտքն իսկապես փառահեղ է:

Տաճարներ

Վիլֆորդ Վուդրուֆը նշել է, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ապրել է բավականաչափ, որպեսզի դներ տաճարային աշխատանքի հիմքը: Վերջին անգամ, երբ նա՝ Ջոզեֆ Սմիթը, հանդիպեց Տասներկու Առաքյալների Քվորումի հետ, նրանց տվեց իրենց օժտումները:[16]

Մարգարեի նահատակությունից հետո սրբերն ավարտին հասցրեցին Նավույի տաճարի կառուցումը, և կնքման զորության շնորհիվ, նախքան դեպի լեռները մասսայական տեղափոխումը, հազարավոր հավատարիմ անդամներ օրհնվեցին կնքման զորությամբ: Երեսուն տարի անց, Մենթ Ջորջի Տաճարի

կառուցման ավարտին, Նախագահ Բրիգամ Յանգը բացատրեց փրկության արարողությունների հավերժական նշանակությունը, որը վերջապես հասանելի էր և՛ ողջերին, և՛ մահացածներին:[17]

Այս մասին Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը պարզ կերպով ասել է. «Տիրոջ կողմից հայտնի դարձված սկզբունքներից չկա որևէ այլ սկզբունք, որի համար ավելի շատ ուրախություն զգայի, քան մեր մահացածների փրկագնման սկզբունքի համար. որ մեր հայրերը, մեր մայրերը, մեր կանայք ու մեր երեխաներն առաջին հարության առավոտյան և Սելեստիալ Արքայությունում մեզ հետ կլինեն մեր ընտանեկան միությունում: Սրանք հրաշալի սկզբունքներ են: Արժեն ցանկացած զոհաբերության»:[18]

Ինչպիսի՜ հրաշալի ժամանակահատված է երկրի վրա ապրելու համար: Սա վերջին տնտեսությունն է, և մենք կարող ենք զգալ փրկության աշխատանքի արագացումն ամեն ոլորում, որն իր մեջ ներառում է փրկության արարողություն:[19] Մենք այժմ տաճարներ ունենք աշխարհի մեծ մասում, որպեսզի ապահովենք այդ փրկության արարողությունները: Հոգեպես նորացման, խաղաղության, ապահովության ու մեր կյանքում առաջնորդության համար տաճար հաճախելը նույնպես մեծ օրհնություն է:[20]

Որպես Առաքյալ կանչվելուց հետո, ավելի քիչ, քան մեկ տարի անց, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը նվիրագործեց Լոս Անջելեսի տաճարի ծագումնաբանական գրադարանը: Նա խոսեց մահացած նախնիների մասին, ովքեր «սպասում են այն օրվան, երբ դուք և ես կկատարենք այն ուսումնասիրությունը, որն անհրաժեշտ է փրկության իրականացման համար, . . . [և] նաև կգնանք Աստծո տուն և կկատարենք այդ աշխատանքը . . . որը նրանք չեն կարող կատարել»:[21]

Երբ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, ում այդ ժամանակ կոչում էին Երեց Մոնսոն, 1964թ.-ի հունիսի 20-ին ասաց նվիրագործման այս խոսքերը, ընդամենը 12 գործող տաճար կար: Այն

ժամանակահատվածում, երբ Նախագահ Մոնսոնը ծառայել է Եկեղեցու բարձրագույն խորհուրդներում, մեր 142 գործող տաճարներից 130-ը ստացել են իրենց նախնական նվիրագործումը: Հրաշք է տեսնել փրկության աշխատանքի արագացումը մեր օրերում: Հայտարարվել են ևս քսանութ տաճար, որոնք գտնվում են ավարտման տարբեր փուլերում: Եկեղեցու անդամների ութսունհինգ տոկոսն այժմ ապրում է տաճարից 200 մղոն (320 կմ) հեռավորության սահմաններում:

Ընտանեկան պատմության տեխնոլոգիան

Ընտանեկան պատմության տեխնոլոգիան նույնպես կտրուկ առաջընթաց է ապրել: Նախագահ Հովարդ Վ. Հանթերը 1994թ.-ի նոյեմբերին ասել է. «Մենք սկսել ենք օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաներ, որպեսզի արագացնենք մահացածների համար արարողություններ կատարելու սրբազան աշխատանքը: Տեխնոլոգիայի դերը . . . Տերն ինքն է արագացրել: . . . Այնուամենայնիվ, մենք կանգնած ենք միայն այն ամենի սկզբում, ինչ կարող ենք անել այդ գործիքների միջոցով»:[22]

Այս մարգարեական խոսքից ի վեր 19 տարվա ընթացքում տեխնոլոգիայի արագացումը գրեթե անհավատալի է: Փոքր երեխաների 36 տարեկան մայրը վերջերս ոգևորված ձայնով ասաց ինձ. «Պարզապես մտածեք – նվիրագործված ընտանեկան պատմության կենտրոնների միկրոֆիլմ ընթերցող սարքերից անցում եմ կատարել դեպի իմ խոհանոցի սեղանի մոտ նստած իմ համակարգչով ընտանեկան պատմության աշխատանք կատարելը, երբ երեխաներս վերջապես քնած են լինում»: Եղբայրներ և քույրեր, ընտանեկան պատմության կենտրոններն այժմ մեր տներում են:

Տաճարային ու ընտանեկան պատմության աշխատանքը միայն մեզ համար չէ: Մտածեք այն մարդկանց մասին, ովքեր գտնվում են վարագույրի այն կողմում՝ սպասելով փրկության արարողություններին, որոնք կազատեն նրանց հոգևոր բանտի կապանքներից: *Բանտ* բառը սահմանվում է որպես «ազատազրկման կամ գերության վիճակ»:[23] Գերության մեջ գտնվողները կարող են տալ Վիլյամ Սարոյանի հարցը. «Հիմա ի՞նչ է լինելու»:

Մի հավատարիմ քույր կիսվեց Սոլթ Լեյք Սիթիի տաճարում ունեցած մի հատուկ հոգևոր փորձառությամբ: Հաստատման սենյակում, մահացածի համար հաստատման արարողությունն արտասանելուց հետո, նա լսել է. «Եվ բանտարկյալն ազատվում է»: Նա ունեցել է հրատապության մեծ զգացում նրանց համար, ովքեր սպասել են իրենց մկրտության ու հաստատման աշխատանքին: Տուն վերադառնալիս նա փնտրել է իր լսած արտահայտությունը սուրբ գրություններում: Նա գտել է Ջոզեֆ Սմիթի հայտարարությունը Վարդապետություն և Ուխտերի 128-րդ բաժնում. «Թող ձեր սրտերը ցնծան և մեծապես ուրախանան: Թող երկիրը երգով բռնկվի: Թող մահացածները հավերժական գովքի օրհներգ ասեն Էմմանուել Թագավորին, որը, նախքան աշխարհի լինելը, կարգել է այն, ինչը մեզ հնարավորություն կտա բանտից փրկագնելու նրանց. քանզի բանտարկյալները պիտի ազատվեն»:[24]

Հարցը կայանում է նրանում, թե մենք ի՞նչ պետք է անենք:

Մարգարե Ջոզեֆի խորհուրդն էր տաճարում ներկայացնել «մեր մահացածների գրանցումները, որն արժանի կլինի ամեն ընդունելության»:[25]

Եկեղեցու ղեկավարությունը պարզ կերպով կոչ է արել աճող սերնդին ունենալ իրենց նախաձեռնությունը տեխնոլոգիայի կիրառման մեջ Եղիայի ոգին զգալու, իրենց նախնիներին փնտրելու և նրանց համար տաճարային արարողություններ կատարելու համար:[26] Ողջերի ու մահացածների փրկության աշխատանքն արագացնելու դժվար մասը կատարվելու է ձե՛ր միջոցով, երիտասարդնե՛ր:[27]

Եթե բոլոր ծխերում երիտասարդները տաճար գնալու և իրենց մահացածների համար մկրտություններ կատարելու հետ մեկտեղ աշխատեն իրենց ընտանիքների և ծխի այլ անդամների հետ, որպեսզի իրենց կատարած արարողության համար ապահովեն ընտանիքի անդամների անուններ, և՛ իրենք, և՛ Եկեղեցին մեծապես կօրհվեն: Մի՛ թերագնահատեք, թե որքան կարող են աջակցել մահացածները ձեր ջանքերին, և այն ուրախությունը, որը կզգաք, երբ վերջիվերջո հանդիպեք նրանց, ում ծառայում եք: Մեր սեփական ընտանիքները միավորելու հավերժորեն կարևոր օրհնությունը գրեթե ըմբռնումից վեր է:[28]

Եկեղեցու ամբողջ աշխարհով մեկ տարածված անդամակցության մեջ չափահաս անդամների հիսունմեկ տոկոսն իրենց երկու ծնողների անունները չունեն Եկեղեցու FamilySearch ինտերնետային կայքի Տոհմածառի բաժնում: Չափահաս անդամների վաթսունհինգ տոկոսի մոտ չորս տատիկ պապիկները նշված չեն:[29] Հիշեք, առանց մեր արմատների ու ճյուղերի մենք չենք կարող փրկվել: Եկեղեցու անդամները պետք է ձեռք բերեն ու տեղադրեն այս կարևոր տեղեկությունը:

Մենք վերջապես ունենք վարդապետություն, տաճարներ և տեխնոլոգիա, որպեսզի ընտանիքները կատարեն փրկության այս փառավոր աշխատանքը: Ես առաջարկում եմ մի եղանակ, որի միջոցով դա կարելի է անել: Ընտանիքները կարող են կազմակերպել «Տոհմածառի հանդիպում»: Սա պետք է լինի կրկնվող միջոցառում: Յուրաքանչյուր ոք պետք է բերի առկա ընտանեկան պատմություններ, պատմվածքներ, լուսանկարներ, ներառյալ տատիկ պապիկների ու ծնողների նվիրական իրեր: Մեր երիտասարդները ոգևորվում են իմանալով իրենց ընտանիքի անդամների կյանքի մասին – որտեղից են եկել և ինչպես են ապրել: Շատերն իրենց սրտերը դարձրել են դեպի իրենց հայրերը: Նրանց դուր են գալիս պատմություններն ու լուսանկարները, և նրանք ունեն տեխնոլոգիական հմտություններ, որ այդ պատմություններն ու լուսանկարները սկանավորեն ու Տոհմածառի մեջ վերբեռնեն և աղբյուր հանդիսացող փաստաթղթերը նախնիներին կցեն, որպեսզի միշտ պահպանեն դրանք: Իհարկե, հիմնական նպատակն է պարզել, թե ինչ արարողություններ դեռ պետք է կատարվեն և նշել անհրաժեշտ տաճարային աշխատանքը: Կարող եք օգտագործել *Իմ ընտանիքը* գրքույկը, որպեսզի գրառեք ընտանեկան տեղեկությունները, պատմություններն ու լուսանկարները, որոնք այնուհետև կարող են վերբեռնվել ու կցվել Տոհմածառին:

Ընտանիքի նկատմամբ նվիրվածությունն ու ակնկալիքները պետք է լինեն մեր հիմնական առաջնահերթությունները, որպեսզի պաշտպանեն մեր աստվածային ճակատագիրը: Նրանք, ովքեր ձգտում են ավելի արդյունավետ անցկացնել կիրակի օրը որպես ամբողջական ընտանիք, այս աշխատանքն արագացնելն արգասավոր հիմք է: Մի մայր ուրախությամբ ասում է, թե ինչպես է իր 17-ամյա որդին կիրակի օրերը եկեղեցուց հետո համակարգչով ընտանեկան պատմությամբ զբաղվում, իսկ իր 10-ամյա որդին սիրում է լսել իր նախնիների մասին պատմություններն ու դիտել նրանց նկարները: Սա օրհնել է իրենց ողջ ընտանիքին, որպեսզի զգան Եղիայի ոգին: Մեր թանկագին արմատներն ու ճյուղերը պետք է սնուցվեն:

Հիսուս Քրիստոսը տվեց Իր կյանքը որպես փոխարինող քավություն: Նա պատասխանեց Հոբի բարձրացրած հարցին: Նա հաղթահարեց մահը ողջ մարդկության համար, որը մենք ինքներս մեզ համար չէինք կարողանա անել: Այնուամենայնիվ, մենք կարող ենք կատարել փոխարինող արարողություններ մահացածների համար և իսկապես դառնալ ազատիչներ Սիոն լեռան վրա[30] մեր սեփական ընտանիքների համար, որպեսզի մենք նրանց հետ կարողանանք վեհացում ստանալ, ինչպես նաև փրկվել:

Ես վկայում եմ Փրկչի քավիչ զոհաբերության մասին և մեր ու մեր ընտանիքների համար Հոր ունեցած ծրագրի իսկության մասին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վիլյամ Սարոյան, in Henry Allen, "Raging against Aging," *Wall Street Journal,* Dec. 31, 2011–Jan. 1, 2012, C9.
2. Յոբ 14.14:
3. Յոբ 14.1, 2, 7, 9:
4. Մաղաքիա 4.1: Վերջերս մի շարք հոդվածներ հաղորդեցին, որ բավականաչափ մեծ թվով մարդիկ ընտրում են երեխաներ չունենալ, որպեսզի բարելավեն իրենց կենսամակարդակը (տես Abby Ellin, "The Childless Plan for Their Fading Days," *New York Times,* Feb. 15, 2014, B4): Շատ երկրներում բնակչության թիվը նվազում է այս անհատական ընտրությունների արդյունքում: Սրան երբեմն վերագրում են որպես «Ժողովրդագրական ձմեռ» (տես *The New Economic Reality: Demographic Winter* [documentary], byutv.org/shows):
5. Մաղաքիա 4.5–6:
6. Տես *History of the Church,* 1.12; Վարդապետություն և Ուխտեր 2:
7. Հրեաները 2,400 տարի սպասել են Եղիայի վերադարձին: Մինչև այսօր իրենց ամենամյա Սեդերների կամ ճաշի ժամանակ նրանք տեղ են հատկացնում նրա համար ու գնում են դեպի դուռը՝ հույս ունենալով, որ նա եկել է, որպեսզի ազդարարի Մեսիայի գալուստը:
8. Տես Սուրբ գրքերի ուղեցույց, «Եղիա»:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 110.14–16; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 2:
10. Ռասսել Մ. Նելսոն, "A New Harvest Time," *Ensign,* May 1998, 34.
11. Յովհաննու 3.5:
12. Vilate M. Kimball to Heber C. Kimball, Oct. 11, 1840, Vilate M. Kimball letters, Church History Library; spelling and capitalization standardized.
13. Վարդապետություն և Ուխտեր 127.5; շեշտադրումն ավելացված է:
14. Տես *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ* (2013), 78:
15. Տես First Presidency letter, Oct. 8, 2012.
16. Տես *The Discourses of Wilford Woodruff,* sel. G. Homer Durham (1946), 147.
17. Բրիգամ Յանգն ասել է. «Այն ամենը, ինչ ես կամենում եմ, իմանալն է, որ այս մարդիկ նվիրում են իրենց միջոցներն ու հետաքրքրությունները Աստծո Արքայությունը կառուցելու համար, տաճարներ բարձրացնում և դրանցում ողջերի ու մահացածների համար պարտականությունները կատարում, . . . որպեսզի նրանք թագադրվեն որպես Ամենակարողի որդիներ ու դուստրեր» (*Deseret News,* Sept. 6, 1876, 498): Մահացածների համար մկրտությունները սկսվել են 1877թ.-ի հունվարի 9-ին, իսկ մահացածների նրանց օժտումները կատարվել են դրանից երկու օր անց: Այս մասին ուրախությունն արտահայտվել է Լյուսի Բ. Յանգի կողմից, ով ասել է, որ «նա երախտապարտ էր, որ հնարավորություն ուներ գրկաբաց ընդունվելու [իր մահացած հարազատների] կողմից, ինչպես բոլորը կընդունվեին նրանց կողմից, ովքեր իրենք իրենց համար չէին կարողանա կատարել այդ աշխատանքը» (in Richard E. Bennett, "'Which Is the Wisest Course?' The Transformation in Mormon Temple Consciousness, 1870–1898," *BYU Studies Quarterly,* vol. 52, no. 2 [2013], 22):
18. *Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* (2004), 192–93.
19. Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը (ով հայտնի է որպես ամենահարգալի միսիոներներից մեկը) մահացածների մասին խոսելիս ասել է. «Մեր սպասավորման այս մասը ես համարում եմ այնքան կարևոր միսիա, որքան ողջերին քարոզելը; մահացածները լսում են Աստծո ծառաների ձայնը հոգևոր աշխարհում, և նրանք չեն կարողանա առաջ գալ [առաջին] հարության առավոտյան, եթե [նրանց] համար որոշակի արարողություններ չկատարվեն»: Նա նաև ասել է. «Մահացած մարդուն փրկելը և ողջին փրկելն ունեն նույն նշանակությունը» (*Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff,* 188):
20. Նախագահ Հովարդ Վ. Հանթերը հորդորել է Եկեղեցու անդամներին հաճախակի գնալ տաճար «տաճարային երկրպագության միջոցով ստացած անձնական օրհնության համար, սրբագործման ու ապահովության համար, որը տրվում է այդ օրհնված ու սրբագործված պատերի ներսում: . . . Այն սուրբ է Տիրոջ համար: Այն պետք է սուրբ լինի մեզ համար» ("The Great Symbol of Our Membership," *Tambuli,* Nov. 1994, 6):
21. "Messages of Inspiration from President Thomas S. Monson," *Church News,* Dec. 29, 2013, 2.
22. Հովարդ Վ. Հանթեր, "We Have a Work to Do," *Ensign,* Mar. 1995, 65.
23. *Merriam-Webster's Collegiate Dictionary,* 11th ed. (2003), "prison."
24. Վարդապետություն և Ուխտեր 128.22; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 138.42: «Նախքան աշխարհի լինելը [Տերը] կարգել է այն, ինչը մեզ հնարավորություն կտա բանտից փրկագնելու նրանց» (Սուրբ Գրքերի ուղեցույց, «Բանտ»):
25. Վարդապետություն և Ուխտեր 128.24:
26. Տես First Presidency letter, Oct. 8, 2012; տես նաև Դեյվիդ Ա. Բեդնար «Զավակների սրտերը կդառնան», *Լիահոնա* նոյ. 24–27; տես նաև R. Scott Lloyd, "'Find Our Cousins': Apostle [Neil L. Andersen] Counsels LDS Youth at RootsTech Conference," *Church News,* Feb. 16, 2014, 8–9.
27. Վերջերս կատարված մի ուսումնասիրություն ցույց է տվել, որ այս սերունդը մեծ կարևորություն է տալիս իմաստալից կերպով ապրելուն, որտեղ նրանք «տալիս են ուրիշներին ու իրենք կողմնորոշվում են ավելի մեծ նպատակների կողմը» (Emily Esfahani Smith և Jennifer L. Aaker, "Millennial Searchers," *New York Times Sunday Review,* Dec. 1, 2013, 6):
28. Տես Howard W. Hunter, "A Temple-Motivated People," *Liahona,* May 1995, 2–7.
29. Վիճակագրական տեղեկությունները տրամադրվել են Ընտանեկան պատմության բաժնից:
30. Տես Աբրիա 1.21:

Երեց Դալլին Հ. Օուքս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Քահանայության բանալիները և իշխանությունը

Քահանայության բանալիները առաջնորդում են թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց, և քահանայության արարողություններն ու իշխանությունը կիրառվում են ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար:

I.

Այս համաժողովի ժամանակ մենք ականատեսն եղանք որոշ հավատարիմ եղբայրների իրենց կոչումներից ազատմանը, և մենք հաստատեցինք ուրիշներին իրենց կոչումներում: Եկեղեցում այդքան ծանոթ հերթափոխում մենք չենք «իջնում», երբ ազատվում ենք և մենք չենք «բարձրանում», երբ կանչ ենք ստանում: Տիրոջ ծառայության մեջ չկան «վերևներ, ներքևներ»: Կա միայն «առաջ կամ ետ» և դրանց տարբերությունը կախված է նրանից, թե ինչպես ենք ընդունում և գործում ազատվելիս և կանչ ստանալիս: Մի անգամ ես նախագահում էի մի երիտասարդ ցցի նախագահի կոչումից ազատմանը, ով ինը տարիների ընթացքում հոյակապ ծառայել էր և այժմ ուրախանում էր իր ազատվելու և այն նոր կոչման համար, որ ինքն ու կինը հենց նոր ստացան: Նրանք կանչվել էին ծխի մանուկների խմբի ղեկավարները: Միայն այս եկեղեցում դա կարող

է հավասարապես պատվաբեր համարվել:

II.

Կանանց համաժողովի ժամանակ Սփոփող միության Գերագույն Նախագահ Լինդա Կ. Բարթոնը ասել է. «Մենք կցանկանայինք յուրաքանչյուրիս մեջ *ներարկել* քահանայությունն ավելի լավ հասկանալու մեծ ցանկություն»[1] Այդ կարիքը յուրաքանչյուրս ունենք և դրան հետամուտ լինելու համար ես կխոսեմ քահանայության բանալիների և իշխանության մասին: Քանի որ այդ թեման կարևոր է թե՛ տղամարդկանց, և թե՛ կանանց համար, ես ուրախ կլինեմ, որ այս գրառումները հեռարձակվեն և հրատարակվեն Եկեղեցու բոլոր անդամների համար: Քահանայության զորությունը օգնում է մեզ բոլորիս: Քահանայության բանալիները առաջնորդում են թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց, և քահանայության արարողություններն ու իշխանությունը վերաբերում է ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց:

III.

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը քահանայությունը նկարագրում է, որպես «Աստծո զորություն տրված մարդուն, ըստ որի մարդիկ կարող են Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով գործել Երկրի վրա մարդկային ընտանիքի փրկության համար»:[2] Այլ ղեկավարներ ուսուցանել են, որ քահանայությունը «կատարյալ իշխանություն է այս երկրի վրա: Դա այն զորությունն է, որի օգնությամբ երկիրը ստեղծվել է»:[3] Սուրբ գրություններն ուսուցանում են, որ «Արդ, այդ նույն Քահանայությունը, որը կար ի սկզբանե, կլինի նաև աշխարհի վերջում» (Մովսես 6.7): Այսպիսով, քահանայությունը այն ուժն է, ըստ որի մենք հարություն կառնենք և կունենանք հավերժական կյանք:

Ցանկալի հասկացողության հասնելու համար առաջնահերթ պետք է հասկանալ քահանայության բանալիները: «Քահանայության բանալիները Աստծո իշխանությունն է, որը

Նա տվել է քահանայության [կրողներին] երկրի վրա Իր քահանայության օգտագործումը ղեկավարելու, վերահսկելու և կառավարելու համար։»[4] Եկեղեցում տեղի ունեցող ցանկացած գործողություն կամ արարողություն կատարվում է այդ գործողության համար պատասխանատու բանալիներ կրողի ուղակի կամ անուղակի լիազորության ներքո։ Երեց Մ. Ռասսել Բալլարդը բացատրել է. «Նրանք ովքեր ունեն քահանայության բանալիներ . . . . հնարավոր են դարձնում իրենց ղեկավարության ներքո գտնվող ցանկացած հավատարիմ ծառայողի կիրառել քահանայության իշխանությունը և օգտվել քահանայության զորությունից»[5]

Վերահսկելով քահանայության իշխանության կիրառումը, քահանայության բանալիների գործառույթը և՛ ընդլայնվում է, և՛ սահմանափակվում։ Ընդլայնվում է՝ հնարավոր դարձնելով քահանայության իշխանության ու բանալիների հասանելիությունը Աստծո բոլոր զավակներին։ Սահմանափակվում է՝ ուղղորդություն տալով, թե ով պիտի ստանա քահանայության իշխանությունը, ով պիտի կրի նրա պաշտոնները, և թե ինչպես պիտի շնորհվեն քահանայության իրավունքներն ու լիազորությունները։ Օրինակ, անձը ով կրում է քահանայություն, չի կարող կոչում ու իշխանություն շնորհել մեկ այլ մարդու, քանի դեռ լիազորված չէ բանալիներ կրողի կողմից։ Առանց այդ լիազորության՝ կարգումն անվավեր կհամարվի։ Դա բացատրում է, թե ինչու քահանայության կրողը, անկախ իր կոչումից, չի կարող կարգել իր ընտանիքի անդամին կամ իր տանը սպասավորել հաղորդությունը՝ առանց համապատասխան բանալիներ կրողի կողմից թույլտվություն ստանալու։

Բացառությամբ այն սուրբ աշխատանքի, որը տաճարի նախագահի բանալիների լիազորության ներքո քույրերը կատարում են տաճարում, որը քիչ անց կնկարագրեմ, միայն քահանայության պաշտոն կրողը կարող է պաշտոնավարել քահանայության արարողությունները։ Եվ բոլոր լիազորված քահանայության արարողությունները գրանցվում են Եկեղեցու գրանցամատյաններում։

Վերջին հաշվով՝ Հիսուս Քրիստոսը, ում քահանայությունն է մեզ շնորհվում, կրում է քահանայության բոլոր բանալիները։ Նա միակն է, ով որոշում է, թե ինչ բանալիներ պատվիրակել մահկանացուներին և ինչպես այդ բանալիները օգտագործել։ Մենք հակված ենք այն կարծիքին, որ քահանայության բոլոր բանալիները Կիրթլենդի տաճարում շնորհվել են Ջոզեֆ Սմիթին, սակայն սուրբ գրություններն ասում են, որ այն ինչ շնորհվել էր, դրանք «տնտեսության բանալիներն» էին (ՎևՈւ 110.16)։ Շատ տարիներ առաջ գերագույն համաժողովի ժամանակ Նախագահ Սփենսեր Վ. Քիմբալը մեզ հիշեցրել է, որ կան քահանայության այլ բանալիներ, որոնք չեն տրվել երկրի մարդկանց, այդ թվում՝ ստեղծման և հարության բանալիները։[6]

Քահանայության բանալիների օգտագործման վրա դրված սահմանափակումների աստվածային բնույթը բացատրում է Եկեղեցու ղեկավարմանը վերաբերող որոշումների և քահանայությանը վերաբերող որոշումների միջև եղած հակապատկերը։ Առաջին Նախագահությունը և Առաջին Նախագահության ու Տասներկուսի Քվորումի Խորհուրդը, ովքեր նախագահում են Եկեղեցու վրա, լիազորված են կայացնելու բազմաթիվ որոշումներ, որոնք կապված են Եկեղեցու քաղաքականության և ընթացակարգերի հետ, ինչպիսիք են՝ Եկեղեցու կառույցների տեղակայման վայրերը և միսիոներական ծառայության տարիքը որոշելը։ Բայց չնայած նրան, որ այդ նախագահող իշխանավորները կրում և գործադրում են այս տնտեսության մեջ մարդկությանը պատվիրակած քահանայության բոլոր բանալիները, նրանք ազատ չեն փոխելու Աստծո հրամանագրված այն օրինակը, որ միայն տղամարդիկ կարող են քահանայության պաշտոն կրել։

IV.

Այժմ ես կխոսեմ քահանայության իշխանության թեմայի շուրջ։ Ես կսկսեմ այն երեք սկզբունքներից, որոնք քննարկվեցին. (1) քահանայությունը Աստծո զորությունն է պատվիրակված մարդկանց՝ մարդկային ընտանիքի փրկության համար, (2) քահանայության իշխանությունը ղեկավարվում է քահանայության բանալիները կրող քահանայություն կրողների կողմից և, (3) քանի որ սուրբ գրություններում ասվում է, որ «Եկեղեցու բոլոր մյուս իշխանությունները [և] պաշտոններն այդ [Մելքիսեդեկյան] քահանայության հավելումներն են»

(ՎևՈւ 107.5), այն ամենն ինչ արվում է այս քահանայության բանալիների ղեկավարման ներքո, արվում է քահանայության իշխանությամբ:

Ինչպե՞ս է դա վերաբերում կանանց: Սփոփող միությանն ուղված իր ելույթում Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը, դեռ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ եղած ժամանակ, ասել է. «Չնայած որ քույրերին չի տրվել քահանայություն՝ այն չի շնորհվել նրանց, դա չի նշանակում որ Տերը նրանց իշխանություն չի տվել. . . . Մարդուն տրված է իշխանություն, կամ քրոջը տրված է իշխանություն, որպեսզի Եկեղեցում անեն որոշակի բաներ, որոնք պարտադիր և բացարձակապես անհրաժեշտ են մեր փրկության ահամար, ինչպես օրինակ այն աշխատանքը, որը քույրերն անում են Տիրոջ Տանը: Նրանց տրված է իշխանություն անելու մեծ և հոյակապ գործեր, որոնք սուրբ են Տիրոջ համար և նույնքան պարտադիր են, որքան Քահանայություն կրող տղամարդկանց տրված օրհնությունները»:[7]

Այդ նշանավոր ելույթի ժամանակ Նախագահ Սմիթը կրկին ու կրկին անգամ ասաց, որ կանանց տրված է իշխանություն: Կանանց նա ասաց. «Դուք իշխանությամբ կարող եք խոսել, քանի որ Տերը իշխանություն է տվել ձեզ»: Նա նաև ասաց, որ Սփոփող միությանը «տրվել է զորություն և իշխանություն անելու շատ մեծ բաներ: Այն աշխատանքը, որ նրանք կատարում են, արվում է աստվածային իշխանությամբ»: Եվ անշուշտ Եկեղեցում կանանց կամ տղամարդկանց կողմից կատարված աշխատանքը, լինի տաճարներում, թե ծխերում կամ ճյուղերում, արվում է քահանայության բանալիներ կրողների առաջնորդության ներքո: Այսպիսով, խոսելով Սփոփող միության մասին, Նախագահ Սմիթը բացատրել է. «[Տերը] նրանց է տվել այդ հիանալի կազմակերպությունը, որտեղ նրանք իշխանություն ունեն ծառայելու ծխերի եպիսկոպոսների ղեկավարության ներքո . . . , հոգ տանելով մեր մարդկանց հոգևոր և ֆիզիկական շահերի մասին»:[8]

Այսպիսով, իսկապես կարելի ասել, որ Սփոփող միությունը ոչ միայն դասարան է կանանց համար, այլ մի բան, որին նրանք պատկանում են՝ աստվածայնորեն հաստատված հավելում քահանայությանը:[9]

Մենք սովոր չենք կանանց մասին խոսել, որպես իրենց Եկեղեցու կոչումներում քահանայության իշխանություն ունեցողներ, սակայն ուրիշ ինչ իշխանություն կարող է լինել: Երբ կինը՝ երիտասարդ, թե ծեր, ի սպաս է դրվում քարոզելու ավետարանը, որպես լիաժամկետ միսիոներ, նրան տրվում է քահանայության իշխանություն կատարելու քահանայության գործառույթ: Նույնը կարել է ասել, երբ կինը քահանայության բանալիներ կրողի ղեկավարման ներքո ի սպաս է դրվում ծառայելու որպես պաշտոնյա կամ ուսուցիչ Եկեղեցու որևէ կազմակերպությունում: Ցանկացած մարդ, ով գործում է իր պաշտոնում կամ կոչման մեջ, որը ստացել է քահանայության բանալիներ կրողի կողմից, իրեն հանձնարարված պարտականությունները կատարելիս գործադրում է քահանայության իշխանությունը:

Քահանայության իշխանությունը գործադրողը պետք է մոռանա իրավունքների մասին և կենտրոնանա պարտականությունների վրա: Դա է լայն հասարակության համար անհրաժեշտ սկզբունքը: Հայտնի ռուս գրող Ալեքսանդր Սոլժենիցինը ասել է. «Ժամանակն է . . . պաշտպանել ոչ այնքան մարդու իրավունքները, որքան մարդու պարտականությունները»:[10] Վերջին Օրերի սրբերն անշուշտ գիտակցում են, որ վեհացման հասնելու համար պետք է ոչ թե իրավունքները պնդել, այլ պարտականությունները կատարել:

V.

Տերը պատվիրել է, որ միայն տղամարդիկ կարող են կարգվել քահանայության պաշտոնների: Սակայն, ինչպես Եկեղեցու տարբեր ղեկավարներ պնդել են, տղամարդիկ իրենք չեն «քահանայությունը»:[11] Տղամարդիկ կրում են քահանայությունը՝ սուրբ պարտականություն ունենալով օգտագործելու այն Աստծո բոլոր զավակների օրհնության համար:

Իր որդիներին տրված Աստծո ամենամեծ զորությունը չի կարող կիրառվել առանց Իր դուստրերից որևէ մեկի ընկերակցության, քանի որ միայն իր դուստրերին է Աստված տվել զորություն «լինելու մարմիններ ստեղծողներ. . . . որպեսզի Աստծո նպատակը և Մեծ ծրագիրը հնարավոր լինի իրականացնել»:[12] Սրանք Նախագահ Ջ. Ռուբեն Կլարկի խոսքերն են:

Նա շարունակել է. «Հավերժական ծրագրում սա է մեր կանանց և մայրերի տեղը: Նրանք քահանայության կրողներ չեն, նրանք պատասխանատու չեն քահանայության պարտականությունների և գործառույթների կատարման համար, ոչ էլ նրանք պետք է ծանրաբեռնվեն այդ պարտականություններով: Նրանք այդ զորության ներքո ստեղծողներն ու կազմակերպիչներն են և դրա օրհնությունների ճաշակողները՝ ունենալով քահանայության լրացուցիչ զորություններ և ունենալով աստվածայնորեն կանչված և հավերժորեն կարևոր գործառույթ, ինչպես ինքնին քահանայությունն է»:[13]

Այդ ոգեշնչված խոսքերով Նախագահ Կլարկը խոսում էր ընտանիքների մասին: Ինչպես հայտարարված է ընտանիքի հռչակագրի մեջ՝ հայրը նախագահում է ընտանիքի վրա, նա և մայրը ունեն

տարբեր պարտականություններ, սակայն նրանք «պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ»:[14] Մի քանի տարի առաջ, նախքան ընտանիքի հայտարարության տպագրումը, Նախագահ Սփենսեր Վ. Քիմբալը տվեց հետևյալ բացատրությունը. «Երբ մենք ամուսնությունը դիտարկում ենք որպես գործընկերություն, եկեք դիտարկենք այն որպես *լիարժեք* գործընկերություն: Մենք չենք ցանկանում, որ մեր ՎՕՍ կանայք լինեն *լուռ* գործընկերներ կամ *սահմանափակ* գործընկերներ այդ հավերժական հանձնարարության մեջ: Խնդրում եմ լինել *աջակցող* և *լիարժեք* գործընկեր»:[15]

Աստծո աչքում, լինի դա եկեղեցում թե ընտանիքում, կանայք և տղամարդիկ հավասար են՝ ունենենալով տարբեր պարտականություններ:

Կեզրափակեմ ելույթս քահանայության օրհնությունների մասին որոշ ճշմարտություններով: Ի տարբերություն քահանայության բանալիների և քահանայության արարողությունների, քահանայության օրհնությունները նույն պայմաններով հասանելի են և՛ տղամարդկանց, և՛ կանանց: Սուրբ Հոգու պարգևը և տաճարի օրհնությունները այդ ճշմարտության հայտնի օրինակներն են:

Այս ամառ ԲՅՀ կրթական շաբաթի իր խորաթափանց ելույթում Երեց Մ. Ռասսել Բալլարդը ուսուցանեց.

«Մեր Եկեղեցու վարդապետությունը կանանց դասում է հավասար և միառժամանակ տարբեր տղամարդկանցից: Աստված մի սեռը մյուսից ավելի լավ կամ ավելի կարևոր չի համարում: . . .

Երբ տղամարդիկ և կանայք գնում են տաճար, նրանք օժտվում են միևնույն զորությամբ, որը քահանայության զորությունն է: . . . Քահանայության զորություններն ու օրհնությունները հասանելի են Աստծո բոլոր զավակների համար»:[16]

Ես վկայում եմ, որ Աստծո քահանայության զորություններն ու օրհնությունները հասանելի են Իր որդիներին ու դուստրերին: Ես վկայում եմ քահանայության իշխանության մասին, որը գործադրվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բոլոր կոչումներում և գործունեության մեջ: Ես վկայում եմ քահանայության բանալիների աստվածայնորեն ուղղորդված գործառույթի մասին, որն իրենց լրիվությամբ կիրառում ու կրում է մեր մարգարե ու նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը: Եվ վերջապես, ամենակարևորը, ես վկայում եմ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին, ում քահանայությունն է դա և ում ծառաներն ենք մենք. Հիսուս Քրիստոսի անունով՝ ամեն: ■

ՆԵՌՈՒՄՆԵՐ

1. Linda K. Burton, “Priesthood: ‘A Sacred Trust to Be Used for the Benefit of Men, Women, and Children’” (Brigham Young University Women’s Conference address, May 3, 2013), 1; ce.byu.edu/cw/womensconference/transcripts.php.
2. Ջոզեֆ Ֆ. Սմիթ, *Ալեհուպանի վարդապետություն,* 5-րդ թողարկում: (1939), 139:
3. Բոյդ Կ. Փաքեր, «Քահանայության օրհնությունները տանը» Ղեկավարների համաշխարային ուսուցում, փետ., 2012; lds.org/broadcasts; տես նաև James E. Faust, “Power of the Priesthood,” *Ensign,* May 1997, 41–43.
4. *Հեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում* (2010), 2.1.1.
5. Մ. Ռասսել Բալլարդ, «Տղամարդիկ և կանայք Տիրոջ աշխատանքում» *Լիահոնա,* ապր. 2014, 48; տես նաև *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 138.
6. Տես Spencer W. Kimball, “Our Great Potential,” *Ensign,* May 1977, 49
7. Joseph Fielding Smith, “Relief Society—an Aid to the Priesthood,” *Relief Society Magazine,* Jan. 1959, 4:
8. Joseph Fielding Smith, “Relief Society—an Aid to the Priesthood,” 4, 5; տես նաև *Եկեղեցու նախագահների ուսմունքները՝ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ* (2013), 302:
9. Տես Boyd K. Packer, “The Relief Society,” *Ensign,* May 1998, 72; տես նաև *Daughters in My Kingdom,* 138:
10. Aleksandr Solzhenitsyn, “A World Split Apart” (commencement address delivered at Harvard University, June 8, 1978); տես նաև Patricia T. Holland, “A Woman’s Perspective on the Priesthood,” *Ensign,* July 1980, 25; *Tambuli,* June 1982, 23; Dallin H. Oaks, “Rights and Responsibilities,” *Mercer Law Review,* vol. 36, no. 2 (winter 1985), 427–42.
11. Տես Ջեյմս Ե. Ֆաուստ, «Դուք բոլորդ էլ Երկնքից ուղարկված եք» *Լիահոնա,* նոյ. 2002, 113; Մ. Ռասսել Բալլարդ, «Սա է իմ գործը և փառքը» *Լիահոնա,* մայ 2013, 19; Դալլին Հ. Օուքս «Քահանայության իշխանությունը տանը և եկեղեցում» *Լիահոնա,* նոյ. 2005, 26: Մենք երբեմն ասում ենք, որ Սփոփող միությունը «քահանայության հետ գործընկեր է»: Ավելի ճիշտ կլինի ասել, որ Տիրոջ գործի մեջ Սփոփող միությունը և Եկեղեցու կանայք «գործընկերներ են քահանայություն *կրողների* հետ»:
12. J. Reuben Clark Jr., “Our Wives and Our Mothers in the Eternal Plan,” *Relief Society Magazine,* Dec. 1946, 800.
13. J. Reuben Clark Jr., “Our Wives and Our Mothers,” 801.
14. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» *Լիահոնա*, նոյ. 2010, 129:
15. Spencer W. Kimball, “Privileges and Responsibilities of Sisters,” *Ensign,* Nov. 1978, 106.
16. Մ. Ռասսել Բալլարդ, *Լիահոնա,* ապր. 2014, 48; Տես նաև Sheri L. Dew, *Women and the Priesthood* (2013), especially chapter 6, for a valuable elaboration of the doctrines stated here.

Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմ
Յոթանասունի Նախագահությունից

Ինչպիսի՞ մարդ եք դուք:

Ինչպիսի՞ փոփոխություններ են անհրաժեշտ, որպեսզի մենք դառնանք այնպիսի մարդ, որ պարտավոր ենք լինել:

Երբ մտածում ենք համաշխարհային այս հավաքի մասին, մենք պետք է հիշենք, որ նմանատիպ բան ինչպիսին այս հավաքն է չկա և ոչ մին տեղ: Գերագույն համաժողովի քահանայության նիստի նպատակն է՝ ուսուցանել քահանայության կրողներին, թե ինչպիսի մարդիք ենք մենք պարտավոր լինել (տես 3 Նեփի 27.27) և ոգեշնչել մեզ հասնելու կատարելության:

Կես դար առաջ՝ Հավայան կղզիներում՝ իմ Ահարոնյան քահանայության տարիներին և Անգլիայում միսիոներ եղած ժամանակ մենք հավաքվում էինք հավաքատներում (եռանդուն ջանքերով) և հեռախոսակապի օգնությամբ լսում էինք քահանայության նիստը: Հետագա տարիներին արբանյակները հնարավորություն տվեցին հեռարձակումները տարածել Եկեղեցու որոշ տեղանքներ, որտեղ կային շատ մեծ արբանյակային ընդունիչներ, որպեսզի մենք կարողանայինք և լսել և տեսնել հեռարձակումները: Մենք զարմանում էինք այդ տեխնոլոգիաներով: Քչերը կարող էին պատկերացնել այօրվա աշխարհը, որտեղ ամեն ոք, ով խելախոսի, գրասալիկի կամ համակարգչի միջոցով կարող է մուտք գործել համացանց, կարող է լսել այս ժողովի ուղերձները:

Սակայն այս անհամեմատ աճող մատչելիությունը Տիրոջ ծառաների ձայների հանդեպ, որոնք նույնն են ինչ Տիրոջ ձայնը (տես ՎԵՈՒ 1.38), շատ քիչ արժեք ունեն, եթե միայն մենք չենք ձգտում ձեռք բերել խոսքը (տես ՎԵՈՒ 11.21) և հետո հետևել դրան: Պարզ ասած, գերագույն համաժողովի և քահանայության նիստի նպատակը կիրագործվի, եթե միայն մենք ցանկանում ենք գործել, եթե մենք ցանկանում ենք փոխվել:

Մի քանի տասնամյակ առաջ ես ծառայում է որպես Եպիսկոպոս: Երկար ժամանակ ես պարբերաբար հարցազրույց էի ունենում ինձանից տարիքով մեծ մի անդամի հետ: Այդ եղբայրը խնդիրներ ուներ կնոջ հետ և այլևս չէր շփվում իրենց երեխաների հետ: Նա հազիվ էր պահում աշխատանքը, չուներ մոտիկ ընկերներ և գտավ, որ անդամների հետ շփումը դժվար էր ու որոշեց չծառայել Եկեղեցում: Իր կյանքի դժվարությունների մասին մի ջերմեռանդ զրույցի ժամանակ նա թեքվեց դեպի ինձ, կարծես ամփոփում մեր անհամար զրույցների, նա ասաց. «Եպիսկոպոս, ես ջղայն բնավորություն ունեմ և ես պարզապես այդպիսին եմ»:

Այդ արտահայտությունն ապշեցրեց ինձ այդ երեկո և անհանգստացնում է ինձ այդ օրվանից սկսած: Այն բանից հետո, երբ այդ մարդը որոշեց կամ երբ մեզանից մեկը որոշում է, որ «Ես պարզապես այդպիսին եմ», մենք հրաժարվում ենք մեր փոխվելու ունակությունից: Մենք կարող ենք սպիտակ դրոշ բարձրացնել, ցած դնել մեր զենքերը, զիջել ճակատամարտը և պարզապես անձնատուր լինել՝ կորցրած լինելով հաղթելու որևէ հեռանկար: Թեև ոմանք կմտածեն, որ դա իրենց չի վերաբերում, հավանաբար, մեզանից յուրաքանչյուրն

առնվազն մեկ կամ երկու վատ սովորույթից չհրաժարվելով՝ ցույց է տալիս «Ես պարզապես այդպիսին եմ» մոտեցումը:

Մենք հավաքվում ենք այս քահանայության հավաքին, քանի որ, ով ենք մենքը չի նշանակում, թե ով մենք կարող ենք դառնալ: Այս երեկո մենք հավաքվում ենք Հիսուս Քրիստոսի անունով: Մենք հավաքվում ենք այն վստահությամբ, որ Նրա Քավությունը տալիս է յուրաքանչյուրիս՝ անկախ մեր թուլություններից, մեր հակվածություններից, փոխվելու ունակություն: Մենք հանդիպում ենք այն հույսով, որ անկախ մեր անցյալից, մեր ապագան կարող է ավելի լավը լինել:

Երբ մենք այս ժողովին մասնակցում ենք փոխվելու «անկեղծ միտումով» (Մորոնի 10.4), ապա Հոգին լիարժեք կգործի մեր սրտերում և մտքերում: Ինչպես Տերն է հայտնել մարգարե Ջոզեֆ Սմիթին. «Եվ պիտի լինի այնպես, որ, որքան որ նրանք. . . . հավատք գործադրեն առ ինձ, – հիշեք, որ հավատքը գործության և գործողության սկզբունք է, – ես իմ Հոգին կթափեմ նրանց վրա, այն օրը, երբ նրանք միասին կժողովվեն» (ՎևՈւ 44.2): Դա վերաբերում է այս երեկոյին:

Եթե կարծում եք, որ ձեր դժվարություններն անհաղթահարելի են, թույլ տվեք պատմել մի մարդու մասին, ում մենք 2006թ. հանդիպեցինք Հնդկաստանի, Հիդերաբադ քաղաքից դուրս՝ մի փոքրիկ գյուղում: Այդ մարդը հիանալի օրինակ էր մեկի, ով ցանկություն ուներ փոխվելու: Ապպա Ռաո Նուլուն ծնվել էր հնդկաստանի գյուղական համայնքում: Երեք տարեկան հասակում նրա ոտքերն անշարժացել էին պոլիոմիլիտի հետևանքով և դարձել ֆիզիկապես հաշմանդամ: Նրա շրջապատն ուսուցանել էր նրան, որ նրա ներուժը խիստ սահմանափակ էր: Այնուամենայնիվ, որպես երիտասարդ ամուրի՝ նա հանդիպեց միսիոներներին: Նրանք ուսուցանեցին նրան ավելի մեծ ներուժի մասին՝ թե այս կյանքում, թե գալիք հավերժական կյանքում: Նա մկրտվեց և հաստատվեց որպես

Եկեղեցու անդամ: Իր ներուժի և իր մասին աճող կարծիք ձևավորելով, նա նպատակ դրեց ստանալու Մելքիսեդեկյան քահանայություն և ծառայել լիաժամկետ միսիայում: 1986թ. նա կարգվեց որպես երեց և կանչվեց ծառայելու Հնդկաստանում: Քայլելը հեշտ չէր: Նա իր ուժերին ներածին չափով կիրառում էր ձեռքերի տակ եղած ձեռնափայտերը և հաճախ ընկնում, սակայն հանձնվելը երբեք տարբերակ չէր նրա համար: Նա պարտավորվեց պատվով և անձնվիրաբար ծառայել իր միսիան և նա արեց դա:

Երբ մենք հանդիպեցինք եղբայր Նուլուին շուրջ 20 տարի իր միսիայից անց, նա ուրախ ողջունեց մեզ ճամփեզրին և ուղեկցեց մեզ անհարթ և փոշոտ ճանապարհով դեպի երկու-երեք սենյականոց իր տունը, որտեղ նա ապրում էր իր կնոջ և երեք երեխաների հետ: Այդ օրը չափազանց շոգ և տհաճ օր էր: Նա դեռևս քայլում էր մեծ դժվարությամբ, սակայն չկար խղճահարություն իր հանդեպ: Անձնական ջանասիրության շնորհիվ նա դարձավ ուսուցիչ, ապահովելով գյուղի երեխաների ուսումը: Երբ ներս մտանք նրա համեստ բնակարանը, նա անմիջապես ինձ մի անկյուն տարավ և դուրս հանեց մի տուփ, որը պարունակում էր նրա ամենակարևոր ունեցվածքը: Նա ցանկանում էր ինձ ցույց տալ մի թուղթ: Այնտեղ գրված էր. «Բարի մաղթանքներով և օրհնություններով Երեց Նուլուին՝ խիզախ ու երջանիկ մի միսիոների: [ամսաթիվ] հունիսի 25, 1987; [ստորագրված] Բոյդ Կ. Փաքեր»: Մի առիթով, երբ Երեց Փաքերն այցելել էր Հնդկաստան և խոսել մի խումբ միսիոներների հետ, նա Երեց Նուլուին հաստատել էր իր ներուժը: Ըստ էության, այն ինչ եղբայր Նուլուն ցանկանում էր հաղորդել ինձ 2006թ. այդ օրը, այն էր, որ ավետարանը վերջնականապես փոխել է նրան:

Նուլուի տուն այդ այցելության ժամանակ միսիայի նախագահն ուղեկցում էր մեզ: Նրա այցի նպատակն էր հարցազրույց անցկացնել Եղբայր Նուլուի, նրա կնոջ և նրանց երեխաների հետ, որպեսզի ծնողները ստանային իրենց օժտումը և զավակները կնքվեին իրենց ծնողների հետ: Մենք նաև այդ ընտանիքին հանձնեցինք իրենց տոմսերը՝ մեկնելու Չինաստանի Հոնգ Կոնգի տաճար՝ կատարելու այդ արարողությունները: Նրանք ուրախությունից լաց էին լինում, կարծես իրենց երկար սպասված երազանքն իրականանում էր:

Ի՞նչ է ակնկալվում Աստծո քահանայությունը կրողից: Ինչպիսի՞ փոփոխություններ պետք է կատարվեն մեր մեջ, որպեսզի դառնանք այն մարդիկ, որ պարտավոր ենք լինել: Ես կանեմ երեք առաջարկ.

1. Մենք պետք է լինենք քահանայության տղամարդիկ: Անկախ նրանից, մենք Ահարոնյան քահանայություն կրող պատանի ենք, թեՄելքիսեդեկյան քահանայություն կրող տղամարդ, մենք պետք է լինենք քահանայության տղամարդիկ՝ ցույց տալով հոգևոր հասունություն, քանի որ մենք ուխտ ենք կապել: Ինչպես Պողոս առաքյալն է ասել. «Երբոր երեխայ էի՝ երեխայի պէս էի խօսում, երեխայի պէս էի մտածում, երեխայի



պէս էի համարում. Բայց երբոր մարդ եղայ, այն երեխայութեան բաները խափանեցի» (Ա Կորնթացիս 13.11)։ Մենք պետք է տարբերվենք, քանի որ կրում ենք քահանայություն՝ ոչ թե լինենք ամբարտավան կամ հպարտ կամ ինքնահավան, այլ խոնարհ, սովորելու ընդունակ և հեզ։ Քահանայություն և դրա տարատեսակ պաշտոններ ստանալը պետք է ինչ-որ նշանակություն ունենա մեզ համար։ Այն չպետք է մակերեսային «անցուղի ծես» լինի, որն ինքնաբերաբար տեղի է ունենում որոշակի տարիքին հասնելուն պես, այլ պետք է լինի մտածված կերպով ուխտած սրբազան ծես։ Մենք պետք է այնքան արտոնված և երախտապարտ զգանք, որ մեր ամեն մի արարք ցույց տա դա։ Եթե մենք հազվադեպ ենք մտածում քահանայության մասին, ապա պետք է փոխվենք։

2. Մենք պետք է ծառայենք։ Քահանայությունը կրելու էությունը մերձավորներին ծառայելով մեր կոչումը մեծարելն է (տես ՎԿՈՒ 84.33)։ Մենք չպետք է խուսափենք ամենակարևոր պարտականությունից՝ մեր կանանց և երեխաներին ծառայելուց, չպետք է հրաժարվենք կամ պասիվ կերպով Եկեղեցու ծառայություններ կատարենք և չպետք է հրաժարվենք հոգալ ուրիշների մասին, միայն որովհետև մեզ հարմար չէ։ Փրկիչն ասել է. «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը» (Մատթեոս 22.37), իսկ հետո ավելացրել. «Եթե ինձ սիրում ես, ծառայիր ինձ» (ՎԿՈՒ 42.29)։ Եսասիրությունը քահանայության պատասխանատվության հակադրությունն է, և եթե դա մեր բնավորության գիծն է, ապա մենք պետք է փոխվենք։
3. Մենք պետք է արժանավոր լինենք։ Ես միգուցե չունենամ Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդի այն կարողությունը, որի մասին մի քանի տարի առաջ քահանայության ժողովի ժամանակ նա խոսել է. «մոտեցնել իմ դեմքը ձեր դեմքին՝ քիթ քթի առաջ, բավական խանդավառությամբ, որ ձեր հոնքերը մի քիչ խանձվեն» («Բոլորս զինվորագրված ենք», *Լիահոնա*, նոյ. 2011, 45), բայց սիրելի եղբայրներ մենք պետք է արթնանանք նրանից, թե ինչպես է ընդհանուր ընդունված աշխարհիկ սովորույթները խեղդում քահանայության մեր իշխանությունը։ Եթե մեզ թվում է, որ մենք կարող ենք խաղալ մերկագրության, մաքրաբարոյության խախտումների կամ անազնվության հետ ցանկացած իսկ ձևով և այն բացասապես չի ազդի մեր և մեր ընտանիքների վրա, ապա մենք մեզ խաբում ենք։ Մորոնին ասել է. «Այլ տեսեք, որ դուք անեք բոլոր բաներն արժանիորեն» (Մորմոն 9.29)։ Տերը զորավոր ձևով հրամայել է. «Եվ այժմ ես ձեզ պատվիրան եմ տալիս, որ զգուշանաք ձեր համար, որ ջանասիրաբար ուշք դարձնեք հավերժական կյանքի խոսքերին» (ՎԿՈՒ 84.43)։ Եթե կան չլուծված մեղքեր, որոնք խանգարում են մեր արժանավորությանը, մենք պետք է փոխվենք։

«Ինչպիսի՞ մարդ եք դու պարտավոր լինել» հարցի միակ ամբողջական պատասխանը հակիրճ ու խորապես տվել է Հիսուս Քրիստոսը. «Ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27)։ «Եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում» (Մորոնի 10.32) հատվածում տված հրավերը պահանջում և ակնկալում է փոփոխություն։ Բարեբախտաբար, Նա մեզ մենակ չի թողել։ «Եվ եթե մարդիկ գան ինձ մոտ, ես նրանց ցույց կտամ իրենց թուլությունը. . . . Այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ» (Եթեր 12:27)։ Հիմնվելով Փրկչի քավության վրա՝ մենք կարող ենք փոխվել։ Այդ մասին ես վստահ եմ։ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

Ռենդալ Լ. Ռիդ
Երիտասարդ տղամարդկանց գերագույն
նախագահության երկրորդ խորհրդական

Ընտրություն ունեցող սերունդ

Դուք ընտրվել եք մասնակցելու Նրա աշխատանքին այս ժամանակ, քանի որ Նա վստահում է ձեզ, որ դուք կանեք ճիշտ ընտրություն:

Երիտասարդ տղամարդիկ, հավանաբար, դուք նախկինում լսել եք, որ դուք «ընտիր սերունդ եք», այն իմաստով, որ Աստված ընտրել ու նախապատրաստել է ձեզ գալու երկիր այս ժամանակ մեծ նպատակի համար: Ես գիտեմ, որ դա ճշմարիտ է: Սակայն, այս երեկո ես կցանկանայի ձեզ դիմել որպես «ընտրություն ունեցող սերունդ», քանի որ պատմության մեջ երբեք մարդիկ օրհնված չեն եղել այդքան շատ ընտրություններով: Ավելի շատ ընտրությունները նշանակում են ավելի շատ հնարավորություններ, նշանակում է ավելի շատ ներուժ՝ բարի գործեր և, դժբախտաբար, չար գործեր անելու համար: Աստված այս ժամանակ է ձեզ ուղարկել այստեղ, քանի որ Նա վստահ է, որ դուք հաջողությամբ կզանազանեք այսօրվա զարմանալիորեն բազմազան ընտրությունների միջև:

1974թ. Նախագահ Ստեֆենսեր Վ. Քիմբալն ասել է. «Ես գիտեմ, որ Տերը ցանկանում է մեր ձեռքը տալ այնպիսի տեխնոլոգիական գործիքներ, որ նույնիսկ մասնագետները դժվար կպատկերացնեին» (“When the World Will Be Converted,” *Ensign*, Oct. 1974, 10):

Եվ Նա արեց դա: Դուք մեծանում եք պատմության մեջ հայտնի բարիք գործելու ամենամեծ գործիքը՝ համացանցն ունենալով ձեր տրամադրության տակ: Քանի որ մենք ունենք այդ գործիքը, մենք ունենք ընտրության լայն հնարավորություններ: Այնուամենայնիվ, այս ընտրության առատությունն իր հետ կրում է հավասար չափով պատասխանատվություն: Այն ձեզ թույլ է տալիս մուտք գործել աշխարհի ինչպես ամենալավ, այնպես էլ ամենավատ բաների մեջ: Դրանով դուք կարճ ժամանակահատվածում կարող եք իրագործել մեծ բաներ, կամ կարող եք ընկնել անվերջ թվով անկարևոր բաների թակարդը, որոնք կվատնեն ձեր ժամանակը և կպակասեցնեն ձեր ներուժը: Կոճակի մեկ սեղմումով կարող եք ստանալ այն ամենը, ինչ ձեր սիրտը ցանկանա: Սկզբունքը միայն այն է, թե ի՞նչ կցանկանա ձեր սիրտը: Ինչի՞ եք դուք ձգտում: Ինչի՞ կհանգեցնեն ձեր ցանկությունները:

Հիշեք, որ Աստված «մարդկանց շնորհում է ըստ իրենց ցանկության» (Ալմա 29.4), և որ Նա «կդատի բոլոր մարդկանց՝ համաձայն նրանց գործերի, համաձայն նրանց սրտերի ցանկությունների» (ՎևՈւ 137.9; տես նաև Ալմա 41.3):

Երեց Բրյուս Ռ. Մաքկոնկիին ասել է. «Իրական, սակայն փոխաբերական իմաստով *կյանքի գիրքը* մարդկանց գործերի գրառումն է և այդ գրառումը գրված է իրենց մարմինների վրա. . . . Այսինքն՝ ամեն մի միտք, խոսք և արարք [ազդում է] մարդկային մարմնի վրա: Այս բոլորը իրենց նշաններն են թողնում, նշաններ, որոնք կարող են միայն հեշտությամբ ինչպես բառերը գրքի մեջ կարդացվել Նրա կողմից, ով Հավերժական է» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 97):

Համացանցը ևս գրանցում է ձեր ցանկությունները՝ արտահայտված փնտրումների և մատնազարկերի ձևով: Կան շատ միջոցներ ձեր ցանկություններն իրագործելու համար: Երբ դուք համացանցում եք, դուք թողնում եք հետքեր այն մասին, թե ինչ եք գրել, որտեղ եք եղել, որքան ժամանակ եք անցկացրել այնտեղ և նման բաներ, որոնք ձեզ հետաքրքրել են: Այդ ձևով համացանցը ձեր մասին ստեղծում է կիբեր բնութագիր, այսինքն՝ «կյանքի եթերային գիրք»: Ինչպես իրական կյանքում՝ համացանցը ձեզ կտա ավելի ու ավելի շատ այն, ինչ փնտրում եք: Եթե ձեր ցանկությունները մաքուր են, համացանցը կարող է այն մեծացնել, որն ավելի հեշտ է դարձնում արժանի գործերով զբաղվելը: Սակայն հակառակը նույնպես ճիշտ է:

Երեց Նիլ Ա. Մաքսվելն այսպես է ասել.

«Ժամանակի ընթացքում այն ինչ մենք համառորեն ցանկանում ենք, ի վերջո դառնում են այն, ինչ մենք կստանանք հավերժության մեջ. . . .

. . . Միայն կրթելով և դաստիարակելով է, որ մեր ցանկությունները թշնամու փոխարեն դառնում են մեր դաշնակիցները» (“According to the Desire of [Our] Hearts,” *Ensign*, Nov. 1996, 21, 22):

Իմ երիտասարդ եղբայրներ, եթե դուք ակտիվ չեք ձեր ցանկությունները կրթելու հարցում, ապա

աշխարհը կանի դա ձեր փոխարեն: Ամեն օրը աշխարհը ձգտում է ազդել ձեր ցանկությունների վրա գայթակղելով ձեզ գնել մի բան, սեղմել ինչ-որ կոճակ, խաղալ որևէ բան, կարդալ կամ դիտել ինչ-որ բան: Ի վերջո ընտրությունը ձերն է: Դուք ունեք ազատ կամք: Այն զորություն է ոչ միայն գործելու ըստ ձեր ցանկությունների, այլ նաև զտելու, մաքրելու և վսեմացնելու ձեր ցանկությունները: Ազատ կամքը ձեր ուժն է՝ դառնալու այն, ինչ ցանկանում եք: Յուրաքանչյուր ընտրություն հեռացնում կամ մոտեցնում է նրան, ինչ Աստված ցանկանում է, որ դուք դառնաք: Ամեն մի ստեղնի սեղմում էական է: Միշտ ինքներդ ձեզ հարց տվեք. «Ինչի՞ կհանգեցնի այս որոշումը»: Ունակություն զարգացրեք տեսնելու ձեր արարքների հետևանքները:

Սատանան ցանկանում է վերահսկել ձեր ազատ կամքը, որպեսզի կարողանա վերահսկել, թե ով կդառնաք դուք: Նա գիտի, որ դա անելու լավագույն միջոցներից մեկը ձեզ հակվածություն առաջացնող վարքագծի ծուղակը գցելն է: Ձեր ընտրությունները են որոշում, թե արդյոք նոր տեխնոլոգիաները կգորացնեն ձեզ, թե կիպատակեցնեն ձեզ:

Թույլ տվեք առաջարկել չորս սկզբունք, որոնք կօգնեն ձեզ, ընտրություն ունեցող սերնդին, կրթելու ձեր ցանկությունները և կառաջնորդեն տեխնոլոգիաների կիրառման հարցում:

Առաջինը. Իմանալով, թե իրականում ով եք դուք՝ ընտրություն կայացնելը դառնում է ավելի հեշտ:

Ես մի ընկեր ունեմ, ով այս ճշմարտությունը անձամբ է զգացել: Նրա որդին մեծացել էր Եկեղեցում, սակայն նա կարծես հոգեպես թափառում էր: Նա հաճախ հրաժարվում էր քահանայությունը կիրառելու հնարավորություններից: Նրա ծնողները հիասթափվեցին, երբ նա հայտարարեց, որ նա չէր ցանկանում միսիա ծառայել: Իմ ընկերը ջերմեռանդորեն աղոթեց որդու համար, հույս ունենալով, որ նա սրտի փոփոխություն կզգա:

Այդ հույսերը փշրվեցին, երբ որդին հայտարարեց, որ նա նշանվել է և պատրաստվում է ամուսնանալ: Հայրը աղաչում էր որդուն ստանալ իր հայրապետական օրհնությունը: Ի վերջո, որդին համաձայնվեց, սակայն պնդեց, որ հայրապետի մոտ միայնակ գնար:

Երբ օրհնություն ստանալուց հետո վերադարձավ, նա շատ հուզված էր: Նա ընկերուհուն դուրս տարավ, որտեղ կարող էր առանձին խոսել նրա հետ: Հայրը մի պահ դուրս նայեց և տեսավ երիտասարդ զույգին իրար արցունքները սրբելիս:

Ավելի ուշ որդին հոր հետ կիսվեց պատահածով: Մեծ հուզմունքով նա բացատրեց, որ օրհնություն ստանալուց, նա մի պահ տեսել էր, թե ով էր եղել նախաերկրային կյանքում: Նա տեսել էր, թե որքան խիզախ ու ազդեցիկ էր նա եղել ուրիշներին համոզելիս՝ հետևելու Քրիստոսին: Իմանալով, թե իսկապես ով է ինքը, ինչպե՞ս կարող էր նա չծառայել միսիայում:

Երիտասա՛րդ տղամարդիկ, հիշեք, թե իսկապես ով եք դուք: Հիշեք, որ դուք կրում եք սուրբ քահանայություն: Դա ձեզ կոգեշնչի կատարելու ճիշտ քայլեր և՛ համացանց օգտագործելիս, և՛ ձեր ողջ կյանքի ընթացքում:

Երկրորդ. Միացեք էներգիայի աղբյուրին

Անմիջապես ձեր ափերի մեջ դուք ունեք տարիների փորձը, ամենակարևորը՝ մարգարեների խոսքերը Հին Կտակարանի ժամանակներից մինչև Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը: Սակայն, եթե դուք պարբերաբար չեք լիցքավորում ձեր բջջային հեռախոսը, ապա այն անօգուտ է և դուք մոլորված ու կապից դուրս եք զգում: Դուք նույնիսկ մեկ օր չէիք մնա առանց մարտկոցի լիցքավորման:

Որքան որ կարևոր է տնից դուրս գալիս ամբողջությամբ լիցքավորել բջջային հեռախոսը, շատ ավելի կարևոր է ամբողջովին լիցքավորվել հոգեպես: Ամեն անգամ ձեր հեռախոսը սնման աղբյուրին միացնելիս կիրառեք դա որպես հիշեցում ձեզ հարց տալու համար, թե արդյոք դուք միացել եք հոգևոր էներգիայի ամենակարևոր աղբյուրին՝ աղոթքին և սուրբ գրությունների ուսումնասիրությանը, որը Սուրբ Հոգու ոգեշնչմամբ փոխում է ձեզ (տես ՎԵՈՒ 11.12–14): Այն կօգնի ձեզ իմանալ Տիրոջ միտքն ու կամքը, որպեսզի ամենօրյա փոքրիկ ընտրություններ անեք, որոնք կորոշեն ձեր ուղղությունը: Մեզանից շատերն անմիջապես կանգ են առնում հաղորդագրություն կարդալու համար: Արդյո՞ք չպետք է ավելի կարևորություն տալ Տիրոջից եկող հաղորդագրություններին: Մենք երբեք չպետք է անուշադրության մատնենք այդ աստվածային աղբյուրին միանալը (տես 2 Նեփի 32.3):

Երրորդ. Խելախոսի սեփականատեր լինելը ինքնին ձեզ խելացի չի դարձնում, սակայն դրա խելացի կիրառումը իսկապես դարձնում է:

Երիտասարդներ, անմիտ բաներ մի արեք ձեր խելախոսներով: Դուք

բոլորդ էլ գիտեք, թե ես ինչ նկատի ունեմ (տես Մոսիա 4.29)։ Շատ անհամար ձևերով տեխնոլոգիաները կարող են շեղել ձեզ ամենակարևոր բանից։ Հետևեք ասացվածքին. «Տեղ հասնելուն պես մնացեք այդտեղ»։ Երբ մեքենա եք վարում, ապա միայն վարեք։ Երբ դասարանում եք, կենտրոնացեք դասի վրա։ Երբ ընկերների հետ եք, ուշադրություն դարձրեք նրանց։ Ձեր ուղեղը միևնույն ժամանակ երկու բանի վրա չի կարող կենտրոնանալ։ Բազմաթիվ խնդիրներն արագ ձեր ուշադրությունը մի բանից շեղում են դեպի մյուս բանը։ Հին ասացվածքն ասում է. «Երկու նապաստակի հետևից ընկնես, ոչ մեկին էլ չես բռնի»։

Չորրորդ. Տերը տեխնոլոգիաները հասանելի է դարձնում Իր նպատակներն իրագործելու համար։

Տեխնոլոգիաների աստվածային նպատակը փրկության ծրագիրն արագացնելն է։ Որպես ընտրություն ունեցող սերնդի անդամներ, դուք հասկանում եք տեխնոլոգիաները։ Օգտագործեք այն դեպի կատարելիություն ձեր առաջընթացն արագացնելու համար։ Քանի որ ձեզ շատ է տրված, դուք նույնպես պետք է տաք (տես “Because I Have Been Given Much,” *Hymns,* no. 219)։ Տերը ցանկանում է, որ դուք այդ հիանալի գործիքներն օգտագործելով, Իր աշխատանքը հասցնեք հաջորդ մակարդակին՝ կիսվելու ավետարանով այնպիսի եղանակներով, որոնք իմ սերնդի ամենախոր պատկերացումներից այն կողմ են։ Մինչ հին սերունդը ներգործում է իր հարևանների ու իր քաղաքի մարդկանց վրա, դուք համացանցի և սոցիալական կայքերի շնորհիվ զորություն ունեք դուրս գալու սահմաններից և ներգործել ողջ աշխարհի վրա։

Ես վկայում եմ, որ սա Տիրոջ Եկեղեցին է։ Դուք ընտրվել եք մասնակցելու Նրա աշխատանքին այս ժամանակ, քանի որ Նա վստահում է ձեզ, որ դուք կանեք ճիշտ ընտրություն։ Դուք ընտրություն ունեցող սերունդ եք։ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Դուք քնա՞ծ եք Վերականգնման ընթացքում

Շատ կարևոր բաներ մենք պետք է անենք որպես անհատներ, որպես ընտանիքներ և որպես Քրիստոսի Եկեղեցի, և չենք կարող մասամբ նվիրաբերել մեր ջանքերը այս սրբազան աշխատանքին։

Մոտ 200 տարի առաջ «Ռիփ Վան Վինքլ» կարճ ամերիկյան պատմությունը դարձավ դասական։ Գլխավոր հերոսը՝ Ռիփը, ձգտումներ չունեցող մարդ է, ում մոտ շատ լավ է ստացվում խույս տալը երկու բաներից՝ աշխատանքից և իր կնոջից։

Մի օր, մինչ նա սարերում թափառում է իր շան հետ, նա հանդիպում է տարօրինակ հագուստով մարդկանց մի խմբի, ովքեր խմում էին և խաղեր խաղում։ Նրանց խմիչքից մի փոքր ընդունելուց հետո Ռիփի վրա թմրածություն է իջնում և մի պահ նա փակում է իր աչքերը։ Երբ նա կրկին բացում է իր աչքերը, ի զարմանս իրեն նա հայտաբերում է, որ իր շունը այնտեղ չէ, իր հրացանը ժանգոտել է և նա այժմ ունի երկար մորուք։

Ռիփը վերադառնում է իր գյուղը և բացահայտում, որ ամեն բան փոխվել է։ Նրա կինը մահացել է, նրա ընկերները չկան և Ջորջ III թագավորի դիմանկարը փոխարինվել է մեկի դիմանկարով, ում նա չի ճանաչում՝ Գեներալ Ջորջ Վաշինգտոնի նկարով։

Ռիփ Վան Վինքլը քնել էր 20



տարի: Եվ այդ ընթացքում նա բաց էր թողել իր երկրի պատմության ամենակարևոր պահերից մեկը. նա քնել էր Ամերիկյան Հեղափոխության ընթացքում:

1966թ. մայիսին Դոկտոր Մարտին Լութեր Քինգ Կրտսերն օգտագործեց այս պատմությունը որպես «Մի քնեք Հեղափոխության ընթացքում» իր ելույթի լուսաբանող օրինակ:[1]

Այսօր ես կցանկանայի անդրադառնալ նույն թեմային և հարց առաջադրել մեզ բոլորիս, որ կրում ենք Աստծո քահանայությունը. դուք քնա՞ծ եք Վերականգնման ընթացքում:

Մենք ապրում ենք Վերականգնման ժամանակաշրջանում:

Երբեմն մենք մտածում ենք ավետարանի Վերականգնման մասին որպես մի երևույթի, որն ավարտվել է, արդեն իսկ իրականացել է. Ջոզեֆ Սմիթը թարգմանել է Մորմոնի Գիրքը, նա ստացել է քահանայության բանալիները, Եկեղեցին կազմավորվել է: Իրականում վերականգնումը շարունակվող գործընթաց է. մենք ապրում ենք դրանում հենց հիմա: Այն ներառում է «այն ամենը, ինչ Աստված հայտնել է, այն ամենը, ինչ Նա այժմ հայտնում է» և «շատ մեծ ու կարևոր բաներ», որոնք «Նա դեռևս հայտնելու է»:[2] Եղբայրներ, ներկայիս իրադարձություններով լի զարգացումները մասն են կազմում վաղուց նախատեսված այն նախապատրաստական շրջանի, որն իր գագաթնակետին կհասնի մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի փառավոր Երկրորդ Գալստյան ժամանակ:

Սա աշխարհի պատմության ամենաուշագրավ ժամանակաշրջաններից մեկն է: Հնադարյան մարգարեները փափագել են տեսնել մեր օրերը:

Երբ ավարտվի մահկանացու կյանքի մեր ժամանակը, ի՞նչ փորձառություններով մենք կկարողանանք կիսվել մեր կյանքի այս կարևոր ժամանակահատվածում մեր իսկ կատարած աջակցության և Տիրոջ աշխատանքը առաջ տանելու մասին: Մենք կկարողանա՞նք ասել, որ ծալել ենք մեր թևքերը և աշխատել մեր ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով: Թե՞ մենք պետք է խոստովանենք, որ հիմնականում դիտողի դերում ենք եղել:

Ես կարծում եմ, որ կան բազմազան պատճառներ, թե ինչու է հեշտ մի փոքր քնկոտ դառնալ Աստծո արքայությունը կառուցելու հարցում: Թույլ տվեք ինձ նշել երեք մեծ պատճառները: Մինչ ես անեմ դա, ես հրավիրում եմ ձեզ խորհել, թե արդյոք դրանցից որևէ մեկը կարող է վերաբերվել ձեզ: Եթե դուք տեսնում եք կատարելագործվելու կարիք, ես խնդրում եմ ձեզ խորհել, թե ինչ կարելի է անել, որպեսզի փոխվեք դեպի ավելի լավը:

Եսասիրություն

Առաջինը, եսասիրություն:

Նրանք, ովքեր եսասեր են, փնտրում են իրենց իսկ շահերը և հաճույքները՝ ամեն ինչից առավել: Եսասեր անձնավորության համար ամենակարևոր հարցն է՝ «Ի՞նչ ունեմ ես դրանում»:

Եղբայրներ, ես վստահ եմ, որ դուք կարող եք տեսնել, որ այս վերաբերմունքը ակնհայտորեն հակառակ է հոգուն, որը պահանջվում է Աստծո արքայությունը կառուցելու համար:

Երբ մենք փնտրում ենք ինքնասպասարկում անձնուրաց ծառայությունից առավել, մեր առաջնահերթությունները կենտրոնանում են մեր անձը կարևորելու և հաճույքների վրա:

Անցած սերունդները ունեցել են իրենց պայքարը եսասիրության և նարցիսիզմի դեմ, սակայն, իմ կարծիքով, այսօր մենք լուրջ մրցակից ենք հանդիսանում նրանց համար: Արդյո՞ք պատահականություն է, որ Օքսֆորդի Բառարանը վերջերս հայտարարել է «եսամոլ» բառը որպես տարվա բառ:[3]

Բնականաբար, մենք բոլորս էլ ունենք ճանաչման ցանկություն, և ոչ մի վատ բան չկա, երբ մենք հանգստանում ենք և ուրախանում: Սակայն, եթե փնտրենք «շահ և գովասանք ստանալ աշխարհից»[4] և դա դառնում է մեր դրդապատճառի հիմնական մասը, մենք բաց կթողնենք փրկարար և երջանիկ փորձառությունները, որոնք գալիս են, երբ մենք մեծ նվիրումով ենք կատարում Տիրոջ աշխատանքը:

Ո՞րն է լուծումը:

Պատասխանը, ինչպես միշտ, գտնվում է Քրիստոսի խոսքերում.

«Ով որ ուզում է իմ ետեւից գալ, թող իր անձն ուրանայ եւ իր խաչը վեր առնէ, եւ իմ ետեւից գայ:

Որովհետեւ ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ կկորցնէ նորան. եւ ով որ իր անձն ինձ համար եւ աւետարանի համար կորցնէ, նա կապրեցնէ նորան»:[5]

Նրանք, ովքեր ողջ սրտով իրենց կյանքը նվիրում են մեր Փրկչին և ծառայում Աստծուն և մերձավորին, բացահայտում են հարստություն և լիություն կյանքում, որի փորձառությունը եսասերները կամ եսամոլները երբեք չեն ունենա: Անեսասերները նվիրաբերում են իրենց անձերը: Սրանք կարող են լինել գթասրտության փոքր պարգևներ, որոնք մեծ ազդեցություն են թողնում ի բարին՝ մի ժպիտ, մի ձեռքսեղմում, մի գրկախառնում, լսելու համար ժամանակ տրամադրելը, քաջալերման մեղմ մի խոսք կամ հոգատարություն արտահայտող մի ժեստ: Բարության այս բոլոր դրսևորումները կարող են փոխել սրտեր և կյանքեր: Երբ մենք օգտվենք մեր մերձավորներին սիրելու և ծառայելու անսահման հնարավորություններից, ներառյալ մեր ամուսիններին և ընտանիքին, Աստծուն սիրելու և ուրիշներին ծառայելու մեր ունակությունը մեծապես կավելանա:

Նրանք, ովքեր ծառայում են ուրիշներին, քնած չեն մնա Վերականգնման ընթացքում:

Կախվածություններ

Մեկ այլ բան, որը կարող է պատճառ դառնալ, որ մենք սայթաքենք աշխարհի այս կարևոր ժամանակաշրջանում, կախվածությունն է:

Կախվածությունները հաճախ հանկարծակի են սկսվում: Կախվածությունները կրկնվող գործողության բարակ թելեր են, որոնցից հյուսվում են սովորության հաստ պարաններ: Բացասական սովորությունները ունեն հույժ կարևոր կախվածություններ դառնալու ներուժ:

Կախվածության այս կապող շղթաները կարող են ունենալ շատ ձևեր, ինչպես պոռնոգրաֆիան, ալկոհոլը, սեռական հարաբերությունը, թմրադեղերը, ծխախոտը, մոլախաղով զբաղվելը, ուտելիքը, աշխատանքը, համացանցը կամ վիրտուալ իրականությունը: Սատանան՝ մեր ընդհանուր թշնամին, ունի շատ սիրված գործիքներ, որոնք նա օգտագործում է մեզանից խլելու համար մեր աստվածային ներուժը, որի օգնությամբ մենք ավարտին ենք հասցնում մեր առաքելությունը Տիրոջ արքայությունում:

Մեր Երկնային Հորը տխրեցնում է տեսնելը, թե ինչպես են Իր ազնիվ որդիներից ոմանք պարզում իրենց դաստակները՝ ընդունելու կործանարար կախվածությունների շղթաները:

Եղբայրներ, մենք կրում ենք Ամենակարող Աստծո հավերժական քահանայությունը: Մենք իրոք Ամենաբարձրյալի որդիներն ենք և օժտված ենք անասելի ներուժով: Մենք ստեղծված ենք այնպես, որ կարողանանք հասնել մեր ամենամեծ աստվածային ներուժին: Մեր աշխարհիկ ցանկությունները չպետք է սահմանափակեն մեր աստվածային ներուժը, չպետք է թույլ տան, որ կախվածությունները շղթայեն մեզ:

Ո՞րն է լուծումը:

Առաջինը, մենք պետք է հասկանանք, որ շատ ավելի հեշտ է կանխել կախվածությունները, քան ազատվել դրանցից: Ինչպես ասել է Փրկիչը՝ «Թույլ չտաք այս բաներից ոչ մեկը մտնի ձեր սիրտը»:[6]

Տարիներ առաջ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին և ինձ հնարավորություն տրվեց շրջելու Ռազմաօդային Ուժեր Մեկ-ում և տեսնելու հոյակապ օդանավը, որով շրջագայում է Միացյալ Նահանգների նախագահը: Գաղտնի Գործակալության կողմից մանրակրկիտ ստուգում անցկացվեց և ես ժպտացի մի փոքր, երբ մեր թանկագին մարգարեին ստուգում էին օդանավ բարձրանալուց առաջ:

Ապա, պատասխանատու օդաչուն հրավիրեց ինձ զբաղեցնել օդանավի հրամանատարի տեղը: Հիանալի փորձառություն էր կրկին նստելը հրաշալի թռչող մեքենայի ղեկի մոտ, ինչպիսին ես վարել էի շատ երկար տարիներ: Օվկիանոսների և մայրցամաքների վրայով կատարած թռիչքների հիշողությունները լցրեցին իմ սիրտն ու միտքը: Ես մտովի պատկերացրեցի ոգևորիչ թռիչքները

և վայրէջքները աշխարհով մեկ գտնվող օդանավակայաններում:

Գրեթե անգիտակցաբար ես ձեռքերս դրեցի 747-ի չորս կարգավորող փականների վրա: Հենց այդ պահին սիրելի և չսխալվող ձայն եկավ հետևից՝ Թոմաս Ս. Մոնսոնի ձայնը:

«Դիտեր,- ասաց նա,- նույնիսկ մի էլ մտածիր այդ մասին»:

Ես կարծում եմ, որ Նախագահ Մոնսոնը պարզապես կարդաց իմ մտքերը:

Երբ մենք գայթակղվում ենք անել բաներ, որոնք չպետք է անենք, թող որ մենք լսենք վստահելի ընտանիքի անդամի և ընկերոջ, մեր սիրելի մարգարեի և միշտ Փրկչի սիրով արված նախազգուշացմանը:

Կախվածության դեմ պայքարելու լավագույն միջոցը երբեք չսկսելն է:

Իսկ ի՞նչ պետք է անեն նրանք, ովքեր գտնում են իրենց կախվածության ճիրաններում:

Խնդրում եմ, իմացեք, նախ և առաջ, որ հույս կա: Օգնություն փնտրեք սիրելիների կողմից, Եկեղեցու ղեկավարներից և փորձառու խորհրդատուներից: Եկեղեցին կախվածություններից ազատվելու օգնություն է առաջարկում Եկեղեցու տարածքային ղեկավարների, համացանցի[7] և որոշ տարածքներում ՎՕՍ Ընտանեկան Ծառայությունների միջոցով:

Միշտ հիշեք, որ Փրկչի օգնությամբ դուք կարող եք ազատվել կախվածությունից: Դա կարող է լինել երկար, դժվարին ճանապարհ, սակայն Տերը հույսը չի կտրի ձեզանից: Նա սիրում է ձեզ: Հիսուս Քրիստոսը տառապեց Քավության ժամանակ, որպեսզի օգնի ձեզ փոխվել, ազատի ձեզ մեղքի գերությունից:

Ամենակարևորն այն է, որ շարունակեք փորձել: Երբեմն պահանջվում են մի քանի փորձեր, նախքան մարդիկ հաջողության են հասնում: Ուստի, մի հուսահատվեք: Մի կորցրեք հավատքը: Ձեր սիրտը մոտ պահեք Տիրոջը, և Նա կտա ձեզ ազատվելու զորությունը: Նա կազատի ձեզ:

Իմ սիրելի եղբայրներ, միշտ հեռու մնացեք սովորություններից, որոնք կարող են կախվածություն առաջացնել: Նրանք, ովքեր այդպես վարվեն, կկարողանան նվիրել իրենց սիրտը, զորությունը, միտքը և ուժը Աստծո ծառայությանը:

Նրանք քնած չեն մնա Վերականգնման ընթացքում:

Մրցակցող առաջնահերթություններ

Երրորդ խոչընդոտը, որ խանգարում է մեզ ամբողջությամբ ներգրավվել այս աշխատանքում, բազմաթիվ մրցակցող առաջնահերթություններն են, որոնց մենք հանդիպում ենք: Մեզանից ոմանք այնքան զբաղված են, որ մենք զգում ենք ինչպես մի սայլ, որին քաշում են տասնյակ կենդանիներ՝ յուրաքանչյուրը՝ տարբեր ուղղությամբ: Ծախսվում է շատ էներգիա, սակայն սայլը տեղից չի շարժվում:

Հաճախ մենք մեր լավագույն ջանքերն ենք նվիրում՝ հետամուտ լինելով սիրած զբաղմունքին, սպորտին, մասնագիտական հետաքրքրություններին և համայնքի կամ քաղաքական խնդիրներին: Այս բոլոր բաները կարող են լավ և պատվավոր լինել, սակայն արդյո՞ք դրանք մեզ ժամանակ և էներգիա են թողնում այն ամենի համար, որ պետք է լինեն մեր ամենաբարձր առաջնահերթությունները:

Ո՞րն է լուծումը:



Կրկին, այն գտնվում է Փրկչի խոսքերում.

«Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը:

Սա է առաջին եւ մեծ պատուիրանքը:

Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս»:[8]

Ամեն բան կյանքում պետք է երկրորդական լինի՝ համեմատած այս երկու մեծ առաջնահերթությունների հետ:

Նույնիսկ Եկեղեցու ծառայության մեջ ավելի հեշտ է երկար ժամանակ անցկացնել պարզապես որևէ բան առանց ոգևորության անելու՝ առանց աշակերտության սրտի կամ էության:

Եղբայրներ, մենք՝ որպես քահանայություն կրողներ պարտավորվել ենք լինելու մարդիկ, ովքեր սիրում են Աստծուն և մեր մերձավորին, և ովքեր հոժար են ցուցաբերել այդ սերը խոսքի և գործի միջոցով: Սա է մեր էությունը որպես Հիսուս Քրիստոսի աշակերտներ:

Նրանք, ովքեր ապրում են այս սկզբունքներով, քնած չեն մնա Վերականգնման ընթացքում:

Արթնանալու կոչ

Պողոս Առաքյալը գրել է. «Վեր կաց, ով քնած, եւ վեր կանգնիր մեռելներից, եւ Քրիստոսը կլուսաւորէ քեզ»:[9]

Իմ թանկագին ընկերներ, իմացեք, որ դուք լույսի որդիներ եք:

Թույլ մի տվեք եսասիրություն: Թույլ մի տվեք սովորություններ, որոնք կարող են կախվածություն առաջացնել: Թույլ մի տվեք, որ մրցակցող առաջնահերթությունները անտարբերության կամ սառնասրտության մատնեն օրհնված աշակերտությունը և ազնվական քահանայության ծառայությունը:

Շատ կարևոր բաներ մենք պետք է անենք որպես անհատներ, որպես ընտանիքներ և որպես Քրիստոսի Եկեղեցի, և չենք կարող մասամբ նվիրաբերել մեր ջանքերը այս սրբազան աշխատանքին:

Հիսուս Քրիստոսի աշակերտ լինելը մեր ջանքերը պահանջում է ոչ թե շաբաթը մեկ անգամ կամ օրը

մեկ անգամ: Այն պահանջում է մեր ջանքերն ընդմիշտ:

Իր քահանայությունը կրողներին Տիրոջ տված խոստումը գրեթե չափազանց հրաշալի է, երբ հասկանալի է դառնում:

Նրանք, ովքեր հավատարիմ են Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայություններին և մեծարում են իրենց կոչումները, «Հոգու կողմից սրբագործվում են՝ ի նորացումն իրենց մարմնի»: Ուստի, այ ն ամենն, ինչ մեր Հայրն ունի, կտրվի նրանց:[10]

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսի Քավության մաքրագործող զորությունը և Սուրբ Հոգու վերափոխող զորությունը կարող են ապաքինել և փրկել մարդկությանը: Մեր արտոնությունն է, մեր սրբազան պարտավորությունը և մեր ուրախությունը՝ լսել Տիրոջ կանչը՝ հետևելու Նրան հոժար կամքով և սրտի ողջ նվիրվածությամբ: Եկեք «թոթափենք շղթաները, որոնցով [մենք] կապված ենք, և դուրս [գանք] մթության միջից, և վեր ելնենք փոշուց»:[11]

Եկեք արթուն կենանք և չձանձրանանք բարիք գործելուց, քանզի մենք «դնում ենք հիմքը մի մեծ գործի»[12] պատրաստվելով Փրկչի վերադարձին: Եղբայրներ, երբ մենք ավելացնում ենք մեր օրինակի լույսը որպես վկայություն վերականգնված ճշմարտության առավելությանը և զորությանը, մենք քնած չեք մնա Վերականգնման ընթացքում: Այս ամենի մասին ես վկայում եմ և թողնում ձեզ իմ օրհնությունը մեր Վարդապետի՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Martin Luther King Jr., “Don’t Sleep Through the Revolution” (1966 Ware Lecture, Unitarian Universalist Association General Assembly, Hollywood, Florida, May 18, 1966).
2. Հավատո Հանգանակ 1.9:
3. Տես blog.oxforddictionaries.com/press-releases/oxford-dictionaries-word-of-the-year-2013:
4. 2 Նեփի 26. 29:
5. Մարկոս Ը.34–35:
6. 3 Նեփի 12.29:
7. Տես, օրինակ lds.org/topics/addiction:
8. Մատթեոս ԻԲ.37–39:
9. Եփեսացիս Ե.14:
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.33, 38:
11. 2 Նեփի 1. 23:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 64.33:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Քահանայություն կրող տղամարդը

Դուք կարող եք մեծ օրինակ լինել, միջին կամ վատ օրինակ: Դուք գուցե կարծում եք, որ դա նշանակություն չունի, բայց դա նշանակություն ունի Տիրոջ համար:

Մենք բոլորս ունենք հերոսներ, հատկապես, երբ մենք երիտասարդ ենք: Ես ծնվել եմ և մեծացել Պրինստոնում, Նյու Ջերսի, Միացյալ Նահանգներում: Ամենահայտնի մոտակա սպորտային թիմերը, որտեղ մենք էինք ապրում, տեղակայված էին Նյու Յորք Սիթիում: Դա երեք մասնագիտացված թիմերի հայրենիքն էր այն հեռավոր օրերին՝ Բրուքլին Դոջերս, Նյու Յորք Ջայնթս և Նյու Յորք Յանկիզ: Ֆիլադելֆիան նույնիսկ ավելի մոտիկ էր մեր տանը և Աթլետիկսի և Ֆիլլիզ բեյսբոլ թիմերի հայրենիքն էր: Այդ թիմերում բեյսբոլի բազմաթիվ հնարավոր հերոսներ կային ինձ համար:

Ջո ԴիՄաջիոն, որը խաղում էր Նյու Յորք Յանկիզի համար, դարձավ բեյսբոլի իմ հերոսը: Երբ եղբայրներս և ընկերներս ֆուտբոլ էին խաղում դպրոցի բակում, մեր տան մոտ, ես փորձում էի գնդակաթիակով այնպես հարվածել ինչպես կարծում էի Ջո ԴիՄաջիոն էր անում: Դա հեռուստացույցի օրերից առաջ էր (սա հին պատմություն է), այսպիսով ես միայն լրագրերից նկարներ ունեի՝ օգտագործելու նրա հարվածը կրկնօրինակելու համար:

Երբ ես մեծացա հայրս մեքենայով տարավ ինձ Յանկիի մարզադաշտը: Դա միակ անգամն էր, երբ

ես տեսա Զո ԴիՄաջիոյին խաղալիս: Կարծես ես դեռ այնտեղ եմ, մտքումս կարող եմ տեսնել նրան գնդակաթակով հարվածելը և տեսնում եմ սպիտակ բեյսբոլի գնդակը թռչելիս դեպի դաշտի կենտրոնական տեղերը:

Դեհ, իմ բեյսբոլի հմտությունները երբեք չմոտեցան իմ մանկության հերոսի հմտություններին: Բայց այն մի քանի անգամը, որ ես լավ հարվածեցի բեյսբոլի գնդակին, ես կրկնօրինակեցի նրա հզոր հարվածի մակարդակը, այնքան ճշգրիտ, որքան կարող էի:

Երբ մենք ընտրում ենք հերոսներ, մենք սկսում ենք ընդօրինակել, գիտակցորեն թե անգիտակցորեն, նրանով ինչով հիանում ենք նրանց մեջ:

Բարեբախտաբար, իմ իմաստուն ծնողները մեծ հերոսներ դրեցին իմ ճանապարհին, երբ ես տղա էի: Հայրս ինձ տարավ Յանկիի մարզադաշտը միայն մեկ անգամ հետևելու իմ բեյսբոլի հերոսին խաղալիս, բայց ամեն կիրակի նա թույլ էր տալիս, որ ես հետևեի քահանայություն կրող մի մարդու, ով դարձավ հերոս: Այդ հերոսը ձևավորեց իմ կյանքը: Հայրս մի փոքրիկ ճյուղի նախագահն էր, որը հավաքվում էր մեր տանը: Ի միջի այլոց երբ իջնում էիք ներքև առաջին հարկ կիրակի օրը, դուք եկեղեցում էիք: Մեր ճյուղը երբեք չէր ունենում ավելի քան 30 մարդուց ավելի հաճախում:

Կար մի երիտասարդ տղա, որը մեքենայով բերում էր իր մայրիկին մեր տուն ժողովների համար, բայց նա երբեք տուն չէր մտնում: Նա անդամ չէր: Հայրս էր, որին հաջողվեց դուրս գալ նրա մոտ, որտեղ նա կայանում էր մեքենան, և նրան մեր տուն հրավիրել: Նա մկրտվեց և դարձավ իմ առաջին և միակ Ահարոնյան քահանայության ղեկավարը: Նա դարձավ քահանայության իմ հերոսը: Ես դեռ հիշում եմ փայտյա արձանիկը, որը նա տվեց ինձ որպես պարգև, երբ մենք ավարտեցինք մի այրու համար վառելու փայտ կտրելու մի նախագիծ: Ես փորձում եմ նմանվել նրան, երբ արդարացված զգվասանք եմ տալիս Աստծո որևէ ծառայի:

Եկեղեցու այդ փոքրիկ ճյուղում ես ընտրեցի մեկ այլ հերոսի: Նա Միացյալ Նահանգների ծովային էր, որը գալիս էր մեր ժողովներին իր ծովայինի կանաչ համազգեստը հագած: Պատերազմական ժամանակ էր, այսպիսով հենց միայն դա նրան հերոս դարձրեց: Նա ծովայինների կողմից ուղարկվել էր Պրինստոնի համալսարանը՝ շարունակելու իր կրթությունը: Բայց շատ ավելի քան հիանալով նրա զինվորական համազգեստով, ես դիտում էի նրան Փալմեր մարզադաշտում որպես Պրինստոնի համալսարանի ֆուտբոլային թիմի կապիտան խաղալիս և նաև նայում էի նրան որպես իրենց բեյսբոլի թիմի Starcatcher:

Բայց ավելի շատ, նա գալիս էր մեր տուն, շաբաթվա ընթացքում՝ ինձ ցույց տալու, թե ինչպես նետեի գնդակը բասկետբոլի ցանցի մեջ՝ ինչպես իմ ձախ ձեռքով այնպես էլ աջ ձեռքով: Նա ասաց ինձ, որ ես այդ հմտության կարիքը կունենամ, որովհետև մի օր ես բասկետբոլ եմ խաղալու լավ թիմերում: Ես դա դեռ չէի գիտակցում, բայց տարիներ շարունակ նա ինձ համար քահանայություն կրող ճշմարիտ մարդ էր:

Ձեզանից յուրաքանչյուրը կլինի քահանայություն կրող տղամարդու օրինակ, անկախ նրանից դուք ուզում եք, թե ոչ: Դուք դարձել եք լույս տվող ճրագ, երբ ընդունեցիք քահանայություն: Տերը դրել է ձեզ որպես ճրագակալ՝ լույս տալու ճանապարհին բոլորի համար, ովքեր ձեր շրջապատում են: Դա հատկապես ճշմարիտ է նրանց քահանայության քվորումների համար: Դուք կարող եք լինել մեծ օրինակ, միջակ, կամ վատ օրինակ: Դուք գուցե կարծեք դա նշանակություն չունի ձեզ համար, բայց դա ունի Տիրոջ համար: Նա ասել է այս ձևով.

«Դուք աշխարհի լույսնեք. մի քաղաք, որ կենում է սարի վերայ, կարող չէ թագչուիլ:

Եւ ճրագը չեն վառիլ եւ դնիլ գրուանի տակ, այլ ճրագակալի վերայ, և նա լոյս կտայ ամենին՝ որ տան մէջ են:

Այսպէս լուսավորէ ձեր լոյսը մարդկանց առաջին, որ ձեր բարի գործերը տեսնեն, և փառաւորեն ձեր Հորը որ երկնքումն է»:[1]

Ես օրինվել եմ քահանյություն կրողների մեծ օրինակներով, այն քվորումներում, որտեղ ես բախտ եմ ունեցել ծառայելու: Դուք կարող եք անել այն, ինչ նրանք արեցին ինձ՝ ուրիշների համար հետևելու օրինակ լինելով:

Ես նկատել եմ քահանյություն կրողների երեք ընդհանուր հատկանիշներ, ովքեր իմ հերոսներն են: Մեկը աղոթքի օրինակն է, երկրորդը ծառայելու սովորությունն է և երրորդը ապառաժի պես ամուր՝ ազնիվ լինելու որոշումն է:

Մենք բոլորս աղոթում ենք, բայց քահանայության այնպիսի կրող, որ դուք եք կամենում լինել հաճախ է աղոթում և անկեղծ միտումով:

Երեկոյան դուք ծնկի կգաք և շնորհակալություն կհայտնեք Աստծուն օրվա օրհնությունների համար: Դուք շնորհակալություն կհայտնեք Նրա ծնողների, ուսուցիչների և հետևելու մեծ օրինակների համար: Դուք կնկարագրեք հատկապես ձեր աղոթքներում, թե ով է օրհնել ձեր կյանքը այդ օրվա ընթացքում և ինչպես: Դա ձեզանից կխլի ընդամենը մի քանի րոպե և ավելի քան մի փոքրիկ միտք: Դա կզարմացնի ձեզ և կփոխի ձեզ:

Երբ աղոթեք ներման համար, դուք կգտնեք ձեզ ներելիս ուրիշներին: Երբ շնորհակալություն հայտնեք Աստծուն Նրա բարության համար, դուք կմտածեք ուրիշների մասին, անունով, ովքեր ունեն ձեր բարության կարիքը: Կրկին այդ փորձառությունը կզարմացնի ձեզ ամեն օր և ժամանակի ընթացքում այն կփոխի ձեզ:

Ուղիներից մեկը, որով դուք կփոխվեք այդպիսի ջերմ աղոթքի միջոցով ես խոստանում եմ ձեզ, այն է, որ դուք կզգաք, որ դուք իսկապես Աստծո զավակն եք: Երբ դուք իմանաք, որ դուք Աստծո զավակն եք, դուք նաև կիմանաք, որ Նա ձեզանից շատ բան է սպասում: Որպես Իր զավակ նա կակնկալի ձեզանից, որ դուք հետևեք Նրա ուսմունքներին և Իր սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի ուսմունքներին: Քանի որ դուք Նրա զավակն եք, Նա կակնկալի ձեզանից, որ դուք առատաձեռն ու բարի լինեք ուրիշների հանդեպ: Նա կհիասթափվի, երբ դուք հպարտ լինեք և եսակենտրոն: Նա կօրհնի ձեզ ցանկությամբ՝ ուրիշների շահերը ձեր սեփական շահերից վեր դնել:

Ձեզանից ոմանք արդեն անեսաս քահանայական ծառայության օրինակներ եք: Ողջ աշխարհով մեկ տաճարներում, քահանայություն կրողները ժամանում են նախքան արևածագը: Իսկ ոմանք ծառայում են երկար արևամուտից հետո:Չկա ճանաչում կամ հասարակական ծափահարություններ այս աշխարհում ժամանակի և ջանքի այդ զոհաբերության համար: Ես զնացել եմ երիտասարդ մարդկանց հետ, երբ նրանք ծառայում են

նրանց, ովքեր հոգևոր աշխարհում են, ովքեր չեն կարող պահանջել տաճարային օրհնություններ իրենց համար:

Ես ավելի շուտ նրանց դեմքերին երջանկություն եմ տեսնում, քան հոգնածություն, ովքեր ծառայում են այնտեղ, ինչպես վաղ այնպես էլ ուշ, ես գիտեմ, որ մեծ պարգևներ կան այս կյանքում և այդպիսի անեսասեր քահանայական ծառայության համար, բայց դա միայն մի խորհրդանիշ է այն ուրախության, որը նրանք կկիսեն նրանց հետ, որոնց նրանք ծառայեցին, երբ նրանք հոգևոր աշխարհում էին:

Ես տեսել եմ այդ նույն երջանկությունը նրանց դեմքերին, ովքեր խոսում են ուրիշների հետ այն օրհնությունների մասին, որոնք գալիս են Աստծո արքայությանը պատկանողներին: Ես գիտեմ մի ճյուղի նախագահի, որը գրեթե ամեն օր մարդկանց է բերում միսիոներների համար, որ ուսուցանվեն: Հենց մի քանի ամիս առաջ նա դեռ Եկեղեցու անդամ չէր: Այժմ այնտեղ միսիոներներ կան, ովքեր ուսուցանում են և մի ճյուղ, որն աճում է թվով և ուժով: Բայց, ամենից առաջ նա լույս է ուրիշների համար, ովքեր կբացեն իրենց բերանները և այդպիսով կարագացնեն Երկնային Հոր զավակների հավաքումը:

Երբ դուք աղոթեք և ծառայեք ուրիշներին, ձեր գիտելիքը, որ դուք Աստծո զավակն եք, և ձեր զգացումները Նրա հանդեպ կաճեն: Դուք ավելի տեղյակ կդառնաք, որ Նա տխրել է, եթե դուք անազնիվ լինեք ինչ որ ձևով: Դուք ավելի վճռական կլինեք Աստծուն և ուրիշներին ձեր տված խոսքը պահել: Դուք ավելի զգույշ կլինեք որևէ բան վերցնելիս, որը ձեզ չի պատկանում: Դուք ավելի ազնիվ կլինեք ձեր գործատուների հետ: Դուք ավելի վճռական կլինեք ժամանակին գալու և ավարտելու ամեն հանձնարարություն, որ ձեզ տրվում է Տիրոջ կողմից, որը դուք ընդունել եք, որ անեք:

Եթե տնային ուսուցիչները գալու են, փոխարենը թափառելու, այն ընտանիքների երեխաները , որտեղ դուք կանչված եք ուսուցանելու, անհամբեր կսպասեն ձեր այցելությանը: Իմ երեխաները ստացել են այդ օրհնությունը: Երբ նրանք մեծացան, նրանք ունեին քահանայության հերոսներ, ովքեր օգնեցին նրանց սահմանել իրենց սեփական ուղղությունները Տիրոջը ծառայելու համար: Այդ օրհնյալ օրինակն այժմ անցնում է երրորդ սերնդին:

Իմ ուղերձը նաև շնորհակալության ուղերձ է:

Ես շնորհակալ եմ ձեր աղոթքների համար: Ես շնորհակալ եմ ձեզ՝ ծնկի իջնելու համար, ընդունելով այն փաստը, որ դուք չունեք բոլոր պատասխանները: Դուք աղոթում եք Երկնքի Աստծուն արտահայտելու ձեր երախտագիտությունը և խնդրելու Նրա օրհնությունները ձեր և ձեր ընտանիքների կյանքի վրա: Ես շնորհակալ եմ ուրիշներին ձեր ծառայելու համար և այն դեպքերի համար, երբ դուք զգացել եք, որ կարիք չկա երախտապարտության ձեր ծառայության համար:

Մենք ընդունել ենք Տիրոջ նախազգուշացումը, որ եթե մենք պատիվ ենք որոնում այս աշխարհում

մեր ծառայության համար, մենք կվտանգենք ավելի մեծ օրհնությունները: Դուք կհիշեք այս խոսքերը.

«Զգույշ կացէք, որ ձեր ողորմութիւնը մարդկանց առաջին չանէք, նորանցից տեսնուելու համար, եթե ոչ վարձք չունիք ձեր Հորիցն, որ երկնքումն է:

Արդ՝ երբոր ողորմութիւն անես, փող մի հնչեցնիր քո առաջին ինչպէս կեղծաւորներն են անում ժողովարանների մէջ եւ փողոցների մէջ, որ փառավորուին մարդկանցից. Ճշմարիտն ասում եմ ձեզ. Նորանք իրանց վարձքն առած են:

Բայց դու երբոր ողորմութիւն անես, թող չիմանայ քո ձախ ձեռքը, թէ ինչ է գործում քո աջը.

Որպէս զի քո ողորմութիւնը ծածուկ լինի, և քո Հայրն, որ ծածուկ տեղը տեսնում է, յայտնապէս կհատուցանէ քեզ»:[2]

Նրանք, ովքեր եղել են քահանայության մեծ կրողների իմ օրինակները հեշտորեն չեն ընդունում, որ իրենք ունեն հերոսական հատկանիշներ: Փաստորեն նրանք դժվարություն ունեն տեսնելու այն բաները, որոնցով ես այնպես հիանում եմ նրանց մեջ: Ես նշեցի, որ հայրս հավատարիմ նախագահ էր Եկեղեցու Նյու Ջերսիի մի փոքրիկ ճյուղում: Հետագայում նա Եկեղեցու Կիրակնօրյա Դպրոցի գերագույն վարչության անդամ էր: Սակայն ես զգույշ եմ այսօր նրա քահանայության ծառայության մասին համեստորեն խոսելով, որովհետև նա համեստ էր:

Նույնը ճիշտ է ծովայինի համար, որը իմ մանկության հերոսն էր: Նա երբեք չէր խոսում ինձ հետ իր քահանայության ծառայության կամ իր ձեռքբերումների մասին: Նա ուղղակի ծառայություն էր կատարում: Ես ուրիշներից իմացա նրա հավատարմության մասին: Թե նա տեսնում էր այն հատկանիշներն իր մեջ, որոնցով ես էի հիանում, ես չեմ կարող ասել:

Այսպիսով իմ խորհուրդն է ձեզ, ովքեր ուզում եք օրինել ուրիշներին ձեր քահանայությամբ, դա կապված է ձեր կյանքի հետ, որն անձնական է բոլորի համար, բացի Աստծուց:

Աղոթեք Նրան: Շնորհակալ եղեք այն ամենի համար, որ լավ է ձեր կյանքում: Հարցրեք Նրան իմանալու, թե ինչ անձանց է Նա դրել ձեր ճանապարհին, որոնց դուք պետք է ծառայեք: Աղերսեք, որ Նա օգնի ձեզ մատուցել այդ ծառայությունը: Աղոթեք, որ կարողանաք ներել և որպեսզի դուք կարողանաք ներվել: Ապա ծառայեք նրանց, սիրեք նրանց, և ներեք նրանց:

Նախևառաջ հիշեք, որ բոլոր ծառայությունից վեր, որ դուք մատուցում եք, ոչ մեկը ավելի մեծ չէ, քան մարդկանց օգնելը, որ ընտրեն որակավորվել հավերժական կյանքի համար: Աստված տվել է,այդ գերագույն ուղղությունը մեզ, թե ինչպես օգտագործենք մեր քահանայությունը: Նա դրա կատարյալ օրինակն է: Սա է այն օրինակը, որ մենք տեսնում ենք, Նրա լավագույն մահկանացու ծառաների փոքր մասի մոտ.

«Եվ Տեր Աստված խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. Երկինքները շատ են, և դրանք անհաշվելի են մարդու համար. Բայց ինձ համար դրանք հաշվելի են, քանզի դրանք իմն են:

Եվ ինչպես մի երկիրը և նրա երկինքները կանցնեն, ճիշտ այդպես մեկ ուրիշը կգա. և չկա վերջ իմ գործերին, ոչ էլ իմ խոսքերին:

Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[3]

Մենք պետք է օգնենք այդ աշխատանքում: Մեզանից յուրաքանչյուրը կարող է տարբերություն մտցնել: Մենք նախապատրաստված ենք սրբազան աշխատանքի մեր ժամանակի և տեղի համար վերջին օրերում: Մեզանից յուրաքանչյուրը օրհնվել է նրանց օրինակներով, ովքեր դարձրել են երկրի վրա այդ աշխատանքը իրենց ժամանակի գերակա նպատակը:

Ես աղոթում եմ, որ մենք կարողանանք օգնել միմյանց բարձրանալու դեպի այդ հնարավորությունը:

Հայր Աստված ապրում է և կպատասխանի ձեր աղոթքներին՝ ձեզ անհրաժեշտ օգնության համար, որպեսզի Իրեն լավ ծառայեք: Հիսուս Քրիստոսը հարություն առած Տերն է: Սա Նրա Եկեղեցին է: Քահանայությունը, որ դուք կրում եք Նրա անունով, գործելու զորությունն է՝ Աստծո զավակներին ծառայելու համար: Երբ դուք տալիս եք ձեր ողջ սիրտը այս աշխատանքին, Նա կմեծացնի ձեզ: Ես այսպես եմ խոստանում Հիսուս Քրիստոսի, մեր Փրկչի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս Ե.14–16:
2. Մատթեոս Զ.1–4:
3. Մովսես 1.37–39:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Զորացիր և քաջ եղիր

Եկեք բոլորս ունենանք քաջություն՝ չենթարկվելու տարածված կարծիքին, քաջություն՝ համարձակորեն պաշտպանելու մեր սկզբունքները:

Ի՞մ սիրելի՜ եղբայրներ, որքան լավ է կրկին լինելու ձեզ հետ: Ես աղոթում եմ, որ ունենամ աստվածային օգնություն, մինչ ես օգտագործում եմ ձեզ հետ խոսելու իմ հնարավորությունը:

Բացի այս Համաժողովի կենտրոնից հազարավոր այլ քահանայության կրողներ ողջ աշխարհով մեկ հավաքվել են ժողովատներում և այլ վայրերում: Մի ընդհանուր բան բոլորիս կապում է իրար հետ, քանի որ մեզ վստահված է կրելու Աստծո քահանայությունը:

Մենք այստեղ երկրի վրա ենք իր պատմության մի ուշագրավ ժամանակաշրջանում: Մեր հնարավորությունները գրեթե անսահման են, սակայն մենք դեռևս բախվում ենք բազմաթիվ դժվարությունների, որոնցից ոմանք եզակի են մեր ժամանակաշրջանի համար:

Մենք ապրում ենք մի երկրում, որտեղ մեծ հաշվով բարոյական արժեքները մի կողմ են գցված, որտեղ մեղքը գարշելիորեն ցուցադրվում է և որտեղ մեզ շրջապատող գայթակղությունները հեռու են տանում մեզ պատվիրաններից: Մենք բախվում ենք համառ ճնշումների և ստոր ազդեցությունների, որոնք կործանում են ամեն պարկեշտ բան և փորձում փոխարինել դրանք աշխարհիկ հասարակության մակերեսային փիլիսոփայությամբ և գործելակերպով:

Այս և այլ մարտահրավերների պատճառով մենք մշտապես առնչվում ենք այնպիսի որոշումների հետ, որոնք կարող են որոշել մեր ճակատագիրը: Որպեսզի մենք ճիշտ որոշումներ կայացնենք անհրաժեշտ է քաջություն, քաջություն որ ասենք ոչ, երբ պետք է ասենք դա, քաջություն, որ ասենք այո, երբ այն պատշաճ է, քաջություն անելու ճիշտ բաներ, քանի որ դա ճիշտ է:

Քանի որ այսօր հասարակության չափանիշները արագորեն հեռանում են մեզ տրված Տիրոջ արժեքներից և սկզբունքներից, մենք գրեթե միշտ պետք է պաշտպանենք այն, ինչին մենք հավատում ենք: Արդյո՞ք մենք քաջություն կունենանք անելու դա:

Նախագահ Ջ. Ռուբեն Կլարկը , ով երկար տարիներ եղել է առաջին նախագահության անդամ, ասել է. «Հայտնի են դեպքեր, երբ հավատքի համարում ունեցող մարդիկ. . . . զգացել են, որ քանի որ իրենց լիարժեք հավատքի դրսևորումը ծիծաղի առարկա կդառնա իրենց անհավատ աշխատակիցների մոտ, նրանք պետք է կա՛մ փոփոխեն իրենց հավատքը, կա՛մ հարմարեցնեն այն, կա՛մ նվազեցնեն կարևորությունը, կա՛մ էլ ձևացնեն, որ մերժում են այն: Նման մարդիկ կեղծավոր են»:[1] Մեզանից ոչ ոք չի ցանկանում նման պիտակ կրել և, այնուամենայնիվ, մենք հոժա՞ր ենք մեր հավատքը արտահայտել բոլոր իրավիճակներում:

Մենք կարող ենք օգնել ինքներս մեզ անելու այն, ինչը ճիշտ է, եթե մենք գնանք այնպիս վայրեր և մասնակցենք այնպիսի միջոցառումների, որտեղ մեր մտքերը լավ են ներգործվում և որտեղ Տիրոջ Հոգին իրեն հանգիստ կզգա:

Հիշում եմ, որ վերջերս կարդում էի այն մասին, որ հայրը որդուն

դպրոց ճանապարհելիս տվեց այսպիսի մի խորհուրդ. «Եթե դու երբևէ ինքդ քեզ տեսնես մի այնպիսի տեղում, որտեղ չպետք է լինես, դուրս արի անմիջապես»: Ես ձեզ բոլորիդ նույն խորհուրդն եմ տալիս. «Եթե դու երբևէ ինքդ քեզ տեսնես մի այնպիսի տեղում, որտեղ չպետք է լինես, դուրս արի անմիջապես»:

Մենք բոլորս էլ պետք է մշտապես քաջություն դրսևորենքքաջու: Մեր ամենօրյա կյանքում քաջությունըքաջու պարտադիր է, ոչ թե նշանակալից իրադարձությունների համար, այլ շատ հաճախ որոշումներ կայացնելիս կամ մեզ շրջապատող իրավիճակներին պատասխանելիս: Շոտլանդացի բանաստեղծ ու արձակագիր Ռոբերտ Լուիս Ստիվենսոնը ասել է. «քաջուքաջու Առօրյա քաջության վկաները շատ չեն: Սակայն, այն փաստը, որ ձեր պատվին թմբուկներ չեն խփում և բազմությունը ձեր անունը չի բացականչում, չի նշանակում, որ ձեր քաջությունը պակաս վսեմ է»:[2]

ՔաջությունըՔաջ տարբեր եղանակներով է դրսևորվում: Քրիստոնյա հեղինակ Չարլզ Սվինդոլը գրել է. «ՔաջՔաջությունը չի սահմանափակվում ռազմի դաշտով . . . կամ ձեր տանը խիզախորեն գող բռնելով: Քաջության իրական ստուգարքն ավելի անաղմուկ է: Դա ներքին ստուգարքն է, ինչպես օրինակ՝ հավատարիմ մնալը, երբ ոչ ոք չի տեսնում. . . . կամ կանգուն մնալը, երբ քեզ սխալ են հասկանում»:[3] Ես միայն կավելացնեմ, որ այդ ներքին քաջությունը նաև ներառում է ճիշտ բաներ անելը, նույնիսկ երբ ծիծաղի առարկա դառնալու վտանգի տակ հնարավոր է վախենանք պաշտպանել մեր համոզմունքները, և պահպանել այդ համոզմունքները նույնիսկ այն ժամանակ, երբ այն սպառնում է ընկերների կամ սոցիալական կարգավիճակի կորստով: Նա, ով հաստատակամորեն կանգնած է հանուն ճիշտ բանի, պետք է երբեմն համարձակություն դրսևորի մնալու առանց համակրանքի կամ հավանության:

Միացյալ Նահանգների ռազմածովային նավատորմում Երկրորդ

Համաշխարային Պատերազմի ժամանակ ծառայելիս ես սովորեցի խիզախ գործերի, հերոսությունների և քաջության օրինակների մասին: Ամենից շատ հիշում եմ մի տասնութամյա նավաստու քաջությունը, ով մեր հավատքից չէր, ում հպարտությունը չէր խանգարում աղոթել: 250 հոգանոց թիմում նա միակն էր, ով ամեն երեկո ծնկի էր իջնում իր մահճակալի մոտ, երբեմն հետաքրքասերների ծաղրանքի և անհավատների կատակների ներքո: Գլուխը կախ նա աղոթում էր Աստծուն: Նա երբեք չերկնչեց: Նա երբեք չերերաց: Նա քաջության տեր էր:

Վերջերս ես լսեցի մի մարդու օրինակի մասին, ում մոտ այդ ներքին քաջության պակաս էր նկատվում: Ընկերներից մեկը պատմեց մի հոգևոր և հավատքով լի հաղորդության ժողովի մասին, որին նա և իր ամուսինը իրենց ծխում ներկա էին եղել: Ահարոնյան Քահանայության քահանայի կոչում ունեցող մի երիտասարդ դիպչել էր նրանց և ողջ հավաքվածների սրտերին, երբ նա ելույթ էր ունեցել ավետարանի ճշմարտությունների և պատվիրանները պահելու ուրախության մասին: Բեմում կանգնած նա բերեց իր ջերմեռանդ և հուզիչ վկայությունը, որտեղ նա մաքուր ու կոկիկ էր երևում իր սպիտակ վերնաշապիկով ու փողկապով:

Ավելի ուշ՝ այդ նույն օրը, այդ կինն ու իր ամուսինը հարևանությամբ մեքենան վարելիս տեսան այդ նույն երիտասարդ տղային, ով մի քանի ժամ առաջ ոգեշնչել էր իրենց: Այնուհանդերձ, այժմ նա ներկայացնում էր լիովին ուրիշ պատկեր՝ մաշված շորերով ճամփեզրով քայլելիս և ծխախոտ ծխելիս: Ընկերս և նրա ամուսինը ոչ միայն մեծապես հիասթափվեցին և վշտացան, այլ նաև շփոթվեցին, թե ինչպես նա կարող էր այդպես համոզիչ անձնավորություն լինել հաղորդության ժողովին, և ապա նույնքան արագ լինել լիովին ուրիշ անձնավորություն:

Եղբայրներ, արդյոք դուք նույն անձնավորությո՞ւնն եք, ուր էլ որ լինեք և ինչ էլ որ անեք՝ այն

անձնավորությունը, որ մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ լինեք և այն անձնավորությունը, որ դուք գիտեք պետք է լինեք:

Ազգային ամսագրում հրապարակված իր հարցազրույցում ամերիկյան հայտնի բասկետբոլի խաղացող Ջաբարի Պարկերին, ով Եկեղեցու անդամ է, խնդրեցին կիսվել իր հորից ստացած ամենալավ խորհրդով: Ջաբարին պատասխանեց. «[Հայրս] ասել է. Եղիր այն նույն անձնավորությունը՝ թե մենության մեջ, թե՛ հասարակության մեջ»:[4] Եղբայրներ, կարևոր խորհուրդ է բոլորիս համար:

Մեր սուրբ գրությունները լի են այն քաջության օրինակներով, որոնք մեզանից յուրաքանչյուրին այսօր անհրաժեշտ են: Դանիել մարգարեն ցուցադրեց մեծ քաջություն, պաշտպանելով այն, ինչ նրա կարծիքով ճիշտ էր և ցույց տվեց աղոթելու քաջություն, թեև նրան սպառնացին մահով, եթե նա աղոթեր:[5]

Քաջությունը բնութագրում է Աբինադիի կյանքը, ինչպես ցույց է տրված նրա պատրաստակամության մեջ, որ ավելի լավ է մեռնել, քան մերժել ճշմարտությունը:[6]

Մի՞թե բոլորս չենք ոգեշնչվում Հելամանի 2000 պատանի որդիների օրինակից, ովքեր ուսուցանեցին և ցույց տվեցին ծնողների ուսմունքներին հետևելու քաջության անհրաժեշտություն՝ մնալով մաքուր և մաքրաբարո:[7]

Թերևս սուրբ գրությունների այս յուրաքանչյուր պատմությունները պսակված են Մորոնիի օրինակով, ով քաջություն ունեցավ համառորեն արդարակեցության մեջ շարունակել մինչև իր կյանքի վերջ:[8]

Իր կյանքի ընթացքում Մարգարե Ջոզեֆ Սմիթը ցույց է տվել քաջության անհամար օրինակներ: Ամենահիշարժաններից մեկն այն է, երբ նա մյուս եղբայրների հետ գամված էին իրար, պատկերացրեք՝ իրար կապված, պահվում էին Ռիչմոնդի, Միսսուրի նահանգի դատարանին կից մի անավարտ տնակում: Փարլի Փ. Պրատը, ով այդ գերիների թվում էր, գրել է մի երեկոյի մասին. «Մենք պառկել էինք իբրև թե քնած, մինչև որ կեսգիշերն անցավ և մեր ականջներն ու սրտերը ցավում էին, մինչ մենք ժամերով լսում էինք մեր պահակների անպարկեշտ կատակները, տհաճ հայհոյանքները, սարսափելի անարգանքը և լկտի բառապաշարը»:

Երեց Պրատը շարունակում է.

«Ես լսեցի այնքան ժամանակ, մինչև որ այնքան զզվեցի, ցնցվեցի, սարսափեցի և այնքան լցվեցի վրդովված արդարադատության ոգով, որ հազիվ էի զսպում ոտքի կանգնելուց և պահակներին սաստելուց: Սակայն, ես ոչինչ չասեցի Ջոզեֆին կամ մյուսներին, չնայած որ պառկած էի նրա կողքին և գիտեի, որ նա արթուն էր: Հանկարծ, նա ոտքի կանգնեց և որոտի կամ մռնչացող առյուծի ձայնով արտասանեց հետևյալ խոսքերն այնքան մոտ, որքանով ես կարող էի հիշել.

ԼՌՈՒԹՅՈՒՆ. . . . Հիսուս Քրիստոսի անունով ես սաստում եմ ձեզ և հրամայում ձեզ, որ հանդարտվեք: Ես այլևս ոչ մի բոպե չեմ հանդուրժի նմանխոսակցություն: Դադարե՛ք այդ խոսակցությունը, այլապես կա՛մ դուք, կա՛մ ես ՍՅՍ ՎԱՅՐԿՅԱՆԻՆ կմահանանք»:

Ջոզեֆը «ուղիղ կանգնել էր՝ տպավորիչ վեհության մեջ», ինչպես նկարագրում է Երեց Պրատը: Նա շղթայված էր, առանց զենքի էր, բայց և այնպես նա հանգիստ էր և արժանավայել: Նա նայեց ներքև վախեցած պահակներին, ովքեր անկյուն էին քաշվել կամ կուչ եկել գետնին: Այդ թվացյալ անուղղելի մարդիկ խնդրեցին նրա ներողամտությունը և մնացին լուռ:[9]

Քաջության ոչ բոլոր գործողություններն են հանգեցնում նման տպավորիչ և անմիջական արդյունքների, բայց բոլորն էլ հանգեցնում են մտքի խաղաղության և այն իմացության, որ ճիշտն ու ճշմարտությունը պաշտպանվել է:

Անհնար է ուղիղ կանգնել, երբ մարդու արմատներն աճում են տարածված կարծիքի ու հավանության սողացող ավազների մեջ:



Դանիելի, Աբինադիի, Մորոնիի կամ Ջոզեֆ Սմիթի քաջությունն է մեզ անհրաժեշտ, որպեսզի ամուր ու հաստատուն կառչենք այն ամենից, ինչը մեր կարծիքով ճիշտ է: Նրանք քաջություն ունեցան չանելու այն, ինչը հեշտ է, այլ այն ինչը ճիշտ է:

Մենք բոլորս էլ կհանդիպենք վախի, ծաղրանքի և ընդդիմության հետ: Եկեք բոլորս ունենանք քաջություն՝ չենթարկվելու տարածված կարծիքին, քաջություն՝ համարձակորեն պաշտպանելու մեր սկզբունքները: Փոխզիջման չգնալու քաջությունը օրհնում է մեզ Աստծո հավանությամբ: Քաջությունը դառնում է կենդանի և գրավիչ արժանիք, երբ այն դիտվում է ոչ միայն որպես պատրաստակամություն մեռնել արժանապատվորեն, այլ նաև վճռականություն ապրել պարկեշտորեն: Առաջ շարժվելով և ապրելով այնպես, ինչպես պետք է ապրենք, մենք անկասկած օգնություն կստանանք Տիրոջից և մխիթարություն գտնել Նրա խոսքերում: Ես սիրում եմ Հեսուի գրքում գրված Նրա խոստումը.

«Քեզ չեմ թողիլ և քեզ անտես չեմ անիլ. . . .

. . . Զօրացիր և քաջ եղիր. մի վախենար և մի զարհուրիր. որովհետև քո Տէր Աստուածը քեզ հետ է ամէն տեղ, ուր որ գնաս»:[10]

Իմ սիրելի եղբայրներ, Պողոս Առաքյալի նման մեր համոզմունքների քաջությամբ կարող ենք հայտարարել. «Որովհետեւ ես Քրիստոսի աւետարանը ամօթ չեմ համարում»:[11] Եվ ապա այդ նույն քաջությամբ, թող որ մենք հետևենք Պողոսի խորհրդին. «օրինակ եղիր հաւատացեալներին խօսքով, վարքով, սիրով, հաւատով, սրբությունով»:[12]

Աղետալի հակամարտությունները գալիս ու գնում են, սակայն մարդկանց հոգիների պատերազմը անդադար շարունակվում է: Ինչպես հնչեղ կոչ՝ Տիրոջ ձայնը գալիս է ձեզ, ինձ և քահանայության կրողներին ամենուր. «Ուստի, այժմ

թող ամեն տղամարդ սովորի իր պարտականությունը և ողջ ջանասիրությամբ գործի այն պաշտոնում, որում նշանակված է»:[13] Այնուհետև, ինչպես Պետրոս Առաքյալն է հայտարարել, մենք կլինենք «թագավորական քահանայություն»[14], միավորված մեկ նպատակի շուրջ և վերուստ զորությամբ օժտված:[15]

Թող ամեն մեկն այս երեկո այստեղից դուրս գա վճռականությամբ և քաջությամբ՝ ասելու Հոբի նման «քանի որ տակաւին շունչս ինձանում է. . . . մինչեւ մեռնելս չեմ ձգելու ինձանից իմ ուղղութիւնը»:[16] Իմ խոնարհ աղոթքն է, որ դա այդպես լինի, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. J. Reuben Clark Jr., *The Charted Course of the Church in Education,* rev. ed. (1994), 7.
2. Robert Louis Stevenson, in Hal Urban, *Choices That Change Lives* (2006), 122.
3. Charles Swindoll, in Urban, *Choices That Change Lives,* 122.
4. Jabari Parker, in “10 Questions,” *Time,* Mar. 17, 2014, 76.
5. Տես Դանիել 6:
6. Տես Մոսիա 11.20; 17.20:
7. Տես Ալմա 53.20–21; 56:
8. Տես Մորոնի 1–10:
9. Տես *Autobiography of Parley P. Pratt,* ed. Parley P. Pratt Jr. (1938), 210–11.
10. Հեսու 1.5, 9:
11. Հռոմեացիներին 1.16:
12. Ա Տիմոթեոս 4.12:
13. Վարդապետություն և Ուխտեր 107.99:
14. Ա Պետրոս 2.9:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 105.11:
16. Հոբ 27.3, 5:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Երախտապարտ լինել ցանկացած պայմաններում

Մի՞թե մենք պատճառ չունենք երախտագիտությամբ լցված լինելու՝ անկախ հանգամանքներից:

Տարիների ընթացքում ես ունեցել եմ սուրբ հնարավորություն հանդիպելու բազմաթիվ մարդկանց, որոնց վիշտը, կարծես, հասել է իրենց հոգու խորքերը: Այդ պահերին, ես լսել եմ իմ սիրելի եղբայրներին և քույրերին և փորձել եմ կիսել նրանց բեռը: Ես խորհել եմ այն մասին, թե ինչ ասեմ նրանց, և դժվարացել եմ գտնել խոսքեր, որպեսզի մխիթարեմ և սատարեմ նրանց իրենց փորձությունների մեջ:

Հաճախ նրանց վիշտը պայմանավորված է ինչ-որ բանի թվացյալ ավարտով: Ոմանք կանգնած են թանկ հարաբերությունների ավարտին, ինչպիսիք են հարազատի մահը կամ ընտանիքի անդամի առանձնանալը: Մյուսները կարծում են, որ կորցնում են ամուսնանալու կամ երեխաներ ունենալու կամ հիվանդությունը հաղթահարելու հույսը: Ոմանք էլ, հնարավոր է, կանգնած լինեն իրենց հավատքի ավարտի շեմին, երբ աշխարհի խառնիճաղանջ ու հակասական ձայները գայթակղում են կասկածել, նույնիսկ հրաժարվել նրանից, ինչ նրանք ժամանակին գիտեին, որ ճշմարիտ է:

Վաղ, թե ուշ, կարծում եմ, մենք բոլորս ենք այնպիսի զգացում ապրում, երբ մեր ներաշխարհի հյուսվածքները, կարծես, պատռվում են հակասություններից, թողնելով մեզ միայնակ, հիասթափված և կամազուրկ:

Դա կարող է պատահել յուրաքանչյուրիս հետ: Ոչ ոք անձեռնմխելի չէ:

Մենք կարող ենք երախտապարտ լինել

Բոլորիս իրավիճակը տարբեր է և յուրաքանչյուրիս կյանքի մանրամասները եզակի են: Այնուամենայնիվ, ես հասկացել եմ, որ մի բան կա, որ կհեռացնի մեզ հանդիպած դառնությունը: Կա մի բան, որ մենք կարող ենք անել, որպեսզի կյանքն ավելի քաղցր, ավելի ուրախ, նույնիսկ ավելի փառավոր լինի:

Մենք կարո՞ղ ենք երախտապարտ լինել

Աշխարհի իմաստությանը հակառակ կարող է հնչել այն, որ վշտով ծանրացած մարդը պետք է գոհություն հայտնի Աստծուն: Բայց նրանք, ովքեր մի կողմ են դնում դառնության շիշը և փոխարենը բարձրացնում են գոհության գավաթը, կարող են ճաշակել բժշկության, խաղաղության և հասկացողության հյութից:

Որպես Քրիստոսի աշակերտների՝ մեզ պատվիրված է «գոհություն հայտնել Տիրոջը՝ [մեր] Աստծուն, բոլոր բաներում»[1], «երգել Տիրոջը գոհությունով»[2] և «թող [մեր] սիրտը լի լինի գոհությամբ առ Աստված»:[3]

Ինչո՞ւ է Աստված պատվիրում մեզ երախտապարտ լինել:

Բոլոր Նրա պատվիրանները մեզ տրվում են, որ օրհնությունները հասանելի դարձվեն մեզ: Պատվիրանները մեզ հնարավորություն են տալիս մեր ազատ կամքը գործադրել, որպեսզի օրհնություններ ստանանք: Մեր սիրառատ Երկնային Հայրը գիտի, որ երախտագիտության ոգի զարգացնելու ընտրությունը մեզ կբերի ճշմարիտ ուրախություն և մեծ երջանկություն:

Ինչի՞ *համար* երախտապարտ լինել:

Ոմանք հնարավոր է ասեն. «Ինչի՞ *համար* պետք է երախտապարտ լինել, երբ իմ ներաշխարհը քանդվում է»:

Թերևս կենտրոնանալը, թե ինչի *համար* երախտապարտ լինենք, սխալ մոտեցում է: Դժվար է մշակել երախտագիտության ոգի, եթե մեր երախտագիտությունը միայն համարժեք է մեր հաշված օրհնությունների թվին: Ճիշտ է, կարևոր է հաճախակի «մեր օրհնությունները հաշվելը», և ամեն ոք, ով փորձել է, գիտի, որ դրանք շատ են, բայց, իմ համոզմամբ, Տերը չի ակնկալում, որ առատության և հեշտ օրերին մենք պետք է ավելի շատ երախտապարտ լինենք, քան փորձությունների ժամանակ: Իրականում, սուրբ գրության հղումներից շատերը խոսում են ոչ թե ինչ-որ բանի *համար*

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները և Բարձրագույն Պաշտոնյաները

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Բոյդ Ք. Փաքեր

Լ. Թոմ Փերի

Ռասսել Մ. Նելսոն

Դալլին Հ. Օքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ռիչարդ Գ. Սքոթ

Ռոբերտ Դ. Հեյլս

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Լ. Ուիթնի Քլեյթոն

Դոնալդ Լ. Հոլստրոմ

Ռիչարդ Ջ. Մեյնզ

Քրեյգ Ս. Քրիչլեսեն

Ուլիսես Սոարես

Լին Գ. Ռոբինս

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ՔՎՈՐՈՒՄ

(այբենական կարգով)

Մարկոս Ա. Այրուկայ-տիս
Հոսե Լ. Ալոնսո
Կարլոս Հ. Ամադո
Յան Ս. Արդերն
Մերվին Բ. Առնոլդ
Դեյվիդ Ս. Բաքստեր
Շեյն Մ. Բոուեն
Քրեյգ Ա. Քարդոն
Յուն Հվան Չոյի
Դոն Ռ. Քլարկ
Քարլ Բ. Քուք
Լորենս Ե. Քորբրիջ
Կլաուդիո Ռ. Մ. Կոստա
Լեգրան Ռ. Քըրտիզ Կուրոս
Բենջամին դե Հոյոս
Էդվարդ Դյուբ
Քեվին Ռ. Դանքըն
Լարի Ջ. Էքո Հոք
Սթենլի Գ. Էլիս
Դեյվիդ Ֆ. Էվանս
Էնրիկե Ռ. Ֆալաբելլա
Էդուարդո Գավարետ
Ռոբերտ Ս. Գայ
Կարլոս Ա. Գոդոյ
Քրիստոֆել Գոլդեն
Ջերիթ Վ. Գոնգ
Վոլթեր Ֆ. Գոնզալես
Ս. Սքոթ Գրոու
Ջեյմս Ջ. Համուլա
Դանիել Լ. Ջոնսոն
Փոլ Վ. Ջոնսոն
Պատրիկ Քիրոն
Երեց Յորգ Քլեբինգաթ
Էրիկ Վ. Կոպիչկե
Մարկուս Բ. Նաշ
Ս. Գիֆորդ Նիլսեն
Բրենտ Հ. Նիլսոն
Ալլան Ֆ. Փաքեր
Քեվին Վ. Փիրսոն
Էնթոնի Դ. Փերքինս
Փոլ Բ. Փիփեր
Ռաֆայել Ի.Փինո
Բրուս Դ. Փորթեր
Դեյլ Գ. Ռենլանդ
Մայքլ Տ. Ռինգվուդ
Ջոզեֆ Վ. Սիտատի
Սթիվեն Ե. Մնոու
Մայքլ Զոն Ու. Թեհ
Հոսե Ա. Թեքսեյրա
Խուան Ա. Ուսեդա
Սոնուկֆո Վայենզուելա
Ֆրանսիսկո Ջ. Վինաս
Վ. Քրիստոֆեր Վադել
Վիլիամ Ռ. Վոքեր
Սքոթ Դ. Վայթինգ
Չի Հոնգ (Սեմ) Վոնգ
Կազուհիկո Յամաշիտա
Ջորջ Ֆ. Զեբալոս
Կլաուդիո Դ. Զիվիկ
Վ. Քրեյգ Ցվիք

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՎՈՐՈՒՄ

(այբենական կարգով)

Վիլֆորդ Վ. Անդերսեն
Կոնչի Անյագի
Ռանդալ Կ. Բենեթ
Բրուս Ա. Քարլսոն
Ջ. Դեվն Քորնիշ
Տիմոթի Ջ. Դայքես
Բրեդլի Դ. Ֆոսթեր
Ռենդի Դ. Ֆանկ
Օ. Վինսենթ Հալեք
Քեվին Ս. Համիլտոն
Լարի Ս. Քեյչեր
Լարի Ռ. Լորենս
Փեր Գ. Մալմ
Հյուգո Ի. Մարտինեզ
Ջեյմս Բ. Մարտինո
Ջայրո Մազագարդի
Արդիան Օչոա
Քենտ Ֆ. Ռիչարդս
Գրեգորի Ա. Շվիցեր
Տերենս Մ. Վինսոն
Լարի Յ. Վիլսոն

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ

Ջեռալդ Կոսե
Առաջին Խորհրդական

Գարի Ի. Սթիվենսոն
Նախագահող Եպիսկոպոս

Դին Մ. Դեյվիս
Երկրորդ Խորհրդական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ



Զոն Ս. Թաններ
Առաջին Խորհրդական

Թեդ Ռ. Քայիստեր
Նախագահ

Դեվին Գ. Դյուրան
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ



Քերոլ Ֆ. Մակքոնկի
Առաջին Խորհրդական

Բոննի Լ. Օսկարսոն
Նախագահ

Նելլ Ֆ. Մերիոթ
Երկրորդ Խորհրդական

ՍԳՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Քերոլ Մ. Սթեֆենս
Առաջին Խորհրդական

Լինդա Ք. Բրոքքոն
Նախագահ

Լինդա Շ. Ռիվս
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Ջին Ա. Սթիվենս
Առաջին Խորհրդական

Ռոզմարի Մ. Վիքսոմ
Նախագահ

Շերիլ Ա. Էսփլին
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Լարի Մ. Գիբսոն
Առաջին Խորհրդական

Դեյվիդ Լ. Բեք
Նախագահ

Ռանդալ Լ. Ռիդ
Երկրորդ Խորհրդական

Ամբողջ աշխարհում Վերջին Օրերի Սրբերը հավաքվում են 184-րդ ամենամյա գերագույն համաժողովին: Ժամացույցի սլաքի ուղղությամբ վերին ձախից պատկերված են Եկեղեցու անդամները և միսիոներները Վիեննայում, Ավստրիա; Սան Պաուլոյում, Բրազիլիա; Մեխիկո Սիթիում, Մեքսիկա; Ուլանբատարում, Մոնղոլիա; Հայլենդս Ռենչում, Կոլորադո, ԱՄՆ; Սիդնեյում, Ավստրալիա; Սանկտ Պետերբուրգում, Ռուսաստան; և Նորքրոսում, Ջորջիա, ԱՄՆ:

երախտապարտ լինելու մասին, այլ առաջարկում են, որ մենք մշտական երախտագիտության ոգի ունենանք:

Շատ հեշտ է երախտապարտ լինել բաների *համար*, երբ կյանքը, կարծես, մեր ուզած ճանապարհով է գնում: Եվ դժվար է՝ այն ժամանակ, երբ մեր ցանկացած բաները անհասանելի են թվում:

Թույլ տվեք առաջարկել, որ երախտագիտությունը դիտենք որպես տրամադրվածություն՝ կենսակերպ, որը կախված չէ հանգամանքներից: Այլ կերպ ասած, ես առաջարկում եմ, որ ոչ թե «շնորհակալ լինենք ինչ-որ բանի *համար*», այլ «շնորհակալ լինենք *բոլոր* հանգամանքներում», անկախ պայմաններից:

Կա հին պատմություն մի մատուցողի մասին, ով հարցրեց հաճախորդին, թե արդյոք նրան դուր եկավ ուտելիքը: Հյուրը պատասխանեց, որ ամեն ինչ լավ էր, բայց ավելի լավ կլիներ, եթե հացը մի քիչ ավելի շատ լիներ: Հաջորդ օրը, երբ տղամարդը վերադարձավ, մատուցողը կրկնապատկեց հացի քանակը, երկու կտորի փոխարեն տալով նրան չորս կտոր, բայց մարդը դեռ երջանիկ չէր: Հաջորդ օրը մատուցողը հացը դարձրեց ութ կտոր, բայց կրկին ապարդյուն:

Չորրորդ օրը մատուցողը վճռական էր՝ գոհացնելու տղամարդուն: Այնպես որ նա պատվիրեց մի երկար (3մ.) ֆրանսիական հաց, երկու կես արեց և ժպտալով մատուցեց հաճախորդին: Մատուցողն անհամբեր սպասում էր տղամարդու արձագանքին:

Ճաշից հետո տղամարդը բարձրացրեց գլուխը և ասաց. «Ինչպես միշտ, շատ համեղ էր: Բայց դուք սկսել եք կրկին երկու կտոր մատուցել»:

Երախտապարտ լինենք *բոլոր* հանգամանքներում

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ընտրությունը մերն է: Մենք կարող ենք ընտրել սահմանափակել մեր երախտագիտությունը՛ հիմնվելով մեզ պակասող օրհնությունների վրա: Կամ մենք կարող ենք ընտրել նմանվել Նեփիին, որի երախտապարտ սիրտը երբեք չերերաց: Երբ նրա եղբայրները կապեցին նրան, այն նավում, որը նա կառուցել էր նրանց խոստումի երկիր տեղափոխելու համար, նրա դաստակներն ու ոտքի կոճերը այտուցվել էին, այնպես որ «սաստիկ էր դրանց ցավը» և սաստիկ փոթորիկը սպառնում էր նրան կուլ տալ ծովի խորքերում: «Այնուամենայնիվ, իմ Աստծուն էի նայում ես և ողջ օրը գովք էի անում նրան. և չէի տրտնջում Տիրոջ դեմ՝ իմ չարչարանքների պատճառով»:[4]

Մենք կարող ենք ընտրել նմանվել Հոբին, որ, կարծես, ամեն ինչ ուներ, բայց հետո կորցրեց ամեն բան: Չնայած դրան, Հոբը պատասխանեց՝ ասելով. «Մերկ դուրս եկայ իմ մօր արգանդիցը, եւ մերկ պիտի վերադառնամ. . . . Տէրը տուաւ եւ Տէրն առաւ. Տիրոջ անունը օրհնեալ լինի»:[5]

Մենք կարող ենք ընտրել նմանվել մորմոնական ռահվիրաներին, ովքեր պահպանեցին երախտագիտության ոգին դեպի Մեծ Սոլթ Լեյք իրենց դանդաղ ու ցավոտ երթուղու ընթացքում, նույնիսկ երգելով ու պարելով և փառաբանելով Աստծո բարությունը:[6] Մեզանից շատերը հակված կլինեին երես թեքել, բողոքել և տագնապել ճամփորդության դժվարությունից:

Մենք կարող ենք ընտրել նմանվել Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որը թշվառ պայմաններում

բանտարկված լինելով Լիբերթի բանտում, գրեց այս ներշնչված խոսքերը. «Շատ սիրելի՛ եղբայրներ, եկեք ուրախությամբ անենք ամեն բան, որ մեր ուժի սահմաններում է. և հետո, թող մենք կանգնենք հանգիստ, ամենայն համոզվածությամբ՝ տեսնելու Աստծո փրկությունը և նրա բացահայտվող բազուկը»:[7]

Մենք կարող ենք ընտրել երախտապարտ լինել անկախ ամեն ինչից:

Այս տեսակի երախտագիտությունը վեր է այն ամենից, ինչ տեղի է ունենում մեր շուրջը: Այն գերազանցում է հիասթափությունը, հուսահատությունը և վհատությունը: Այն նույնքան գեղեցիկ ծաղկած է ձմռան սառցե դաշտում, որքան ամռան հաճելի ջերմության ժամանակ:

Երբ Աստծուն երախտապարտ ենք *բոլոր* հանգամանքներում, մենք կարող ենք ձախորդությունների մեջ ևս նուրբ խաղաղություն զգալ: Վշտի մեջ մեր սրտերը կարող են գոհությամբ լցվել: Ցավի մեջ կարող ենք փառավորել Քրիստոսի Քավությունը: Սառեցնող դառը վշտի մեջ կարող ենք զգալ երկնքի ջերմացնող հպումն ու գրկախառնությունը:

Մեզ երբեմն թվում է, թե երախտապարտ լինելն այն է, ինչ մենք անում ենք *հետո*, երբ մեր

Ռեյմոնդ, Ալբերտա, Կանադա

խնդիրները լուծվում են, բայց դա ահավոր կարճատեսություն է: Կյանքի որքան մաս ենք մենք բաց թողնում՝ անձրևի համար Աստծուն շնորհակալություն չհայտնելով և սպասելով, որ տեսնենք ծիածանը:

Նեղությունների ժամանակ երախտապարտ լինելը *չի* նշանակում, որ մենք գոհ ենք մեր հանգամանքներից: Այն նշանակում *է*, որ հավատքի աչքերով մենք նայում ենք մեր այսօրվա մարտահրավերներից այն կողմ:

Նման երախտագիտությունը ոչ թե շուրթերից է, այլ հոգուց: Այդ երախտագիտությունն է, որ բժշկում է սիրտը և ընդարձակում միտքը:

Երախտագիտություն՝ որպես հավատքի դրսևորում:

Բոլոր հանգամանքներում երախտապարտ լինելը Աստծո հանդեպ հավատքի դրսևորում է: Այն պահանջում է, որ մենք վստահենք Աստծուն և հուսանք բաների համար, որոնք չենք տեսնում, բայց որոնք ճշմարիտ են[8]: Երախտապարտ լինելով՝ մենք հետևում ենք մեր սիրելի Փրկչի օրինակին, ով ասաց. «Ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի»:[9]

Ճշմարիտ երախտագիտությունը հույսի *և* վկայության դրսևորում է: Այն գալիս է գիտակցումից, որ մենք միշտ չէ, որ հասկանում ենք կյանքի փորձությունները, բայց վստահում ենք, որ մի օր կհասկանանք:

Ցանկացած դեպքում, մեր երախտագիտության զգացումը սնվում է բազմաթիվ սրբազան ճշմարտություններով, որ մենք *գիտենք*, որ մեր Հայրը իր զավակներին տվել է երջանկության մեծ ծրագիրը, որ Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, մենք կարող ենք ապրել հավերժ մեր հարազատների հետ, որ, ի վերջո, մենք կունենանք փառահեղ, կատարյալ և անմահ մարմին, որը բեռնված չի լինի հիվանդություններով, ոչ էլ հաշմանդամությամբ, և որ թախծի ու կորստի մեր արցունքները կփոխարինվեն երջանկության և ուրախության առատությամբ, «լաւ չափով՝ թափ տրուած շարժուած լիփ լիքը կ'տան ձեր զոգը»:[10]

Նման վկայությունը պետք է որ փոխակերպած լիներ Փրկչի Առաքյալներին՝ վախեցող, կասկածող մարդկանց դարձնելով Տիրոջ անվախ և ուրախ պատվիրակներ: Խաչելությանը հետևող առաջին ժամերի ընթացքում նրանց պատել էր հուսահատությունն ու վիշտը, թույլ չտալով հասկանալ, թե ինչ էր կատարվում: Բայց մի

իրադարձությունը փոխեց ամեն ինչ: Նրանց Տերը հայտնվեց և հայտարարեց. «Տեսէք իմ ձեռքերը եւ իմ ոտները, որ ես ինքս եմ»:[11]

Երբ Առաքյալները ճանաչեցին կենդանացած Քրիստոսին, երբ նրանք ականատես եղան իրենց սիրելի Փրկչի փառահեղ Հարությանը, նրանք ուրիշ մարդիկ դարձան: Ոչինչ չէր կարող նրանց ետ պահել իրենց առաքելությունը կատարելուց: Նրանք քաջությամբ և վճռականությամբ տարան խոշտանգումները, նվաստացումը և, անգամ, մահը, որին պիտի ենթարկվեին իրենց վկայության պատճառով:[12] Նրանք չէին վախենում գովալ ու ծառայել իրենց Տիրոջը: Նրանք փոխեցին մարդկանց կյանքն ամենուր: Նրանք փոխեցին աշխարհը:

Նման փոխակերպում ապրելու համար դուք պարտադիր չէ, որ տեսնեք Փրկչին, ինչպես Առաքյալները տեսան: Սուրբ Հոգուց ծնված Քրիստոսի մասին վկայությունը կարող է օգնել ձեզ նայել մահկանացության հուսախափ անող ավարտից այն կողմ և տեսնել աշխարհի Քավչի պատրաստած պայծառ ապագան:

Մենք չենք արարվել ավարտվելու համար

Մեր հավերժական ճակատագրի լույսի գիտելիքի ներքո, զարմանալի չէ, որ ամեն անգամ, երբ մենք հանդիպում ենք կյանքի դառը ավարտի, այն, կարծես, անընդունելի է մեզ համար: Մեր ներսում, կարծես, մի բան կա, որը դիմադրում է ավարտին:

Ինչու է դա այդպե՞ս: Որովհետև մենք հավերժական նյութից ենք արարվել: Մենք հավերժական էակներ ենք՝ Ամենակարող Աստծո զավակները, որի անունը Անվերջ[13] է և ով խոստանում է անհամար հավերժական օրհնություններ: Ավարտը մեր ճակատագիրը չէ:

Որքան ավելի շատ ենք սովորում Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին, այնքան ավելի շատ ենք գիտակցում, որ մահկանացու կյանքում ավարտվող բաները դեռ ավարտը չեն: Դրանք պարզապես ընդհատումներ են, ժամանակավոր դադարներ, որոնք մի օր փոքր կթվան հավատարիմներին սպասվող հավերժական ուրախության հետ համեմատ:

Որքա՜ն երախտապարտ եմ իմ Երկնային Հորը, որ իր ծրագրում ոչինչ չի ավարտվում, այլ անդադար սկսվում է:

Երախտապարտները կփառավորվեն

Եղբայրնե՛ր և քույրեր, մի՞թե մենք պատճառ չունենք երախտագիտությամբ լցված լինելու՝ անկախ հանգամանքներից:

Մի՞թե մեզ ավելի մեծ պատճառ է պետք, որ մեր սրտերը «լի լինեն գոհությամբ առ Աստված»:[14]

«Մի՞թե մենք ուրախանալու մեծ պատճառ չունենք»:[15]

Որքա՜ն օրհնված ենք մենք, երբ ընդունում ենք Աստծո ձեռքի աշխատանքը կյանքի հրաշալի գոբելենում: Մեր Երկնային Հոր հանդեպ երախտագիտությունը ընդլայնում մեր պատկերացումները և պարզում է մեր տեսլականը: Այն խոնարհություն է ոգեշնչում և կարեկցանք է խթանում դեպի մեր մերձավորները

և դեպի բոլոր Աստծո արարածները: Երախտագիտությունը քրիստոսանման բոլոր հատկանիշների տարանջատիչն է: Երախտապարտ սիրտը բոլոր առաքինի հատկանիշների ծնողն է:[16]

Տերը տվել է մեզ իր խոստումը, որ «նա, ով ընդունում է բոլոր բաները գոհությամբ, պիտի *փառավորվի*. և այս աշխարհի բաները պիտի ավելացվեն նրա համար, նույնիսկ հարյուրապատիկ, այո, ավելի շատ»:[17]

Թող որ մենք ապրենք՝ «գոհություն հայտնելով ամեն օր»,[18] հատկապես մահկանացության առերևույթ անբացատրելի ավարտների ժամանակ: Թող որ մենք մեծահոգի լինենք՝ գոհություն հայտնելով մեր ողորմած Երկնային Հորը: Թող որ մենք միշտ և անընդհատ մեր ձայնը բարձրացնենք և խոսքով ու գործով մեր երախտագիտությունը հայտնենք մեր Երկնային Հորը և Նրա Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Այս ամենի համար ես աղոթում եմ և թողնում եմ ձեզ իմ վկայությունը և օրհնությունը մեր Տեր՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 59.7, տես նաև Եփեսացիս 5.20, Ա Թեսաղոնիկեցիս 5.18, Մոսիա 26.39, Ալմա 7.23, Վարդապետություն և Ուխտեր 98.1:
2. Սաղմոս 147.7:
3. Ալմա 37.37:
4. Տես 1 Նեփի 18.10–16:
5. Հոբ 1.21:
6. Թե ինչպես էին ռահվիրաների կենսուրախ վերաբերմունք պահպանում, չնայած հսկայական դժվարություններին, կարող եք կարդալ Էնդրյու Դ. Օլսոնի, *The Price We Paid: The Extraordinary Story of the Willie and Martin Handcart Pioneers* (2006), 10, 366–67 պատմությունը:
7. Վարդապետություն և Ուխտեր 123.17:
8. Տես Ալմա 32.21:
9. Ղուկաս 22.42:
10. Ղուկաս 6.38:
11. Ղուկաս 24.39:
12. Տես Հռովմայեցիս 5.3, Բ Կորնթացիս 4.17, 12.10:
13. Տես Մովսես 1.3:
14. Ալմա 37.37:
15. Ալմա 26.13:
16. Տես Marcus Tullius Cicero, *Oratio Pro Cnæo Plancio,* XXXIII, բաժին 80; quoted in Joseph B. Wirthlin, “Live in Thanksgiving Daily,” *Ensign,* Sept. 2001, 8:
17. Վարդապետություն և Ուխտեր 78.19, շեշտադրումն ավելացված է:
18. Ալմա 34.38:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հետևեք ընթացքին

Բոլորս կարող ենք հետևողականորեն ավետարանչական աշխատանք կատարել՝ փոխարինելով վախը իրական հավատքով:

Վաթսուն չորս տարի առաջ՝ սեպտեմբեր ամսին, ես վերադարձա տուն Անգլիայում իմ առաքելությունից: Վերադառնալուց երեք օր անց Յուտայի համալսարանում ընկերոջս հետ մասնակցեցի ուսումնական տարվա բացման ծանոթության միջոցառմանը: Նա ինձ պատմեց երկրորդ կուրսեցի Բարբարա Բովեն անունով մի գեղեցիկ աղջկա մասին, ում հետ, կարծում էր, ես պետք է ծանոթանայի: Նա բերեց նրան ինձ մոտ, ծանոթացրեց մեզ և մենք սկսեցինք պարել:

Ցավոք, սա մի պար էր, որն անվանում էինք «թույլ կտա՞ք», որի ժամանակ պարում էիր այնքան, մինչև մեկը մոտենում և ձեր զույգի հետ պարելու թույլտվություն էր խնդրում: Բարբարան կենսուրախ և սիրված աղջիկ էր, այնպես որ ես մեկ րոպե էլ չէի պարել նրա հետ, երբ տղաներից մեկը թույլտվություն խնդրեց նրա հետ պարելու:

Դա պարզապես ընդունելի չէր ինձ համար: Իմ առաքելության ժամանակ սովորած լինելով հետևողական լինելու կարևորությունը, ես վերցրեցին նրա հեռախոսահամարը և հաջորդ օրն իսկ զանգահարեցի և ժամադրության հրավիրեցի նրան, սակայն նա զբաղված էր դասերով ու հասարակական պարտականություններով: Բարեբախտաբար միսիան ինձ սովորեցրել էր հաստատակամ լինել, անգամ երբ հուսախաբվում ես, և կրկին փորձելով, ես, ի վերջո, կարողացա ժամադրության հրավիրել նրան: Առաջին ժամադրությունը չդարձավ վերջինը: Ինչ-որ կերպ, այդ ժամադրությունների ընթացքում, ես կարողացա համոզել Բարբարային, որ ես միակ ճշմարիտ և կենդանի վերադարձած միսիոներն էի, համենայն դեպս՝ նրա համար: Այժմ՝ 64 տարի անց, մենք ունենք յոթ զավակ և բազմաթիվ թոռներ ու ծոռներ, որոնք այն նշանակալից ճշմարտության վկաներն են, որ անկախ նրանից, թե որքան լավն է ձեր ուղերձը, այն հնարավոր է տեղ չհասնի, եթե հետևողականորեն ու հաստատակամորեն չհետևեք ընթացքին:

Սա կարող է լինել պատճառը, որ ես հստակ զգացել եմ, որ պետք է հետևեմ նախորդ երկու զերագույն համաժողովների իմ ուղերձների ընթացքին:

2011թ. հոկտեմբերի համաժողովին ես կոչ արեցի, որ մենք հիշենք Տիրոջ այս կարևոր խոսքերը. «Քանզի այսպես պիտի կոչվի իմ եկեղեցին վերջին օրերին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի»:[1]

Այս խոսքերով Տերը պարզ է դարձնում, որ սա ոչ միայն պաշտոնական անվանում է, այլ նաև անուն, որով Նրա Եկեղեցին պետք է կոչել: Հաշվի առնելով Նրա հստակ հայտարարությունը, Եկեղեցու մասին խոսելիս մենք չպետք է օգտագործենք այլ անուններ, ինչպես օրինակ՝ «Մորմոնական Եկեղեցի» կամ «ՎՕՍ Եկեղեցի»:

Մորմոնական տերմինը կարող է պատշաճ օգտագործվել որոշ համատեքստերում, ակնարկելով Եկեղեցու անդամներին, ինչպես օրինակ, երբ խոսվում է Մորմոնական ռահվիրաների մասին, կամ ակնարկվում են կազմակերպություններ, օրինակ՝ Մորմոնական Թաբերնաքլի երգչախումբը: Եկեղեցու անդամները լայնորեն հայտնի

են որպես մորմոնականներ և մեր հավատքին չպատկանող մարդկանց հետ շփվելիս պատշաճ կլինի օգտագործել մորմոնական անունը, պայմանով, որ մենք կզուգակցենք այն Եկեղեցու լրիվ անվան հետ:

Եթե անդամները սովորեն *մորմոնական* բառի հետ օգտագործել Եկեղեցու ճիշտ անունը, ապա այն կընդգծի, որ մենք քրիստոնյա ենք՝ Փրկչի Եկեղեցու անդամներ:

Եղբայրներ և քույրեր, եկեք հետևողականորեն սովորություն զարգացնենք միշտ պարզաբանել, որ մենք պատկանում ենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն:

Երկրորդ ուղերձը, որի ընթացքին կարծում եմ պետք է հետևել, անցյալ գերագույն համաժողովի քաջալերանքն է, որ նախքան Սուրբ Ծնունդը անդամներն աղոթեն առնվազն մեկ անձի համար, որին կարող են հրավիրել ծանոթանալու վերականգնված ավետարանի հետ: Շատ Եկեղեցու անդամներ ինձ հետ կիսվել են, որ ավետարանով կիսվելու հնարավորությունների համար Տիրոջը խնդրելու արդյունքում հատուկ փորձառություն են ունեցել:

Մի վերադարձած միսիոներ, օրինակ, հատուկ աղոթում էր «մեկի» համար, ում կարող էր ձեռք մեկնել: Նրա միտքը եկավ քոլեջի իր նախկին դասընկերուհու անունը: Նա գրեց նրան Ֆեյսբուկ սոցիալական ցանցով և իմացավ, որ վերջինս աղոթում է իր կյանքի նպատակի ու նշանակության մասին: Ճիշտ ժամանակ ընթացքին հետևելու նրա քայլերի արդյունքում դեկտեմբեր ամսին նրա դասընկերուհին մկրտվեց:

Ես նմանատիպ շատ հրավերների մասին եմ լսել, սակայն շատ քիչ մարդիկ են այս եղբոր նման ընթացքին հետևում:

Ես ընթացքին հետևելու սկզբունքի մեծ ջատագով եմ: Ինչպես ասվում է *«Քարոզիր Իմ Ավետարանը»* միսիոներական ուղեցույցում. «Հրավեր հղելը, առանց ընթացքին հետևելու, նման է անավարտ ճանապարհորդության կամ նման է համերգի տոմս գնելու ու համերգի չգնալու:

Պարտավորություն վերցնելը զուր է, եթե գործն ավարտին չի հասցվում»:[2]

«Քարոզիր Իմ Ավետարանը» բոլորին ուսուցանում է ոչ միայն ինչպես հրավիրել, այլ նաև ինչպես հետևել մեր հրավերի ընթացքին: Ավետարանչական աշխատանքի նպատակը նկարագրվում է այսպես. «Հրավիրել մարդկանց գալ դեպի Քրիստոսը, օգնելով նրանց ստանալ վերականգնված ավետարանը Հիսուս Քրիստոսի ու Նրա Քավության հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և մինչև վերջ համբերելու միջոցով»:[3]

Հրավիրելը, իհարկե, գործի անհրաժեշտ մասն է: Բայց նկատեք, որ անդամների ավետարանչական աշխատանքի համար ավելի շատ բաներ կան, քան պարզապես միսիոներներին լսելու մարդկանց հրավեր հղելը: Այն ներառում է նաև միսիոներների հետ միասին ընթացքին հետևելը՝ հավատք ներշնչելիս, ապաշխարության մղելիս, ուխտեր կապելու նախապատրաստելիս և մինչև վերջ համբերելիս:

Ընթացքին հետևելու այս սկզբունքը լուսաբանվել է Գործ Առաքելոց գրքում.

«Պետրոսն եւ Յովհաննէսը գնում էին միասին տաճարը. . . .

Եւ մի մարդ կար իր մօր որովայնիցը կաղ, որին վերկալած՝ ամեն օր դնում էին տաճարի այն դռան մօտ, որ Գեղեցիկ էր կոչվում տաճարը մտնողներիցը ողորմութիւն խնդրելու համար:

Երբոր նա տեսաւ Պետրոսին եւ Յովհաննէսին, որ գնում էին մտնեն տաճարը, աղաչում էր, որ ողորմութիւն առնէ նորանցից:

Պետրոսը Յովհաննէսի հետ մտիկ արաւ նորան եւ ասեց. Մեզ նայիր:

Նա էլ ուշը դարձրեց դէպի նորանց, սպասելով որ մի բան առնէ նորանցից:

Պետրոսն էլ ասեց. Արծաթ եւ ոսկի չ'ունիմ. Բայց ինչ որ ունիմ, այն քեզ կ'տամ. Յիսուս Քրիստոսի՝ Նազովրեցու անունովը վեր կաց եւ ման եկ»:

Դա մի հզոր հրավեր է Տիրոջ ծառայի կողմից, այսպես չէ՞: Բայց Պետրոսը հրավերով չբավարարվեց: Սուրբ գրության պատմությունը հաջորդիվ նկարագրում է. *«Եւ աջ ձեռքիցը բռնեց՝ վերկացրեց նորան.* Եւ շուտով հաստատուեցան նորա սրունքը եւ բարձքը:

Վեր թռաւ, կանգնեց եւ ման էր գալիս, եւ *նորանց հետ մտաւ տաճարը* ման գալով եւ վազ տալով եւ Աստուծուն օրհնելով»:[4]

Այլ կերպ ասած, Պետրոսը պարզապես չօգտագործեց իր քահանայության իշխանությունը, միայն հրավիրելով մարդուն վեր կենալ ու քայլել: Նա նաև հետևեց իր հրավերին՝ ձեռք մեկնելով մարդուն, բռնելով նրա աջ ձեռքը, բարձրացնելով նրան, ապա նրա հետ ներս մտնելով տաճար:

Պետրոսի օրինակի նման, թույլ տվեք հավաստիացնել, որ մենք բոլորս կարող ենք հետևողականորեն ավետարանչական աշխատանք կատարել՝ փոխարինելով վախը իրական հավատքով, հրավիրելով որևէ մեկի, առնավազն երեք ամիսը մեկ կամ տարին չորս անգամ, ուսուցանվելու լիաժամկետ միսիոներների կողմից: Նրանք պատրաստ են ուսուցանել Հոգով, Տիրոջ անկեղծ և սրտառուչ ոգեշնչմամբ: Միասին մենք կարող ենք հետևել մեր հրավերներին, ապա ձեռքից բռնել, բարձրացնել նրանց և հոգևոր ճամփորդության գնալ նրանց հետ:

Այդ գործում ձեզ օգնելու համար ես հրավիրում եմ բոլոր անդամներին, անկախ ձեր ներկա կոչումից կամ Եկեղեցու ակտիվության մակարդակից, ձեռք բերել *«Քարոզիր իմ ավետարանը»* ուղեցույցի մի օրինակ: Այն կարելի է պատվիրել մեր գրադարաններում և առցանց: Առցանց տարբերակը կարելի է կարդալ կամ անվճար ներբեռնել: Դա ավետարանչական աշխատանքի ուղեցույց է, ինչը նշանակում է, որ այն ուղեցույց է բոլորիս համար: Կարդացեք այն, ուսումնասիրեք այն, ապա սովորածը կիրառեք, ինչը կօգնի ձեզ հասկանալ, թե ինչպես հոգիներ բերել Քրիստոսի մոտ՝ հրավիրելու և ընթացքին հետևելու միջոցով: Ինչպես ասել է Նախագահ Մոնսոնը. «Այժմ է ժամանակը, որ անդամները և միսիոներները միավորվեն, աշխատեն միասին, տքնեն Տիրոջ այգում՝ հոգիներ բերելով Նրա մոտ»:[5]

Հիսուս Քրիստոսն ուսուցանել է Իր աշակերտներին.

«Հունձքը շատ է, բայց մշակները քիչ:

Արդ՝ աղաչեցէք հնձի Տիրոջը, որ մշակներ հանէ իր հունձի մէջ»:[6]

Տերը պատասխանել է այդ աղաչանքին՝ մեր օրերում ավելի մեծ թվով լիաժամկետ միսիոներներ կանչելով, քան երբևէ եղել է աշխարհի պատմության մեջ:

Հավատարիմ մշակների այս նոր ալիքի հետ միասին Տերը մեզ տվել է ևս մեկ հնարավորություն աջակցել նրան հոգիների այդ մեծ բերքահավաքում:

Կան գործնական ուղիներ, որով անդամները կարող են օգնել և աջակցել մեր հրաշալի միսիոներներին: Օրինակ, դուք կարող եք ասել միսիոներներին, որ ուսումնասիրում եք *«Քարոզիր իմ ավետարանը»* և խնդրեք նրանց ցույց տալ ձեզ, թե ինչ են նրանք սովորում են իրենց ուսումնասիրությունների ժամանակ: Կիսվելով միմյանց հետ՝ անդամների և լիաժամկետ միսիոներների միջև փոխադարձ վստահություն կզարգանա, ճիշտ այնպես, ինչպես Տերը պատվիրել է.

«Այլ, որ ամեն մարդ կարողանա խոսել Տեր Աստծո, այսինքն՝ աշխարհի Փրկչի անունով»:[7]

Ահա, ես ուղարկել էի ձեզ՝ վկայելու և զգուշացնելու մարդկանց, և ամեն մարդ, ով զգուշացվել է, պետք է զգուշացնի իր մերձավորին»:[8]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, պատկերացնո՞ւմ եք ինչ ազդեցություն կունենա, եթե ընտանիքը և ընկերներն իրենց լիաժամկետ միսիոներներին ուղղված նամակներում գրեն այն բաների մասին, ինչ նրանք սովորում են *«Քարոզիր իմ ավետարանի»* իրենց անձնական ուսումնասիրության ժամանակ: Պատկերացնո՞ւմ եք ինչ օրհնություններ կգան ընտանիքներին, երբ նրանք իմանան և ավելի լավ հասկանան, թե ինչ են սովորում ու սովորեցնում իրենց որդիներն ու դուստրերն իրենց առաքելության ժամանակ:

Կարո՞ղ եք անգամ փորձել խորամուխ լինել քավիչ շնորհի այն արտակարգ դրսևորմանը, որը մերը կլինի անհատապես և հավաքականորեն, համաձայն Փրկչի խոստման, եթե բոլորս կիսվենք վկայությամբ՝ Նրա մոտ հոգիներ հրավիրելով, այնուհետև մեր հրավերի ընթացքին հետևելով:

«Օրհնված եք դուք,- ասել է Տերը Ջոզեֆ Սմիթի միջոցով,- քանզի վկայությունը, որ դուք բերել եք, արձանագրվել է երկնքում, հրեշտակների համար, որ կարդան. և նրանք ցնծում են ձեր համար, և ձեր մեղքերը ներված են ձեզ»:[9]

«Քանզի ես կներեմ ձեզ ձեր մեղքերը՝ այս պատվիրանով հանդերձ, – որ դուք հաստատուն մնաք՝ ձեր մտքով, հանդիսավորությամբ և աղոթքի ոգով, վկայություն բերելով ողջ աշխարհին, այն բաների մասին, որոնք հաղորդվել են ձեզ»:[10]

Եթե ընթացքին հետևենք, Տերը մեզ անպտուղ չի թողնի: Ես տեսել եմ անպատմելի ուրախություն ողջ աշխարհով Եկեղեցու այն անդամների մոտ, ովքեր վկայությամբ հրավիրում են ու հավատարմորեն հետևում են իրենց հրավերի ընթացքին: Վերջերս ես Արգենտինայում էի և առաջարկեցի անդամներին հրավիրել մեկին եկեղեցի մինչև այս գերագույն համաժողովը: Ջոշուա անունով ութամյա մի տղա լսեց ու հրավիրեց իր լավագույն ընկերոջն ու նրա ընտանիքին Բուենոս Այրեսի իրենց ծխի բաց դռների օրվա միջոցառմանը: Թույլ տվեք կարդալ մի նամակ, որը նոր եմ ստացել, որում բացատրվում է

Ջոշուայի հրավերը և հրավերին հավատարմորեն հետևելը.

«Ամեն մի քանի րոպե [Ջոշուան] վազում էր դարպասից դուրս տեսնելու, թե արդյոք նրանք գալիս են: Նա ասում էր, որ գիտի, որ նրանք կգան:

Երեկոն մոտենում էր և Հեսուի ընկերը չէր եկել, բայց Հեսուն հույսը չէր կտրում: Նա հավատարմորեն ստուգում էր ճակատային դարպասը յուրաքանչյուր մի քանի րոպե: Ժամանակն էր սկսել հավաքվել, երբ Հեսուն սկսեց ցատկել և հայտարարել. «Նրանք եկան: Նրանք այստե՛ղ են: Ես նայեցի և տեսա մի ամբողջ ընտանիք մոտենում է եկեղեցուն: Ջոշուան դուրս եկավ ողջունելու նրանց և գրկեց իր ընկերոջը: Նրանք բոլորը ներս եկան և կարծես թե շատ հավանեցին բաց դռների օրը: Նրանք վերցրեցին մի քանի բրոշյուրներ և բավական ժամանակ ծախսեցին՝ ծանոթանալով շատ նոր ընկերների հետ: Մեծ բան էր տեսնել այդ փոքրիկ տղայի հավատքը և իմանալ, որ երեխաները նույնպես կարող են միսիոներ լինել»:[11]

Իմ վկայությունն է, որ եթե ձգտում ենք անել մեր մասը, փնտրելով մեկին, հրավիրելով և դրանից հետո փոքր Ջոշուայի նման վստահությամբ ու հավատքով ընթացքին հետևելով, մենք կգտնենք հարյուր հազարավոր Աստծո զավակների, ովքեր կմիանան մեզ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ: Թող որ Տերն օրհնի Նրա աշխատանքն արագացնելու բոլորիս ջանքերը. դա իմ խոնարհ աղոթքն է՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 115.4:
2. *«Քարոզիր Իմ Ավետարանը», Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 200:
3. *«Քարոզիր Իմ Ավետարանը»*, 1:
4. Գործք առաքելոց 3.1–8, շեշտադրումն ավելացված է:
5. Թոմաս Ս. Մոնսոն, «Բարի գալուստ համաժողով», *Լիահոնա,* Նոյ 2013, 4:
6. Մատթեոս 9.37–38:
7. Վարդապետություն և Ուխտեր 1.20:
8. Վարդապետություն և Ուխտեր 88.81:
9. Վարդապետություն և Ուխտեր 62.3:
10. Վարդապետություն և Ուխտեր 84.61:
11. Անձնական նամակ, մարտի 10, 2014:

Ջին Ա. Սթիվենս
Երեխաների Միության Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

«Մի վախենար, որովհետև ես քեզ հետ եմ»

Երբ մենք ավելի մեծ հավատք ու վստահություն ենք դրսևորում առ Տերը, մեզ օրհնելու ու ազատելու Նրա զորությունը հասանելի է դառնում մեզ համար:

Ծնող դառնալու քնքուշ հույզերի հետ քիչ զգացմունքներ են համեմատվում: Չկա ավելի քաղցր բան, քան անմիջապես երկնքից թանկագին բալիկ ստանալը: Իմ եղբայրներից մեկը խորապես ապրեց այս զգացումը: Նրա առաջին փոքրիկ որդին ժամանակից շուտ էր ծնվել ու ընդամենը կշռում էր 2 ֆունտ և 14 ունցիա (1.3 կգ): Հանթերն իր կյանքի առաջին երկու ամիսն անցկացրեց հիվանդանոցի նորածինների վերակենդանացման բաժանմունքում: Այս ամիսները հուզումնալից էին ողջ ընտանիքի համար, քանզի մենք հույս ունեինք ու աղերսում էինք Տիրոջ օգնությունը:

Փոքրիկ Հանթերն այնքա՜ն պաշտպանության կարիք ուներ: Նա պայքարում էր, որպեսզի ձեռք բերեր ապրելու համար անհրաժեշտ ուժ: Նրա սիրառատ հայրիկի ամուր ձեռքը հաճախ հպվում էր իր որդու փոքրիկ ձեռքին, որպեսզի քաջալերեր իր անպաշտպան փոքրիկ երեխային:

Այսպես է նաև Աստծո բոլոր զավակների դեպքում: Մեր Երկնային Հայրն Իր անսահման սիրով օգնության ձեռք է մեկնում մեզանից յուրաքանչյուրին: Նա զորություն ունի ամեն բանի վրա և կամենում է օգնել մեզ սովորել, աճել ու վերադառնալ Իր մոտ: Սա սահմանում է մեր Հոր նպատակը. «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[1]

Երբ մենք ավելի մեծ հավատք ու վստահություն ենք դրսևորում առ Տերը, մեզ օրհնելու ու ազատելու Նրա զորությունը հասանելի է դառնում մեզ համար:

Մորմոնի Գրքի էջերում խոսվում է Իր զավակներին ազատելու Տիրոջ զորության մասին գեղեցիկ թեմայի շուրջ: Նեփին ներկայացրեց դա գրքի հենց առաջին գլխում: 20-րդ հատվածում մենք կարդում ենք. «Բայց ահա, ես՝ Նեփիս, ցույց կտամ ձեզ, որ Տիրոջ գորովագութ ողորմությունները բոլոր նրանց վրա

են, ում նա ընտրել է, նրանց հավատքի շնորհիվ, դարձնելու նրանց հզոր՝ մինչև իսկ ի զորությունն ազատվելու»:[2]

Շատ տարիներ առաջ ես ինքս հասկացա այս հատվածում արտահայտված ճշմարտությունները: Ես հասկացա, թե իրականում որքան մոտ է մեր Երկնային Հայրը, և որքան շատ է Նա ցանկանում մեզ օգնել:

Մի երեկո, երբ արդեն մութն ընկնում էր, ես երեխաներիս հետ մեքենա էի վարում, երբ նկատեցի մի տղայի, ով քայլում էր դատարկ փողոցով: Նրա կողքով անցնելուց հետո ես յուրահատուկ զգացում ունեցա, որ պետք է հետ վերադառնամ ու օգնեմ նրան: Բայց մտածելով, որ հնարավոր է նա վախենա, երբ ինչ-որ անծանոթ գիշերը մեքենան կանգնեցնի իր կողքին, ես շարունակեցի ճանապարհս: Ես կրկին ուժեղ տպավորություն ունեցա, որին ուղեկցում էին հետևյալ բառերը. «Գնա և օգնիր այդ տղային»:

Ես հետ վերադարձա նրա մոտ ու հարցրեցի. «Օգնության կարիք ունե՞ս: Ես զգացի, որ պետք է օգնեմ քեզ»:

Նա մեր կողմ դարձավ և այտերի վրայով վայր հոսող արցունքներով ասաց. «Կօգնե՞ք: Ես աղոթում էի, որ ինչ-որ մեկն ինձ օգներ»:

Նրա օգնության համար աղոթքը պատասխանվեց ինձ ուղարկված ոգեշնչմամբ: Սուրբ Հոգու կողմից նման հստակ ուղղորդում ստանալու այս փորձառությունն անմոռանալի հետք է թողել իմ սրտում:

Եվ ահա, 25 տարի անց, զորավագութ ողորմության շնորհիվ, առաջին անգամ, մի քանի ամիս առաջ ես կրկին հանդիպեցի այդ տղային: Ես պարզեցի, որ այդ փորձառությունը միայն իմ պատմությամբ չի սահմանափակվում, դա նաև նրա պատմությունն է: Դերիք Նանցն այժմ հայր է, ով ունի իր սեփական ընտանիքը: Նա նույնպես երբեք չի մոռացել այս փորձառության մասին: Դա մեզ օգնեց դնել հավատքի հիմք, որ Աստված լսում ու պատասխանում է մեր աղոթքներին: Մենք երկուսս էլ կիրառել ենք դա

մեր երեխաներին ուսուցանելիս, որ Աստված հոգ է տանում մեր մասին: Մենք մենակ չենք:

Այդ գիշեր Դերիքը դասերից հետո մնացել էր մի միջոցառման և բաց էր թողել վերջին ավտոբուսը: Լինելով դեռահաս երիտասարդ՝ նա վստահ է եղել, որ ոտքով կարող է տուն հասնել, այսպիսով, սկսել է քայլել:

Դատարկ փողոցով քայլել սկսելուց հետո անցել է մեկ ու կես ժամ: Լինելով տնից կիլոմետրեր հեռավորության վրա ու տեսադաշտում ոչ մի տուն չնշմարելով՝ նա վախեցել է: Հուսահատ վիճակում անցնելով մի քարակույտի հետև, նա ծնկի է իջել ու Երկնային Հորից օգնություն խնդրել: Դերիքի փողոց վերադառնալուց մի քանի րոպե անց ես կանգնեցրեցի նրան, որպեսզի տրամադրեմ այն օգնությունը, որի համար նա աղոթել էր:

Եվ հիմա, այսքան տարիներ անց, Դերիքը հիշում է. «Մի լղար ու անհեռատես տղա, ում մասին Տերը հոգ էր տանում: Եվ անկախ այն ամենից, ինչ տեղի էր ունենում աշխարհում, Նա տեղյակ էր իմ իրավիճակի մասին, և սիրում էր ինձ բավականաչափ, որպեսզի օգնություն ուղարկեր: Այդ լքված փողոցի միջադեպից հետո Տերը շատ անգամ է պատասխանել իմ աղոթքներին: Նրա պատասխանները միշտ չէ, որ այդքան արագ ու հստակ են լինում, բայց Նրա իրազեկությունն իմ մասին այնքան ակնհայտ է այսօր, որքան որ ակնհայտ էր այդ մեկուսի գիշերը: Երբ կյանքի խավար ստվերները ծածկում են իմ աշխարհը, ես գիտեմ, որ Նա միշտ ծրագիր ունի ինձ կրկին ապահով տուն ուղեկցելու համար»:

Ինչպես Դերիքն ասաց, ոչ բոլոր աղոթքներն են, որ արագ են ստանում պատասխան: Բայց իրոք մեր Երկնային Հայրը ճանաչում է մեզ ու լսում է մեր սրտի աղերսները: Նա իրականացնում է Իր հրաշքները մեկ առ մեկ:

Մենք կարող ենք վստահ լինել, որ Նա մեզ կօգնի, ոչ հենց այնպես, ինչպես մենք ենք կամենում, այլ լավագույն կերպով, որը մեզ կօգնի աճել: Մեր կամքը Նրա կամքին ենթարկելը կարող է դժվար լինել, բայց դա անհրաժեշտ է Նրան նմանվելու ու Նրա առաջարկած խաղաղությունը գտնելու համար:

Մենք կարող ենք զգալ նույնը, ինչ նկարագրել է Ք. Ս. Լյուիսը. «Ես աղոթում եմ, որովհետև ես չեմ կարող օգնել ինքս ինձ: . . . Ես աղոթում եմ, որովհետև միշտ զգում եմ դրա անհրաժեշտությունը՝ գիշեր ու ցերեկ: Այն չի փոխում Աստծուն: Այն փոխում է ինձ»:[3]

Սուրբ գրություններում շատ պատմություններ կան այն մարդկանց մասին, ովքեր դրել են իրենց վստահությունը Տիրոջ վրա, և Նրանից օգնություն ու ազատություն են ստացել: Խորհեք երիտասարդ Դավթի մասին, ով վստահելով Տիրոջը, ազատվեց հզոր Գողիաթի ձեռքից: Մտածեք Նեփիի մասին, ում հավատքով լցված աղերսանքներն՝ուղղված Աստծուն, ազատեցին նրան իր եղբայրներից, ովքեր ուզում էին սպանել նրան: Հիշեք երիտասարդ Ջոզեֆ Սմիթին, ով աղոթքով փնտրում էր Տիրոջ օգնությունը: Նա ազատվեց խավարի զորությունից և ստացավ հրաշալի պատասխան: Նրանցից յուրաքանչյուրը կանգնած էր իրական ու բարդ դժվարության առջև: Նրանցից յուրաքանչյուրը գործեց հավատքով ու դրեց իր վստահությունը Տիրոջ վրա: Նրանցից յուրաքանչյուրը ստացավ Նրա օգնությունը: Եվ մինչև հիմա, մեր

օրերում, Աստծո զորությունն ու սերը դրսևորվում է Նրա զավակների կյանքում:

Ես վերջերս դա տեսել եմ հավատքով լցված Սրբերի կյանքում Զիմբաբվեյում ու Բոտսվանայում: Մի փոքր ճյուղի ծոմապահության ու վկայության ժողովի ժամանակ ես խոնարհվեցի ու ոգեշնչվեցի երեխաների, երիտասարդների ու մեծահասակների վկայություններով: Նրանցից յուրաքանչյուրը կիսվեց առ Տեր Հիսուս Քրիստոսը հավատքի զորեղ դրսևորմամբ: Շրջապատված լինելով դժվար ու բարդ իրավիճակներով՝ նրանք յուրաքանչյուր օրն ապրում են իրենց վստահությունը Աստծո վրա դնելով: Նրանք ընդունում էին իրենց կյանքում Նրա ձեռքի առկայությունը և հաճախ նշում էին դա հետևյալ արտահայտությամբ՝ «Ես այնքան երախտապարտ եմ Աստծուն»:

Մի քանի տարի առաջ մի հավատարիմ ընտանիք օրինակ հանդիսացավ մեր ծխի համար՝ դրսևորելով այդ նույն վստահությունը Տիրոջ նկատմամբ: Արն ու Վենիտա Գաթրելները երջանիկ կյանքով էին ապրում, երբ Արնի մոտ ախտորոշվեց ագրեսիվ քաղցկեղ: Բժշկական եզրակացությունը դրական չէր – նրան մնացել էր միայն մի քանի շաբաթ ապրելու համար: Ընտանիքի անդամները ցանկանում էին վերջին անգամ միասին լինել: Այսպիսով, բոլոր երեխաները հավաքվեցին՝ մի քանիսը եկան հեռավոր վայրերից: Նրանք միայն 48 թանկագին ժամ ունեին միասին անցկացնելու համար: Գաթրելները զգուշորեն ընտրեցին այն, ինչն ամենակարևորն էր իրենց համար. ընտանեկան լուսանկար, ընտանեկան ճաշ ու Սոլթ Լեյքի տաճարում մեկ նիստ: Վենիտան ասաց. «Երբ մենք դուրս եկանք տաճարի դռներով, դա վերջին անգամն էր, որ մենք երբևէ միասին էինք լինելու այս կյանքում»:

Բայց նրանք դուրս եկան այն հավաստիացմամբ, որ նրանց համար շատ ավելին կա, քան միայն այս կյանքը: Տաճարային սրբազան ուխտերի շնորհիվ նրանք հույս ունեն Աստծո խոստումների նկատմամբ: Նրանք հավերժ կարող են միասին լինել:

Հաջորդ երկու ամիսները լի էին այնքան շատ օրհնություններով, որ դժվար էր դրանք հաշվել: Արնի ու Վենիտայի հավատքն ու վստահությունն առ Տերն աճում էր, ինչպես վկայում է Վենիտան իր խոսքերում. «Ես աջակցություն էի զգում: Ես սովորեցի, որ հնարավոր է խաղաղություն զգալ՝ նույնիսկ եթե հուզումնալից իրավիճակում ես: Ես գիտեի, որ Տերը պաշտպանում էր մեզ: Եթե վստահենք Տիրոջը, իսկապես կկարողանանք հաղթահարել կյանքի ցանկացած դժվարություն»:

Նրանց դուստրերից մեկն ասաց. «Մենք հետևել ենք մեր ծնողներին ու տեսել ենք նրանց օրինակը: Մենք տեսել ենք նրանց հավատքը, ու թե ինչպես էին նրանք գործադրում այն: Ես երբեք չէի խնդրի նման փորձություն, բայց երբեք էլ չէի խուսափի դրանից: Մենք շրջապատված էինք Աստծո սիրով»:

Իհարկե, Արնի հեռանալն այն արդյունքը չէր, որի համար Գաթրելները հույս ունեին: Սակայն նրանց ճգնաժամը հավատքի ճգնաժամ չէր: Հիսուս Քրիստոսի ավետարանը որոշ բաների ցանկ չէ, որ պետք է լրացնենք, այլ այն ապրում է մեր սրտերում: Ավետարանը «չի ծանրացնում մեր բեռը, այլ թեթևացնում է այն»:[4] Այն աջակցում է մեզ: Այն աջակցեց Գաթրելներին: Նրանք անդորր զգացին՝ լինելով փոթորիկի մեջ: Նրանք ամուր բռնեցին իրար ու այն տաճարային ուխտերը, որոնք կապել ու պահել էին: Նրանք աճեցին Տիրոջը վստահելու իրենց ունակությունների մեջ ու ամրացան իրենց հավատքով առ Հիսուս Քրիստոս ու Նրա քավիչ զորություն:

Մեր առաքելության ճանապարհի որ մասում էլ որ լինենք, ինչպիսի անհանգստության կամ դժվարության էլ որ հանդիպենք, մենք մենակ չենք: Դուք մոռացված չեք: Դերիքի, Աֆրիկայի Սրբերի ու Գաթրելների ընտանիքի նման մենք կարող ենք ընտրել փնտրել Տիրոջ ձեռքը մեր կարիքների լուծման մեջ: Մենք կարող ենք դեմ առ դեմ կանգնել մեր դժվարություններին՝ աղոթքով ու վստահությամբ առ Տերը:

Խոսելով մեզանից յուրաքանչյուրի հետ՝ Տերն ասում է. «Մի վախենար, . . . ես քեզ հետ եմ. մի վեհերիր, որովհետև ես քո Աստուածն եմ. ես զօրացրել եմ քեզ, . . . նաև օգնել եմ քեզ. նաև քեզ հաստատել եմ իմ արդարութեան աջովը»:[5]

Ես կիսվում եմ իմ խոնարհ, սակայն վստահ վկայությամբ, որ Աստված՝ մեր Հայրը, ճանաչում է մեզ անհատապես և օգնության է հասնում: Նրա Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք կարող ենք հաղթահարել այս աշխարհի դժվարություններն ու ապահով տուն հասնել: Թող որ մենք Նրան վստահելու հավատք ունենանք, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 1.39:
2. 1 Նեփի 1.20:
3. Spoken by the character of C. S. Lewis as portrayed in William Nicholson, *Shadowlands* (1989), 103.
4. Harry Emerson Fosdick, *Twelve Tests of Character* (1923), 88.
5. Եսայիա 41.10:

Եպիսկոպոս Գարի Ի. Սթիվենսոն
Նախագահող Եպիսկոպոս

Չեր չորս ոոպեն

Քավության հրաշքը կարող է շտկել մեր կյանքի անկատարությունները:

Վերջերս տեղի ունեցած Ձմեռային Օլիմպիական խաղերում 89 երկիր ներկայացնող մարզիկները մրցում էին 98 տարբեր մրցույթներում: Ուշագրավ փաստն այն էր, որ այդ մարզիկներից 10-ը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ էին, որոնցից 3-ը մեդալների արժանացան, նրանք են՝ Քրիստոֆեր Ֆոգթը, Նոել Պիկուս-Փեյսը և Տորա Բրայթը, այդ մասին վերջերս լուսաբանեց *Church News*-ը:[1] Մենք շնորհավորում ենք մրցույթներին մասնակցած բոլոր մարզիկներին: Գերազանց էր:

Այս առավոտ, օլիմպիական խաղերին անդրադառնալով, խոսքս ուղղում եմ ձեզ՝ երիտասարդ տղաներ, աղջիկներ և ամուրիներ, որ ապրում եք ձեր կյանքի ընթացքն ուղղորդող կարևորագույն տարիները: Ես հրատապ եմ համարում խոսքս ձեզ ուղղելը:

Որպեսզի դուք էլ զգաք այդ հրատապությունը, նախ կպատմեմ Վերջին Օրերի Սուրբ մարզիկներից մեկի՝ Նոյել Պիկուս-Փեյսի պատմությունը: Նոյելը մասնակցեց սկելետոնի մրցումներին, որի ժամանակ մարզիկներն արագ վազելով թափ են հավաքում, ապա գլուխն առաջ պառկում փոքր սահնակի վրա: Դեմքը գետնից ընդամենը երկու սանտիմետր վերև նրանք սրընթաց սահում են քամոտ սառցուղով ժամում 90 (145 կմ) մղոն արարգությամբ:

Աներևակայելի է այն, որ տարիների նախապատրաստական աշխատանքը ավարտվում է կամ հաջողությամբ կամ էլ հուսահատությամբ, կախված նրանից, թե ինչ տեղի կունենա 60 վայրկյան տևողությամբ լարված չորս մրցելույթների ընթացքում:



Նոյելի 2006թ. Օլիմպիադայի երազանքները խորտակվեցին, երբ սարսափելի պատահարի ժամանակ նրա ոտքը կոտրվեց: 2010թ. Օլիմպիադայի ժամանակ կրկին նրա երազանքներն անկատար մնացին, երբ մեկ տասերորդական վայրկյան չբավականացրեց, որ նա մրցանակակիրների հարթակին կանգներ:[2]

Կարո՞ղ եք պատկերացնել նրա անհանգստությունը, երբ նա սպասում էր 2014թ. Օլիմպիադայում իր առաջին մրցելույթին: Տարիների նախապատրաստական աշխատանքն ամփոփվելու էր սոսկ մի կարճ ժամանակահատվածում: Ընդամենը չորս ոոպե: Նա տարիներ էր անցկացրել, պատրաստվելով այդ չորս ոոպեներին, իսկ հետո ողջ կյանքում հիշելու էր դրանք:

Նոյելի վերջին մրցելույթները գրեթե անթերի էին: Մենք երբեք չենք մոռանա, ինչպես նա վերջագիծը հատելուց հետո թռավ տրիբունա ողջագուրվելու իր ընտանիքի հետ, բացականչելով՝ «Մենք դա արեցինք»: Տարիների աշխատանքը վարձատրվեց: Մենք տեսանք նրա վզից կախված Երիտասարդ կանանց մեդալիոնը, երբ արծաթե մեդալն էր շնորհվում նրան:[3]

Գուցե անարդար թվա, որ Նոյելի ամբողջ Օլիմպիական երազանքը կախված էր չորս ոոպեանոց կարճ մրցելույթից: Բայց նա գիտեր, և դա էր պատճառը, որ նա այդքան տքնաջան պատրաստվել էր: Նա զգում էր այդ չորս ոոպեների կարևորությունը, հրատապությունը, և թե ինչ նշանակություն էին ունենալու դրանք իր մնացած կյանքի համար:

Մենք նաև հիշում ենք Քրիստոֆեր Ֆոգթին, որը բոբսլեի չորս-հոգանոց թիմային մրցույթում արժանացավ բրոնզե մեդալի: Չնայած 2010թ. Օլիմպիադայի ժամանակ տեղի ունեցած սոսկալի պատահարից հետո նա կարող էր թողնել ամեն ինչ, բայց նա ընտրեց համառորեն շարունակելը: Հիասքանչ, հատուցող մրցելույթից հետո նա ստացավ մրցանակը, որին այդքան ջանասիրաբար ձգտել էր:[4]

Այժմ, դիտարկենք, որքանով է այդ մարզիկների չորս րոպեանոց մրցելույթը նման դեպի հավերժական կյանք տանող ձեր ուղուն: Դուք հավերժական էակ եք: Նախքան ծնվելը դուք եղել եք հոգի: Սիրող Երկնային Հոր ներկայությամբ դուք պարապել և պատրաստվել եք մի կարճ ժամանակով երկիր գալուն, և, իհարկե, ձեր մասը կատարելուն: Այս կյանքը ձեր չորս րոպեն է: Այստեղ ձեր կատարած գործերը կորոշեն, թե արդյո՞ք կնվաճեք հավերժական կյանքի մրցանակը: Ամուղեկ մարգարեն նկարագրել է. «Այս կյանքն է ժամանակը . . . նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն. այո, ահա, . . . այս կյանքի օրն է [ձեր] գործերը կատարելու օրը»:[5]

Այդ առումով, ձեր չորս րոպեն արդեն սկսվել է: Ժամանակը գնում է: Պողոս Առաքյալի խոսքերը, կարծես, այնքան տեղին են. «Դուք այնպես վազեցեք, որ մրցանակը առնեք»:[6]

Ինչպես Օլիմպիական մարզիկի կարճ մրցելույթում շատ կարևոր են որոշակի քայլեր, որոնք են թռիչքները կամ պտույտները գեղասահորդների և սնոուբորդիստների համար, շրջադարձերի բանակցումը սահնակա-բոբսլեյական սառցուղիներում կամ սարն ի վար նշանները շրջանցելով արագ դահուկավարելը, այնպես էլ մեր կյանքում բացարձակ կարևոր են այսպես կոչված անցակետերը, որոնք մեզ առաջ են տանում երկրի վրա մեր հոգևոր կյանքում: Այդ հոգևոր նշակետերը ավետարանի Աստվածատուր կարևոր ծեսերն են՝ մկրտությունը, Սուրբ Հոգին ստանալը, քահանայության արարողությունները, տաճարային արարողությունները և ամեն շաբաթ հաղորդության ճաշակումը:

«[Այդ] արարողություններում է բացահայտվում աստվածայնության զորությունը»:[7]

Ինչպես ռեժիմով անցկացված պարապմունքներն են պատրաստում մարզիկին իր սպորտանում էլեմենտները բարձր մակարդակով կատարելու համար, այնպես էլ պատվիրանները պահելը որակում

են ձեզ ստանալու այդ փրկող արարողությունները:

Հասկանո՞ւմ եք արդյոք հրատապությունը:

Իմ երիտասարդ ընկերներ, որտեղ էլ լինեք ձեր «չորս րոպեների» ընթացքում, ես խնդրում եմ, խորհեք՝ «Ո՞րը պետք է լինի հաջորդ քայլը, որը կապահովի իմ մեղալը»: Գուցե այս համաժողովի ժամանակ ձեզ հոգին շշնջացել է, որ հաջորդ քայլը պետք է լինի՝ ավելի նպատակային պատրաստվել ապագայում մի որևէ արարողության կամ ստանալ արարողություն, որը պետք է վաղուց ստացած լինեիք: Ինչ էլ, որ լինի, կատարեք այն այժմ, մի սպասեք: Ձեր չորս րոպեները արագ կանցնեն, և դուք հավերժության ընթացքում կմտածեք այս կյանքում կատարածի մասին:[8]

Ինքնակարգապահություն է անհրաժեշտ: Ձեր կարգավարժման հիմքը պետք է լինեն ամենօրյա աղոթքը, սուրբ գրությունների ուսումնասիրությունը և եկեղեցի հաճախելը: Պարտադիր պայմաններ են՝ մշտապես պատվիրաններին հնազանդվելը, կապած ուխտերը պահելը և *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկում տրված Տիրոջ չափանիշներին հետևելը:

Գուցե ձեր կյանքում առկա են խնդիրներ, որոնք սպառնում են դանդաղեցնել կամ դադարեցնել ձեր հոգևոր առաջընթացը: Այդ դեպքում հետևեք այս սուրբգրքյան խորհրդին. «Եկեք դեն գցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը. և համբերությամբ վազենք մեր առաջին դրած ասպարեզի ընթացքը»:[9]

Ապաշխարելու համար ամենևին էլ ուշ չէ: Բայց գուցե շուտով ուշ լինի, որովհետև ոչ ոք իրականում չգիտի, երբ է ձեր չորս րոպեն ավարտվելու:

Այժմ գուցե մտածեք. «Ես արդեն կորցրել եմ այդ հնարավորությունը: Իմ չորս րոպեներն արդեն խափանվել են: Նաև գուցե անձնատուր լինեմ»: Այդ դեպքում, մի մտածեք այդ մասին, և երբեք էլ մի մտածեք: Քավության հրաշքը կարող է շտկել մեր կյանքի անկատարությունները: Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է.

«Նրանց, . . . ովքեր դեռևս ընդդիմանում են, . . . ես վկայում եմ

Աստծո նորոգող զորության և Նրա շնորհի հրաշքի մասին: . . .

. . . *Երբեք* շատ ուշ չէ, քանի դեռ Վարդապետը . . . ասում է, որ ժամանակ կա: . . . Մի հետաձգեք»:[10]

Հիշեք, դուք միայնակ չեք: Փրկիչը խոստացել է, որ Նա ձեզ անմխիթար չի թողնի:[11] Դուք նաև ունեք ընտանիք, ընկերներ և ղեկավարներ, ովքեր ոգևորում են ձեզ:

Թեպետ խոսքս ուղղված է Եկեղեցու երիտասարդներին, ծնողների և պապիկ-տատիկների համար առաջարկում եմ հետևյալը.

Վերջերս Երեց Դեյվիդ Ա. Բեղնարը նկարագրեց մի պարզ եղանակ, ինչպես կարելի է կատարել ընտանիքի գնահատում, պարզելով թե հիմնական արարողությունների հարցում որ տեղում է գտնվում ընտանիքը ուխտի ճանապարհին: Մեզ անհրաժեշտ է ընդամենը թուղթ՝ բաժանած երկու սյունակների, վերնագրված՝ «անուն» և «ծրագիր հաջորդ կամ անհրաժեշտ ծեսի համար»: Վերջերս ես կատարեցի դա՝ լրացնելով իմ ընտանիքի յուրաքանչյուր անդամի անունը: Նրանց շարքում էր իմ նորածին թոռնիկը, որը պետք է շուտով օրհնություն ստանար, վեցամյա թոռնիկը, որի մկրտության համար պատրաստությունը կարևոր էր, և 18 տարեկան դարձող որդին, որի նախապատրաստությունը քահանայության և տաճարային օժտման համար անխուսափելի էր: Ցուցակում բոլորը հաղորդության արարողության կարիքն ունեին: Այդ հասարակ վարժությունը օգնեց ինձ և Լեսային կատարել մեր դերը՝ օգնելով մեր ընտանիքի յուրաքանչյուր անդամին շարժվել ուխտի ճանապարհով, նրանցից յուրաքանչյուրի համար ունենալով գործողությունների ծրագիր: Գուցե այս գաղափարը կօգնի ձեզ ծավալել ընտանեկան քննարկումներ, անցկացնել ընտանեկան երեկոյի դասեր, նախապատրաստվել և անգամ հրավերներ ուղարկել ձեր ընտանիքում կատարվող կարևոր ծեսերի համար:[12]

Ինքս լինելով դահուկորդ և սնոուբորդիստ, ինձ համար հատկապես տպավորիչ էր ավստրալիացի ՎՕՍ

մարզիկ և սնոուբորդիստ, արծաթե մեդալակիր Տորա Բրայթի մրցելույթը: Նա ապշեցրեց աշխարհին իր անթերի սահքով, որի ժամանակ փայլուն կատարեց 720 աստիճանի հետադարձ պտույտը: Սակայն, աշխարհի համար առավել տպավորիչ և զարմանալի էր այն, թե ինչպես նա ոգևորեց և Քրիստոսանման սեր ցուցաբերեց իր մրցակիցների հանդեպ: Նա նկատեց, որ ամերիկացի սնոուբորդիստ Կելի Կլարկը եզրափակիչ փուլի առաջին անհաջող մրցելույթից հետո անհանգստանում է երկրորդ մրցելույթի համար: «Նա ինձ գրկեց,- հիշում է Կլարկը,- նա այդպես գրկախառնված մնաց այնքան, մինչև ես հանգստացա և շնչառությունս կարգավորվեց: Հրաշալի է, երբ ընկերդ գրկում է քեզ»: Կելի Կլարկն ավելի ուշ Տորայի հետ կանգնեց մրցանակակիրների հարթակի վրա որպես բրոնզե մեդալակիր:

Երբ նրան հարցրեցին իր մրցակցի հանդեպ այդ անսովոր բարեսիրտ արարքի մասին, որը կարող էր վտանգի տակ դնել իր իսկ արծաթե մեդալը, Տորան պարզապես ասաց. «Ես մարզիկ եմ և ուզում եմ գերազանց ելույթ ունենալ, սակայն ուզում եմ, որ իմ մրցակից ընկերները ևս իրենց ուժերի սահմանում լավագույնս ելույթ ունենան»:[13]

Մտքում ունենալով այս օրինակը, կարո՞ղ եք տեսնել նրան, ով ձեր քաջալերման կարիքն ունի. դա կարող է լինել ընտանիքի անդամ, ընկեր, դասընկեր կամ քվորումի անդամ: Ինչպե՞ս կարող եք օգնել նրանց իրենց չորս ոոպեում:

Սիրելի ընկերներ, դուք գտվում եք ոգևորիչ ճամփորդության մեջտեղում: Ինչ-որ առումով, դուք սահում եք ոլորանով կամ սառցուղով և գուցե դժվար լինի յուրաքանչյուր տարրը կատարել կամ յուրաքանչյուր շրջադարձում կողմնորոշվել: Բայց հիշեք, դուք երկար եք պատրաստվել դրան: Սա ձեր մրցելույթի պահն է: Սա ձեր չորս ոոպեներն են: Այժմ է ժամանակը:

Ես լիովին վստահ եմ ձեր ունակությունների վրա: Դուք ունեք աշխարհի Փրկչին ձեր կողքին: Եթե խնդրեք Նրա օգնությունը և հետևեք Նրա հրահանգներին, ինչպե՞ս կարող եք ձախողվել:

Խոսքս ավարտում եմ, բերելով իմ վկայությունը, որ մենք օրհնված ենք, ունենալով ապրող մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին, Հիսուս Քրիստոսին, և Նրա դերը որպես մեր Փրկիչ և Քավիչ, Նրա՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀԴՈՒՄՆԵՐ

1. Տես Christine Rappleye, “Mormons in the Olympics: 3 Medals for LDS Athletes at the Winter Games,” deseretnews.com/article/865597546/Mormons-in-the-Olympics-3-medals-for-LDS-athletes-at-the-Winter-Games.html:
2. Տես Christine Rappleye, “Mormons in the Olympics”:
3. Տես Sarah Petersen, “Noelle Pikus-Pace Wears LDS Young Women Necklace throughout Olympics,” deseretnews.com/article/865596771/Noelle-Pikus-Pace-wears-LDS-Young-Women-necklace-throughout-Olympics.html:
4. Տես Amy Donaldson, “Army, Faith Helped Push Mormon Bobsledder Chris Fogt to Olympic Success,” deseretnews.com/article/865597390/Army-faith-helped-push-Mormon-bobsledder-Chris-Fogt-to-Olympic-success.html:
5. Ալմա 34.32:
6. Տես Ա Կորնթացիս 9.24:
7. Վարդապետություն և Ուխտեր 84.20:
8. Տես Ալմա 34.31–33:
9. Եբրայեցիս 12.1:
10. Jeffrey R. Holland, “The Laborers in the Vineyard,” *Liahona,* May 2012, 33.
11. Տես Հովհաննես 14.18:
12. Դեյվիդ Ա. Բեղնար, զրույց հեղինակի հետ:
13. Vidya Rao, “Snowboarder Kelly Clark: Hug from Competitor Helped Me Win Bronze,” today.com/sochi/snowboarder-kelly-clark-hug-competitor-helped-me-win-bronze-2D12108132.

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Իրենց բեռները հեշտությամբ տանեին

Յուրաքանչյուրս մեր կյանքում եզակի բեռ ունենք, որը մեզ օգնում է ապավինել Սուրբ Մեսիայի արժանիքներին, ողորմածությանը և շնորհին:

Ես մի սիրելի ընկեր ունեմ, որն իր ամուսնության վաղ տարիներին համոզված էր, որ ընտանիքը չորս քարշակով ընտանեկան բեռնատարի կարիք ունի: Նրա կինը համոզված էր, որ դա ոչ թե կարիք էր, այլ որ ամուսինը պարզապես նոր մեքենա է ուզում: Ամուսինն ու կինն ուրախ երկխոսություն նախաձեռնեցին, որ պարզաբանեն նման գնում կատարելու առավելություններն ու թերությունները:

«Քա՛ղցրս, մենք չորս քարշակով բեռնատարի կարիք ունենք»:

Կինը հարցրեց. «Ինչո՞ւ ես կարծում, որ նոր մեքենայի կարիք ունենք»:

Ամուսինը, իր կարծիքով, տվեց կատարյալ պատասխան. «Եթե մեր երեխային կաթ պետք լինի սարսափելի փոթորկի ժամանակ, ապա միակ ձևը, որ ես կարող եմ հասնել մթերային խանութ, չորս քարշակով բեռնատարն է»:

Կինը ժպիտով արձագանքեց. «Եթե մենք նոր մեքենա գնենք, ապա կաթի գումար չենք ունենա, ուրեմն պետք չի լինի արտակարգ իրավիճակներում խանութ գնալ»:

Ժամանակի ընթացքում նրանք շարունակեցին խորհուրդ անել և, ի վերջո, որոշեցին ձեռք բերել մեքենա: Նոր մեքենային տիրանալուց կարճ ժամանակ անց ընկերս ցանկացավ ցույց տալ բեռնատարի օգտակարությունը և արդարացնել գնելու իր դրդապատճառները: Այնպես որ, նա որոշեց, որ իրենց տան համար վառելափայտի պաշար կհավաքի ու կբերի իր բեռնատարով: Արդեն խոր աշուն էր և լեռներում, որտեղ նա մտադիր էր փայտ գտնել, արդեն ձյուն էր եկել: Բարձրանալով դեպի լեռները, ձյունն աստիճանաբար խորանում էր: Ընկերս նկատում էր, որ ճանապարհը լպրծուն և վտանգավոր էր դառնում, սակայն, իր նոր ավտոմոբիլի հանդեպ մեծ վստահություն ունենալով, նա շարունակում էր առաջ գնալ:

Ցավոք, ընկերս շատ հեռու քշեց ձնե ճանապարհով: Երբ նա ուղղեց մեքենան ճանապարհից դուրս՝ դեպի այն վայրը, որտեղ որոշել էր փայտ կտրել, նա թաղվեց ձյան մեջ: Նոր մեքենայի բոլոր չորս անիվներն անարդյունք պտտվում էին ձյան մեջ: Նա պատրաստակամորեն ընդունեց, որ չգիտեր, թե ինչ պետք է անի, որպեսզի ազատի իրեն այդ վտանգավոր իրավիճակից: Նա ամոթ ու անհանգստություն էր զգում:

Ապա ընկերս որոշեց. «Դե՜, ես պարզապես չեմ նստելու այստեղ»: Նա դուրս եկավ մեքենայից և սկսել փայտ կտրել: Նա բեռնատարի թափքը ամբողջովին լցրեց ծանր բեռով: Ապա ընկերս որոշեց, որ ևս մեկ անգամ կփորձի դուրս գալ ձյան միջից: Երբ նա կիրառեց փոխանցման տուփը և շարժիչին ուժ գործադրեց, մեքենան սկսեց քիչ-քիչ առաջանալ: Դանդաղ շարժվելով ձյան միջով՝ բեռնատարը վերադարձավ ճանապարհ: Նա վերջապես ազատ էր գնալու տուն՝ որպես երջանիկ և խոնարհված մարդ:

Մեր անհատական բեռը

Ես հայցում եմ Սուրբ Հոգու օգնությունը, մինչ կխոսեմ կարևոր դասերի մասին, որոնք կարելի է քաղել իմ ընկերոջ, բեռնատարի և փայտի մասին այդ պատմությունից: Փայտի բեռն էր: Փայտի բեռն էր, որ ապահովեց անհրաժեշտ

քարշունակությունը, որ նրան դուրս բերի ձնից, վերադառնա ճանապարհ և առաջ շարժվի: Բեռն էր, որ նրան հնարավորություն տվեց վերադառնալ իր ընտանիք և իր տուն:

Յուրաքանչյուրս ինչ-որ բեռ ունենք: Մեր անհատական բեռը բաղկացած է պահանջներից ու հնարավորություններից, պարտավորություններից ու արտոնություններից, չարչարանքներից ու օրհնություններից և ընտրանքներից ու հարկադրանքներից: Երկու ուղղորդող հարց կարող են օգտակար լինել, երբ պարբերաբար աղոթքով գնահատում ենք մեր բեռը. «Արդյոք իմ կրած բեռը արտադրո՞ւմ է հոգևոր քարշունակություն, որը հնարավորություն կտա ինձ Քրիստոսի հանդեպ հավատքով առաջ մղվել նեղ ու անձուկ արահետով և խուսափել թաղվելուց: Արդյոք իմ կրած բեռը ստեղծո՞ւմ է հոգևոր քարշունակություն, այնպես որ ես, ի վերջո, կարողանամ վերադառնալ տուն՝ Երկնային Հոր մոտ»:

Երբեմն, մենք սխալմամբ կարող ենք հավատալ, որ երջանկությունը բեռի բացակայությունն է: Սակայն բեռ կրելը երջանկության ծրագրի անհրաժեշտ և կարևոր մասն է: Քանի որ մեր անհատական բեռը պետք է հոգևոր քարշունակություն առաջացնի, մենք պետք է զգույշ լինենք, որ մեր կյանքում քարշ չտանք չափից շատ բաներ, որոնք լավ են, բայց ոչ անհրաժեշտ, որպեսզի չշեղվենք ու չհեռանանք ավելի կարևոր բաներից:

Քավության զորացնող ուժը

Փրկիչն ասել է.

«Ինձ մոտ եկէք, ամեն վաստակածներ և բեռնաւորուածներ, և ես հանգիստ կ՚տամ ձեզ:

Ձեզ վերայ առէք իմ լուծը և ինձանից սովորեցէք. Որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստութիւն կ՚գտնէք:

Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթեոս 11.28–30):

Լուծը փայտե հաստ ձող է, որը սովորաբար օգտագործվում է մի զույգ եզ կամ այլ կենդանիներ լծելու համար, որը թույլ է տալիս նրանց միասին քաշել բեռը: Լուծը կենդանիներին պահում է կողք-կողքի, որպեսզի նրանք կարողանան միասին առաջ շարժվել, ինչ-որ գործ կատարելու համար:

Մտածեք Տիրոջ բացառիկ անհատական հրավերի մասին՝ «ձեզ վերայ առէք իմ լուծը»: Սրբազան ուխտեր կապելն ու պահելը մեզ լծակից է դարձնում Տեր Հիսուս Քրիստոսի հետ: Ըստ էության՝ Փրկիչը մեզ հրավիրում է ապավինել Իրեն և քաշել Իր հետ միասին, թեև մեր լավագույն ջանքերը հավասար չեն և չեն կարող համեմատվել Նրա հետ: Մինչ մենք վստահում և քաշում ենք մեր բեռը Նրա հետ մահկանացու ճամփորդության ժամանակ, իրապես նրա լուծը քաղցր է, իսկ Նրա բեռը՝ թեթև:

Մենք երբեք միայնակ չենք և չպետք է միայնակ լինենք: Մենք կարող ենք առաջ շարժվել մեր առօրյա կյանքում, ինչպես երկնային օգնությամբ: Փրկչի Քավության միջոցով մենք կարող ենք «մեր ուժերից վեր» ունակություններ ձեռք բերել («Lord, I Would Follow Thee», *Hymns,* no. 220): Քանի որ Տերը հայտարարել է. «Հետևաբար, շարունակեք ձեր ճամփորդությունը, և թող ձեր սրտերը ցնծան. քանզի ահա, տե՛ս, ես ձեզ հետ եմ, նույնիսկ մինչև վերջ» (ՎԵՈՒ 100.12):

Դիտարկենք Մորմոնի Գրքի օրինակը, երբ Ամուղոնը հալածում էր Ալմային ու նրա ժողովրդին: Տիրոջ ձայնը եկավ այդ աշակերտներին իրենց չարչարանքների մեջ. «Եվ եղավ այնպես, որ Տիրոջ ձայնը եկավ նրանց իրենց չարչարանքների մեջ՝ ասելով. Բարձրացրեք ձեր գլուխները և հանգիստ եղեք, քանզի ես գիտեմ ուխտի մասին,

որը դուք արել եք ինձ հետ. և ես կուխտեմ իմ ժողովրդի հետ ու կազատեմ նրանց ճորտությունից» (Մոսիա 24.13):

Նկատեք ազատման խոստումի մեջ ուխտերի առանցքային դերը: Հավատարմությամբ ստացվող և հարգվող ուխտերը և քահանայության պատշաճ իշխանությամբ կատարվող արարողություններն անհրաժեշտ են Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ հասանելի բոլոր օրհնությունները ստանալու համար: Քանի որ քահանայության արարողություններում է, որ աստվածայնության զորությունը, այդ թվում նաև Քավության օրհնությունները, բացահայտվում են մահկանացու տղամարդկանց և կանանց (տես ՎԿՈ 84.20–21):

Հիշեք Փրկչի արտահայտությունը «Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթեոս 11.28–30), մինչ կարդում ենք Ալմայի և իր ժողովրդի մասին հաջորդ հատվածը:

«Եվ ես նաև կթեթևացնեմ բեռները, որոնք դրվել են ձեր ուսերին, որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքին, նույնիսկ մինչ դուք ճորտության մեջ եք» (Մոսիա 24.14)

Մեզանից շատերը ենթադրում են, որ այս սուրբ գրությունը ենթադրում է, որ բեռն անսպասելիորեն և մշտապես կհեռացվի: Սակայն հաջորդ հատվածը նկարագրում է, թե ինչպես բեռները թեթևացան:

«Եվ արդ, եղավ այնպես, որ բեռները, որոնք դրվել էին Ալմայի ու նրա եղբայրների վրա, թեթևացան. այո՛, *Տերն ուժեղացրեց նրանց*, որ նրանք կարողանային իրենց բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու համբերությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին (Մոսիա 24.15, շեշտադրումն ավելացված է):

Փորձություններն ու դժվարությունները անմիջապես չհեռացվեցին ժողովրդից: Այլ Ալման ու նրա հետևորդները ամրապնդվեցին և նրանց ավելացված կարողությունները բեռը թեթև դարձրին: Այս բարի մարդիկ Քավության շնորհիվ զորություն ստացան *գործելու* որպես իրենց կամքի գործակալներ (տես ՎԿՈ 58.26–29) և ներ*գործեցին* իրենց պայմանների վրա: Եվ «Տիրոջ ուժով» (Մորմոնի Խոսքերը 1.14, Մոսիա 9.17, 10.10, Ալմա 20.4), Ալման ու նրա ժողովուրդը ուղղորդվեցին անվտանգություն գտնելու Զարահեմլայի հողում:

Հիսուս Քրիստոսի Քավությունը ոչ միայն հաղթահարում է Ադամի անկման հետևանքները և հնարավոր է դարձնում մեր անհատական մեղքերի և օրինազանցությունների թողությունը, այլ Նրա Քավությունը մեզ հնարավորություն է տալիս նաև բարիք գործել և ավելի լավը լինել՝ գերազանցելով մեր մահկանացու ունակությունները: Մեզանից շատերը գիտեն, որ երբ ինչ-որ բան սխալ ենք անում և օգնություն ենք ուզում մեղքի հետևանքները մեր կյանքում հաղթահարելու համար, Փրկիչը հնարավոր է դարձրել, որ մենք մաքրվենք Նրա փրկագնող զորությամբ: Բայց մենք նաև հասկանում ենք, որ Քավությունը հավատարիմ տղամարդկանց և կանանց համար է, ովքեր հնազանդ են, արժանի են և բարեխղճորեն ձգտում են դառնալ ավելի լավը և ծառայել ավելի հավատարմորեն: Կարծում եմ՝ մենք լիովին չենք գիտակցում Քավության այդ զորացնող ուժը մեր կյանքում և սխալմամբ կարծում ենք, որ ամբողջովին միայնակ պետք է տանենք մեր բեռը՝ բացարձակապես մեր հաստատակամությամբ, կամքի ուժով ու կարգապահությամբ և մեր ակնհայտ սահմանափակ ունակություններով:

Մի բան է՛ իմանալ, որ Հիսուս Քրիստոսը եկավ երկիր, որ *մահանա* մեզ համար: Բայց մենք պետք է նաև գնահատենք, որ Տերը՝ Իր Քավությամբ ու Սուրբ Հոգու զորությամբ, ցանկանում է *կենսունակություն տալ* մեզ՝ ոչ միայն առաջնորդելով, այլ նաև զորացնելով ու բուժելով մեզ:

Փրկիչը սատարում է Իր ժողովրդին

Ալման բացատրում է, թե ինչու և ինչպես է Փրկիչը ունակություն տալիս մեզ.

«Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի. և դա՝ որպեսզի խոսքը կարողանա իրագործվել, որն ասում է. նա վեր կառնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները:

Եվ նա իր վրա վեր կառնի մահ, որ կարողանա արձակել մահվան կապանքները, որոնք կապում են իր ժողովրդին. և նա իր վրա վեր կառնի նրանց թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների (Ալմա 7.11–12):

Այսպիսով, Փրկիչը տառապանք է կրել ոչ միայն մեր մեղքերի և անօրինազանցությունների համար, այլ նաև մեր ֆիզիկական ցավերի ու տառապանքների համար, մեր թուլությունների ու թերություններին, մեր մտավախությունների ու պատրանքների համար, մեր հիասթափությունների և հուսահատությունների, մեր ափսոսանքների ու խղճի խայթի, մեր վիատության ու հուսալքվածության, մեզ հանդիպող անարդարությունների և անհավասարությունների և մեզ շրջապատող էմոցիոնալ անհանգստության համար:

Չկա ոչ մի ֆիզիկական ցավ, ոչ էլ հոգևոր վերք, ոչ հոգու տվայտանք, ոչ սրտի ցավ, ոչ թուլություն, ոչ էլ տկարություն, որին ես կամ դուք դիմակայել ենք մահկանացու կյանքում, որը մինչ այդ Փրկիչը տարած չլինի: Տկարության պահին մենք հնարավոր է բարցրաձայնենք. «Ո՛չ ոք չգիտի, թե ինչով եմ ես անցնում: Ո՛չ ոք չի կարող հասկանալ»: Սակայն Աստծո Որդին կատարելապես գիտի և հասկանում է, քանի որ Անձամբ զգացել և կրել է մեր անհատական բեռները: Եվ Իր անսահման և հավերժական զոհաբերության շնորհիվ (տես Ալմա 34.14), Նա կատարյալ կարեկցանք ունի և կարող է Իր ողորմած աջը մեկնել մեզ: Նա կարող է հասնել, դիպչել, սատարել, բուժել և ամրացնել մեզ, որ լինենք ավելին, քան երբևէ կարող ենք լինել, և օգնում են մեզ անել այն, ինչը մենք երբեք չէինք կարող անել, եթե ապավինեինք միայն մեր սեփական ուժին: Իրապես, Նրա լուծը քաղցր է և Նրա բեռը թեթև:

Հրավեր, խոստում և վկայություն

Ես հրավիրում եմ ձեզ սովորել, աղոթել, խորհել և ձգտել ավելին իմանալ Փրկչի Քավության մասին, երբ դուք չափում եք ձեր անհատական բեռը: Քավության մասին շատ բաներ մենք պարզապես չենք կարող ընկալել մեր մահկանացու մտքով: Բայց Քավության շատ տեսանկյուններ կան, որ մենք կարող ենք և պետք է հասկանանք:

Իմ ընկերոջ համար, փայտի բեռը կյանք փրկող քարշունակություն

ապահովեց: Դատարկ բեռնատարը չէր կարող շարժվել ձյան միջով, թեև հագեցած էր չորս անիվ քարշակով: Ծանր բեռն անհրաժեշտություն դարձավ քարշունակություն արտադրելու համար:

Բեռն անհրաժեշտ էր: Բեռն էր, որ քարշունակություն ապահովեց, որ հնարավորություն տվեց ընկերոջս դուրս գալ թաղված վիճակից, վերադառնալ ճանապարհի վրա, առաջ մղվել և վերադառնալ իր ընտանիք:

Յուրաքանչյուրս մեր կյանքում եզակի բեռ ունենք, որը մեզ օգնում է ապավինել Սուրբ Մեսիայի արժանիքներին, ողորմածությանը և շնորհին (տես 2 Նեփի 2.8). Ես վկայում եմ և խոստանում, որ Փրկիչը կօգնի մեզ հեշտությամբ կրել մեր բեռները (տես Մոսիա 24.15): Երբ նրան լծակից դառնանք սրբազան ուխտերի միջոցով և Նրա Քավության միջոցով զորություն ստանանք կյանքում, մենք ավելի ու ավելի շատ կձգտենք հասկանալ և ապրել ըստ նրա կամքի: Մենք նաև կաղոթենք ուժի համար, որպեսզի սովորենք, փոխվենք կամ ընդունենք մեր հանգամանքները, ոչ թե անդադար աղոթենք, որ Աստված փոխի մեր հանգամանքները՝ ըստ մեր կամքի: Մենք կդառնանք ավելի շուտ ներգործող, քան ներգործվող էակներ (տես 2 Նեփի 2.14): Մենք կօրհնվենք հոգևոր քարշունակությամբ:

Թող որ Փրկչի Քավությամբ յուրաքանչյուրս ավելի լավը և ավելի քարշունակ դառնա: Այսօր ապրիլի 6-ն է: Հայտնության շնորհիվ մենք գիտենք, որ այսօր Փրկչի ծննդի իրական և ճշգրիտ օրն է: Ապրիլի 6-ը նաև Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կազմավորման օրն է: (Տես ՎևՈւ 20.1; Հարոլդ Բ. Լի, “Strengthen the Stakes of Zion,” *Ensign,* July 1973, 2; Spencer W. Kimball, “Why Call Me Lord, Lord, and Do Not the Things Which I Say?” *Ensign,* May 1975, 4; Spencer W. Kimball, “Remarks and Dedication of the Fayette, New York, Buildings,” *Ensign,* May 1980, 54; *Discourses of President Gordon B. Hinckley, Volume 1: 1995–1999* [2005], 409:) Այս հատուկ և սուրբ կիրակի օրը ես հրապարակում եմ իմ վկայությունը, որ Հիսուս Քրիստոսը մեր Քավիչն է: Նա ապրում է և կարող է մաքրել, բուժել, առաջնորդել, պաշտպանել և ամրապնդել մեզ: Այս բաների մասին ես ուրախությամբ վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Սեր՝ Ավետարանի էությունը

Մենք չենք կարող իսկապես սիրել Աստծուն, եթե մենք չենք սիրում այս մահկանացու կյանքի ճանապարհորդության մեր ընկերակից ճամփորդներին:

Ում սիրելի եղբայրներ և քույրեր, երբ մեր Փրկիչը ծառայում էր մարդկանց մեջ, նրան հարց ուղղվեց մի օրինագետի կողմից փորձելով Նրան. «Վարդապետ, ո՞ր պատվիրանքն է մեծ օրենքումը»:

Մատթեոսը գրում է, որ Հիսուսը պատասխանեց.

«Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը:

Սա է առաջին և մեծ պատուիրանքը:

Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս»:[1]

Մարկոսն ավարտում է պատմությունը Փրկչի հայտարարությամբ. «Սորանցից աւելի մեծ ուրիշ պատուիրանք չկայ»:[2]

Մենք չենք կարող իսկապես սիրել Աստծուն, եթե մենք չենք սիրում այս մահկանացու կյանքի ճանապարհորդության մեր ընկերակից ճամփորդներին: Նմանապես, մենք չենք կարող լիովին սիրել մեր ընկերակիցներին, եթե մենք չենք սիրում Աստծուն՝ մեր բոլորիս Հորը: Հովհաննես Առաքյալն ասել է մեզ. «Այս պատուիրանքն ունինք նորանից, թէ նա որ Աստուծուն սիրում է, իր եղբորն էլ սիրէ»:[3] Մենք բոլորս մեր Երկնային Հոր հոգևոր զավակներն ենք և որպես այդպիսիք եղբայրներ և քույրեր ենք: Երբ մտքում պահենք այս ճշմարտությունը, բոլոր Աստծո զավակներին սիրելը հեշտ կդառնա:

Փաստորեն սերը ավետարանի հենց էությունն է, և Հիսուս Քրիստոսը մեր Օրինակն է: Նրա կյանքը սիրո ժառանգություն է: Հիվանդներին նա բժշկում էր, ոտնակոխ եղածներին Նա բարձրացնում էր, մեղսավորին Նա փրկում էր: Վերջում կատաղած ամբոխը վերցրեց Նրա կյանքը: Եվ այնուամենայնիվ Գողգոթայի բլրից հնչում են խոսքերը. «Հայր, թողիր դորանց. որովհետեւ չգիտեն թէ ինչ են անում»,[4] մահկանացու կյանքում սիրո և կարեկցանքի մի պսակադրող արտահայտություն:

Կան շատ հատկանիշներ, որոնք սիրո դրսևորումն են, ինչպես օրինակ՝ բարություն, համբերություն, անեսասիրություն, ըմբռնում, և ներում: Մեր բոլոր հաղորդակցություններում սրանք և այդպիսի այլ հատկանիշներ կօգնեն ակնհայտ դարձնել սերը մեր սրտերում:

Սովորաբար մեր սերը ցույց կտրվի միմյանց հետ մեր ամենօրյա փոխհարաբերություններում: Ամենակարևորը կլինի ինչ որ մեկի կարիքը հասկանալու կարողությունը և ապա պատասխանելը: Ես միշտ փայփայել եմ մի կարճ ոտանավորում արտահայտված զգացումը.

Գիշերը լացեցի
Որ կարճատես եղա,
Եվ ինչ որ մեկի կարիքը չտեսա,
Սակայն դեռևս մազաչափ անգամ,
Չեմ զղջացել երբեք,
Շատ բարիք գործելու համար:[5]

Ես վերջերս տեղեկացվեցի սիրառատ բարության մի հուզումնալի օրինակի, մի օրինակի, որը ունեցել էր անկանխատեսելի արդյունքներ: 1933թվականն էր, երբ Մեծ Դեպրեսիայի պատճառով աշխատանքի հնարավորությունները սուղ էին: Վայրը գտնվում էր Միացյալ Նահանգների արևելյան մասում: Առլեն Բիսեքերը հենց նոր էր ավարտել ավագ դպրոցը: Աշխատանքի երկար որոնումներից հետո, նա վերջապես կարողացավ ձեռք բերել աշխատանք հագուստեղենի գործարանում, որպես դերձակուհի: Գործարանի աշխատողները վարձատրվում էին միայն յուրաքանչյուր ճշտորեն ավարտված արտադրանքի համար, որոնք նրանք միասին էին կարում ամեն օր: Որքան ավելի շատ արտադրանք էին կարում, այնքան ավելի շատ էին վարձատրվում:

Գործարանում մեկ օր աշխատելուց հետո Առլենը հանդիպեց մի գործընթացի, որից նա խառնվեց և հուսալքվեց: Նա նստեց իր կարի մեքենայի մոտ՝ փորձելով քանդել իր անհաջող կարածը՝ արտադրանքն ավարտելու համար, որի վրա նա աշխատում էր: Թվում էր ոչ ոք չէր կարող նրան օգնել, քանի որ բոլոր մյուս դերձակուհիները շտապում էին վերջացնել որքան հնարավոր է շատ արտադրանք, որ իրենք կարող էին: Առլենը անօգնական և հուսահատված էր զգում: Նա անձայն սկսեց արտասվել:

Առլենի դիմաց նստած էր Բերնիկե Ռոքը: Նա ավելի տարիքով

մեծ էր և ավելի փորձառու որպես դերձակուհի: Նկատելով Առլենի վշտահար վիճակը, նա թողեց իր սեփական աշխատանքը և գնաց Առլենի մոտ, բարությամբ նրան ցուցումներ տալով և օգնելով: Նա մնաց մինչև Առլենը ձեռք բերեց վստահություն և կարողացավ հաջող ավարտել արտադրանքը: Ապա Բերնիկեն վերադարձավ իր սեփական մեքենայի մոտ, բաց թողած լինելով հնարավորինս շատ արտադրանք ավարտելու հնարավորությունը, եթե նա օգնած չլիներ:

Սիրալիր բարությամբ արված այս մեկ քայլը Բերնիկեին և Առլենին դարձրեց ողջ կյանքի ընկերուհիներ: Յուրաքանչյուրն ի վերջո ամուսնացավ և երեխաներ ունեցավ: Ինչ որ մի ժամանակ 1950-ականներին, Բերնիկեն, որը Եկեղեցու անդամ էր, Առլենին և նրա ընտանիքին տվեց Մորմոնի Գրքի մի օրինակ: 1960 թվականին Առլենը և նրա ամուսինը և երեխաները Եկեղեցու մկրտված անդամներ էին: Հետագայում նրանք կնքվեցին Աստծո սուրբ տաճարում:

Բերնիկեի ցույց տված կարեկցանքի արդյունքում, երբ նա դուրս եկավ իր տեղից օգնելու մեկին, ում նա չէր ճանաչում, բայց որը վշտահար էր և օգնության կարիք ուներ, անհամար անձինք ինչպես կենդանի, այնպես էլ մահացած, այժմ վայելում են ավետարանի փրկարար արարողությունները:

Մեր կյանքի ամեն օրը մեզ տրվում է հնարավորություններ ցույց տալու սեր և բարություն նրանց հանդեպ, ովքեր մեր շրջապատում են:Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալլն ասել է.«Մենք պետք է հիշենք, որ այն մահկանացուները, որոնց մենք հանդիպում ենք կայանավայրերում, գրասենյակներում, վերելակներում և այլ տեղերում այն մասն է մարդկության, որ Աստված տվել է մեզ՝ սիրելու և ծառայելու: Մեզ քիչ օգուտ կտա խոսել մարդկության ընդհանուր եղբայրության մասին, եթե մենք չկարողանանք հարգել բոլոր նրանց, ովքեր մեր շրջապատում են, որպես մեր եղբայրներ և քույրեր»:[6]

Հաճախ մեր սերը ցույց տալու հնարավորությունները գալիս են անսպասելիորեն: Այդ հնարավորության մի օրինակ ի հայտ եկավ մի լրագրային հոդվածում 1981թվականի հոկտեմբերին: Այնպես էի տպավորվել այնտեղ նկարագրված սիրով և կարեկցանքով, որ ես պահել եմ այդ հոդվածը իմ թղթապանակներում ավելի քան 30 տարի:

Հոդվածը նշում է, որ Ալյասկայի Օդային Ուղիների անկանգառ թռիչքը Անքորիջից, Ալյասկա դեպի Սիեթլ, Վաշինգտոն, թռիչք, որը տեղափոխում էր 150 ուղևորներ, փոխել էր իր ուղերթը դեպի Ալյասկայի մի հեռավոր քաղաք, որպեսզի տեղափոխեր մի մահացու վիրավոր երեխայի: Երկու տարեկան տղան ընկել էր ջարդված ապակու վրա և կտրել թևի իր զարկերակը, երբ խաղում էր իրենց տան մոտ: Քաղաքը 450 մղոն (725 կմ.) Անքորիջից դեպի հարավ էր գտնվում և իհարկե թռիչքային ուղու վրա չէր: Այնուամենայինիվ, այդտեղի բժիշկները ուղարկել էին օգնության խելահեղ մի խնդրանք և այսպես օդանավը փոխել էր ուղին՝ երեխային Սիեթլ տանելու համար, որպեսզի նա բուժվեր հիվանդանոցում:

Երբ ինքնաթիռը վայրէջք կատարեց հեռավոր քաղաքի մոտակայքում, բժիշկները հաղորդեցին, որ տղան այնքան ուժեղ էր արնահոսում, որ չէր դիմանա մինչև Սիեթլ: Որոշում ընդունվեց թռչել ևս 200 մղոն (320 կմ) ուղուց դուրս դեպի Ջունեաու, Ալյասկա, որը հիվանդանոց ունեցող ամենամոտիկ քաղաքն էր:

Տղային Ջունեաու տեղափոխելուց հետո, օդանավը ուղղվեց դեպի Սիեթլ այդ պահին ժամերով ուշանալով չվերթի գրաֆիկից: Ոչ մի ուղևոր չբողոքեց, չնայած նրանցից մեծ մասը ուշացան հանդիպումներից և տարանցիկ թռիչքներից: Փաստորեն, երբ րոպեներն ու ժամերն անցնում էին, նրանք սկսեցին փող հավաքել՝ ստեղծելով բավականին մեծ գումար տղայի և նրա ընտանիքի համար:

Երբ ինքնաթիռը պատրաստվում էր վայրեջք կատարել Սիեթլում, ուղևորները սկսեցին ծափահարել, երբ օդաչուն հայտարարեց, որ նա լուր էր ստացել ռադիոյով, որ տղայի մոտ ամեն ինչ լավ էր լինելու:[7]

Միտքս են գալիս սուրբ գրության խոսքերը. «Գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, . . . և ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի»:[8]

Եղբայրներ և քույրեր, մեծագույն հնարավորություններից մի քանիսը, որոնք ցույց կտան մեր սերը, կլինեն մեր սեփական տների պատերի ներսում: Սերը պետք է լինի ընտանեկան կյանքի հենց սրտում և այդուհանդերձ երբեմն այդպես չէ: Կարող է լինել խիստ շատ անհամբերություն, խիստ շատ վիճաբանություններ, խիստ շատ կռիվներ, խիստ շատ արցունքներ: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ողբում էր. «Ինչո՞ւ է պատահում այնպես, որ [նրանք], ում մենք ամենաշատն ենք սիրում, հաճախ նրանք են դառնում մեր կոպիտ խոսքերի թիրախները: Ինչո՞ւ է այնպես պատահում, որ [մենք] կարծես խոսում ենք դաշույններով, որոնք կտրում են արագորեն»:[9] Այս հարցերի պատասխանները կարող են տարբեր լինել մեզանից յուրաքանչյուրի համար, սակայն ճշմարտությունը նրանում է, որ պատճառները նշանակություն չունեն: Եթե կամենում ենք պահել մեկս մյուսին սիրելու պատվիրանը,

մենք պետք է միմյանց բարությամբ և հարգանքով վերաբերվենք:

Իհարկե կլինեն դեպքեր, երբ պատիժը կհամարվի չափված արդար չափ: Այնուամենայնիվ եկեք հիշենք խորհուրդը, որը գտնվում է Վարդապետություն և Ուխտերում՝ այսինքն, որ երբ անհրաժեշտ է մեզ համար նախատել մեկ ուրիշին, մենք հետագայում ցույց ենք տալիս ավելի շատ սեր:[10]

Ես կկամենայի հուսալ, որ մենք կձգտենք միշտ լինել հոգատար և զգայուն մեր շրջապատում գտնվողների մտքերի և զգացումների ու հանգամանքների հանդեպ: Եկեք չնվաստացնենք կամ չցածրացնենք: Ավելի լավ է եկեք կարեկցող լինենք և խրախուսող: Մենք պետք է զգույշ լինենք, որ անփույթ խոսքերով կամ գործողություններով չկործանենք մեկ ուրիշի վստահությունը:

Ներումը պետք է ձեռք ձեռքի գնա սիրո հետ: Մեր ընտանիքներում, ինչպես նաև մեր ընկերների հետ կարող են լինել վիրավորված զգացմունքներ և տարաձայնություններ: Կրկին նշանակություն չունի, թե որքան աննշան էր տարաձայնությունը: Այն չի կարող և չպիտի թողնվի, որ քայքայի, թարախակալի և ի վերջո կործանի: Մեղադրանքը վերքը բաց է պահում:Միայն ներումն է բժշկում:

Մի հաճելի կին, որն այժմ մահացել է, մի անգամ այցելեց ինձ և անսպասելիորեն պատմեց մի քանի զղջումների մասին: Նա խոսեց մի դեպքի մասին, որը տեղի էր ունեցել շատ տարիներ առաջ և ներառում էր մի հարևան ֆերմերի, մի ժամանակ լավ ընկերոջ, բայց որի հետ նա և իր ամուսինը տարաձայնություն էին ունեցել բազմաթիվ անգամներ: Մի անգամ ֆերմերը հարցրեց, թե կարող էր կարճ ճանապարհով նրանց հողամասով գնալ իր սեփական հողակտորը: Այդ պահին, նա դադարեց ինձ պատմելը և դողացող ձայնով ասաց. «Եղբայր Մոնսոն, ես թույլ չտվեցի, որ նա անցներ մեր հողամասով այն ժամանակ և երբևիցե, այլ պահանջեցի նրանից գնալ երկար ճանապարհով ոտքով շրջանցելով՝ հասնելու իր հողակտորին: Ես սխալ էի և ես զղջում եմ: Նա այժմ մահացել է, բայց օհ, այնպես կկամենայի ասել նրան. «Այնպես եմ ափսոսում»: Այնքան կկամենայի ունենալ բարի լինելու երկրորդ հնարավորություն»:

Վիեննա, Ավստրի

Երբ լսում էի նրան, իմ միտքը եկավ Ջոն Գրինլիֆ Ուիթթիերի տխուր դիտարկումը. «Բոլոր տրտում խոսքերից լեզվի կամ գրչի, ամենատրտումը սա է. *Կարող էր լինել*»:[11] Եղբայրներ և քույրեր, երբ մենք ուրիշներին վերաբերվում ենք սիրով և բարի տրամադրվածությամբ, մենք կխուսափենք այդպիսի զղջումներից:

Սերն արտահայտվում է շատ ճանաչելի ուղիներով. ժպիտով, ձեռքի շարժումով, բարի մեկնաբանությամբ, հաճոյախոսությամբ: Այլ արտահայտություններ կարող են լինել ավելի նուրբ, ցույց տալով հետաքրքրություն մեկ ուրիշի գործունեության հանդեպ, ուսուցանելով որևէ սկզբունք բարությամբ և համբերությամբ, այցելելով մեկին, ով հիվանդ է կամ տանը գամված: Այս խոսքերն ու գործողությունները, և ուրիշ շատերը, կարող են սեր հաղորդել:

Դեյլ Կառնեգին, հանրահայտ Ամերիկյան գրող և դասախոս,

հավատում էր, որ յուրաքանչյուր անձնավորություն իր ներսում ունի «զորություն մեծացնելու աշխարհի երջանկության ընդհանուր հանրագումարը . . . անկեղծ շնորհակալության մի քանի խոսք ասելով որևէ մեկին, ով միայնակ է կամ հուսալքված»: Նա ասել է. «Հավանաբար դուք կմոռանաք վաղը այն բարի խոսքերը, որ դուք ասել եք այսօր, բայց ստացողը կարող է փայփայել դրանք ողջ կյանքի ընթացքում»:[12]

Թող որ մենք սկսենք այժմ, հենց այս օրը, արտահայտենք սեր բոլոր Աստծո զավակներին, լինեն նրանք մեր ընտանիքի անդամները, մեր ընկերները, մեր ծանոթները կամ միանգամայն անծանոթներ: Երբ մենք վեր ենք կենում ամեն առավոտ, եկեք որոշենք արձագանքել սիրով և բարությամբ, ինչ էլ որ պատահի մեր ճանապարհին:

Երևակայությունից վեր է, իմ եղբայրներ և քույրեր Աստծո սերը մեր հանդեպ: Այդ սիրո շնորհիվ, Նա ուղարկեց Իր Որդուն, ով մեզ այնչափ սիրեց, որ տվեց Իր կյանքը մեզ համար, որ մենք կարողանանք ունենալ հավերժական կյանք: Երբ մենք սկսենք հասկանալ այս անզուգական պարգևը, մեր սրտերը կլցվեն սիրով մեր Երկնային Հոր հանդեպ, մեր Փրկչի հանդեպ և ողջ մարդկության հանդեպ: Ես անկեղծորեն աղոթում եմ, որ դա այդպես լինի, Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս ԻԲ.36–39:
2. Մարկոս ԺԲ.31:
3. Ա Հովհաննես Դ.21:
4. Ղուկաս ԻԳ.34:
5. Author unknown, in Richard L. Evans, “The Quality of Kindness,” *Improvement Era,* May 1960, 340.
6. *The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball (1982), 483.
7. Տես “Injured Boy Flown to Safety,” *Daily Sitka Sentinel* (Alaska), Oct. 22, 1981:
8. Մորոնի 7.47:
9. Gordon B. Hinckley, “Let Love Be the Lodestar of Your Life,” *Ensign,* May 1989, 67.
10. Տես Վարդապետություն և ուխտեր 121.43:
11. “Maud Muller,” in *The Complete Poetical Works of John Greenleaf Whittier* (1878), 206; emphasis added.
12. Dale Carnegie, in, օրինակ, Larry Chang, *Wisdom for the Soul* (2006), 54:

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ | *6 ապրիլի, 2014թ.*

Նախագահ Բոյդ Կ. Փաքեր
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Վկայություն

Ուզում եմ կիսվել ձեզ հետ այն ճշմարտություններով, որոնք արժե իմանալ:

Պատերազմի կամ անորոշության պահերին մեր ուշադրությունը կենտրոնանում է կարևոր բաների վրա:

Ինձ համար Երկրորդ Համաշխարհային Պատերազմը հոգևոր մեծ խառնաշփոթ էր: Ես պատերազմ էի մեկնել Բրիգամ Սիթիի մեր տնից, ինձ հետ ունենալով վկայության լոկ անթեղներ և զգալով ավելին ունենալու անհրաժեշտությունը: Փաստորեն մի քանի շաբաթվա ընթացքում մեր ողջ ավարտական դասարանը ուղևորվեց պատերազմական գոտի: Տեղակայվելով Ճապոնիայում՝ Օկինավայից հյուսիս Լեշիմա կղզում, ես կասկածանքի և անորոշության մաքառումների մեջ էի: Ես ուզում էի ավետարանի մասին անձնական վկայություն ունենալ: Ես ուզում էի *իմանալ:*

Մի անքուն գիշեր դուրս գալով վրանից մտա բունկեր, որը պատրաստված էր 190 լիտրանոց վառելիքի տակառներից, որոնք լցված էին ավազով և շարված մեկը մյուսի վրա, կազմելով պարիսպ: Կտուր չկար և ես ներս սողալով՝ նայեցի աստղալից երկնքին և ծնկի իջա աղոթելու:

Նախադասության կեսից մի բան տեղի ունեցավ, որը ցանկության դեպքում անգամ չեմ կարող նկարագրել: Դա արտահայտելու իմ ուժից վեր է, բայց դա այսօր այնքան հստակ է, որքան 65 տարի առաջ այդ գիշեր: Ես գիտեի, որ դա շատ անձնական հայտնություն էր: Համենայնդեպս, վստահ էի դրանում: Ես *գիտեի* հաստատ, որ դա ինձ էր տրվել: Մի փոքր անց, ես սողալով դուրս եկա բունկերից և քայլելով, կամ թռչելով, վերադարձա իմ վրան: Այդ գիշերն ես անցկացրեցի ուրախությամբ և ակնածանքով պարուրված:

Չմտածելով, որ ես հատուկ մարդ եմ, կարծեցի, որ եթե նման բան տեղի է ունենում ինձ հետ, կարող է տեղի ունենալ ցանկացած հոգու հետ: Ես դեռևս այդպես եմ մտածում: Հաջորդող տարիներին ես հասկացա, որ նման փորձառությունը լույս է, որին պետք է հետևել, և բեռ, որ պետք է կրել:

Ուզում եմ կիսվել ձեզ հետ այն ճշմարտություններով, որոնք արժե իմանալ, ճշմարտություններ, որ ես սովորել և զգացել եմ կյանքիս գրեթե 90 տարիների և որպես Բարձրագույն Իշխանություն՝ ավելի քան 50 տարիների ընթացքում: Իմ ստացած գիտելիքը, հիմնականում, այնպիսի գիտելիք է, որը

հնարավոր չէ ուսուցանել, բայց հնարավոր է սովորել:

Արժեքավոր շատ բաների պես հավերժական արժեք ունեցող գիտելիքը գալիս է միայն անձնական աղոթքի և մտորումների արդյունքում: Ծոմի և սուրբ գրությունների ուսումնասիրության հետ համակցելով, այն Սուրբ Հոգու կողմից կբերի տպավորություններ, հայտնություններ և հուշումներ: Դա հնարավորություն է տալիս ստանալու հրահանգներ բարձրյալից՝ սովորելով ցուցում առ ցուցում:

Հայտնությունները խոստանում են, որ «բանականության ինչ աստիճանի որ մենք հասնենք այս կյանքում, այն կբարձրանա մեզ հետ հարության ժամանակ» և որ «գիտելիք և բանականություն ձեռք է բերվում . . . ջանասիրության և հնազանդության միջոցով» (ՎԵՈՒ 130.18–19):

Առաջին հավերժական ճշմարտությունը, որ ես հասկացել եմ, այն է, որ Աստված ապրում է: Նա մեր Հայրն է: Մենք Նրա զավակներն ենք: «Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և Սուրբ Հոգուն» (Հավատո Հանգանակ 1.1):

Մյուս բոլոր տիտղոսներից, որ կարող էր օգտագործել, Նա ընտրեց «Հայր» կոչվելը: Փրկիչը պատվիրել է. «Այս ձևով հետևաբար աղոթեք դուք. Հայր մեր, որ երկնքում ես» (3 Նեփի 13.9; տես նաև Մատթեոս 6.9): Նրա կողմից «Հայր» անվան օգտագործումը դաս է բոլորի համար, որի շնորհիվ մենք հասկանում ենք, թե ինչն է առավել կարևոր այս կյանքում:

Ծնող լինելը սուրբ արտոնություն է և, կախված հավատարմությունից, այն կարող է հավերժական օրհնություն լինել: Եկեղեցու ողջ գործունեության վերջնական նպատակն այն է, որ տղամարդը, կինը և նրանց զավակները երջանիկ լինեն տանը:

Նրանք, ովքեր չեն ամուսնանում, կամ նրանք, ովքեր չեն կարողանում երեխաներ ունենալ, անմասն չեն հավերժական օրհնություններից, որ փնտրում են, բայց որոնք այժմ իրենց համար հասու չեն: Մենք միշտ չէ, որ գիտենք, թե ինչպես կամ երբ օրհնությունները կգան, բայց հավերժական աճի խոստումը չի մերժվի ոչ մի հավատարիմ անհատի, ով սուրբ ուխտեր է կապում և պահում:

Ձեր գաղտնի իղձերն ու արտասվալից աղերսները կդիպչեն Հոր և Որդու սրտին: Դուք անձնական հավաստիացում կստանաք Նրանցից, որ ձեր կյանքը կլինի լիարժեք և ոչ մի կարևոր օրհնություն չի կորչի ձեզ համար:

Որպես Տիրոջ ծառա, որ ծառայում է մի պաշտոնում, որին կարգվել է, նման իրավիճակում գտնվողներին ես խոստանում եմ, որ ձեր փրկության և վեհացման համար կարևոր ամեն ինչ կտրվի ձեզ իր ուրույն ժամանակին: Ձեռքերը, որ այժմ դատարկ են, կլցվեն, սրտերը, որ այժմ ցավում են անկատար երազանքներից և իղձերից, կամոքվեն:

Մյուս ճշմարտությունը, որ ես գիտեմ, դա այն է, որ Սուրբ Հոգին իրական է: Նա Աստվածագլխի երրորդ անդամն է: Նրա առաքելությունն է՝ վկայել ճշմարտության և արդարակեցության մասին: Նա հայտնվում է բազում եղանակներով, այդ թվում՝ խաղաղություն և հավաստիացում պարգևելով: Նա կարող է պարգևել նաև սփոփանք, առաջնորդություն, անհրաժեշտության դեպքում՝ ուղղում: Մեր կյանքում Սուրբ Հոգու ընկերակցությունը պայմանավորված է արդարակյաց կյանքով:

Սուրբ Հոգու պարգևը շնորհվում է ավետարանի արարողությամբ: Իշխանություն ունեցողը դնում է ձեռքերը Եկեղեցու նոր անդամի գլխին և ասում հետևյալ խոսքերը. «Ստացիր Սուրբ Հոգին»:

Այս արարողությունն ինքնին ակնհայտորեն չի փոխում մեզ, բայց եթե մենք լսում և հետևում ենք հուշումներին, ստանում ենք Սուրբ Հոգու օրհնությունը: Մեր

Մեխիկո Սիթի, Մեքսիկա

Երկնային Հոր յուրաքանչյուր որդին կամ դուստրը կհասկանա, որ իրական է Մորոնիի խոստումը. «Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ *ճշմարտությունը* բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.5; շեշտադրումն ավելացված է)։

Գերագույն ճշմարտությունը, որ ես ձեռք եմ բերել իմ կյանքում, իմ վկայությունն է Տեր Հիսուս Քրիստոսի մասին։

Ամենագլխավորը և մեր գործերի հիմքը, խարսխված հայտնություններով, Տիրոջ անունն է, որն այն իշխանությունն է, ըստ որի մենք գործում ենք Եկեղեցում։ Յուրաքանչյուր աղոթք, նույնիսկ մանուկների կողմից ասված, վերջանում է Հիսուս Քրիստոսի անունով։ Յուրաքանչյուր օրհնություն, յուրաքանչյուր արարողություն, կարգում, պաշտոնական գործողություն կատարվում է Հիսուս Քրիստոսի անունով։ Սա Նրա Եկեղեցին է, և այն անվանվել է Նրա անունով՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի (տես ՎԵՈ 115.4)։

Մորմոնի գրքում տրված է այն մեծ միջադեպը, երբ նեփիացիները «աղոթում էին Հորը [Տիրոջ] անունով»։ Տերը հայտնվեց և հարցրեց.

«Ի՞նչ եք կամենում, որ ես ձեզ տամ։

Եվ նրանք ասացին նրան. Տե՛ր, մենք կամենում ենք, որ դու ասես մեզ այն անունը, որով մենք պիտի կոչենք այս եկեղեցին. քանի որ ժողովրդի մեջ վիճաբանություններ կան այս հարցի առնչությամբ։

Եվ Տերն ասաց նրանց. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչո՞ւ պիտի ժողովուրդը տրտնջա և վիճի այս բանի պատճառով։

Մի՞թե դուք չեք կարդացել սուրբ գրքերը, որոնք ասում են՝ դուք պետք է վերցնեք ձեզ վրա Քրիստոսի անունը, որն իմ անունն է։ Քանզի այս անունով պիտի դուք կոչվեք վերջին օրը.

Եվ ով որ վերցնում է իր վրա իմ անունը և համբերում մինչև վերջ, նույնը պիտի փրկվի . . .

Հետևաբար, ինչ որ դուք անեք, դուք դա պիտի անեք իմ անունով. հետևաբար, դուք պիտի կոչեք եկեղեցին իմ անունով. և դուք պիտի կանչեք առ Հայրը իմ անունով, որպեսզի նա օրհնի եկեղեցին՝ հանուն ինձ» (3 Նեփի 27.2–7)։

Դա Նրա՛ Հիսուս Քրիստոսի անուն է, «որովհետև ուրիշ անուն էլ չկա երկնքի ներքև մարդկանց տրուած, որով կարելի լինի մեզ փրկուիլ» (Գործք 4.12)։

Եկեղեցում մենք գիտենք, թե ով է Նա. Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին։ Նա Հոր Միածինն է։ Նա սպանվեց և Նա ապրում է կրկին։ Նա մեր Բարեխոսն է Հոր մոտ։ «Հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ [մենք] պիտի կառուցենք [մեր] հիմքը» (Հելաման 5.12)։ Նա այն խարիսխն է, որ պահում ու պաշտպանում է մեզ և մեր ընտանիքները կյանքի փոթորիկների ժամանակ։

Յուրաքանչյուր կիրակի ողջ աշխարհում, երբ հավաքվում են տարբեր ազգությունների կամ լեզուների անդամները, հաղորդությունը օրհնվում է նույն խոսքերով։ Մենք մեզ վրա ենք վերցնում Քրիստոսի անունը և միշտ հիշում ենք Նրան։ Դա դրոշմված է մեզ վրա։

Նեփի մարգարեն հայտարարել է. «Մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին, և մենք գրում ենք մեր մարգարեությունների համաձայն, որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար» (2 Նեփի 25.26)։

Մեզանից յուրաքանչյուրը պետք է հանգի Տեր Հիսուս Քրիստոսի մասին իր անձնական վկայությանը։ Մենք այնուհետև կիսվում ենք այդ վկայությամբ մեր ընտանիքի և մյուսների հետ։

Այդ ամենում, եկեք հիշենք, որ կա հակառակորդ, ով անձնապես փորձում է խափանել Տիրոջ աշխատանքը։ Մենք պետք է ընտրենք՝ ում պետք է հետևենք։ Մեր պաշտպանությունը նույնքան պարզ է, որքան Փրկչին հետևելու անհատական որոշումը, համոզված, որ հավատարմորեն մնալու ենք Նրա կողքին։

Նոր Կտակարանում Հովհաննեսը հիշատակում է, որ եղան այնպիսիք, ովքեր չկարողացան նվիրվել Փրկչին և Նրա ուսմունքներին, և «սորանից հետո նորա աշակերտներից շատերը ետ գնացին և այլևս ման չէին գալիս նորա հետ։

Հիսուսն էլ ասեց այն տասներկուսին. Մի՞թե դուք էլ ուզում եք գնալ։

Սիմոն Պետրոսն էլ պատասխանեց նրան. Տեր ո՞ւմ մոտ գնանք. հավիտենական կյանքի խոսքերն ունիս դու։

Եվ մենք հավատացինք և ճանաչեցինք, թե դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին» (Հովհաննես 6.66–69)։

Պետրոսը ստացել էր այն, ինչը կարող է սովորել Փրկչի յուրաքանչյուր հետևորդ։ Հիսուս Քրիստոսին հավատարմորեն նվիրվելու համար մենք ընդունում ենք Նրան որպես մեր Քավիչ և մեր ուժերի ներածին չափով անում ամեն ինչ Նրա ուսմունքներով ապրելու համար։

Իմ ապրած բոլոր տարիներից հետո, երբ սովորել և ծառայել եմ, ողջ աշխարհով մեկ միլիոնավոր մղոններ ճամփորդել, իմ ձեռք բերած ողջ փորձառությունից հետո, կա մեկ մեծ ճշմարտություն, որով կուզենայի կիսվել։ Դա Տեր Հիսուս Քրիստոսի մասին իմ վկայությունն է։

Ջոզեֆ Սմիթը և Սիդնի Ռիգդոնը սուրբ փորձառությունից հետո գրել են հետևյալը.

«Եվ արդ, բազմաթիվ վկայություններից հետո, որ տրվել են նրա մասին, սա է վկայությունը, ամենավերջինը, որ մենք տալիս ենք նրա մասին. Որ, նա ապրո՛ւմ է։

Քանզի մենք տեսանք նրան» (ՎԿՈՒ 76.22–23)։

Նրանց խոսքերն իմ խոսքերն են։

Ես հավատում եմ և *ես* վստահ եմ, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ Նա ապրում է։ Նա Հոր Միածին Որդին է, և «նրանով, նրա միջոցով, և նրանից է, որ աշխարհները կան և ստեղծվել են, և դրանց բնակիչները ծնված որդիներն ու դուստրերն են Աստծո» (ՎԿՈՒ 76.24)։

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Փրկիչն ապրում է։ Ես *ճանաչում* եմ Տիրոջը։ Ես Նրա վկան եմ։ Ես գիտեմ Երկնային Հոր բոլոր զավակների համար Նրա կատարած մեծ զոհաբերության և Նրա տածած հավերժական սիրո մասին։ Ամենայն հեզությամբ, սակայն անկաշկանդ վստահությամբ, ես բերում եմ իմ հատուկ վկայությունը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

Երեց Վիլիամ Ռ. Վոքեր
Յոթանասունից

Ապրենք հավատքին հավատարիմ

Մենք բոլորս մեծապես կօրհնվենք, եթե իմանանք հավատքի և զոհաբերության պատմությունները, որոնց արդյունքում մեր նախահայրերը միացել են Տիրոջ Եկեղեցուն։

Ես սիրում եմ Եկեղեցու պատմությունը։ Թերևս ձեզանից շատերի նման իմ հավատքը կոփվում է, երբ ես սովորում եմ մեր նախահայրերի հրաշալի նվիրվածության մասին, ովքեր ընդունեցին ավետարանը և ապրեցին հավատքին հավատարիմ։

Մեկ ամիս առաջ Գիլբերտ Արիզոնա Տաճարի շրջանից 12000 հրաշալի երիտասարդներ տոնում էին իրենց նոր տաճարի կառուցման ավարտը ոգեշնչված ներկայացումով, արտահայտելով արդար ապրելու իրենց պարտավորվածությունը։ Նրանց տոնակատարության թեման էր՝ «Ապրենք հավատքին հավատարիմ»։

Արիզոնայի այդ հավատարիմ երիտասարդների պես յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ պետք է պարտավորվի «ապրել հավատքին հավատարիմ»։

Օրհներգի խոսքերն ասում են. «Հավատարիմ հավատքին, որ մեր ծնողներն են փայփայել» (“True to the Faith,” *Hymns,* no. 254)։

Մենք կարող ենք ավելացնել՝ «Հավատարիմ հավատքին, որ մեր պապիկներն ու տատիկներն են փայփայել»։

Ինձ հետաքրքիր է, թե արդյո՞ք Արիզոնայի այդ խանդավառ երիտասարդները գիտեին Եկեղեցու *իրենց* անձնական պատմությունը, արդյո՞ք գիտեին ինչպես է իրենց ընտանիքը միացել Եկեղեցուն։ Հրաշալի կլիներ, եթե Վերջին Օրերի յուրաքանչյուր Սուրբ իմանար իր նախահայրերի դարձի պատմությունը։

Անկախ նրանից, դուք հանդիսանում եք պիոներների հետնորդ, թե ոչ, մորմոն պիոներների հավատքի և զոհաբերության ժառանգությունը ձեր ժառանգությունն է։ Դա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ազնվազարմ ժառանգությունն է։

Եկեղեցու պատմության ամենահրաշալի գլուխներից մեկը գրվեց, երբ 1840 թվին, Եկեղեցու կազմավորումից 10 տարի անց, Տիրոջ Առաքյալ Վիլֆորդ Վուդրուֆը Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանն էր ուսուցանում Մեծ Բրիտանիայում։

Վիլֆորդ Վուդրուֆը և մյուս Առաքյալները իրենց աշխատանքը

կենտրոնացրել էին Անգլիայի Լիվերպուլ և Պրեստոն տարածքներում, զգալի հաջողությունների հասնելով: Երեց Վուդրուֆը, ով ավելի ուշ դարձավ Եկեղեցու Նախագահ, մշտապես աղոթում էր Աստծուն, որ ուղղորդի իրեն այդ շատ կարևոր գործում: Նրա աղոթքները իրեն ոգեշնչեցին ավետարանն ուսուցանելու համար գնալ մեկ այլ վայր:

Նախագահ Մոնսոնն ուսուցանել է, որ երբ մենք երկնային ոգեշնչում ենք ստանում ինչ-որ բան անելու համար, մենք անում ենք անհապաղ, և չենք հետաձգում: Հենց այդպես վարվեց Վիլֆորդ Վուդրուֆը: «Հարավ գնալու» համար Հոգու կողմից հստակ հրահանգ ստանալով, Երեց Վուդրուֆը անմիջապես ճանապարհ ընկավ դեպի Հիերֆորդշայր, որն Անգլիայի գյուղատնտեսական շրջան է: Այնտեղ նա հանդիպեց Ջոն Բենբոու անունով մի հաջողակ ֆերմերի, որտեղ նրան ընդունեցին «ուրախ սրտով և գոհաբանությամբ» (Wilford Woodruff, in Matthias F. Cowley, *Wilford Woodruff: History of His Life and Labors as Recorded in His Daily Journals* [1909], 117):

Ավելի քան 600 հոգուց բաղկացած խումբը, ովքեր իրենց կոչում էին Միացյալ Եղբայրներ, «աղոթել էին լույսի և ճշմարտության համար» (Wilford Woodruff, in *Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* [2004], 91): Տերն ուղարկեց Վիլֆորդ Վուդրուֆին որպես նրանց աղոթքների պատասխան:

Երեց Վուդրուֆի քարոզն անմիջապես իր պտուղները բերեց, և շատերը մկրտվեցին: Բրիգամ Յանգը և Վիլլարդ Ռիչարդսը միացան նրան Հիերֆորդշայրում, և երեք Առաքյալները մեծ հաջողություն ունեցան:

Արդեն մի քանի ամսից նրանք 33 ճյուղ կազմակերպեցին Եկեղեցուն միացած 541 անդամների համար: Նրանց հրաշալի աշխատանքը շարունակվեց և, ի վերջո, Միացյալ Եղբայրներից գրեթե բոլորը մկրտվեցին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում:

Իմ նախա-նախա-տատիկը՝ Հաննա Մարիա Իգլս Հարիսն առաջիններից մեկն էր, որ ունկնդրեց Վիլֆորդ Վուդրուֆին: Նա տեղեկացրեց իր ամուսնուն՝ Ռոբերտ Հարիս ըտ.-ին, որ լսել էր Աստծո խոսքը և ցանկանում էր մկրտվել: Ռոբերտին ուրախություն չպատճառեցին կնոջ խոսքերը: Նա ասաց, որ կնոջ հետ ներկա կգտնվի մորմոն միսիոների հաջորդ քարոզին և կուղղի նրան:

Նա նստեց հավաքատան առաջին շարքում՝ խիստ վճռական, որ ոչ մի ազդեցության տակ չի ընկնելու, և, հնարավոր է, պատրաստ դիտողություններ անելու հյուրընկալված քարոզչին, բայց Ռոբերտն անմիջապես ներգործվեց Հոգու կողմից, ճիշտ ինչպես իր կինը: Նա հասկացավ, որ Վերականգնման ուղերձը ճշմարիտ էր, և կնոջ հետ նրանք մկրտվեցին:

Նրանց հավատքի և նվիրվածության պատմությունը նման է հազարավոր մարդկանց պատմությանը. երբ լսեցին ավետարանի ուղերձը, նրանք գիտեին, որ այն ճշմարիտ է:

Ինչպես Տերն է ասում. «Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, և ես ճանաչում են նորանց, և իմ ետևից գալիս են» (Հովհաննես 10.27):

Լսելով Հովվի ձայնը, նրանք ամբողջովին իրենց կյանքը նվիրեցին ավետարանով ապրելուն և Տիրոջ մարգարեի հրահանգներին հետևելուն: Արձագանքելով Սիոնում հավաքվելու կոչին, նրանք թողեցին իրենց տունն Անգլիայում, հատեցին Ատլանտյան օվկիանոսը և հավաքվեցին Սրբերով Նավույում, Իլլինոյս:

Նրանք ողջ սրտով ընդունեցին ավետարանը: Մինչ փորձում էին հաստատվել իրենց նոր երկրում, նրանք օգնեցին Նավույի տաճարի կառուցմանը՝ տասանորդ տալով իրենց աշխատանքով, այսինքն՝ յուրաքանչյուր 10-րդ օրը աշխատում էին տաճարի շինարարության վրա:

Նրանք սրտի ցավով ընդունեցին իրենց սիրելի Մարգարե Ջոզեֆ Սմիթի և նրա եղբոր Հայրումի մահվան լուրը: Բայց անսանան առաջ գնացին: Նրանք հավատարիմ մնացին հավատքին:

Երբ Սրբերին հալածում և քշում էին Նավույից, Ռոբերտն ու Մարիան մեծապես օրհնված էին իրենց զգում, որ ստացել էին տաճարային օժտումները, նախքան կհատեին Միսիսիպի գետը և կշարժվեին դեպի արևմուտք: Թեպետ նրանց ապագան անորոշ էր թվում, նրանք վստահ էին իրենց հավատքի և վկայությունների մեջ:

Վեց երեխաների հետ նրանք հազիվհազ շարժվելով ցեխի միջով անցան Այովան: Նրանք իրենց համար մի ապաստան սարքեցին Միսսուրի գետի ափին, որը հայտնի դարձավ որպես Վինթեր Քուորթերս:

Այդ քաջարի պիոներները սպասում էին առաքելական հրահանգի, թե ինչպես և երբ կարող էին շարժվել դեպի արևմուտք: Բոլորի ծրագրերը փոխվեցին, երբ Տասներկուսի Քվորումի Նախագահ Բրիգամ Յանգը տղամարդկանց կոչ արեց կամավոր ծառայել Միացյալ Նահանգների բանակում, որը հայտնի դարձավ որպես մորմոնական գումարտակ:

Ռոբերտ Հարիս Կրտ-ը 500 մորմոն պիոներների թվին էր պատկանում, ովքեր արձագանքեցին Բրիգամ Յանգի այդ կոչին: Նա զինվորագրվեց, չնայած որ դա նշանակում էր գաղթի ճանապարհին թողնել իր հղի կնոջը վեց երեխաների հետ միասին:

Ինչո՞ւ նա և մյուս տղամարդիկ արեցին դա:

Պատասխանը կարող ենք գտնել իմ նախա-նախա-պապիկի խոսքերում: Նամակում, որը նա գրել էր իր կնոջը, երբ գումարտակը շարժվում էր դեպի Սանտաֆե, նա գրել է. «Իմ հավատքը առավել քան երբևէ ամուր է [և երբ մտածում եմ այն ամենի մասին, ինչ Բրիգամ Յանգն ասել է մեզ, ես հավատում եմ դրան այնպես, ասես դա Մեծ Աստվածն է ինձ ասել»:

Այսինքն, նա գիտեր, որ լսում էր Աստծո մարգարեին, ինչպեսև՛ մյուս տղամարդիկ: Այդ պատճառով նրանք արեցին դա: Նրանք գիտեին, որ առաջնորդվում են Աստծո մարգարեի կողմից:

Այդ նույն նամակով նա իր քնքուշ զգացմունքներն էր հայտնում իր

կնոջն ու զավակներին և մշտապես աղոթում, որ կինն ու երեխաները օրհնվեին:

Ավելի ուշ այդ նամակում նա զորավոր խոսքեր է ասում. «Մենք չպետք է մոռանանք այն ամենը, ինչ դու և ես լսել և [զգացել] ենք Տիրոջ Տաճարում»:

Իր նախկին վկայության հետ միասին, որ «մենք ղեկավարվում ենք Աստծո մարգարեի կողմից», այդ երկու սուրբ հորդորներն ասես սուրբ գրություն են դարձել ինձ համար:

Գումարտակի հետ մեկնելուց տասնութ ամիս անց Ռոբերտ Հարիսն ապահով վերադարձավ իր սիրելի Մարիայի մոտ: Իրենց ողջ կյանքի ընթացքում նրանք հավատարիմ և նվիրված մնացին վերականգնված ավետարանին: Նրանք ունեցան 15 զավակ, որոնցից 13-ը ապրեցին մինչև ծերություն: Իմ տատիկը՝ Ֆանի Վոքերը Ալբերտայի Ռեյմոնդից, Կանադա, նրանց 136 թոռներից մեկն էր:

Վոքեր տատիկը հպարտ էր, որ *իր* պապիկը ծառայել էր մորմոնական գումարտակում, և նա ուզում էր, որ իր բոլոր թոռներն իմանային այդ մասին: Այժմ, երբ ես արդեն պապիկ եմ, հասկանում եմ, թե ինչու էր դա այդքան կարևոր նրա համար: Նա ուզում էր զավակների սրտերը դարձնել դեպի իրենց հայրերը: Նա ուզում էր, որ իր թոռներն իմանային իրենց արդար ժառանգության մասին, քանի որ համոզված էր, որ դա կօրհներ նրանց կյանքը:

Որքան ավելի մեզ կապված զգանք մեր արդարակյաց նախահայրերին, այնքան ավելի իմաստուն և արդար որոշումներ կկայացնենք:

Եվ դա այդպես է: Մենք բոլորս մեծապես կօրհնվենք, եթե իմանանք հավատքի և զոհաբերության պատմությունները, որոնց արդյունքում մեր նախահայրերը միացել են Տիրոջ Եկեղեցուն:

Առաջին անգամ Ռոբերտն ու Մարիան, լսելով Վիլֆորդ Վուդրուֆի քարոզը և Վերականգնված ավետարանի մասին նրա վկայությունը, իմացան, որ ավետարանը ճշմարիտ է:

Նրանք նաև գիտեին, որ փորձությունների կամ դժվարությունների պահին իրենք կօրհնվեն, եթե հավատարիմ մնան հավատքին: Կարծես, նրանք լսել էին մեր այսօրվա

մարգարեի խոսքերը, ով ասել է. «Ոչ մի զոհաբերություն այդքան մեծ չէ . . . տաճարային օրհնությունները ստանալու համար» (Թոմաս Ս. Մոնսոն, «Սուրբ Տաճարը՝ լույս աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2011, 92)։

Միացյալ Թագավորության երկու ֆունտանոց դրամի եզրին գրված է. «Կանգնած հսկաների ուսերին»։ Մեր հրաշալի պիոներ նախահայրերի մասին մտածելիս ինձ զգում եմ, կարծես, *բոլորս* կանգնած ենք հսկաների ուսերին։

Չնայած որ Ռոբերտ Հարիսի նամակով է գալիս հորդորը, ես հավատում եմ, որ բազմաթիվ նախահայրեր կուղարկեին այդ նույն ուղերձն իրենց զավակներին և թոռներին. նախ, մենք չպետք է մոռանանք տաճարում ունեցած մեր զգացողությունները, և մենք չպետք է մոռանանք խոստումներն ու օրհնությունները, որ գալիս են մեզանից յուրաքանչյուրին տաճարի շնորհիվ։ Երկրորդը, մենք չպետք է մոռանանք, որ ղեկավարվում ենք Աստծո մարգարեի կողմից։

Ես վկայում եմ, որ մենք ղեկավարվում *ենք* Աստծո մարգարեի կողմից։ Տերը վերջին օրերին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնեց Իր Եկեղեցին, և մենք չպետք է մոռանանք, որ ղեկավարվում ենք Աստծո մարգարեների անխախտ շղթայով՝ Ջոզեֆից Բրիգամ և հաջորդող Եկեղեցու մյուս Նախագահները մինչև մեր այսօրվա մարգարե Թոմաս Ս. Մոնսոնը։ Ես գիտեմ նրան, ես հարգում և սիրում եմ նրան։ Ես վկայում եմ, որ նա այսօր Տիրոջ մարգարեն է երկրի վրա։

Իմ սրտի իղձն է, որ իմ զավակների և թոռների հետ միասին մենք պատվենք ժառանգությունը մեր արդար նախահայրերի, այն հավատարիմ Մորմոն պիոներների, ովքեր պատրաստակամ էին ամեն ինչ դնելու զոհասեղանին, զոհաբերություններ կատարելու և պաշտպանելու իրենց Աստծուն և իրենց հավատքը։ Ես աղոթում եմ, որ մեզանից յուրաքանչյուրն ապրի հավատարիմ հավատքին, որ մեր ծնողներն են փայփայել։ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն։ ■

Երեց Լ. Թոմ Փերի
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հնազանդություն՝ մեր հավատարմությամբ

Հնազանդությունը խորհրդանշում է մեր հավատքը բարձրյալի իշխանության, այսինքն՝ Աստծո իմաստության և զորության հանդեպ։

Ընտանեկան երեկոները, որոնք Քույր Փերին և ես անց էինք կացնում ամեն երկուշաբթի երեկոյան, հանկարծ ընդլայնվեցին։ Մեր բնակարանային համալիր էին տեղափոխվել ապրելու իմ եղբայրը, նրա դուստրը, Բարբարայի եղբայրը, քրոջ դուստրը և ամուսինը։ Մանկությունից հետո, դա միակ ժամանակն էր, որ ես օրհնվել էի հարազատների ընտանիքներին մոտ ապրելով։ Երբ փոքր էի, մեր ընտանիքն ապրում էր մայրիկիս մեծ ընտանիքի որոշ անդամների հետ նույն թաղամասում։ Սոնի պապիկիս տունը մեր տան կողքին էր հյուսիսային կողմից, Էմմա մորաքրոջս տունը՝ հարավային կողմից։ Մեր թաղամասի հարավային մասում էր ապրում մորաքույր Ջոզեֆինը, իսկ արևելյան մասում՝ քեռի Ալման։

Պատանեկության տարիներին մենք ամեն օր շփվում էինք մեր մեծ ընտանիքի անդամների հետ և կիսում միասին աշխատելու, խաղալու և այցելելու պահերը։ Մեր չարաճճիությունների մասին լուրը շատ արագ հասնում էր մեր մայրերին։ Այժմ մեր աշխարհն այլ է, շատ ընտանիքների անդամները հիմնականում սփռված են ապրում։ Անգամ միմյանց ինչ-որ չափով մոտ ապրելիս, հաճախ չէ, որ հարևանությամբ են բնակվում։ Թերևս, պետք է ընդունեմ, որ իմ պատանեկության տարիները և իմ ներկա իրավիճակը մի փոքր նման են դրախտին, երբ ընտանիքի սիրելի անդամները միմյանց մոտ են ապրում։ Դա ինձ մշտապես հիշեցնում է ընտանիքի հավերժական բնույթը։

Երբ մեծացա, հատկապես կապված էի պապիկիս հետ։ Լինելով ընտանիքի ավագ որդին, ես ձմռանը մաքրում էի մեր տան, պապիկիս և երկու մորաքույրներիս տների բակի ձյունը, իսկ ամռանը՝ կտրում էի խոտածածկը։ Պապիկս սովորաբար նստում էր պատշգամբում, երբ ես խոտն էի կտրում։ Ավարտելուց հետո ես նստում էի տան աստիճաններին և զրուցում նրա հետ։ Այդ պահերն ինձ համար թանկագին հիշողություններ են։

Մի օր ես հարցրեցի պապիկիս, թե ինչպես կարող եմ իմանալ, որ միշտ ճիշտ քայլ եմ կատարում, երբ կյանքը բազմաթիվ ընտրություններ է դնում իմ առաջ։ Ինչպես միշտ

պապիկս պատասխանեց ինձ իր գյուղական կյանքի փորձից ելնելով:

Նա ուսուցանեց ինձ, որ ձիերին զույգերով են վարժեցնում, որպեսզի նրանք միասին աշխատեն: Նա բացատրեց, որ ձիերի թիմը պետք է միշտ իմանա, թե ով է պատասխանատու: Ձիուն ղեկավարելու և ուղղորդելու գործում կարևոր դեր են խաղում լծասարքը և սանձը: Եթե լծված ձիերից մեկը երբևէ հավատա, որ կառապանին հնազանդվելու կարիքը չկա, ձիերը երբեք միասին չեն քաշի և չեն աշխատի իրենց ուժի առավելագույն չափով:

Այժմ, եկեք քննենք դասը, որ պապիկս սովորեցրեց ինձ այս օրինակի միջոցով: Ո՞վ է ձիերի կառապանը: Պապիկս հավատում էր, որ դա Տերն է: Նա ունի նպատակ և ծրագիր: Նա նաև ձիերը, ինչպես նաև յուրաքանչյուր ձին վարժեցնողը և լծողն է: Կառապանը լավ գիտի՝ որպեսզի ձին իմանա, որ միշտ ճիշտ ուղով է գնում, պետք է հնազանդ լինի և կառապանի ուղղորդմանը հետևի:

Ի՞նչն էր պապիկս համեմատում լծասարքի ու սանձի հետ: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ հավատում եմ, որ պապիկս ուսուցանում էր ինձ հետևել Սուրբ Հոգու հուշումներին: Նրա համար լծասարքն ու սանձը հոգևոր իմաստ ունեին: Լավ վարժեցված թիմի մաս կազմող հնազանդ ձիուն կառապանի կողմից թեթևակի սանձվելուց բացի ավելին է պետք, որպեսզի ճշգրտորեն անի այն, ինչ նա է ուզում: Թեթևակի սանձումը համարժեք է մեղմ, հանդարտ ձայնին, որով մեզ հետ խոսում է Տերը: Մեր ազատ կամքի հանդեպ հարգանքից ելնելով այն երբեք չի լինում խիստ, ուժեղ:

Տղամարդիկ և կանայք, ովքեր անտեսում են Հոգու մեղմ հուշումները, անառակ որդու պես հաճախ կսովորեն հնազանդության և շվայտ ապրելակերպի բնական հետևանքներից: Միայն բնական հետևանքները խոնարհեցրին անառակ որդուն, և նա սթափվելով լսեց իր հայրական տուն վերադառնալու մասին Հոգու հուշումները (տես Ղուկաս 15.11–32):

Դասը, որ պապիկս սովորեցրեց ինձ, այն էր, որ պետք է միշտ Հոգու մեղմ հուշումները ստանալուն պատրաստ լինել: Նա ուսուցանեց ինձ, որ ես միշտ կստանամ նման հուշում, եթե երբևէ ուղուց շեղվեմ: Եվ ես երբեք լուրջ սխալներ չեմ գործի, եթե թույլ տամ, որ Հոգին ուղղորդի ինձ որոշումներ կայացնելիս:

Ինչպես Հակոբոս 3.3-ում է ասվում. «Տես ձիերի բերանը սանձ ենք դնում, որ նրանք հնազանդեն մեզ, և նրանց բոլոր մարմինը կառավարում ենք»:

Մենք պետք է զգայուն լինենք մեր հոգևոր սանձերի հանդեպ: Անգամ Վարդապետի կողմից «սանձի թեթևակի ձգումից», մենք պետք է պատրաստակամ լինենք լիովին փոխելու մեր ընթացքը: Կյանքում հաջողության հասնելու համար մենք պետք է ուսուցանենք մեր հոգուն և մարմնին միասին աշխատել՝ ի հնազանդություն Աստծո պատվիրանների: Եթե մենք ուշադրություն դարձնենք Սուրբ Հոգու մեղմ հուշումներին, դրանք կարող են միավորել մեր հոգիները և մարմինները նպատակով, առաջնորդելով մեզ դեպի մեր հավերժական տուն՝ ապրելու մեր հավերժական Երկնային Հոր հետ:

Մեր հավատո երրորդ հանգանակն ուսուցանում է մեզ հնազանդության կարևորության մասին. «Մենք հավատում ենք, որ Քրիստոսի Քավությամբ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին»:

Պապիկիս նկարագրած ձիերի օրինակում այդպիսի հնազանդությունը նաև պահանջում է հատուկ վստահություն, որը՝ բացարձակ հավատքն է կառապանի հանդեպ: Ուստի դասը, որ պապիկս

ուսուցանեց ինձ, ակնարկում էր ավետարանի առաջին սկզբունքը, որն է՝ հավատք առ Հիսուս Քրիստոս:

Պողոս Առաքյալն ուսուցանել է. «Հավատքը հուսացած բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է» (Եբրայեցիս 11.1): Այնուհետև հավատքի մասին ուսուցանելու համար Պողոսն օգտագործում է Աբելի, Ենովքի, Նոյի և Աբրահամի օրինակները: Նա անդրադառնում է Աբրահամի պատմությանը, քանի որ Աբրահամը հավատարիմների հայրն է:

«Հավատքով Աբրահամը երբոր կանչուեցավ հնազանդ եղավ դուրս գնալու այն տեղ, որ ժառանգության համար ստանալու էր. և դուրս եկավ գնաց առանց գիտենալու, թե ուր է գնում:

Հավատքով պանդուխտ եղավ ավետիքի երկրումն իբր օտարությունում. . . .

Հավատքով Սառան ինքն էլ սերմն առնելու զորություն ընդունեց. և տարաժամ հասակի մեջ որդի ծնեց. որովհետև հավատարիմ համարեց խոստացողին» (Եբրայեցիս 11.8–9, 11):

Մենք գիտենք, որ Աբրահամի և Սառայի որդի՝ Իսահակի միջոցով խոստում տրվեց Աբրահամին, որ նրա սերունդը կլինի՝ «ինչպես երկնքի աստղերը և ինչպես անհամար ավազը ծովի ափի մոտ» (տես հատված 12 12; տես նաև Ծննդոց 17.15–16): Իսկ այնուհետև Աբրահամի հավատքը փորձվեց մեզանից շատերի համար անելևակայելի ձևով:

Ես բազում առիթներով խորհրդածել եմ Աբրահամի և Իսահակի պատմության շուրջ, և դեռևս չեմ հավատում, որ լիովին ընկալում եմ Աբրահամի հավատարմությունն ու հնազանդությունը: Թերևս կարող եմ պատկերացնել, ինչպես է նա հավատարմորեն պատրաստություններ տեսել, որպեսզի վաղ առավոտյան ճանապարհ ընկնի, սակայն ինչպես էր նա այդ բոլոր քայլերը ձեռնարկում իր որդու Իսահակի հետ, երեք օրից ավելի ճամփորդելով դեպի Մորիա սարի ստորոտ: Ինչպե՞ս էին նրանք խարույկի համար փայտը սարն ի վեր բարձրացնում: Ինչպե՞ս նա զոհասեղան պատրաստեց: Ինչպե՞ս Իսահակին կապեց և դրեց զոհասեղանի վրա: Ինչպե՞ս բացատրեց նրան, որ նա պետք է պատարագ լիներ: Եվ ինչպե՞ս նա ուժ գտավ բարձրացնելու դանակը, որ սպանի իր որդուն: Աբրահամի հավատքն ուժ տվեց իրեն, որ ճշգրտորեն հետևի Աստծո առաջնորդությանը մինչև այն հրաշալի պահը, երբ հրեշտակը կանչեց երկնքից Աբրահամին՝ հայտնելով, որ նա անցավ իր տառապալից փորձությունը: Այնուհետև Տիրոջ հրեշտակը կրկնեց Աբրահամյան ուխտի խոստումը:

Ես հասկանում եմ, որ մարտահրավերներ են ծառանում առ Հիսուս Քրիստոս հավատք ունենալիս, իսկ հնազանդ լինելն առավել դժվար է ոմանց համար: Ես կյանքի փորձից ելնելով կարող եմ ասել, որ չնայած ձիերն իրենց անհատականությամբ կարող են տարբեր լինել, այդ իսկ պատճառով որոշ ձիերի հեշտ կամ դժվար կլինի վարժեցնելը, սակայն մարդկանց մեջ տարբերությունները շատ ավելի մեծ են: Մեզանից յուրաքանչյուրն Աստծո որդին կամ դուստրն է, և մեզանից յուրաքանչյուրը նախաերկրային և մահկանացու եզակի պատմություն ունի: Ուստիև, չեն կարող լինել միանման լուծումներ տարբեր իրավիճակների համար: Այսպիսով, ես ընդունում եմ փորձվելու և սխալվելու կյանքի բնույթը, և՝ ամենակարևորը, ավետարանի երկրորդ սկզբունքի, այսինքն՝ ապաշխարության մշտական կարիքը:

Ճիշտ է, պապիկիս ժամանակներն ավելի հանգիստ ժամանակներ էին, հատկապես ճիշտը սխալից տարբերելու առումով: Գուցե կրթված և խորաթափանց մարդիկ հավատան, որ մեր ավելի բարդ ժամանակները պահանջում են թերևս ավելի բարդ լուծումներ, ինչևէ ես այդքան էլ չեմ ընդունում, որ նրանք ճիշտ են: Փոխարենը, ես հավատում եմ, որ այսօրվա բարդությունը պահանջում է ավելի մեծ պարզություն, ինչպիսին պապիկիս պատասխանն էր ճիշտը սխալից տարբերելու իմ անկեղծ հարցին: Ես գիտեմ, որ այսօր իմ առաջարկը մի պարզ բանաձև է, բայց կարող եմ վկայել, թե որքան լավ է աշխատում այն իմ կյանքում: Ես առաջարկում եմ ձեզ և անգամ կոչ եմ անում փորձարկել իմ խոսքերը, և այդ դեպքում խոստանում եմ, որ դրանք կհստակեցնեն ընտրության գործընթացը, երբ ձեր գլխին թափվեն բազում ընտրություններ, և դրանք կհանգեցնեն հարցերի պարզ պատասխանների, որոնք

կշփոթեցնեն ուսյալին և իրենց իմաստուն համարողներին:

Շատ հաճախ մտածում ենք, որ հնազանդվել նշանակում է հեզ ու առանց մտածելու ենթարկվել ավելի բարձր դիրք ունեցող մարմնի հրամանին կամ կարգադրություններին: Ի դեպ, իր լավագույն դրսևորումներով, հնազանդությունը ներկայացնում է մեր հավատքը բարձրյալի իշխանության, այսինքն՝ Աստծո իմաստության և զորության հանդեպ: Երբ Աբրահամն առ Աստված իր անսասան հավատքը և հնազանդությունը դրսևորեց, անգամ երբ նրան պատվիրվել էր զոհաբերել իր որդուն, Աստված փրկեց նրան: Նմանապես, երբ հնազանդորեն մեր հավատարմությունը դրսևորենք, Աստված, ի վերջո, կփրկի մեզ:

Ոմանք ապավինում են լոկ իրենք իրենց և հետամուտ լինում միայն իրենց ցանկություններին և ինքնակառավարվող հակումներին, շատ սահմանափակ են, համեմատած նրանց հետ, ովքեր հետևում են Աստծուն և օգտվում Նրա իմաստությունից, զորությունից և պարգևներից: Ասում են, որ ով մտահոգվում է միայն իր համար, շատ փոքրոգի մարդ է: Ամուր, գործուն հնազանդությունը ամենևին էլ թույլ կամ պասսիվ չէ: Դրանով մենք արտահայտնում ենք մեր հավատքն առ Աստված և արժանանում երկնային զորությունների օգնությանը: Հնազանդությունը ընտրություն է: Դա ընտրություն է մեր անձնական սահմանափակ գիտելիքի ու զորության և Աստծո անսահման իմաստության ու ամենազորության միջև: Ըստ պապիկիս ուսուցանած դասի դա հոգևոր հուշումը զգալու և Տիրոջ առաջնորդությանը հետևելու ընտրությունն է:

Թող որ մեր հավատարմությամբ և վերականգնված ավետարանի արարողությունները ստանալու միջոցով մենք դառնանք Աբրահամի ուխտի և սերնդի ժառանգները: Ես խոստանում եմ ձեզ, որ հավերժական կյանքի օրհնությունները հասու են բոլոր հավատարիմներին և հնազանդներին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Լորենս Ի. Քորբրիջ
Յոթանասունից

Մարգարե Ջոզեֆ Սմիթը

Հայտնությունը, որ հեղեղի նման թափվեց Ջոզեֆ Սմիթի վրա, հաստատում է, որ նա Աստծո մարգարեն էր:

Առաջին Տեսիլքը

Մի երիտասարդ տղա կարդում է Աստվածաշունչը և նրա աչքերը կանգ են առնում սուրբ գրության մի հատվածի վրա: Այդ պահը փոխում է աշխարհը:

Նա մեծ ցանկություն ունի իմանալու, թե որ եկեղեցին կարող է տանել իրեն դեպի ճշմարտությունը և փրկությունը: Նա փորձել է գրեթե ամեն-ինչ, և այժմ դիմում է Աստվածաշնչին և կարդում է այս խոսքերը. «Բայց եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կ'տրուի նորան»:[1]

Նա խորհում է դրանց շուրջ կրկին ու կրկին անգամ: Լույսի առաջին նշույլը թափանցում է խավարի մեջ: Արդյո՞ք սա պատասխանն է, շփոթությունից և խավարից դուրս գալու ճանապարհը: Կարո՞ղ է դա այսքան պարզ լինել: Հարցնե՞լ Աստծուն և Նա կպատասխանի: Ի վերջո, նա որոշեց, որ կամ պետք է հարցնի Աստծուն, կամ ընդմիշտ մնա խավարի և շփոթության մեջ:

Սակայն, թեև շատ անհամբեր է, նա չի վազում մի խաղաղ անկյուն գտնելու կամ շտապում արագ աղոթք ասել: Նա միայն 14 տարեկան է, սակայն իմանալու անհամբերության հետ հանդերձ նա չի շտապում: Դա չպետք է լինի հասարակ աղոթք: Նա որոշում է, թե ուր պետք է գնա և երբ պետք է կատարի այդ փորձը: Նա պատրաստվում է խոսել Աստծո հետ:

Եվ, ահա, օրը գալիս է: Դա սքանչելի և պայծառ մի առավոտ է, 1820թ. վաղ գարնանը:[2]

Նա միայնակ գնում է մոտակա անտառը՝ խաղաղ մի վայր, ուր ծառերն աշտարակի նման վեր են խոյանում նրա գլխավերևում: Նա հասնում է այն տեղը, որտեղ որոշել էր գնալ: Նա ծնկի է իջնում և արտահայտում իր սրտի ցանկությունները:

Նկարագրելով այն, ինչ հետո տեղի է ունենում, նա ասում է.

«Իմ գլխավերևում ես տեսաբ արևի պայծառությունը գերազանցող լույսի մի սյուն, որն աստիճանաբար իջնում էր ցած, մինչև որ ընկավ ինձ վրա:

. . . Երբ լույսը հանգչեց ինձ վրա, ես տեսա երկու Անձնավորություն, ինձանից վեր՝ օդի մեջ կանգնած, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. *Սա է Իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան»:*[3]

Միայն 24 տարի անց Ջոզեֆ Սմիթը և նրա եղբայր Հարումը կզոհվեն նրա հետևանքով, ինչը սկիզբ առավ այստեղ:

Ընդդիմություն

Ջոզեֆն ասաց, որ երբ 17 տարեկան էր, հրեշտակն ասաց իրեն, որ իր «անունը՝ որպես բարի և չար, կիմացվի բոլոր ազգերի, . . . բոլոր ժողովուրդների մեջ»:[4] Այս զարմանալի մարգարեությունը շարունակվում է կատարվել այսօր՝ աշխարհով մեկ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու տարածման միջոցով:

Ընդդիմությունը, քննադատությունը և հակադրությունը ճշմարտության ուղեկիցներն են: Երբ ճշմարտությունը հայտնի է դարձվում մարդու նպատակի և ճակատագրի համար, միշտ հայտնվում է դրան հակադիր ուժը: Էդեմի պարտեզում Ադամից և Եվայից սկսած մինչև Քրիստոսի ծառայությունը և մեր օրերը միշտ եղել են և կլինեն կյանքի ծրագիրը խեղաթյուրելու, դրան խանգարելու, ընդդիմանալու և ճնշելու ջանքեր:

Նայեք խավարի ամենամեծ ամպին, որ կախված է այն ամբողջ կեղտի վրա, որը նետվեց Նրա վրա, ում ընդդիմացան, ում փորձեցին և մերժեցին, ծեծեցին, լքեցին և խաչեցին, Նրան, ով իջավ բոլոր բաներից ցած, և այդտեղ դուք կգտնեք ճշմարտությունը՝ Աստծո Որդուն՝ ողջ մարդկության Փրկչին: Ինչո՞ւ Նրան հանգիստ չթողեցին:

Ինչո՞ւ: Որովհետև Նա ճշմարտություն է, իսկ ճշմարտությանը միշտ ընդդիմանալու են:

Ապա նայեք, թե ով առաջ բերեց Հիսուս Քրիստոսի մասին ևս մեկ վկայություն և մեկ այլ սուրբ գրություն, նայեք, թե ով գործիք դարձավ, որի միջոցով Քրիստոսի Եկեղեցու և ավետարանի լրիվությունը վերականգնվեցին երկրի վրա, նայեք և ակնկալեք տեսնել շուրջը պարուրող կեղտը: Ինչո՞ւ նրան հանգիստ չթողնել:

Ինչո՞ւ: Որովհետև Նա ուսուցանեց ճշմարտությունը, իսկ ճշմարտությանը միշտ ընդդիմանալու են:

Հայտնության հեղեղը

Հայտնությունը, որ հեղեղի նման թափվեց Ջոզեֆ Սմիթի վրա, հաստատում է, որ նա Աստծո մարգարեն էր: Եկեք դիտարկենք

մի քանիսը, տեսնենք այն լույսը և ճշմարտությունը, որ հայտնի դարձվեցին նրա միջոցով, և որոնք ցնցող տարբերությամբ շողում են իր և մեր օրերի տարածված համոզմունքներին համեմատ:

- Աստված անձնավորված, վեհացած էակ է, Հավերժական Հայր: Նա մեր Հայրն է:
- Հայր Աստված, Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին առանձին էակներ են:[5]
- Դուք ավելին եք, քան պարզապես մարդկային էակ: Դուք Աստծո՝ Հավերժական Հոր զավակն եք և կարող եք դառնալ Նրա նման,[6] եթե հավատք ունենաք Նրա Որդու հանդեպ, ապաշխարեք, ստանաք արարողություններ, ստանաք Սուրբ Հոգին և դիմանաք մինչև վերջ:[7]
- Հիսուս Քրիստոսի Եկեղեցին այսօր հիմնովին նույն Եկեղեցին է, որը Նա ստեղծեց Իր երկրային ծառայության ժամանակ՝ մարգարեներով և առաքյալներով, Մելքիսեդեկով և Ղևտացի Քահանայությամբ, երեցներով, քահանայապետերով, սարկավագներով, ուսուցիչներով, եպիսկոպոսներով և յոթանասունականներով, ինչպես նկարագրված է Աստվածաշնչում:
- Քահանայության իշխանությունը վերցվեց երկրի վրայից Փրկչի և Նրա Առաքյալների մահից հետո, և կրկին վերականգնվեց մեր օրերում:
- Հայտնությունը չի դադարել տրվել, և երկինքները չեն փակվել: Աստված խոսում է մարգարեների հետ այսօր և կխոսի նաև ձեր և իմ հետ:[8]
- Կա ավելին այս կյանքից հետո, քան միայն դրախտը և դժոխքը: Կան փառքի աստիճաններ, և մեծ նշանակություն ունի այն, թե ինչ ենք մենք անում այս կյանքում:[9]
- Քրիստոսին պասիվ հավատալու փոխարեն մենք պետք է «նայենք Նրան մեր բոլոր մտորումներում»,[10] «անենք այդ ամենը Որդու անունով»,[11] և «միշտ հիշել նրան և պահել նրա պատվիրանները, . . . որպեսզի նրա Հոգին միշտ» մեզ հետ ունենանք:[12]
- Միլիարդավոր մարդիկ, ովքեր ապրում և մահանում են առանց ավետարանի և փրկության համար անհրաժեշտ արարողությունների, կորած չեն: Քրիստոսի Քավության միջոցով ամբողջ մարդկությունը «կարող է փրկվել, հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին»,[13] որոնք սպասավորում են և կենդանի, և մահացած մարդկանց:[14]
- Ամեն ինչ չի սկսվում ծնունդով: Դուք ապրել եք Աստծո ներկայության մեջ որպես Նրա որդի կամ դուստր և պատրաստվել մահկանացու կյանքի համար:[15]
- Ամուսնությունը և ընտանիքը մահով ավարտվող մարդկային կապեր չեն: Դրանք ստեղծված են լինելու հավերժական ուխտեր, որոնք մենք կապում ենք Աստծո հետ: Ընտանիքը երկնքի ապրելաձևն է:[16]

Եվ սա միայն մի մասն է այն հայտնությունների, որ թափվեցին Ջոզեֆ Սմիթի վրա: Որտեղի՞ց այդ բոլորն եկավ. հայտնություններ, որոնք լույս տվեցին խավարին, պարզություն՝ կասկածին, ոգեշնչեցին, օրհնեցին և կատարելագործեցին միլիոնավոր մարդկանց: Ո՞րն է ավելի հավանական. որ նա հնարել է այդ ամենը, թե՞ որ ունեցել է երկնքի օգնությունը: Սուրբ գրությունները, որոնք նա գրի առավ, նման են մարդո՞ւ, թե Աստծո խոսքերի:

Վերջաբան

Չկա անհամաձայնություն նրանում, թե ինչ նվաճումներ ունեցավ Ջոզեֆ Սմիթը: Անհամաձայնությունը միայն այն հարցում է, թե ինչպես նա այդ ամենն արեց և ինչու: Եվ շատ տարբերակներ չկան: Նա կամ դերասան էր, կամ մարգարե: Նա արեց այդ ամենը կամ մենակ, կամ նա ստացել էր երկնքի օգնությունը: Նայեք վկայություններին, բայց նայեք բոլոր վկայություններին, նրա կյանքի ամբողջ խճանկարին, ոչ թե միայն առանձին հատվածի: Եվ ամենակարևորը, արեք, ինչպես երիտասարդ Ջոզեֆը՝ խնդրեք «Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կ'տրուի» ձեզ:[17] Դա ոչ միայն Մորմոնի Գրքի և Ջոզեֆ Սմիթի, այլ բոլոր բաների մասին ճշմարտությունն իմանալու եղանակն է:[18]

Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է, ինչպես այսօր՝ Թոմաս Ս. Մոնսոնը: Ջոզեֆ Սմիթի միջոցով Աստծո արքայության բանալիները կրկին «վստահված են մարդուն երկրի վրա, և . . . ավետարանը կգլորվի . . . ինչպես քարը, որը կտրվել է սարից՝ առանց ձեռքի, . . . մինչև որ լցնի ողջ երկիրը»:[19]

Աստված մեր Երկնային Հայրն է, իսկ Հիսուսը՝ Քրիստոսը: Մենք երկրպագում ենք Նրանց: Ոչինչ չի կարող համեմատվել Նրանց արարումների, փրկության ծրագրի և Աստծո Գառան քավող զոհաբերության հետ: Այս տնտեսության մեջ մենք իրականացնում ենք Հոր ծրագիրը և ճաշակում Քավության պտուղները, միայն եթե հնազանդվում ենք Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված ավետարանի օրենքներին և արարողություններին: Ես բերում եմ վկայություն Նրանց մասին՝ Հավերժական Հայր Աստծո և աշխարհի Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի: Եվ անում եմ դա Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հակոբոս 1.5:
2. Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.14:
3. Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.16–17:
4. Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.33:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 130.22:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 50.24:
7. Տես 2 Նեփի 31; 3 Նեփի 27:
8. Տես Մորոնի 10.3–5:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 76:
10. Վարդապետություն և Ուխտեր 6.36:
11. Մովսես 5.8:
12. Վարդապետություն և Ուխտեր 20.77:
13. Հավատո հանգանակներ 1.3:
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 76; 128; 138:
15. Տես Վարդապետություն և Ուխտեր 49.17; 138; Մովսես 3.5; 6.36:
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 131.1–2; 132.5–33:
17. Հակոբոս 1.5:
18. Տես Մորոնի 10.3–5:
19. Վարդապետություն և Ուխտեր 65.2:

Երեց Ջոն Ու. Թեի
Յոթանասունից

Որտեղ ձեր գանձն է

Եթե մենք զգույշ չլինենք, մենք կսկսենք ավելի շատ հետամուտ լինել նյութական բաներին, քան հոգևոր:

2007թ. հոկտեմբերի գերագույն համաժողովից անմիջապես հետո իմ եղբայրներից մեկն ասաց ինձ, որ մոտավորապես յոթ տարի հետո ես կրկին կկարողանայի ունենալ այս տանջալից փորձառությունը: Ես թեթևացած շունչ քաշեցի և ասացի նրան, որ կհամարեմ դրանք «իմ մեծ առատության յոթը տարիներ»: Եվ, ահա, ես այստեղ եմ. իմ առատության յոթը տարիները հասան իրենց ավարտին:

Անցած հունվարին իմ սիրելի Գրեյսը և ես հանձնարարություն ստացանք այցելելու անդամներին Ֆիլիպիններում, որտեղ նրանք տառապում էին մեծ երկրաշարժի և սաստիկ փոթորկի վնասներից: Մենք ուրախացանք, քանի որ այս հանձնարարությունը մեր աղոթքների պատասխանն էր և մեր սիրող Երկնային Հոր գթության և բարության վկայությունը: Այն մեզ հնարավորություն տվեց անձամբ արտահայտել նրանց մեր սերը և հոգատարությունը, ինչին մենք այնքան ձգտում էինք:

Անդամներից շատերը, որոնց մենք հանդիպեցինք, դեռևս ապրում էին ժամանակավոր կացարաններում՝ վրաններում, համայնքային կենտրոններում և Եկեղեցու ժողովատներում: Տները, որոնք մենք այցելեցինք, կամ ունեին մասնակի տանիք կամ, ընդհանրապես, տանիք չունեին: Մարդիկ մինչ այդ էլ շատ բան չունեին այստեղ, սակայն նրանք զրկվեցին քչից էլ: Ամենուր ցեխ էր ու շինարարական աղբ: Այնուամենայնիվ, նրանք լի էին երախտագիտությամբ այն փոքր օգնության համար, որը ստացել էին, և լավ հոգեվիճակում էին, անկախ իրենց շատ դժվարին պայմաններին: Երբ մենք հարցրեցինք նրանց, թե ինչպես էին հաղթահարում այդ ամենը, յուրաքանչյուրը բարձրաձայն պատասխանեց. «Մենք լավ ենք»: Ակնհայտ էր, որ նրանց հավատքն առ Հիսուս Քրիստոս տվել էր նրանց հույս, որ ամեն բան, ի վերջո, լավ էր լինելու: Գնալով տնից տուն, վրանից վրան, Քույր Թեհը և ես ուսուցանվում էինք այս հավատարիմ Սրբերի կողմից:

Աղետների և դժբախտությունների ժամանակ Տերը մեր ուշադրության կենտրոնը և մեր առաջնահերթությունները վերափոխելու եղանակներ է գտնում: Անսպասելիորեն, բոլոր նյութական բաները, որոնք ձեռք բերելու համար մենք մեծ ջանքեր էինք գործադրել, այլևս կարևոր չեն լինում: Միակ կարևոր բանը դառնում է մեր ընտանիքը և մեր հարաբերությունները ուրիշների հետ: Մի լավ քույր սա այսպես է նկարագրել. «Երբ ջուրը նվազեց և եկավ մաքրություն անելու ժամանակը, ես իմ տան մեջ դիտեցի շուրջբոլորս և մտածեցի. «Վա՜յ, որքան աղբ եմ ես կուտակել այս տարիների ընթացքում»»:

Ես կարծում եմ, որ այս քույրը ձեռք բերեց ավելի լավ հեռանկար և սրանից հետո շատ շրջահայաց կլինի որոշումներ կայացնելիս, թե որ բաներն են անհրաժեշտ և որոնք են այն բաները, առանց որոնց նա իսկապես կարող է ապրել:

Տարիներ շարունակ, բազմաթիվ անդամների հետ աշխատելով, մենք երջանիկ ենք եղել նկատելու հոգևոր մեծ ուժի առկայությունը: Մենք նաև այս հավատարիմ անդամների մոտ տեսել ենք և նյութական ունեցվածքի առատություն, և պակասություն:

Անհրաժեշտությունից ելնելով՝ մեզանից շատերը ներգրավված են փող վաստակելու և աշխարհիկ բարիքներ ձեռք բերելու մեջ, որպեսզի կարողանան ապահովել ընտանիքներին: Դա պահանջում է մեր ժամանակի և ուշադրության մեծ մասը: Վերջ չկա այն ամենին, ինչ աշխարհն ունի մեզ առաջարկելու, ուստի խիստ կարևոր է, որ մենք սովորենք զգալ, թե երբ ունենք բավականաչափ: Եթե մենք զգույշ չլինենք, մենք կսկսենք ավելի շատ հետամուտ լինել նյութական բաներին, քան հոգևոր: Այդ ժամանակ հոգևոր և հավերժական ձգտումները կմարեն, սակայն պետք է դրա հակառակը լիներ: Ցավոք, առաջ է գալիս մեծ հակում՝ ձեռք բերելու ավելին ու ավելին և ունենալու ամենանորաձևն ու ամենաարդիականը:

Ինչպե՞ս մենք կարող ենք համոզված լինել, որ չենք գայթակղվել հետևելու այս արահետին: Հակոբը տալիս է այս խորհուրդը. «Ուստի, փող մի ծախսեք այն բանի համար, ինչն արժեք չունի, ոչ էլ ձեր աշխատանքն այն բանի համար, որ չի կարող բավարարել: Լսեք ինձ ջանասիրաբար և հիշեք խոսքերը, որոնք ես խոսել եմ. և եկեք դեպի Սուրբն Իսրայելի, ճաշակեք այն, ինչը չի ոչնչանում, ոչ էլ կարող է ապականվել, և թող ձեր հոգին զվարճանա պարարտությունով»:[1]

Ես հուսով եմ, որ մեզանից ոչ մեկը փող չի ծախսում այն բանի համար, ինչն արժեք չունի, ոչ էլ աշխատում է այն բանի համար, որ չի կարող բավարարել:

Փրկիչն ուսուցանեց հետևյալը և հրեաներին, և նեփիացիներին.

«Մի դիզեք ձեզ համար գանձեր երկրի վրա, որտեղ ցեցն ու ժանգն են ապականում, և գողերը ներս են խուժում ու գողանում.

Այլ գանձեր դիզեք ձեզ համար երկնքում, որտեղ ոչ ցեցը,

ոչ ժանգը չեն ապականում, և ուր գողերը ներս չեն թափանցում և չեն գողանում.

Քանզի որտեղ ձեր գանձերն են, այնտեղ կլինի և ձեր սիրտը»:[2]

Մեկ այլ առիթով Փրկիչը տվեց այս առակը.

«Մի հարուստ մարդի արտը առատ պտուղ տուաւ.

Եւ նա իր մտքումը մտածում էր եւ ասում. Ի՞նչ անեմ, որ տեղ չունիմ որ իմ պտուղներն այնտեղ ժողովեմ:

Եւ ասեց. Այս կանեմ. իմ շտեմարանները կքանդեմ, եւ աւելի մեծերը կշինեմ, եւ իմ բոլոր բերքերն ու բարիքները այնտեղ կժողովեմ:

Եւ իմ անձին կասեմ. Ով անձն, շատ բարիքներ ունիս շատ տարիների համար ամբարուած. հանգստացիր, կեր, խմիր, զուարճացիր:

Բայց Աստուած նորան ասեց. Անմիտ. հէնց այս գիշեր հոգիդ քեզանից ետ կպահանջեն. ապա այս որ պատրաստեցիր՝ ո՞ւմ կլինի:

Այսպէս էլ նա՝ որ իր անձի համար գանձ է հաւաքում, և Աստուծով չէ հարուստ»:[3]

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը տվեց հետևյալ խորհուրդը ոչ վաղ անցյալում.

«Մեր Երկնային Հայրը տեսնում է մեր իրական ներուժը: Նա գիտի բաներ մեր մասին, որոնք մենք ինքներս չգիտենք: Նա հուշում է մեզ մեր կյանքի ընթացքում իրականացնել մեր ստեղծման նպատակը, ապրել արդար կյանքով և վերադառնալ Իր ներկայություն:

Ուրեմն, ինչո՞ւ ենք մենք այդքան շատ ժամանակ և էներգիա ծախսում այն բաների վրա, որոնք այդքան անցողիկ են, այդքան աննպատակ և այդքան մակերեսային: Մի՞թե մենք հրաժարվում ենք տեսնել չնչին և անցողիկ բաներին հետամուտ լինելու անմտությունը»:[4]

Մենք բոլորս էլ գիտենք, որ աշխարհիկ գանձերի մեր ցուցակը բաղկացած է հպարտությունից, հարստությունից, նյութական բաներից, զորությունից և մարդկանց գովասանքներից: Չարժե ժամանակ ծախսել դրանց վրա կամ ուշադրության արժանացնել, ուստի դրանց փոխարեն ես կկենտրոնանամ այն բաների վրա, որոնք իրենցից ներկայացնելու են մեր երկնային գանձերը:

Որո՞նք են այն երկնային գանձերը, որոնք մենք կարող ենք դիզել մեզ համար: Նախ լավ կլինի, որ մենք ձեռք բերենք Քրիստոսանման հատկանիշներ՝ հավատք, հույս, հեզություն և գթասրտություն: Մեզ շարունակ խորհուրդ են տվել «[հանել] բնական մարդուն և [դառնալ] ինչպես մի երեխա»:[5] Փրկիչը խրատում է մեզ ձգտել լինել կատարյալ, ճիշտ ինչպես Ինքն է և մեր Երկնային Հայրը:[6]

Երկրորդը, մենք պետք է պատշաճ ժամանակ և ջանքեր գործադրենք ընտանեկան հարաբերություններն ամրացնելու համար: Ի վերջո, «ընտանիքը կարգված է Աստծո կողմից: Այն ամենակարևոր միավորն է ժամանակի և հավերժության մեջ»:[7]

Երրորդը, ուրիշներին ծառայելը Քրիստոսի ճշմարիտ հետևորդի բնորոշ հատկանիշն է: Նա ասել է. «Որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք»:[8]

Չորրորդը, Քրիստոսի վարդապետությունը հասկանալը և մեր վկայությունը ամրացնելը տքնաջան աշխատանք է, որն առաջ է բերում իսկական ուրախություն և գոհացում: Մենք պետք է հետևողականորեն ուսումնասիրենք Քրիստոսի խոսքերը, ինչպես դրանք տրված են սուրբ գրություններում, և ապրող մարգարեների խոսքերը: «Քանզի ահա, Քրիստոսի խոսքերը կասեն

ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք»:[9]

Թույլ տվեք ինձ ավարտել 73-ամյա մի այրու պատմությամբ, ում մենք հանդիպեցինք Ֆիլիպիններ կատարած մեր ճամփորդության ժամանակ:

Երբ Բոհոլ կղզում անսպասելի երկրաշարժ տեղի ունեցավ, տունը, որը նա և նրա հանգուցյալ ամուսինը կառուցել էին քրտնաջան աշխատանքի շնորհիվ, հավասարվեց գետնին՝ սպանելով նրա դստերն ու թոռնիկին: Այժմ, մենակ լինելով, նա պետք է աշխատեր, որ հոգ տաներ իր համար: Նա սկսել է լվացք անել ուրիշների համար (ձեռքով) և պետք է բարձրանար և իջներ մի մեծ բլուր օրվա մեջ մի քանի անգամ, որպեսզի ջուր կրեր: Երբ մենք այցելեցինք նրան, նա դեռևս վրանում էր ապրում:

Սրանք նրա խոսքերն են. «Երեց, ես հաշտվել եմ այն ամենի հետ, որ Տերը ցանկացել է, որ ես հաղթահարեմ: Ես չեմ լցվել չարությամբ: Ես փայփայում եմ իմ տաճարային երաշխավորագիրը և պահում եմ այն իմ բարձի տակ: Խնդրում եմ, իմացեք, որ ես վճարում եմ լրիվ տասանորդ լվացք անելուց ստացած իմ աղքատիկ եկամուտից: Ինչ էլ որ լինի, ես միշտ տասանորդ կվճարեմ»:

Ես վկայում եմ, որ մեր առաջնահերթությունները, հակումները, սովորությունները, ցանկությունները և կրքերը անմիջական ազդեցություն կունենան մեր հաջորդ վիճակի վրա: Թող մենք միշտ հիշենք Փրկչի խոսքերը. «Որովհետեւ ինչ տեղ որ ձեր գանձն է, այնտեղ կլինի եւ ձեր սիրտը»: Թող մեր սրտերը գտնվեն ճիշտ տեղում, սա իմ աղոթքն է, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 2 Նեփի 9.51:
2. Մատթեոս Զ.19–21, տես նաև 3 Նեփի 13.19–21:
3. Ղուկաս ԺԲ.16–21:
4. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Ափսոսանքների և վճիռների մասին», *Լիահոնա,* նոյեմբեր 2012, 22–23:
5. Մոսիա 3.19:
6. Տես 3 Նեփի 12.48:
7. *Ձեռնարկ 2. Ծառայել Եկեղեցուն* (2010), 1.1.1:
8. Մատթեոս ԻԵ.40:
9. 2 Նեփի 32.3:

Երեց Մարկոս Ա. Այդուկայտիս
Յոթանասունից

Եթե իմաստության պակաս ունեք

Աստված կհայտնի ճշմարտությունը նրանց, ովքեր փնտրում են այն, ինչպես գրված է սուրբ գրություններում:

Մի օր իմ տաս տարեկան որդին ուսումնասիրում էր համացանցում մարդու ուղեղի մասին: Նա ուզում է վիրաբույժ դառնալ: Դժվար չէ նկատել, որ նա ինձանից շատ ավելի խելացի է:

Մենք սիրում ենք համացանցը: Տանը մենք հաղորդակվում ենք սոցիալական մեդիայի, էլեկտրոնային փոստի և այլ միջոցներով մեր ընտանիքի և ընկերների հետ: Երեխաներս իրենց դպրոցական աշխատանքի մեծ մասը համացանցով են կատարում:

Ինչ հարց էլ որ ունենանք, եթե մենք լրացուցիչ տեղեկության կարիք ունենք, մենք փնտրում ենք այն համացանցում: Վայրկյանների ընթացքում մենք ծավալուն նյութ ենք ունենում: Սա հրաշալի է:

Համացանցը սովորելու շատ հնարավորություններ է տրամադրում: Սակայն Սատանան ցանկանում է, որ մենք լինենք թշվառ և խեղաթյուրում է բաների իրական նպատակները: Նա օգտագործում է այս մեծագույն գործիքը՝ կասկած ու վախ սերմանելու և հավատքն ու հույսը կործանելու համար:

Համացանցում այնքան շատ տեղեկություն է մատչելի, որ պետք է ուշադիր մտածել, թե որտեղ ջանքեր գործադրել: Սատանան մեզ զբաղեցնում է, շեղում և վարակում ցանկությամբ կարդալու և դիտելու այնպիսի տեղեկություն, որը կարող է կատարյալ աղբ լինել:

Չպետք է փորփրել աղբի մեջ:

Լսեք այս խորհուրդը սուրբ գրություններից. «Քրիստոսի Հոգին տրվում է ամեն մարդու, որպեսզի նա կարողանա բարին տարբերել չարից. ուստի, ես ցույց եմ տալիս ձեզ դատելու ուղին. քանզի ամեն բան, որ հրավիրում է անել բարիք, և համոզում է հավատալ Քրիստոսին, առաջանում է Քրիստոսի զորությամբ ու պարգևով. ուստի, դուք կարող եք . . . իմանալ՝ դա Աստծուց է»:[1]

Իրականում, մենք կանգնում ենք նույն խնդրի առաջ, որին հանդիպեց Ջոզեֆ Սմիթն իր պատանեկության տարիներին: Մենք շատ հաճախ հասկանում ենք, որ իմաստության պակաս ունենք:

Աստծո արքայությունում ճշմարտության որոնումը բարձր է գնահատվում, խրախուսվում, և ոչ մի դեպքում չի ճնշվում կամ վախերի

առարկա դառնում: Եկեղեցու անդամներին Տերն Ինքը խստորեն խորհուրդ է տալիս գիտելիք փնտրել:[2] Նա ասում է. «Ջանասիրաբար փնտրեք, . . . այո, իմաստության խոսքեր փնտրեք լավագույն գրքերից. ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով»:[3] Սակայն ինչպե՞ս մենք կարող ենք ճանաչել ճշմարտությունը աշխարհում, որը գնալով ավելի է ուժեղացնում Աստծուն վերաբերող բաներին իր հարձակումները:

Սուրբ գրություններն ուսուցանում են մեզ ինչպես դա անել.

Նախ, մենք կարող ենք իմանալ ճշմարտությունը, տեսնելով դրա պտուղները:

Լեռան Քարոզում Տերն ասել է.

«Այսպէս ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, եւ չար ծառը չար պտուղ է բերում: Չէ կարող բարի ծառը չար պտուղ բերել, ոչ էլ չար ծառը բարի պտուղ բերել . . .

Ուրեմն իրանց պտուղներիցը ճանաչեցէք նորանց»:[4]

Մորմոն մարգարեն ուսուցանել է նույն սկզբունքը. «Իրենց գործերով դուք պիտի ճանաչեք նրանց. քանզի, եթե նրանց գործերը բարի լինեն, ուրեմն նրանք նույնպես բարի են»:[5]

Մենք հրավիրում ենք բոլորին ուսումնասիրել այս Եկեղեցու պտուղները և գործերը:

Նրանք, ում հետաքրքրում է ճշմարտությունը, կկարողանան տեսնել այն փոփոխությունը, որը Եկեղեցին և Եկեղեցու անդամները կատարում են համայնքներում, որոնք հիմնում են: Նրանք նաև կնկատեն բարելավումներ այն մարդկանց կյանքում, ովքեր հետևում են Եկեղեցու ուսմունքներին: Նրանք, ովքեր կուսումնասիրեն այդ պտուղները, կհայտնաբերեն, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պտուղները համեղ են և ցանկալի:

Երկրորդ՝ մենք կարող ենք գտնել ճշմարտությունը, ինքներս փորձարկելով խոսքը:

Ալմա մարգարեն ուսուցանել է.

«Մենք կհամեմատենք խոսքը սերմի հետ: . . . Եթե դուք տեղ տաք, որ մի սերմ սերմանվի ձեր սրտում, ահա, եթե այն լինի մի ճշմարիտ սերմ, . . . եթե դուք դուրս չգցեք այն ձեր անհավատությամբ, . . . ահա, այն կսկսի ուռչել ձեր կրծքում . . . և դուք կսկսեք ասել ինքներդ ձեր մեջ. Պետք է որ . . . սա լավ սերմ լինի, . . . քանզի այն սկսում է մեծացնել իմ հոգին. այո, այն սկսում է լուսավորել իմ հասկացողությունը, այո, այն սկսում է հրաշալի լինել ինձ համար: . . .

. . . Եվ այժմ, մի՞թե այս չի զորացնի ձեր հավատքը: Այո, այն կզորացնի ձեր հավատքը . . .

. . . Քանզի ամեն սերմ առաջ է բերում իր իսկ նմանին»:[6]

Ինչպիսի անգնահատելի հրավեր Տիրոջ մարգարեի կողմից: Սա կարելի է համեմատել գիտական փորձի հետ: Մեզ հրավիրում են փորձել խոսքը, մեզ տալիս են չափորոշիչներ և հայտնում փորձի արդյունքները, եթե հետևենք հրահանգներին:

Այսպիսով, սուրբ գրություններն ուսուցանում են մեզ, թե ինչպես մենք կարող ենք իմանալ ճշմարտությունը, տեսնելով դրա պտուղները կամ փորձարկելով այն անձամբ, տեղ տալով խոսքին մեր սրտերում և սնուցելով այն, ինչպես սերմն են սնուցում:

Սակայն կա նաև ճշմարտությունն իմանալու երրորդ ճանապարհը, և դա անձնական հայտնությունն է:

Վարդապետություն և Ուխտերի բաժին 8-ը սովորեցնում է, որ հայտնությունը գիտելիք է՝ «իմացություն, ինչ բաների վերաբերյալ էլ որ [մենք խնդրենք] հավատքով, ազնիվ սրտով, հավատալով, որ կստանանք»:[7]

Եվ Տերն ասում է մեզ, թե ինչպես մենք կստանանք հայտնություն. «Ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Սուրբ Հոգով, որը կիջնի քո վրա և որը կմնա քո սրտում»:[8]

Այսպիսով, մենք սովորում ենք, որ հայտնությունը կարելի է ձեռք բերել հավատքով խնդրելու միջոցով՝ անկեղծ սրտով և հավատալով, որ կստանանք այն:

Սակայն նկատեք, որ Տերը սրա մասին հստակ ասել է, երբ նախազգուշացրել է. «Հիշիր, որ առանց հավատքի դու ոչինչ չես կարող անել. ուստի, հավատքով խնդրիր»:[9] Հավատքը աշխատանք է պահանջում՝ ձեր մտքում ուսումնասիրելու, ապա աղոթքով դրա ճշմարտության մասին հարցնելու աշխատանքը:

Տերն ասել է.

«Եթե դա ճիշտ լինի, ես այնպես կանեմ, որ կուրծքդ կայրվի քո ներսում. ուստի, դու պիտի զգաս, որ դա ճիշտ է:

Փլեզանթ Գրով, Յուտա, ԱՄՆ

Բայց, եթե դա ճիշտ չլինի, դու նման զգացումներ չես ունենա, այլ կունենաս մտքի ընդարմացում, որի արդյունքում դու կմոռանաս այն, ինչը սխալ է»:[10]

Հավատքն առանց գործերի մեռած է:[11] Այնպես որ՝ «խնդրէ առանց երկմտելու»:[12]

Ես մի ընկեր ունեմ, ոչ մեր հավատքից, որն ինձ ասաց, որ հոգևոր մարդ չէ: Նա չի ուսումնասիրում սուրբ գրությունները կամ աղոթում, որովհետև չի կարողանում հասկանալ Աստծո խոսքերը, ոչ էլ համոզված է, որ Աստված գոյություն ունի: Այս մոտեցումը խոսում է հոգևորության պակասի մասին և տանում է հայտնությանը հակառակ ուղղությամբ, ինչպես բացատրել է Ալման: Նա ասել է. «Եվ հետևաբար, ով կկարծրացնի իր սիրտը, նա կստանա խոսքի նվազագույն բաժինը»:

Սակայն Ալման շարունակում է. «Իսկ ով չի կարծրացնի իր սիրտը, նրան տրվում է խոսքի ավելի մեծ բաժինը, մինչև որ նրան տրվում է իմանալու Աստծո խորհուրդները՝ մինչև որ նա իմանա դրանք լիովին»:[13]

Ալման և Մոսիայի որդիները մարմնավորում են այն սկզբունքը, որ հավատքը աշխատանք է պահանջում: Մորմոնի Գրքում մենք կարդում ենք.

«Նրանք ջանասիրաբար քննել էին սուրբ գրքերը, որ կարողանային իմանալ Աստծո խոսքը:

Բայց դա բոլորը չէ. նրանք նվիրվել էին շատ աղոթքի ու ծոմի. այդ պատճառով նրանք ունեին մարգարեության ոգին ու հայտնության ոգին»:[14]

Անկեղծ սրտով խնդրելը հավասար կարևոր է այս գործընթացում: Եթե մենք անկեղծորեն փնտրում ենք ճշմարտությունը, ապա մենք կանենք մեր ուժերի սահմաններում ամեն-ինչ՝ այն գտնելու համար, այդ թվում՝ սուրբ գրությունները կարդալը, եկեղեցի հաճախելը և Աստծո պատվիրանները լավագույն ձևով պահելը: Դա նաև նշանակում է, որ մենք պատրաստ ենք կատարելու Աստծո կամքը, երբ ստանանք այն:

Իմաստություն փնտրելու Ջոզեֆ Սմիթի գործողությունները կատարյալ օրինակ են հանդիսանում նրա, թե ինչ է նշանակում ունենալ անկեղծ սիրտ: Նա ասաց, որ ցանկանում էր իմանալ, «թե բոլոր աղանդներից որն էր ճշմարիտը, որպեսզի իմանար, թե որին միանար»:[15] Անգամ դեռ աղոթելուց առաջ նա արդեն պատրաստ էր գործելու ըստ պատասխանի, որը կստանար:

Մենք պետք է խնդրենք հավատքով և անկեղծ սրտով: Բայց սա ամենը չէ: Մենք պետք է նաև հավատանք, որ կստանանք այդ հայտնությունը: Մենք պետք է վստահենք Տիրոջը և հույս ունենանք Նրա խոստումների հանդեպ: Հիշեք, ինչ է գրված. «Եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կ'տրուի նորան»:[16] Ինչպիսի հիանալի խոստում:

Ես հրավիրում եմ ձեզ փնտրել ճշմարտությունը այս եղանակներից որևէ մեկի օգնությամբ, սակայն հատկապես Աստծուց ստացվող անձնական հայտնության միջոցով: Աստված կհայտնի ճշմարտությունը նրանց, ովքեր փնտրում են այն, ինչպես գրված է սուրբ գրություններում: Այն պահանջում է ավելի շատ ջանք, քան համացանցում պարզապես որոնելը, սակայն ջանքերն արժեն արդյունքին:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ սա Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին է: Ես տեսել եմ դրա պտուղները համայնքներում և հազարավոր մարդկանց, ներառյալ ընտանիքի անդամների կյանքում: Այսպիսով, ես գիտեմ, որ այն ճշմարիտ է: Ես նույնպես փորձել եմ խոսքը իմ կյանքում տարիների ընթացքում և զգացել եմ դրա ազդեցությունը իմ հոգու վրա: Այսպիսով, ես գիտեմ, որ այն ճշմարիտ է: Մակայն ամենից կարևորը՝ ես սովորել եմ դրա ճշմարիտ լինելու մասին ինքս՝ հայտնությամբ, Սուրբ Հոգու զորության միջոցով: Այսպիսով, ես գիտեմ, որ այն ճշմարիտ է: Ես հրավիրում եմ բոլորիդ անել նույնը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մորոնի 7.16:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.78:
3. Վարդապետություն և Ուխտեր 88.118:
4. Մատթեոս 7.17, 20:
5. Մորոնի 7.5:
6. Ալմա 32.28, 30–31:
7. Վարդապետություն և Ուխտեր 8.1:
8. Վարդապետություն և Ուխտեր 8.2:
9. Վարդապետություն և Ուխտեր 8.10:
10. Վարդապետություն և Ուխտեր 9.8–9:
11. Տես Հակոբոս 2.17:
12. Հակոբոս 1.6:
13. Ալմա 12.10:
14. Ալմա 17.2–3:
15. Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.18:
16. Հակոբոս 1.5:

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հիսուս Քրիստոսի Հարությունը

Նազովրեցի Հիսուսը հարություն առած Քավիչն է, և ես վկայում եմ այն ամենի մասին, ինչը հետևում է Նրա Հարության իրողությանը:

Պարտության ու հուսահատության ջախջախիչ զգացումը պարուրեց Նրա աշակերտներին, երբ Հիսուսը տառապեց ու մահացավ խաչի վրա, իսկ Նրա անշունչ մարմինը դրվեց գերեզմանում: Անկախ այն ամենից, ինչ Հիսուսը բազմիցս ասել էր Իր մահվան ու հետագայում իր հարության մասին, նրանք չէին հասկացել: Նրա Խաչելության խավար կեսօրին, այնուամենայնիվ, շուտով հետևեց Նրա Հարության ուրախալից առավոտը: Բայց այդ ուրախությունը եկավ միայն այն ժամանակ, երբ աշակերտներն ականատես եղան Հարությանը, քանի որ նույնիսկ Նրա հարության մասին հրեշտակների ավետիքը սկզբում անըմբռնելի էր – դա ամբողջովին անհասկանալի մի բան էր:

Մարիամ Մագդաղենացին և մի քանի հավատարիմ կանայք այդ կիրակի վաղ առավոտյան եկան Փրկչի գերեզմանը՝ բերելով խունկեր ու յուղեր, որպեսզի ավարտեին օծումը, որը սկսել էին այն ժամանակ, երբ Տիրոջ մարմինն արագ, նախքան կիրակի օրվա գալը, դրվել էր գերեզմանը: Այս հատուկ առավոտյան նրանց ողջունեց բաց գերեզմանը, որը ծածկող քարը հեռու էր գլորված, և երկու հրեշտակներ, ովքեր ասացին.

«Ի՞նչ էք կենդանին մեռելների մէջ որոնում:

Այստեղ չէ, այլ յարութիւն առաւ. յիշեցէք ինչպէս նա ձեզ հետ խօսեց, երբոր Գալիլեայումն էր.

Որ ասում էր, թէ պէտք է մարդի Որդին մեղաւոր մարդկանց ձեռը մատնուի՝ և խաչուի և երրորդ օրը յարութիւն առնէ»:[1]

«Եկէք, տեսէք այն տեղը, ուր Տէրը պառկած էր:

«Եւ շուտով գնացէք նորա աշակերտներին ասացէք թէ Յարութիւն առաւ մեռելներիցը»:[2]

Ինչպես որ պատվիրվել էր հրեշտակների կողմից, Մարիամ Մագդաղենացին նայեց գերեզմանից ներս, բայց կարծես նա միայն ընկալեց այն, որ Տիրոջ մարմինը չկար: Նա շտապեց Առաքյալներին տեղեկացնելու այդ մասին, և գտնելով Պետրոսին ու Հովհաննեսին, ասաց նրանց. «Տիրոջը վեր առան գերեզմանիցը, և չգիտենք թէ որտեղ դրին նորան»:[3] Պետրոսն ու Հովհաննեսը վազեցին այդտեղ և հավաստիացան, որ գերեզմանն իսկապես դատարկ էր՝ տեսնելով «կտաւները դրած . . . և վարշամակը՝ որ նորա գլխի վերայ էր . . . ջոկ ծալած մի առանձին տեղ»:[4] Ըստ երևույթին, Հովհաննեսն առաջինն էր, որ հասկացավ հարության հիանալի ուղերձը: Նա գրում է, որ «տեսավ եւ հավատաց», մինչ մյուսները տակավին «չգիտէին գիրքը, թէ՝ Պէտք է [Հիսուսը] մեռելներից հարութիւն առնէ»:[5]

Պետրոսն ու Հովհաննեսը գնացին, բայց Մարիամը մնաց՝



շարունակելով սգալ: Միևնույն ժամանակ հրեշտակները վերադարձել էին ու քնքշորեն հարցրեցին նրան. «Ով կին, ինչո՞ւ ես լաց լինում. նորանց ասեց. Նորա համար որ իմ Տիրոջը վեր առան, եւ չգիտեմ՛թէ ուր դրին նորան»:[6] Այդ պահին արդեն Հարություն առած Փրկիչը կանգնած նրա հետևում ասաց. «Կին, ինչո՞ւ ես լաց լինում, ո՞ւմ ես որոնում. նա էլ կարծելով թէ պարտիզպանն է, ասեց նորան. Տէր, եթէ դու վեր առար նորան, ասիր ինձ՛ ուր ես դրել նորան, որ ես վեր առնեմ նորան»:[7]

Երեց Ջեյմս Ի. Թալմիջը գրել է. «Դա Հիսուսն էր, ում հետ նա խոսեց, ի՛ր սիրելի Տերը, թեև նա չգիտեր այդ մասին: Նրա կենդանի շուրթերից հնչող մի խոսքն իր տագնապալից վիշտը խանդավառ ուրախության փոխեց: «Հիսուսը նորան ասեց. Մարիամ»: Ձայնը, տոնը, մեղմ արտասանությունը, որ նա լսել ու սիրում էր վաղ օրերին, բարձրացրեցին նրան հուսահատության խորքերից, որի մեջ նա ընկղմվել էր: Նա դարձավ ու տեսավ Տիրոջը: Հեղեղված ուրախությամբ՛ նա մեկնեց իր ձեռքերը, որպեսզի գրկեր Նրան՛ արտաբերելով միայն թանկագին ու ակնածալից բառը՛ «Ռաբբունի», որը նշանակում է իմ սիրելի Վարդապետ»:[8]

Եվ այսպիսով, այս օրհնյալ կինը դարձավ առաջին մահկանացուն, ով տեսել ու խոսել է հարություն առած Քրիստոսի հետ: Ավելի ուշ, այդ նույն օրվա ընթացքում, Նա հայտնվեց Պետրոսին Երուսաղեմում կամ Երուսաղեմի մոտ[9]; երկու աշակերտների, որոնք Էմմաուսի ճանապարհին էին;[10] իսկ երեկոյան՛ առաքյալներից 10-ին և ուրիշների՛ հայտնվելով նրանց մեջ և ասելով. «Տեսէք իմ ձեռքերը եւ իմ ոտները, որ ես ինքս եմ. շօշափեցէք ինձ եւ տեսէք. որովհետեւ ոգին մարմին եւ ոսկերք չունի, ինչպէս ինձ էք տեսնում որ ունիմ»:[11] Ապա, որպեսզի օգներ նրանց համոզվել, «քանի որ դեռ չէին հաւատում ուրախութիւնից եւ զարմացած էին»,[12] Նա նրանց մոտ խորոված ձկան կտոր և մեղրախորիսխ կերավ:[13] Ավելի ուշ Նա պատվիրեց նրանց. «Իմ վկաները կլինիք Երուսաղէմումը եւ բոլոր Հրէաստանի եւ Սամարիայի մէջ մինչեւ երկրի ծայրերը»:[14]

Երուսաղեմի այս հաստատուն վկաներից բացի, մենք գիտենք հարություն առած Տիրոջ աննախադեպ սպասավորման մասին արևմտյան կիսագնդի հնագույն բնակիչների մեջ: Նա երկնքից վայր իջավ Լիառատ երկրում և հրավիրեց հավաքված բազմությանը, մոտ 2500 հոգու, որպեսզի մեկ առ մեկ առաջ գան, մինչև որ բոլորն առաջ անցնեն և մտցնեն իրենց ձեռքերը Նրա կողը և շոշափեն բևեռների նշաններն Իր ձեռքերի ու ոտքերի վրա:[15]

«Եվ երբ նրանք բոլորն առաջ եկան և իրենք ականատես եղան, նրանք միաձայն աղաղակեցին՛ ասելով.

Ոսանա՜ննա: Օրհնվա՜ծ լինի Բարձրյալ Աստծո անունը: Եվ նրանք ընկան ցած՛ Հիսուսի ոտքերի մոտ և երկրպագեցին նրան»:[16]

Քրիստոսի Հարությունը ցույց է տալիս, որ Նրա կյանքն անկախ է ու հավիտենական: «Որովհետեւ ինչպէս որ Հայրն իր անձումը կեանք ունի, այնպէս էլ Որդուն տուաւ՛ որ իր անձումն կեանք ունենայ»:[17] Հիսուսն ասել է.

«Նորա համար իմ Հայրը սիրում է ինձ, որ իմ անձը դնում եմ, որպէս զի դարձեալ առնեմ նորան:

Ոչ ով նորան վեր չէ առնում ինձանից. այլ ես ինքս եմ ինձանից դնում նորան. ես իշխանութիւն ունիմ նորան դնելու եւ իշխանութիւն ունիմ նորան դարձեալ առնելու»:[18]

Փրկիչն ապրելու համար կախված չէ սնունդից, ջրից, թթվածնից կամ որևէ այլ տեսակի նյութից, զորությունից կամ անձնավորությունից: Ե՛վ որպես Եհովա, և՛ որպես Մեսիա, Նա Մեծ Ես Եմ-ն է, ինքնուրույն Աստվածը:[19] Նա պարզապես կա ու հավերժ կլինի:

Իր Քավության ու Հարության միջոցով Հիսուս Քրիստոսը հաղթեց Անկման բոլոր գործոնները: Ֆիզիկական մահը կլինի ժամանակավոր, և նույնիսկ հոգևոր մահը կունենա ավարտ, քանի որ մենք բոլորս ետ կբերվենք Աստծո ներկայության մեջ, առնվազն ժամանակավորապես, որպեսզի դատվենք: Մենք կարող ենք առավելագույնս ապավինել ու վստահել Նրա զորությանը, որը կհաղթահարի ամեն բան ու մեզ կշնորհի հավերժական կյանք:

«Ուրեմն որովհետեւ մարդով եղաւ մահը, եւ մարդով էլ մեռելների յարութիւնը:

Քանզի ինչպէս Ադամով ամենը մեռնում են, այնպէս էլ Քրիստոսով ամենը կենդանանում են»:[20]

Երեց Նիլ Ա. Մաքսվելի խոսքերում ասվում է. «Քրիստոսի հաղթանակը մահվան նկատմամբ ավարտին հասցրեց մարդու անելանելի վիճակը: Այժմ կան միայն անհատական անելանելի վիճակներ և սրանցից նույնպես մենք կարող ենք դուրս գալ՛ հետևելով նրա ուսմունքներին, ով փրկեց մեզ

ընդհանուր բնաջնջումից»:[21]

Բավարարած լինելով արդարադատության պահանջները՝ Քրիստոսն այժմ մտնում է արդարության մեջ, կամ կարող ենք ասել՝ Նա արդարություն է, հենց այնպես, ինչպես որ Նա սէր է:[22] Բացի կատարյալ, արդար Աստված լինելուց, Նա նաև կատարյալ, ողորմած Աստված է: [23] Այսպիսով, Փրկիչն ամեն բան արդարությամբ է անում: Մահկանացու կյանքի ոչ մի անարդարություն հարատև չէ, նույնիսկ մահը, քանզի Նա կրկին վերականգնում է կյանքը: Նրա անսահման արդարության ու ողորմածության շնորհիվ վեջիվերջո ոչ մի վիրավորանք, թուլություն, դավաճանություն կամ աղճատում չի մնալու առանց փոխհատուցման:

Նույն ձևով մենք բոլորս հաշվետու ենք Նրան մեր կյանքի, մեր ընտրությունների, մեր արարքների և նույնիսկ մեր մտքերի համար: Քանի որ Նա փրկագնել է մեզ Անկումից՝ մեր կյանքն իրականում Նրանն է: Նա ասել է.

«Ահա, ես տվել եմ ձեզ իմ ավետարանը, և այս է ավետարանը, որ ես տվել եմ ձեզ, որ ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր կամքը, որովհետև իմ Հայրն ուղարկեց ինձ:

Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ. իսկ հետո, երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ձգել դեպի ինձ, որպեսզի ինչպես ես բարձրացվեցի մարդկանց կողմից, ճիշտ նույնպես մարդիկ բարձրացվեն Հոր կողմից՝ կանգնելու իմ առջև, դատվելու ըստ իրենց գործերի»:[24]

Մի պահ խորհեք Հարության կարևորության մասին՝ Նազովրեցի Հիսուսի ճշմարիտ ինքնության և կյանքի մեծ փիլիսոփայական վիճաբանությունների ու հարցերի մեկընդմիշտ որոշման մեջ: Եթե Հիսուսն իրոք բառացիորեն հարություն է առել, ապա դրա ակնհայտ հետևությունն այն է, որ Նա աստվածային էակ է: Ոչ մի հասարակ մահկանացու իր մեջ զորություն չունի, որպեսզի մահանալուց հետո կրկին կենդանանա: Քանի որ Նա հարություն է առել, Հիսուսը չէր կարող միայն հյուսն, ուսուցիչ, ռաբունի կամ մարգարե լինել: Քանի որ Նա հարություն է առել, Հիսուսը պետք է որ Աստված լիներ, այսինքն՝ Հոր Միածին Որդին:

Հետևաբար, այն ամենն, ինչ Նա ուսուցանել է, ճշմարիտ է. Աստված չի կարող ստել:[25]

Հետևաբար, Նա երկրի Արարիչն է, ինչպես որ Ինքն է ասել:[26]

Հետևաբար, երկինքն ու դժոխքն իրական են, ինչպես որ Նա ուսուցանել է:[27]

Հետևաբար, գոյություն ունի հոգիների աշխարհ, որտեղ Նա այցելեց Իր մահից հետո:[28]

Հետևաբար, Նա կրկին կգա, ինչպես որ ասել են հրեշտակները, [29] ու «անձամբ կթագավորի երկրի վրա»:[30]

Հետևաբար, բոլորի համար կա Հարություն ու վերջին դատաստան: [31]

Քրիստոսի Հարության իրողության շնորհիվ Հայր Աստծո ամենազոր, ամենագետ և ամենաբարի լինելու մասին կասկածներն անհիմն են, Նա, ով տվեց Իր Միածին Որդուն աշխարհի փրկության համար: Կյանքի իմաստի ու նպատակի մասին կասկածները հիմնավորված չեն: Հիսուս Քրիստոսն է իրականում այն միակ անունը կամ ճանապարհը, որի շնորհիվ փրկությունը կարող է գալ մարդկությանը: Քրիստոսի շնորհն իրական է՝ ապաշխարություն փնտրող մեղավորին տալով և՝ ներում, և՝ մաքրագործում: Հավատքն իսկապես ավելին է, քան երևակայություն կամ մտացածին երևույթ: Կա մի հիմնական ու համընդհանուր ճշմարտություն, և կան իրական ու անփոփոխ բարոյական չափանիշներ, ինչպես որ ուսուցանվել է Նրա կողմից:

Քրիստոսի Հարության իրողության միջոցով Նրա օրենքի ու պատվիրանների ցանկացած խախտման դեպքում ապաշխարության անհրաժեշտությունը հնարավոր

է ու հրատապ: Փրկչի հրաշքներն իրական էին, ինչպես որ Իր աշակերտներին տված խոստումներն են իրական, որ նրանք կգործեն նույնը, նույնիսկ ավելի մեծ բաներ:[32] Նրա քահանայությունը այն ճշմարիտ իշխանությունն է, որը «սպասավորում է ավետարանը և կրում է արքայության խորհուրդների բանալիները, այսինքն՝ Աստծո գիտության բանալիները: Հետևաբար, նրա արարողություններում է բացահայտվում աստվածայնության զորությունը»:[33] Քրիստոսի Հարության շնորհիվ մահը մեր վերջը չէ, և չնայած մեր մորթն այսպես թափվելուց հետո, այն ժամանակ մեր մարմնից կտեսնենք Աստծուն:[34]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը պատմում է Ռոբերտ Բլատչֆորդի մասին, ով 100 տարի առաջ «իր *Աստվածն ու իմ մերձավորը* գրքում եռանդորեն գրոհում է Քրիստոնեական համոզմունքների դեմ, ինչպիսիք են՝ Աստված, Քրիստոսը, աղոթքը և անմահությունը: Նա համարձակորեն պնդում է. «Ես հայտարարում եմ, որ այն ամենը, ինչ մտադրվել եմ ապացուցել, ապացուցել եմ լիովին և վերջնականապես, որ ոչ մի Քրիստոնյա, որքան էլ նշանավոր կամ ընդունակ էլ որ լինի, չի կարող պատասխանել իմ բարձրացրած հարցերին կամ կասկածի տակ դնել իմ փաստարկները»: Նա իրեն շրջապատեց անհավատության պատերով: Ապա մի զարմանալի բան տեղի ունեցավ: Նրա պատը փոշիացավ: . . . Նա մնաց խոցելի և անպաշտպան: Աստիճանաբար նա սկսեց զտնել դեպի հավատք վերադարձի իր ճանապարհը, որը քարկոծում ու ծաղրում էր: Ի՞նչը պատճառ դարձավ այդ մեծ փոփոխության համար: *Նրա կինը մահացավ:* Կոտրված սրտով նա մտավ մի սենյակ, որտեղ պառկած էր կնոջ մահացած մարմինը: Նա կրկին նայեց այդ դեմքին, որն այդքան սիրում էր: Դուրս գալով՝ նա ասաց ընկերոջը. «Դա նա է, և միևնույն ժամանակ, նա չէ: Ամեն ինչ փոխվել է: Մի բան, որ կար, այլևս չկա: Նա նույնը չէ: Այն, ինչ հեռացել է, միայն կարող է հոգին լինել»:[35]

Արդյո՞ք Տերն իրականում մահացել ու հարություն է առել: Այո՛: «Մեր կրոնի հիմնական սկզբունքներն Առաքյալների և Մարգարեների վկայություններն են Հիսուս Քրիստոսի մասին՝ որ Նա մահացել է, թաղվել է և կրկին, երրորդ օրը, հարություն է առել և համբարձվել է երկինք. Բոլոր մյուս բաները, որոնք վերաբերում են մեր կրոնին, միայն դրա հավելումներն են»:[36]

Մինչ Հիսուսի մարգարեցված ծնունդը մոտենում էր, հնադարյան Նեփիացի ու Լամանացի ժողովրդի մեջ կային մարդիկ, ովքեր հավատում էին, թեև շատերը կասկածում էին: Վերջապես Նրա ծննդյան նշանը հայտնվեց՝ մի օր ու մի գիշեր, մի օր առանց խավարի՝ ու բոլորն իմացան, որ Փրկիչն է ծնվել:[37] Այսօր նույնպես ոմանք հավատում են Քրիստոսի Հարությանը, սակայն շատերը կասկածում կամ չեն հավատում դրան: Բայց ոմանք գիտեն: Վերջիվերջո բոլորը կտեսնեն ու կիմանան, իսկապես, «նրա առաջ ամեն ծունկ պիտի ծալվի և ամեն լեզու խոստովանի»:[38]

Ես հավատում եմ այդ ժամանակից ի վեր Փրկչի Հարության մասին բազմաթիվ վկայողներին, ում փորձառություններն ու վկայությունները գտնվում են Նոր Կտակարանում. ի թիվս այլոց, Պետրոսի ու Տասներկուսի մյուս աշակերտների, թանկագին ու ջինջ Մարիամ Մագդաղենացու վկայություններին: Ես հավատում եմ Մորմոնի Գրքում զետեղված վկայություններին. ի թիվս այլոց, Առաքյալ Նեփիի ու Լիառատ երկրում նրա հետ գտնվող բազմության վկայություններին: Եվ ես հավատում եմ Ջոզեֆ Սմիթի ու Սիդնի Ռիգդոնի վկայություններին, ովքեր շատ ուրիշ վկայություններից հետո հայտարարեցին այս տնտեսության մեծագույն վկայությունը, «որ, նա ապրո՛ւմ է: Քանզի մենք տեսանք նրան»:[39] Նրա սրաթափանց աչքի հայացքի ներքո ես կանգնում եմ որպես վկա, որ Նազովրեցի Հիսուսը հարություն առած Քավիչն է, և ես վկայում եմ այն ամենի մասին, ինչը հետևում է Նրա Հարության *իրողությանը:* Թող որ դուք ստանաք այդ ամուր վկայությունն ու այդ նույն վկայության բերած հանգստությունը, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ղուկաս 24.5–7:
2. Մատթէոս 28.6–7:
3. Յովհաննու 20.2:
4. Յովհաննու 20.5, 7:
5. Յովհաննու 20.8–9.:
6. Յովհաննու 20.13:
7. Յովհաննու 20.15:
8. James E. Talmage, *Jesus the Christ,* 3rd ed. (1916), 681.
9. Տես Ղուկաս 24.34; Ա. Կորնթացիս 15.5:
10. Տես Մարկոս 16.12; Ղուկաս 24.13–35:
11. Ղուկաս 24.39:
12. Ղուկաս 24.41:
13. Տես Ղուկաս 24.42–43:
14. Գործք Առաքելոց 1.8:
15. Տես 3 Նեփի 11.14–15:
16. 3 Նեփի 11.16–17:
17. Յովհաննու 5.26:
18. Յովհաննու 10.17–18:
19. Տես Ելից 3.14:
20. Ա Կորնթացիս 15.21–22:
21. *The Neal A. Maxwell Quote Book,* ed. Cory H. Maxwell (1997), 287.
22. Տես Ա Հովհաննես 4.8:
23. Ալմա 42.15; տես նաև Մոսիա 15.8–9:
24. 3 Նեփի 27.13–14:
25. Տես Ենովս 1.6:
26. Տես, օրինակ, 3 Նեփի 9.15:
27. Տես, օրինակ, Վարդապետություն և Ուխտեր 76:
28. Տես Վարդապետություն և Ուխտեր 138:
29. Տես Գործք Առաքելոց 1.10–11:
30. Հավատո Հանգանակներ 1.10; տես նաև Սուրբ գրքերի ուղեցույց, «Jesus Christ, Millennial Reign»:
31. Տես, օրինակ, 2 Նեփի 9.15:
32. Տես Յովհաննու 14.12:
33. Վարդապետություն և Ուխտեր 84.19–20:
34. Հոբ 19.26:
35. Թոմաս Ս. Մոնսոն, «Գիտեմ, ապրում է Փրկիչն իմ», *Լիահոնա*, մայիս 2007, 22:
36. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 49:
37. Տես 3 Նեփի 1.15–20:
38. Մոսիա 27.31:
39. Վարդապետություն և Ուխտեր 76.22–23:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Մինչև նոր հանդիպում

Թող Հոգին, որը մենք զգացինք այս անցած երկու օրերի ընթացքում, մեզ հետ լինի և մեզ հետ մնա, երբ մենք անցնենք մեր առօրյային:

Իմ եղբայրներ և քույրեր, ինչպիսի հրաշալի համաժողով էր սա: Մենք հոգևոր սնուցում ստացանք, լսելով այն տղամարդկանց և կանանց ոգեշնչված խոսքերը, ովքեր դիմեցին մեզ: Երաժշտությունը գերազանց էր, ուղերձները պատրաստվել էին և հղվել Սուրբ Հոգու հուշումներով, իսկ աղոթքները մեզ ավելի մոտեցրին երկնքին: Մենք վեհացում ապրեցինք, մասնակցելով միասին:

Ես հույս ունեմ, որ մենք ժամանակ կգտնենք կարդալու համաժողովի ուղերձները, երբ դրանք մատչելի լինեն LDS.org կայքում հաջորդ մի քանի օրվա ընթացքում և տպագրվեն *Ensign* և *Լիահոնա* ամսագրերի գալիք համարներում, քանի որ դրանք ուշադիր վերընթերցման և ուսումնասիրության են արժանի:

Ես գիտեմ, որ դուք միանում եք ինձ, արտահայտելով անկեղծ երախտագիտություն այն եղբայրներին և քույրերին, ովքեր ազատվեցին այս համաժողովին իրենց ծառայություններից: Նրանք լավ ծառայեցին և մեծ ներդրում ունեցան Տիրոջ աշխատանքում: Նրանց նվիրումն ամբողջական էր:

Մենք հաստատեցինք նաև՝ ձեռքի բարձրացմամբ, եղբայրներին, ովքեր կանչվեցին նոր պաշտոնների: Մենք ողջունում ենք նրանց և ցանկանում, որ նրանք իմանան, որ մենք հաճույքով կաշխատենք իրենց հետ Վարդապետի գործի համար:

Խորհելով ուղերձների շուրջ, որոնք մենք ստացանք, թող որ մենք վճռական լինենք անելու մի փոքր ավելի լավ, քան անցյալում: Թող որ մենք լինենք բարի և սիրալիր նրանց հանդեպ, ովքեր չեն կիսում մեր համոզմունքները և մեր չափանիշները: Փրկիչը բոլոր տղամարդկանց և կանանց տվեց սիրո և բարի կամքի ուղերձը: Եկեք միշտ հետևենք Նրա օրինակին:

Այսօր աշխարհում մենք բազմաթիվ լուրջ խնդիրների ենք հանդիպում, սակայն ես հավատացնում եմ ձեզ, որ մեր Երկնային Հայրը մտածում է մեր մասին: Նա կառաջնորդի և կօրհնի մեզ, եթե մենք մեր հավատքը և վստահությունը դնենք Իր վրա, Նա կօգնի մեզ անցնել մեր ճանապարհին հանդիպող ցանկացած դժվարության միջով:

Թող երկնքի օրհնությունները լինեն յուրաքանչյուրիս հետ: Թող մեր տները լցվեն սիրով, բարությամբ և Տիրոջ Հոգով: Թող մենք շարունակ սնուցենք ավետարանի մասին մեր վկայությունները, որպեսզի դրանք պաշտպանություն լինեն թշնամու հարձակումներից: Թող Հոգին, որը մենք զգացինք այս անցած երկու օրերի ընթացքում, մեզ հետ լինի և մեզ հետ մնա, երբ մենք անցնենք մեր առօրյային, և թող որ մենք միշտ գտնվենք Տիրոջ աշխատանքի մեջ:

Ես բերում եմ իմ վկայությունն այն մասին, որ այս աշխատանքը ճշմարիտ է, որ մեր Փրկիչն ապրում է, որ Նա առաջնորդում և ուղղորդում է Իր Եկեղեցին այստեղ՝ Երկրի վրա: Նա իսկապես մեր Հայրն է, և Նա անձնական և իրական է: Թող որ մենք հասկանանք, թե որքան է Նա ցանկանում մոտենալ մեզ, որքան հեռու է Նա ցանկանում գնալ՝ մեզ օգնելու համար, և թե որքան շատ է Նա մեզ սիրում:

Իմ եղբայրներ և քույրեր, թող Աստված օրհնի ձեզ: Թող Նրա խոստացած խաղաղությունը լինի ձեզ հետ այժմ և հավիտյան:

Ես հրաժեշտ եմ տալիս ձեզ մինչև մենք կրկին կհանդիպենք վեց ամիս անց, և ես անում եմ դա Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ և Փրկչի անունով, ամեն: ■

Ռոզմարի Մ. Վիքսոմ
Երեխաների Միության գերագույն նախագահ

Պատվիրանները պահելը պաշտպանում է մեզ, պատրաստում է մեզ և հզորացնում է մեզ

Մենք ուխտ-կապող կանայք ենք՝ բոլոր տարիքի, ովքեր քայլում են մահկանացու կյանքի ճանապարհով դեպի հետ՝ Նրա ներկայությունը:

Օ, քույրեր, մենք սիրում ենք ձեզ: Վերջերս Մեքսիկա այցելելիս ես զգացի քույրության այն ոգին, որն ունենք բոլորս այս երեկո: Պատկերացրեք այս տեսարանը: Կիրակի առավոտյան մենք նոր վերջացրել էինք Երեխաների խմբի դասը և երեխաները, ուսուցիչները և ես խառնվել էինք մարդաշատ նախասրահում: Հենց այդ պահին բացվեցին Երիտասարդ Կանանց դասարանի դռները և ես տեսա երիտասարդ կանանց և նրանց ղեկավարներին: Բոլորս շտապեցինք գրկախառնվելու: Կիսաշրջազգեստիցս բռնած երեխաներով և երիտասարդ կանանցով շրջապատված՝ ես ցանկացա արտահայտել այն զգացմունքները, որ ունեի այդ պահին:

Ես չեմ խոսում իսպաներեն, այնպես որ միտքս միայն անգլերեն բառեր եկան: Ես նայեցի նրանց բոլորի դեմքերին և ասացի. «Մենք մեր Երկնային Հոր դուստրերն ենք, ով սիրում է մեզ և ում սիրում ենք մենք»: Բոլորը անմիջապես միացան իսպաներենով: Այդտեղ՝ այդ մարդաշատ նախասրահում, միասին արտասանելով Երիտասարդ Կանանց թեման, մենք ասացինք. «Մենք կլինենք Աստծո վկաները բոլոր ժամանակներում և բոլոր բաներում և բոլոր տեղերում»:

Այսօր մենք հավաքվել ենք միասին ամբողջ աշխարհում որպես Նրա աշակերտներ, ցանկություն ունենալով պաշտպանելու և սատարելու Աստծո արքայությունը: Մենք մեր Երկնային Հոր դուստրերն ենք: Մենք ուխտ-կապող կանայք ենք՝ բոլոր տարիքի, ովքեր քայլում են մահկանացու կյանքի ճանապարհով դեպի հետ՝ Նրա ներկայությունը: Պատվիրանները պահելը պաշտպանում է մեզ, նախապատրաստում և հզորացնում:

Մեր մեջ այսօր կան աղջիկներ, ովքեր Երեխաների խմբի տարիքի են: Ձեզանից ոմանք վերջերս կատարել եք առաջին քայլը դեպի հավերժական կյանք տանող ճանապարհին՝ մկրտության արարողության միջոցով:

Նայեք ձեր շուրջը: Ապագան պայծառ է, քանի դեռ տեսնում եք կանանց, ովքեր նույնպես կապել են ուխտեր և պատրաստ են ցույց տալ ձեզ ձեր առաջ ընկած ուղին:

Եթե դուք 8, 9, 10 կամ 11 տարեկան եք, անկախ նրանից, թե որտեղ եք՝ Համաժողովների Կենտրոնում, աշխարհով մեկ որևէ հավաքատանը, կարո՞ղ եք կանգնել: Բարի

Մեխիկո Սիթի, Մեքսիկա

գալուստ կանանց ընդհանուր ժողովին: Խնդրում եմ, մնացեք կանգնած, որովհետև մենք ուզում ենք, որ դուք մասնակցեք այսօր: Ես այժմ կերգեմ Երեխաների խմբի մի երգի մեղեդին: Եվ հենց որ ճանաչեք այն, սկսեք երգել ինձ հետ: Բայց պետք է այնպես երգեք, որ բոլորը լսեն:

Ցույց տուր, ինչպես Աստծո
լույսով քայլեմ,
Ցույց տուր, թե ինչպես Նրան
աղոթեմ,
Ցույց տուր, որ ճշմարիտը
ճանաչեմ,
Ցույց տուր, ցույց տուր, որ
լույսով քայլեմ:

Աղջիկներ, մնացեք կանգնած, իսկ 12 և բարձր տարիքի աղջիկները թող այժմ երգեն երկրորդ տունը:

Եկ, փոքրիկս, միասին սովորենք,
Պատվիրանները մեր Հոր
կատարենք,
Որ դարձյալ Նրա ներկայությամբ
ապրենք,
Հավերժ, հավերժ, Նրա լույսով
քայլենք:[1]

Հիանալի էր: Կարող եք նստել: Շնորհակալություն:

Տարբեր տարիքի կանայք՝ մենք քայլում ենք *Նրա* լույսով: Մեր ճանապարհորդությունը այդ ուղով անձնական է և պայծառ լուսավորված Փրկչի սիրով:

Մենք մտնում ենք հավերժական կյանքի ճանապարհի դարբասներով մկրտության արարողության և ուխտի միջոցով, ապա ստանում ենք Սուրբ Հոգու պարգևը: Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը հարցնում է մեզ. «Արդյո՞ք [մենք] հասկանում ենք և արդյո՞ք [մեր] երեխաները հասկանում են, որ երբ [մենք] մկրտվում ենք, [մենք] հավերժ փոխվում ենք»:

Նա նաև բացատրել է, որ «երբ մենք հասկանում ենք մեր մկրտության ուխտը և Սուրբ Հոգու պարգևը, մեր կյանքը փոխվում է և մենք լիակատար հավատարմության մեջ ենք մտնում Աստծո արքայություն: Երբ գայթակղությունները հանդիպում են մեր ճանապարհին, եթե մենք

լսում ենք, Սուրբ Հոգին հիշեցնում է մեզ, որ մենք խոստացել ենք հիշել մեր Փրկչին և հնազանդվել Աստծո պատվիրաններին»:[2]

Ամեն շաբաթ, երբ մենք ընդունում ենք հաղորդության խորհրդանիշերը, մենք թարմացնում ենք մեր մկրտության ուխտը: Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ասել է. «Երբ մենք կանգնում ենք մկրտության ջրերի մեջ, մենք նայում ենք տաճարին: Երբ մենք ընդունում ենք հաղորդությունը, մենք նայում ենք տաճարին: Մենք պարտավորվում ենք միշտ հիշել Փրկչին և պահել Նրա պատվիրանները՝ որպես պատրաստություն տաճարի սուրբ արարողություններին մասնակցելուն»:[3]

Տաճարային օրհնությունները տանում են դեպի մեծագույն օրհնությունները, որոնք հասանելի են Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Դրանք այն արարողություններն են, որոնք անհրաժեշտ են մեր վեհացման համար սելեստիալ արքայությունում: Երբ մենք ձգտում ենք պահել մեր ուխտերը, անհամապատասխանության և անկատարության մեր զգացմունքները սկսում են մարել, իսկ տաճարի արարողությունները և ուխտերը կենդանանում են: Յուրաքանչյուրը ողջունվում է քայլելու հավերժական կյանքի այդ ուղով:

Ես հիանում եմ աղջիկների, երիտասարդ կանանց և կանանց ուժով, որոնց հանդիպում եմ աշխարհով մեկ, որոնց ոտքերը հաստատուն դրված են այդ ուղու վրա: Թույլ տվեք կիսվել իմ հանդիպած ուխտյալ աղջիկների և կանանց մի քանի օրինակներով:

Լուանան 11 տարեկան էր, երբ ես այցելեցի նրանց ընտանիքը Բուենոս Այրեսում, Արգենտինա: Մանկության տարիներին ստացված վնասվածքի պատճառով Լուանան չէր կարողանում խոսել: Նա չէր խոսել տարիներ շարունակ: Նա լուռ նստում էր մեր զրույցների ժամանակ: Ես չէի կորցնում նրանից գոնե մի շշուկ լսելու հույսը: Նա ուշադիր նայում էր ինձ, կարծես, արտասանվող խոսքերը անհրաժեշտ չէին ինձ նրա սիրտն իմանալու համար: Աղոթքից հետո, երբ մենք կանգնեցինք, որ գնայինք, Լուանան տվեց ինձ մի նկար: Նա նկարել էր Հիսուս Քրիստոսին Գեթսեմանիի Այգում: Ես հասկացա նրա վկայությունը՝ բարձր և հստակ: Լուանան ուխտ կապեց մկրտության ժամանակ՝ լինելու Աստծո վկան «բոլոր ժամանակներում և բոլոր բաներում, և

բոլոր տեղերում»:[4] Նա հասկացել էր Հիսուս Քրիստոսի Քավությունը, որի մասին վկայել էր իր նկարի միջոցով: Արդյո՞ք նա հասկացել է, որ Քավության ամրացնող և կատարելագործող զորության միջոցով նա կարող է բուժվել և նորից խոսել: Այդ օրից, երեք տարի առաջ, Լուանան առաջադիմել է խոսելու իր ջանքերում: Այժմ իր ընկերուհիների հետ նա մասնակցում է Երիտասարդ Կանանց կազմակերպությանը: Հավատարիմ մնալով մկրտության ժամանակ իր կապած ուխտերին, նա շարունակում է կիսվել Փրկչի մասին իր վկայությամբ:

Ամբողջ աշխարհում երիտասարդները ձգվում են դեպի տաճարները: Լիմայում, Պերու, տաճարի մուտքի մոտ ես հանդիպեցի մի հոր՝ իր երեք դուստրերով: Ես տեսա նրանց դեմքերի լույսը: Դուստրերից երկուսը լուրջ հաշմանդամություն ունեին և նստած էին անվասայլակների մեջ: Երրորդ դուստրը, մինչ հոգում էր իր քրոջ կարիքները, ասաց, որ տանը ևս երկու քույր ունեին: Նրանք նույնպես անվասայլակների մեջ էին: Նրանք չէին կարող 14 ժամ ճանապարհորդել տաճար: Տաճարն այնքան կարևոր էր այդ հոր և նրա դուստրերի համար, որ նրանք չորսով այդ օրը եկել էին տաճար, որտեղ երկուսը պարզապես պետք է նայեին, թե ինչպես էր մեկը մկրտվում մահացածի համար և կատարում այդ սրբազան արարողությունը: Նեփիի նման նրանք հրճվում էին «Տիրոջ ուխտերով»:[5]

Միայնակ մի կին, որին ես ճանաչում եմ, բարձր է գնահատում հաղորդության ժողովի շաբաթական արարողությունը և դրա սրբազան խոստումը, «որ միշտ ունենանք Նրա Հոգին մեզ հետ»:[6] Այդ մշտական ընկերակցությունը խոստում է, որը մեղմացնում է նրա միայնակության ալիքները: Այն նրան տալիս է ուժ՝ զբաղվելու իր տաղանդների զարգացմամբ, և ցանկություն՝ ծառայելու Տիրոջը: Նա մեծ ուրախություն է գտել իր երեխաների մեջ, հիանալով նրանցով ողջ կյանքում, իսկ երբ նա լուռ խաղաղություն է փնտրում, դուք կարող եք գտնել նրան տաճարում:

Վերջապես, տարեց մի կին, 90-ից բարձր, տեսել է, ինչպես են մեծանում իր երեխաները և թոռները, և ինչպես աշխարհ եկան իր ծոռները: Ինչպես մեզանից շատերը, նա ունեցել է վշտերով, դժվարություններով և աննկարագրելի ուրախությամբ լի կյանք: Նա խոստովանում է, որ եթե նորից գրեր իր կյանքի պատմությունը, չէր ընդգրկի որոշ գլուխներ, որոնք գրվել են: Սակայն, ժպիտով նա ասում է. «Ես պետք է մի քիչ էլ ապրեմ, որ տեսնեմ, թե ինչ է կատարվելու այս ամենի հետ»: Նա շարունակում է ամուր պահել իր ուխտերը, լինելով ուղու վրա:

Նեփին ուսուցանել է.

«Եվ այժմ, իմ սիրելի եղբայրներ, հետո, երբ դուք ներս եք մտել այս նեղ և անձուկ արահետը, ես կհարցնեի, թե արդյո՞ք ամեն ինչ արված է: Ահա, ես ասում եմ ձեզ՝ ոչ . . .

Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք:[7]

Մեզանից յուրաքանչյուրն այդ ուղու վրա է: Այս երեկո մենք երգեցինք լույսով քայլելու մասին: Որպես անհատներ մենք ամուր ենք: Երբ Աստծո հետ միասին ենք, մեզ հնարավոր չէ կանգնեցնել:

Տերն ասել է Էմմա Սմիթին. «Ուստի, բարձրացրու սիրտդ և ցնծա, և հավատարիմ մնա այն ուխտերին, որոնք դու արել ես»:[8]

Մենք հրճվում ենք, որ պահելով մեր ուխտերը, մենք կարող ենք զգալ մեր Երկնային Հոր և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի սերը: Ես վկայում եմ, որ Նրանք ապրում են: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Ցույց տուր ինձ, որ լույսով քայլեմ», *Hymns,* no. 304; կամ *Children's Songbook,* 177:
2. Robert D. Hales, "The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom," *Liahona,* Jan. 2001, 8, 7.
3. Դեյվիդ Ա. Բեդնար, «Պատվավոր անուն և դիրք ունենալ», *Լիահոնա,* մայիս 2009, 98:
4. Մոսիա 18.9:
5. 2 Նեփի 11.5:
6. Վարդապետություն և Ուխտեր 20.77:
7. 2 Նեփի 31.19–20:
8. Վարդապետություն և Ուխտեր 25.13:

Բոնի Լ. Օսկարսոն
Երիտասարդ կանանց գերագույն նախագահ

Քույրություն՝ Օհ, որքան մենք միմյանց կարիքն ունենք

Մենք պետք է դադարենք մեր տարբերությունների վրա կենտրոնանալը և տեսնենք մեր ընդհանուր կողմերը:

Այդ տեսաֆիլմում մենք տեսանք ութ երկրներ և լսեցինք ինը տարբեր լեզուներ: Պատկերացրեք, թե որքան ավելի շատ լեզուներ են ավելացվել այդ վերջին հատվածին: Հուզումնալի է իմանալը, որ որպես համաշխարհային քույրություն մենք կարողացանք բարձրացնել մեր ձայները հավերժական ճշմարտության մասին վկայությամբ, որ մենք սիրառատ Երկնային Հոր դուստրերն ենք:

Ինչպիսի մեծ արտոնություն է լինել այստեղ այս պատմական առիթով և դիմել Եկեղեցու ութ և բարձր տարիքի բոլոր կանանց: Այս երեկո մեր միասնության մեջ վիթխարի ուժ կա: Երբ տեսնում եմ մեզ բոլորիս հավաքված միասին՝ Համաժողովների Կենտրոնում և մտածում հազարավոր ուրիշների մասին, ովքեր դիտում են այս հեռարձակումը աշխարհի տարբեր վայրերում, հասկանում եմ, որ մեր վկայությունների միացյալ ուժը և առ Հիսուս Քրիստոս հավատքն անշուշտ դարձնում են սրանք մեծագույն հավատքով լի և կանանց հզոր հավաքույթներ Եկեղեցու, եթե ոչ աշխարհի պատմության մեջ:

Այս երեկո մենք՝ կանայք հրճվում ենք Եկեղեցում մեր շատ տարբեր դերերով: Չնայած մենք շատ տարբեր ենք և եզակի, մենք նաև գիտակցում ենք, որ բոլորս նույն Երկնային Հոր դուստրերն ենք, ինչը մեզ դարձնում է քույրեր: Մենք միավորված ենք, Աստծո թագավորությունը կառուցելով և ուխտերով, որոնք մենք կապել ենք, անկախ նրանից, թե ինչպիսին են մեր հանգամանքները: Այս միացյալ հավաքը, անկասկած, ամենափառահեղ քույրությունն է երկրի երեսին:[1]

Լինել քույրեր նշանակում է, որ կա անխախտ կապ մեր միջև: Քույրերը հոգ են տանում միմյանց համար, հետևում են միմյանց, մխիթարում միմյանց և պատրաստ են օգնել միմյանց՝ լավ, թե նեղ պահերին: Տերն ասել է. «Ես ասում եմ ձեզ, եղեք մեկ, և եթե դուք մեկ չեք իմը չեք»:[2]

Հակառակորդը կամենում է, որ մենք քննադատող կամ դատապարտող լինենք մեկմեկու: Նա ուզում է, որ մենք կենտրոնանանք մեր տարբերությունների վրա և համեմատենք մեզ միմյանց հետ: Դուք, կարող է, սիրում եք մեկ ժամ լարված վարժություն անել ամեն օր, որովհետև դա ձեզ օգնում է այնքան լավ զգալ, մինչդեռ ես սպորտային իրադարձություն եմ համարում, եթե կարողանում եմ վերելակը օգտագործելու փոխարեն մեկ հարկ աստիճաններով բարձրանալ: Մենք, այնուամենայնիվ, կարող ենք ընկերներ լինել, այնպես չէ՞:

Մենք՝ որպես կանայք կարող ենք առանձնապես խիստ լինել մեր հանդեպ: Երբ մենք համեմատում ենք միմյանց, մենք միշտ անհամապատասխան ենք զգում կամ վրդովված մյուսների հանդեպ: Քույր Պատրիցիա Հոլլանդն ասել է մի առիթով.«Բանը նրանում է, որ մենք ուղղակի չենք կարող կոչել

Սիդնեյ, Ավստրալիա

մեզ Քրիստոնյաներ և շարունակել մեկս մյուսին կամ ինքներս մեզ այդպես խստորեն դատել»[3]: Նա շարունակում է՝ ասելով, որ չկա ոչ մի բան, որն արժանի դարձնի մեզ կորցնելու կարեկցանքը և քույրությունը: Մենք ուղղակի պետք է հանգստանանք և ուրախանանք մեր աստվածատուր տարբերություններով: Մենք պետք է հասկանանք, որ մենք բոլորս ցանկանում ենք ծառայել արքայությունում՝ օգտագործելով մեր եզակի տաղանդներն ու պարգևները մեր սեփական ձևով: Այդ ժամանակ մենք կարող ենք վայելել մեր քույրությունը և մեր հարաբերությունները, և կսկսենք ծառայել:

Փաստը նրանում է, որ մենք իսկապես և անկեղծորեն միմյանց կարիքն ունենք: Կանայք, բնականաբար, ձգտում են ընկերության, աջակցության և ընկերական փոխհարաբերությունների: Մենք շատ բան ունենք սովորելու միմյանցից և հաճախ թույլ ենք տալիս, որ ինքնաստեղծ խոչընդոտները պահեն մեզ ընկերական փոխհարաբերություններից, որոնք կարող են լինել մեծագույն օրհնությունների շարքում մեր կյանքում: Օրինակ, մենք՝ կանայք, ովքեր մի փոքր ավելի մեծ ենք, կարիք ունենք այն բաների, որոնք Երեխաների Խմբի աղջիկները կարող են առաջարկել: Մենք շատ բան կարող ենք սովորել ձեզանից Քրիստոսանման ծառայության և սիրո մասին:

Ես վերջերս լսեցի մի սքանչելի պատմություն Սառա անունով մի փոքրիկ աղջկա մասին, որի մայրը հնարավորություն ուներ օգնելու Բրենդա անունով մեկ այլ կնոջ իր ծխում, որն ուներ ցրված սկլեռոզ: Սառան սիրում էր իր մայրիկի հետ գնալ՝ օգնելու Բրենդային: Նա Բրենդայի ձեռքերին լոսյոն էր քսում և մերսում էր նրա մատները և թևերը, որովհետև նա հաճախ ցավի մեջ էր լինում: Ապա Սառան սովորեց նրբորեն ձգել Բրենդայի թևերը նրա գլխից վեր՝ նրա մկանները վարժելու համար: Սառան սանրում էր Բրենդայի մազերը և զբաղվում նրա հետ, մինչ նրա մայրը հոգ էր տանում նրա մյուս կարիքների համար: Սառան սովորեց ուրիշ մարդկանց ծառայելու կարևորությունն ու ուրախությունը և սկսեց հասկանալ, որ նույնիսկ երեխան կարող է տարբերություն մտցնել մեկ ուրիշ մարդու կյանքում:

Ես սիրում եմ Ղուկասի առաջին գլխի օրինակը, որը նկարագրում է այն ջերմ փոխհարաբերությունը, որը գոյություն ուներ Մարիամի՝ Հիսուսի մոր և և նրա զարմուհու՝ Եղիսաբեթի միջև: Մարիամը դեռ երիտասարդ կին էր, երբ իմացավ Աստծո Որդու մայրը լինելու նրա նշանավոր առաքելության մասին: Սկզբում դա պետք է որ ծանր պարտականություն թվար միայնակ կրելու համար: Տերն Ինքն ապահովեց Մարիամին մեկին, ով կկիսեր նրա բեռը: Գաբրիել հրեշտակի ուղերձի միջոցով Մարիամին տրվեց վստահելի և համակրելի կնոջ անունը, որին նա կարող էր դիմել աջակցության համար:

Այդ երիտասարդ աղջիկը և նրա զարմուհին, որն «իր օրերը անց էր կացրել»,[4] կիսում էին մի ընդհանուր կապ իրենց հրաշագործ հղիությամբ և ես կարող եմ միայն պատկերացնել, թե երկուսի համար էլ որքան շատ կարևոր էին այն երեք ամիսները, որ նրանք անցկացրեցին միասին, քանի որ նրանք կարող էին խոսել մեկմեկու հետ, միմյանց դրության մեջ մտնել և աջակցել մեկը մյուսին իրենց եզակի կոչումներում: Սերունդների միջև կանացի հոգատարության ինչպիսի սքանչելի օրինակ էին նրանք:

Մեզանից նրանք, ովքեր մի քիչ ավելի հասուն են, կարող են ունենալ վիթխարի ազդեցություն ավելի երիտասարդ սերունդների վրա: Երբ մայրս մի փոքրիկ աղջիկ էր, նրա ծնողներից ոչ մեկը ակտիվ չէր Եկեղեցում: Նույնիսկ հինգ տարեկան փոքր հասակում նա ինքնուրույն էր գնում Եկեղեցի և մասնակցում իր ժողովներին՝ Երեխաների խմբում, կիրակնօրյա և հաղորդության ժողովներին, որոնք բոլորը տարբեր ժամերի էին:

Ես վերջերս հարցրեցի մայրիկիս, հանուն ինչի էր նա դա անում շաբաթ առ շաբաթ, երբ նա աջակցություն կամ խրախուսանք չուներ տանը: Նրա պատասխանն էր. «Ես ունեի Երեխաների խմբի ուսուցիչներ, ովքեր սիրում էին ինձ:» Այդ ուսուցիչները հոգ էին տանում նրա մասին և նրան ուսուցանում էին ավետարանը: Նրանք սովորեցնում էին նրան, որ նա Հայր ուներ երկնքում, որը սիրում էր իրեն և իր համար նրանց մտահոգությունն էր, որ նրան ստիպում էր գնալ շաբաթ շաբաթի ետևից: Մայրս ասաց ինձ.«Դա իմ վաղ կյանքի ամենակարևոր ազդեցություններից էր:» Հուսով եմ, մի օր կկարողանամ շնորհակալություն հայտնել այդ հիանալի քույրերին: Ինչ վերաբերում է Քրիստոսանման ծառայությանը՝ գոյություն չունեն տարիքային սահմաններ:

Մի քանի շաբաթ առաջ ես հանդիպեցի Կալիֆոռնիայի ցցի Երիտասարդ Կանանց նախագահին, որն ինձ ասաց, որ իր 81-ամյա մայրը վերջերս կանչվել է լինելու Համաստեղության խորհրդատու: Դա այնպես շարժեց հետաքրքրությունս, որ ես զանգահարեցի նրա մայրիկին: Երբ Քույր Վալ Բեյքերի եպիսկոպոսը խնդրել էր նրան հանդիպել իր հետ, նա անհամբեր սպասում էր կանչվելու որպես գրադարանավար կամ ծխի պատմաբան: Երբ նրան խնդրեցին ծառայել որպես Համաստեղության խորհրդատու Երիտասարդ աղջիկների համար, նրա արձագանքն էր. «Դուք համոզվա՞ծ եք»:

Նրա եպիսկոպոսը լրջորեն պատասխանեց. «Քույր Բեյքեր, ոչ մի սխալ չկա, այս կոչումը Տիրոջից է»:

Նա ասաց, որ այլ պատասխան չուներ, բացի ասելուց «Իհարկե»:

Ես սիրում եմ այս ոգեշնչումը, որ այս եպիսկոպոսը զգացել էր, որ Համաստեղության չորս քույրերը իր ծխում շատ բան ունեին սովորելու այս հասուն քրոջ իմաստությունից, փորձառությունից և կյանքի օրինակից: Իսկ գուշակեք, թե ում կդիմի Քույր Բեյքերը, երբ նա կարիք ունենա օգնության իր Facebook-ի էջում աշխատելու համար:

Մտածում եմ այն մեծ օգնության մասին, որ Սփոփող Միության քույրերը կարող են առաջարկել՝ ողջունելով երիտասարդ քույրերին, ովքեր վերջերս Երիտասարդ

Կանանց կազմակերպությունում էին: Մեր երիտասարդ քույրերը հաճախ են զգում, կարծես, թե տեղ կամ ընդհանուր որևէ բան չունեն նրանց հետ, ովքեր Սփոփող Միությունում են: Նախքան 18 տարեկան դառնալը, նրանք կարիք ունեն Երիտասարդ Կանանց ղեկավարների և մայրերի, ովքեր ուրախությամբ կվկայեն, Սփոփող Միության մեծ օրհնությունների մասին: Նրանք պետք է խանդավառություն զգան՝ դառնալով այդ փառահեղ կազմակերպության մի մասը: Երբ երիտասարդ կանայք գալիս են Սփոփող Միություն, նրանք ամենաշատը կարիք ունեն մի ընկերուհու, որի կողքին նստեն, իրենց ուսերը գրկած մի ձեռքի և ուսուցանելու և ծառայելու հնարավորության: Եկեք բոլորս օգնության հասնենք միմյանց՝ մեր կյանքի տեղափոխությունների և նշանակետերի միջով անցնելիս:

Շնորհակալություն Եկեղեցու բոլոր կանանց, ովքեր օգնության են հասնում, անցնելով տարիքային և մշակութային սահմանները՝ օրհնելու և ծառայելու ուրիշներին: Երիտասարդ Կանայք ծառայում են Երեխաների խմբի անդամներին և տարեցներին: Բոլոր տարիքի միայնակ քույրերը անհաշիվ ժամեր են անցկացնում, հայտնաբերելով իրենց շրջապատում գտնվողների կարիքները: Մենք գնահատում ենք հազարավոր երիտասարդ կանանց, ովքեր իրենց կյանքի 18 ամիսները նվիրաբերում են՝ կիսվելով ավետարանով աշխարհի հետ: Բոլոր այս բաները ապացուցում, ինչպես մեր սիրելի օրհներգն է նշում, որ «հրեշտակների հանձնարարությունը տրվել է կանանց»:[5]

Եթե կան արգելագծեր, դա այն պատճառով է, որ մենք ինքներս ենք ստեղծում դրանք: Մենք պետք է դադարենք մեր տարբերությունների վրա կենտրոնանալը և տեսնենք մեր ընդհանուր կողմերը. այդ ժամանակ մենք կսկսենք իրականացնել մեր մեծագույն ներուժը և կհասնենք մեր մեծագույն բարիքին այս աշխարհում: Քույր Մարջորի Փ. Հինքլին մի անգամ ասել է.« Օհ, որքան մենք միմյանց կարիքն ունենք:

Վիեննա, Ավստրիա

Մեզանից նրանք, ովքեր տարեց են, կարիք ունեն նրանց, ովքեր երիտասարդ են: Եվ, հավանաբար, դուք՝ որ երիտասարդ եք, կարիք ունեք մեզանից ոմանց, ովքեր տարեց են: Սա սոցիոլոգիական փաստ է, որ կանայք կարիք ունեն կանանց: Մենք կարիք ունենք միմյանց հետ խորը և բավարարող հավատարիմ ընկերության:»[6] Քույր Հինքլին ճիշտ էր՝ օհ, որքան մենք միմյանց կարիքն ունենք:

Քույրեր, չկա ոչ մի ուրիշ կանանց խումբ աշխարհում, որն ունենա ավելի մեծ հասանելիություն մեծագույն օրհնություններին, քան մենք՝ Վերջին Օրերի Սրբերի կանայք: Մենք Տիրոջ Եկեղեցու անդամներն ենք և, անկախ մեր անձնական հանգամանքներից, մենք բոլորս կարող ենք վայելել քահանայության իշխանության լիակատար օրհնությունները՝ ուխտերը պահելու միջոցով, որոնք մենք կապել ենք մկրտության ժամանակ և տաճարում: Մենք ունենք ապրող մարգարեներ, ովքեր առաջնորդում են և ուսուցանում մեզ և մենք վայելում ենք Սուրբ Հոգու մեծ պարգևը, որը ծառայում է որպես մխիթարություն և ուղեցույց մեր կյանքում: Մենք օրհնված ենք ձեռք ձեռքի աշխատելու արդարակյաց եղբայրների հետ, ամրացնելով մեր տներն ու ընտանիքները: Մեզ հասանելի են տաճարային արարողությունների ուժը և զորությունը և էլ ավելի շատ բաներ:

Բոլոր այս հրաշալի օրհնությունները վայելելուց բացի, մենք ունենք միմյանց՝ քույրեր Հիսուս Քրիստոսի ավետարանում: Մենք օրհնվել ենք մեղմ և գթառատ էությամբ, որը հնարավորություն է տալիս մեզ մատուցել Քրիստոսանման սեր և ծառայություն նրանց, ովքեր մեր շրջապատում են: Եթե մենք նայենք մեր տարիքային, մշակութային և հանգամանքային տարբերություններից այն կողմ՝ հոգ տանելով և ծառայելով միմյանց, մենք կլցվենք Քրիստոսի մաքուր սիրով և ոգեշնչմամբ, որն օգնում է մեզ իմանալ՝ երբ և ում ծառայել:

Ես հղում եմ ձեզ մի հրավեր, որը լույս է ընծայվել անցյալում, Սփոփող Միության մի Նախագահի կողմից, ով ասել է. «Ես ձեզ կոչ եմ անում ոչ միայն ավելի շատ սիրել միմյանց, այլ *ավելի լավ* սիրել միմյանց»:[7] Թող որ մենք ուղղակի գիտակցենք, թե որքան շատ ունենք միմյանց կարիքը, և թող բոլորս սիրենք միմյանց ավելի լավ, սա է իմ աղոթքը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Barbara B. Smith, “The Bonds of Sisterhood,” *Ensign,* Mar. 1983, 20–23:
2. Վարդապետություն և Ուխտեր 38.27:
3. Patricia T. Holland, “‘One Thing Needful’: Becoming Women of Greater Faith in Christ,” *Ensign,* Oct. 1987, 29.
4. Ղուկաս Ա.7:
5. “As Sisters in Zion,” *Hymns,* no. 309.
6. *Glimpses into the Life and Heart of Marjorie Pay Hinckley,* ed. Virginia H. Pearce (1999), 254–55.
7. Bonnie D. Parkin, “Choosing Charity: That Good Part,” *Liahona,* Nov. 2003, 106.

Լինդա Ք. Բըրթն
Սփոփող Միության Գերագույն Նախագահ

Պահանջվում են ձեռքեր և սրտեր աշխատանքն արագացնելու համար

Մենք կարող ենք առաջարկել ձեռքեր և սրտեր՝ արագացնելու համար Երկնային Հոր սքանչելի աշխատանքը:

Սիրելի քույրեր, ինչպես ենք մենք սիրում ձեզ: Դիտելով այդ հիանալի տեսաֆիլմը, արդյոք դուք տեսա՞ք ձեր իսկ ձեռքը ինչ որ մեկին օգնության հասնելիս ուխտի այդ արահետում: Ես մտածում էի երեխաների միության մի փոքրիկ աղջկա մասին, որի անունը Բրին է, որն ունի միայն մեկ ձեռք և, այնուամենայնիվ, նա օգտագործում է այդ ձեռքը օգնության հասնելու՝ օրհնելու իր ընտանիքին և իր ընկերներին՝ Վերջին Օրերի Սրբերին և նրանց, ովքեր ուրիշ հավատքից են: Մի՞թե նա զեղեցիկ չէ: Եվ այդպես էլ՝ դուք: Քույրեր, մենք կարող ենք առաջարկել ձեռքեր և սրտեր՝ արագացնելու համար Երկնային Հոր սքանչելի աշխատանքը:

Ճիշտ ինչպես մեր հավատարիմ քույրերը սուրբ գրություններում, ինչպես օրինակ՝ Եվան, Սարան, Մարիամը և շատ ուրիշներ, գիտեին իրենց ինքնությունը և նպատակը, Բրինը գիտի, որ նա Աստծո դուստրն է:[1] Մենք նույնպես կարող ենք իմանալ մեր իսկ աստվածային

ժառանգությամբ՝ որպես Աստծո սիրելի դուստրեր, և այն կենսական աշխատանքով, որ Նա ունի մեզ համար պահած:

Փրկիչն ուսուցանել է.«Եթե մէկը կամենում է նորա կամքն անել, նա կիմանայ այս վարդապետութեան համար»:[2] Իսկ մենք ի՞նչ պետք է իմանանք և անենք՝ «մի օր նրա հետ ապրելու համար»:[3] Մենք կարող ենք սովորել երիտասարդ հարուստ մարդու պատմությունից, ով հարցրեց Հիսուսին, թե ինչ պետք է աներ, որպեսզի ստանար հավերժական կյանք:

Հիսուսը պատասխանեց նրան. «Իսկ թէ որ կամիս կեանքը մտնել, պահիր պատուիրանքները»:

Երիտասարդը հարցրեց Նրան, թե որոնք նա պետք է պահի: Հիսուսն այդ ժամանակ հիշեցրեց նրան Տասը Պատվիրաններից մի քանիսը, որոնց հետ մենք բոլորս ծանոթ ենք:

Երիտասարդը պատասխանեց. «Այդ ամենն իմ երեխայութիւնիցը պահեցի. Էլ ի՞նչ բանով եմ պակաս»:

Հիսուսն ասաց. «Եթե կամենում ես կատարեալ լինել, գնա ունեցածներդ ծախիր եւ տուր աղքատներին, և գանձ կունենաս երկնքումը, եւ եկ հետեւիր ինձ»:[4]

Հիսուսը կանչեց նրան Իր աշխատանքի մասնակիցը դառնալ, աշակերտի աշխատանքի: Մեր աշխատանքն էլ նույնն է: Մենք պետք է «մի կողմ դնենք աշխարհի բաները, . . . կառչենք մեր ուխտերից»,[5] և գանք դեպի Քրիստոս և հետևենք Նրան: Դա այն է, ինչ աշակերտներն են անում:

Այժմ, քույրեր, եկեք չսկսենք մեզ տանջել, որովհետև Փրկիչը խոսեց հարուստ երիտասարդի հետ կատարյալ դառնալու մասին: *Կատարյալ* բառը այս պատմությունում նշանակում է «ամբողջական»: Որքան մենք ձգտում ենք մեր լավագույնն անել ուխտի արահետով առաջ շարժվելու համար, մենք այնքան ավելի ամբողջական և կատարյալ ենք դառնում այս կյանքում:

Հիսուսի օրերի հարուստ երիտասարդի նման երբեմն մենք գայթակղվում ենք ձեռք քաշել կամ

ետ շրջվել, որովհետև մտածում ենք, գուցե, մենք չենք կարող դա անել մենակ: Եվ մենք ճիշտ ենք: Մենք չենք կարող անել դժվարին բաները, որոնք մեզանից խնդրվել են, առանց օգնության: Օգնությունը գալիս է Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, Սուրբ Հոգու առաջնորդությամբ և ուրիշների օգնող ձեռքերով:

Մի հավատարիմ միայնակ քույր վերջերս վկայեց, որ Քավության միջոցով նա ուժ գտավ օգտագործելու իր օգնող ձեռքերը և հոժարակամ սիրտը՝ մեծացնելու չորս երեխաներին, որոնց իր քույրը թողել էր, մահանալով քաղցկեղից: Դա հիշեցրեց ինձ Երեց Նիլ Ա. Մաքսվելի այս խոսքերը. «Բոլոր հեշտ բաները, որոնք Եկեղեցին ստիպված է եղել անել, արվել են: Այժմվանից սկսած, սա մեծ արկածախնդրություն է և աշակերտությունը ստուգվելու է ինչ որ հետաքրքիր ուղիներով»:[6] Դուք երկիր եք ուղարկվել այս ժամանակի տնտեսությունում, այն պատճառով, թե ով եք դուք և ինչ եք պատրաստվել անելու: Անկախ նրանից, թե սատանան ինչ կփորձի համոզել մեզ մտածել այն մասին, թե ով ենք մենք, մեր իսկական ինքնությունը Հիսուս Քրիստոսի աշակերտը լինելն է:

Մորմոնը ճշմարիտ աշակերտ էր, ով ապրեց այնպիսի օրերում, երբ «ամեն սիրտ կարծրացած էր . . . և երբեք այսպիսի մեծ ամբարշտություն չէր եղել Լեքիի բոլոր զավակների մեջ»:[7] Կկամենայի՞ք արդյոք ապրած լինել այդ օրերին: Ինչևէ, Մորմոնը համարձակորեն հայտարարեց. «Ահա, ես Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու մի աշակերտ եմ»:[8]

Մի՞թե չեք սիրում Մորմոնին: Նա գիտեր, թե ով էր և որն էր իր առաքելությունը, և չէր շեղվում չարի կողմից, որը շրջապատում էր նրան: Փաստորեն նա իր կոչումը համարում էր շնորհք:[9]

Մտածեք, թե ինչ օրհնություն է ամեն օր կանչվելը Տիրոջ աշակերտության մեր պարգևը տալու՝ հայտարարելով խոսքով և գործով. «Ահա, ես Հիսուս Քրիստոսի մի աշակերտ եմ»:

Ես սիրում եմ Նախագահ Բոյդ Ք. Փաքերի պատմությունը,

Գիլբերտ, Արիզոնա, ԱՄՆ

որը նա պատմել է մի սիրելի քրոջ մասին, որը ծաղրի էր ենթարկվում ուտելիք պահեստավորելու մարգարեի խորհրդին հետևելու համար: Նա, ով քննադատում էր, առաջարկեց, որ եթե գան անելանելի ժամանակներ, նրա ղեկավարները կխնդրեն, որ նա կիսվի ուտելիքի պահեստով ուրիշների հետ: Նրա պարզ և վճռական պատասխանն էր որպես իսկական աշակերտ. «Առնվազն ես կունենամ բերելու ինչ որ բան»:[10]

Ես սիրում եմ Եկեղեցու կանանց՝ թե երիտասարդ, թե տարեց: Ես տեսել եմ ձեր ուժը: Ես տեսել եմ ձեր հավատքը: Դուք ունեք տալու ինչ որ բան և հոժարակամորեն տալիս եք այն: Դուք դա անում եք առանց փողհարելու կամ անհրապարակավ, ուղղելով ուշադրությունը դեպի Աստված, ում մենք երկրպագում ենք, և ոչ թե դեպի ձեզ և առանց որևէ մտքի, թե ինչ պիտի ստանաք:[11] Դա այն է, ինչ աշակերտներն են անում:

Վերջերս ես հանդիպեցի մի երիտասարդ կնոջ Ֆիլիպիններից, որի ընտանիքն ավելի քիչ ակտիվ էր դարձել Եկեղեցու գործերում, երբ նա ընդամենը 7 տարեկան էր, նրան մենակ թողնելով քայլելու վտանգավոր ճանապարհը դեպի եկեղեցի շաբաթ շաբաթի ետևից: Նա պատմեց, թե ինչպես 14 տարեկանում որոշեց, որ պետք է հավատարիմ մնար ուխտերին, որպեսզի արժանի լիներ մեծացնելու իր ապագա ընտանիքը «քահանայության իշխանության զորությամբ օրհնված»[12] տան մեջ: Ներկա, թե ապագա տունը ամրացնելու լավագույն ուղին պահելն է այն ուխտերը և խոստումները, որոնք մենք արել ենք միմյանց և Աստծուն:

Դա այն է, ինչ աշակերտներն են անում:

Ճապոնացի մի հաատարիմ քույր և նրա ամուսինը այցելեցին մեր միսիան Կորեայում: Նա չէր խոսում կորերեն, իսկ անգլերեն խոսելու նրա ունակությունը սահմանափակ էր, բայց նա ուներ հոժարակամ սիրտ՝ օգտագործելու իր եզակի պարգևները և օգնող ձեռքերը կատարելու Տիրոջ աշխատանքը: Դա այն է, ինչ աշակերտներն են անում: Նա ուսուցանեց մեր միսիոներներին, թե ինչպես պատրաստեին մի փոքրիկ թղթից օրիգամի՝ մի բերան, որը կարողանում էր բացել և փակել: Ապա նա օգտագործեց այն մի քանի անգլերեն բառերը, որոնք նա գիտեր՝ ուսուցանելու միսիոներներին «բացել իրենց բերանները» կիսվելու համար ավետարանով՝

դաս, որը նրանք երբեք չեն մոռանա, ինչպեսև ես:

Պատկերացրեք մի պահ, որ դուք և ես կանգնած ենք միասին միլիոնավոր ուրիշ քույրերի և եղբայրների հետ Նրա Եկեղեցում, համարձակորեն առաջ գնալով, անելով այն, ինչ աշակերտներն են անում՝ ծառայելով և սիրելով ինչպես Փրկիչը: Ի՞նչ է նշանակում ձեզ համար լինել Հիսուս Քրիստոսի աշակերտը:

Մորմոնական Օգնող Ձեռքերի ժիլետներն ու վերնաշապիկները կրել են հարյուր հազարավոր ինքնազոհ Հիսուս Քրիստոսի աշակերտներ, ովքեր ընդունել են ժամանակավոր օգնություն ցույց տալու հնարավորությունը: Բայց կան ծառայելու այլ ուղիներ որպես նվիրված աշակերտներ: Պատկերացրեք, թե ես ունեմ ինձ հետ փրկության աշխատանքի հետ կապված «պահանջվում է օգնություն» վերնագրով հոգևոր ցուցանակներ:

- Պահանջվում է օգնություն՝ ծնողներից դաստիարակելու իրենց երեխաներին լույսի և ճշմարտության մեջ:
- Պահանջվում է օգնություն՝ դուստրերից և որդիներից, քույրերից և եղբայրներից, հորաքույրերից և հորեղբայրներից, զարմիկներից, տատիկներից ու պապիկներից, և ճշմարիտ ընկերներից՝ ծառայելու որպես խորհրդատուներ և օգնող ձեռք առաջարկելու ուխտի արահետով ընթանալիս:
- Պահանջվում է օգնություն՝ նրանցից, ովքեր լսում են Սուրբ Հոգու հուշումները և գործում ստացած հուշումներին համաձայն:
- Պահանջվում է օգնություն՝ նրանցից, ովքեր ապրում են ավետարանով ամեն օր փոքր և հասարակ ուղիներով:
- Պահանջվում է օգնություն՝ ընտանեկան պատմության և տաճարային աշխատողներից ընտանիքները հավերժորեն կապելու համար:
- Պահանջվում է օգնություն՝ միսիոներներից և անդամներից՝ տարածելու «բարի լուրը»՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը:

- Պահանջվում է օգնություն՝ փրկարարներից՝ գտնելու նրանց, ովքեր կորցրել են իրենց ճանապարհը:
- Պահանջվում է օգնություն՝ ուխտը պահողներից՝ ամուր կանգնելու ճշմարտության համար:
- Պահանջվում է օգնություն՝ Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներից:

Տարիներ առաջ Երեց Մ. Ռասսել Բալլարդը կոչ հղեց, կարծես փող հնչեցրեց, Եկեղեցու քույրերին.

«Այժմվանից սկսած մինչև Տիրոջ կրկին գալը Նա կարիք ունի կանանց յուրաքանչյուր ընտանիքից, յուրաքանչյուր ծխից, յուրաքանչյուր համայնքից, յուրաքանչյուր ազգից, ովքեր առաջ կգան արդարությամբ և կասեն իրենց խոսքերով և իրենց գործերով. «Ահա ես, ինձ ուղարկիր»:

Իմ հարցն է.«Արդյոք դուք կլինե՞ք այդ կանանցից մեկը»»:[13]

Հուսով եմ, մեզանից յուրաքանչյուրը կարող է պատասխանել «Այո»: Ես ավարտում եմ երեխաների միության երգի խոսքերով.

Մենք ուխտի [դուստրեր ենք] տալու շնորհքով.
Մենք կուսուցանենք ավետարանը մեր ապրելակերպով:
Մեր ամեն խոսքով և գործով մենք կվկայենք.
Մենք հավատում ենք և ծառայում Հիսուս Քրիստոսին:[14]

Որպես իսկական աշակերտներ, թող որ մենք առաջարկենք մեր հոժարակամ սրտերը և մեր օգնող ձեռքերը՝ արագացնելու համար Նրա աշխատանքը: Նշանակություն չունի, եթե Բրինի նման, մենք ունենանք միայն մեկ ձեռք: Նշանակություն չունի, եթե մենք կատարյալ չենք և ամբողջական: Մենք նվիրված աշակերտներ ենք, ովքեր հասնում և օգնում են միմյանց ճանապարհի ընթացքում: Մեր քույրությունը հասնում է սերունդների միջով այն հավատարիմ քույրերին, ովքեր քայլել են նախկինում: Միասին՝ բոլոր քույրերով, միավորված վերականգված քահանայության բանալիներով օժտված ապրող մարգարեների, տեսանողների և հայտնողների հետ, մենք կարող ենք քայլել որպես մեկ, որպես աշակերտներ, որպես հոժարակամ սրտերով և ձեռքերով ծառաներ՝ արագացնելու համար փրկության աշխատանքը: Եթե անենք այդպես, մենք կնմանվենք Փրկչին: Ես այսպես եմ վկայում Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես “Brynn,” lds.org/media-library/video/2011–01–007-brynn.:
2. Հովհաննես Է.17:
3. “I Am a Child of God,” *Hymns,* no. 301; or *Children’s Songbook,* 2–3.
4. Տես Մատթեոս ԺԹ.16–22:
5. Վարդապետություն և Ուխտեր 25.10, 13:
6. Neal A. Maxwell, “The Old Testament: Relevancy within Antiquity” (address to Church Educational System religious educators, Aug. 16, 1979), 4; si.lds.org.
7. Մորմոն 4.11–12:
8. 3 Նեփի 5.13:
9. Տես Մորոնի 7.2:
10. In Boyd K. Packer, “The Circle of Sisters,” *Ensign,* Nov. 1980, 111.
11. Տես 2 Նեփի 26.29–30:
12. “Love Is Spoken Here,” *Children’s Songbook,* 190–91.
13. M. Russell Ballard, “Women of Righteousness,” *Liahona,* Dec. 2002, 39.
14. “Ողջ աշխարհում ձեռքերը վեր պարզած,” *Ընկեր,* հոկտ. 2003, 12–13:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Դուստրեր ուխտի մեջ

Արահետը, որ . . . մենք պետք է բռնենք մեր Երկնային Հոր մոտ ետ վերադառնալու ճանապարհին, նշված է . . . Աստծո հետ սրբազան ուխտերի միջոցով:

Այս երեկո մենք ուսուցանվեցինք հոգևոր զորությամբ: Աղոթում եմ, որ այս հիանալի քույր առաջնորդների կողմից ասված խոսքերը հասնեն ձեր սրտի խորքերը, ինչպես որ դրանք ինձ հասան:

Սա պատմական ժողով է: Եկեղեցու բոլոր կանայք՝ ութ տարեկան և բարձր տարիքի, հրավիրվել են միանալու մեզ այս երեկո: Մեզանից շատերն աղոթել են, որ Սուրբ Հոգին լինի մեզ հետ: Այդ օրհնությունը շնորհվեց, երբ մենք լսեցիքն այս քույրերի խոսքը և ունկնդրեցինք վեհացնող երաժշտություն: Աղոթում եմ, որ Հոգին շարունակի լինել մեզ հետ, երբ ես խրախուսանքի խոսքեր ասեմ և վկայություն բերեմ՝ ի լրացում նրա, ինչ արդեն ասվեց, և հատկապես վկայեմ, որ այն, ինչ մեզ ասվեց, այն է, ինչ Տերը կկամենար որ մենք լսենք:

Ես կխոսեմ այս երեկո այն արահետի մասին, որն այնքան գեղեցիկ ձևով նկարագրվեց այսօր, որը մենք պետք է բռնենք՝ մեր Երկնային Հոր մոտ ետ վերադառնալու ճանապարհին: Այդ ճանապարհը նշված է՝ Աստծո հետ սրբազան ուխտերի միջոցով: Ես կխոսեմ ձեզ հետ այդ ուխտերը կապելու և դրանք պահելու ուրախության մասին, նաև ինչպես օգնել մյուսներին պահել դրանք:

Ձեզանից ոմանք վերջերս են մկրտվել և ստացել Սուրբ Հոգու պարգևը: Ձեզ համար այդ հիշողությունը թարմ է: Մյուսները մկրտվել են շատ վաղուց, այսպիսով, ձեր զգացողությունների հիշողությունը այդ ուխտի փորձառության վերաբերյալ կարող է ավելի ոչ հստակ լինել, բայց այդ զգացումներից մի քանիսը ետ են գալիս, երբ դուք լսում եք հաղորդության աղոթքները:

Մեզանից երկու հոգի չի ունենա այդ օրվա մասին նույն հիշողությունները, երբ մենք արեցինք այդ սրբազան մկրտության ուխտը և ստացանք Սուրբ Հոգու պարգևը: Բայց մենք՝ յուրաքանչյուրս զգացինք Աստծո հավանությունը: Եվ մենք ցանկություն զգացինք ներելու և ներվելու, և աճող վճռականություն՝ ճիշտը գործելու:

Թե որքան խորը այդ զգացումները վար գնացին ձեր սրտերը, մեծ մասամբ, որոշվում է նրանով, թե ինչպես էիք նախապատրաստվել ձեզ սիրող մարդկանց կողմից: Ես հուսով եմ, որ ձեզանից նրանք, ովքեր եկել են արքայություն վերջերս, օրհնված են՝ նստած լինելով իրենց մոր կողքին: Եթե այդպես է, դուք կարող եք շնորհակալական ժպիտ ուղարկել նրան հենց հիմա: Ես հիշում եմ ուրախության և երախտագիտության զգացումները, երբ ես նստած էի իմ մոր ետևում, երբ տուն էինք վերադառնում մեքենայով իմ մկրտությունից հետո Ֆիլադելֆիայում, Պենսիլվանիա:

Մայրս այն անձնավորությունն էր, որ խնամքով նախապատրաստել էր ինձ՝ այդ ուխտը կապելուն և այն բոլորի մյուս ուխտերը, որ հետևելու էին դրան: Նա հավատարիմ էր եղել Տիրոջից ստացած այս հրամանին.

«Եվ բացի այդ, որքան որ ծնողները երեխաներ ունեն Սիոնում կամ նրա կազմակերպված ցցերում, որոնց չեն ուսուցանում, որպեսզի մինչև ութ տարեկանը նրանք

Ռեյմոնդ, Ալբերտա, Կանադա

Պալմիրա, Նյու Յորք, ԱՄՆ

հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի, մեղքը լինի ծնողների գլխին:

Քանզի դա օրենք կլինի Սիոնի բնակիչների և նրա կազմակերպված ցցերի համար:

Եվ նրանց երեխաները պիտի մկրտվեն իրենց մեղքերի թողության համար, երբ ութ տարեկան են, և ստանան [Սուրբ Հոգին]»:[1]

Մայրս արել էր իր մասը: Նա նախապատրաստել էր իր երեխաներին ըստ Ալմայի խոսքերի, ինչպես արձանագրված է Մորմոնի Գրքում.

«Եվ եղավ այնպես, որ նա ասաց նրանց. Նայեք, ահա Մորմոնի ջրերը, (քանզի այդպես էին նրանք կոչվում) և արդ, քանի որ դուք փափագում եք գալ Աստծո հոտը և կոչվել նրա ժողովուրդը, և հոժար եք կրելու մեկդ մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեին,

Այո, և հոժար եք սգալու նրանց հետ, ովքեր սգում են. այո, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնելու Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում և բոլոր տեղերում, որ դուք կարող է լինեք, նույնիսկ, մինչև մահ, որպեսզի դուք կարողանաք փրկագնվել Աստծո կողմից և համարվեք նրանց հետ, ովքեր պատկանում են առաջին հարությանը, որպեսզի դուք կարողանաք հավերժական կյանք ունենալ:

Արդ, ես ասում եմ ձեզ, եթե սա է ձեր սրտի իղձը, ի՞նչ ունեք դուք դեմ Տիրոջ անունով մկրտվելուն՝ որպես մի վկայություն նրա առաջ, որ դուք մտել եք նրա հետ ուխտի մեջ, որ կծառայեք նրան և կպահեք նրա պատվիրանները, որպեսզի նա իր Հոգին ավելի առատորեն դուրս թափի ձեր վրա:

Եվ այժմ, երբ ժողովուրդը լսեց այս խոսքերը, նրանք ուրախությունից ծափ տվեցին, և բացականչեցին. Այս է մեր սրտի իղձը»:[2]

Դուք, գուցե, ծափ չտվեցիք, երբ առաջին անգամ լսեցիք մկրտությամբ ուխտ կապելու այդ հրավերը, բայց դուք անկասկած զգացիք Փրկչի սերը և հանուն Նրա մյուսներին դաստիարակելու ավելի մեծ պարտավորվածություն: Ես կարող եմ ասել «անկասկած», որովհետև այդ զգացումները դրված են խորը բոլոր Երկնային Հոր դուստրերի սրտերում: Դա Նրա կողմից ձեր աստվածային ժառանգության մասն է:

Դուք ուսուցանվել եք Նրա կողմից նախքան այս կյանք գալը: Նա օգնեց ձեզ հասկանալ և ընդունել, որ դուք ունենալու եք փորձություններ, ստուգարքներ և հնարավորություններ, որոնք կատարելապես ընտրված էին հենց ձեզ համար:

Դուք սովորել եք, որ մեր Հայրը երջանկության ծրագիր ուներ ձեզ ապահովությամբ անցկացնելու այդ փորձությունների միջով և որ դուք կօգնեք ուրիշներին ապահով անցնելու իրենցը: Այս ծրագիրը նշված է Աստծո հետ ուխտերով:

Մեր ազատ ընտրությունն է՝ կապել և պահել այդ ուխտերը: Միայն մի քանիսը Նրա դուստրերից ունեն հնարավորություն այս կյանքում, նույնիսկ, իմանալու այդ ուխտերի մասին: Դուք այդ մի քանի արտոնյալներից եք: Դուք, սիրելի քույրեր, ձեզանից յուրաքանչյուրը, ուխտի մեջ գտնվող դուստր եք:

Երկնային Հայրն ուսուցանել է նախքան ձեր ծնվելը այն փորձառությունների մասին, որ դուք կունենաք, երբ դուք հեռանաք Նրանից և գաք երկիր: Դուք ուսուցանվել եք, որ Նրա մոտ դեպի տուն ետդարձի ուղին հեշտ չի լինի: Նա գիտեր, որ խիստ դժվար կլինի ձեզ համար կատարել այդ ճանապարհորդությունն առանց օգնության:

Դուք օրհնվել եք, ոչ միայն գտնելով ուղին այդ ուխտերը կապելով այս կյանքում, այլ նաև շրջապատված լինելով ուրիշների կողմից, ովքեր կօգնեն, ովքեր, ձեզ նման Երկնային Հոր ուխտի դուստրերն են:

Դուք բոլորդ զգացել եք այս երեկո Աստծո դուստրերի ընկերակցությամբ լինելու օրհնությունը, ովքեր նույնպես ուխտի ներքո են՝ օգնելու և ուղղորդելու ձեզ, ինչպես որ իրենք խոստացել էին անել: Ես տեսել եմ, ինչ դուք եք տեսել, երբ ուխտի քույրերը պահում են մխիթարելու և օգնելու այդ պարտավորությունը և անում են դա ժպիտով:

Ես հիշում եմ Քույր Ռուբի Հեյթի ժպիտը: Նա Երեց Դեյվիդ Բ. Հեյթի կինն էր, որը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր: Երբ երիտասարդ էր, նա ծառայում էր որպես Կալիֆոռնիայի Պալո Ալտո ցցի նախագահ: Նա աղոթում էր և անհանգստացած էր իր սեփական ծխի Համաստեղության դասարանի աղջիկների համար:

Այսպիսով, Նախագահ Հեյթը ոգեշնչվեց խնդրել եպիսկոպոսից կանչել Ռուբի Հեյթին՝ ուսուցանելու

այդ երիտասարդ աղջիկներին: Նա գիտեր, որ [Ռուբին] կլիներ Աստծո վկան, ով կբարձրացներ, կմխիթարեր և կսիրեր աղջիկներին այդ դասարանում:

Քույր Հեյթը առնվազն 30 տարով մեծ էր, քան այն աղջիկները, ում նա ուսուցանում էր: Այնուամենայնիվ, նրանց ուսուցանելուց 40 տարի անց, ամեն անգամ, երբ նա հանդիպում էր կնոջս, որն եղել էր նրա դասարանի աղջիկներից մեկը, նա մեկնում էր ձեռքը, ժպտում և ասում Քեթիին. «Օ, իմ Համաստեղություն»: Ես տեսնում էի ավելին, քան նրա ժպիտը: Ես զգում էի նրա խորը սերը մի քրոջ հանդեպ, որի համար նա դեռ հոգ էր անում, կարծես, նա իր հարազատ աղջիկը լիներ: Նրա ժպիտը և ջերմ ողջույնը զալիս էր տեսնելուց, որ մի քույր և Աստծո մի դուստր դեռ դեպի տուն տանող ուխտի արահետում էր գտնվում:

Երկնային Հայրը նույնպես ժպտում է ձեզ, երբ տեսնում է, որ դուք օգնում եք Իր դուստրերից մեկին շարժվել ուխտի արահետով դեպի հավերժական կյանք: Եվ նա գոհ է լինում ամեն անգամ, երբ դուք փորձում եք ընտրել ճիշտը: Նա տեսնում է ոչ միայն այն, թե ով եք դուք, այլ նաև ինչ կարող եք դառնալ:

Դուք, կարող է, ունեցել եք երկրային ծնող, ով մտածում էր, որ դուք կարող եք լինել ավելի լավը, քան կարծում եք: Ես ունեի այդպիսի մայր:

Այն, ինչ ես չգիտեի, երբ երիտասարդ էի, այն էր, որ իմ Երկնային Հայրը, ձեր Երկնային Հայրը, տեսնում է ավելի մեծ ներուժ Իր զավակների մեջ, քան մենք կամ նույնիսկ մեր երկրային մայրերն են տեսնում մեր մեջ: Եվ երբ որ դուք շարժվում եք վեր այդ արահետով դեպի ձեր ներուժը, դա Նրան երջանկություն է բերում: Եվ դուք կարող եք զգալ Նրա հավանությունը:

Նա տեսնում է այդ փառահեղ ներուժը բոլոր Իր դուստրերի մեջ, ուր էլ որ նրանք լինեն: Ուրեմն, դա մեծ պատասխանատվություն է դնում մեզանից յուրաքանչյուրի վրա: Նա ակնկալում է, որ յուրաքանչյուր անձնավորությանը, որին

դուք հանդիպեք, դուք վերաբերվեք որպես Աստծո զավակի: Դա է պատճառը, որ Նա պատվիրում է մեզ սիրել մեր մերձավորներին, ինչպես մենք ենք սիրում մեզ, և ներել նրանց: Ձեր բարության և ներողամտության զգացումները ուրիշների հանդեպ Նրա դուստրը լինելու ձեր աստվածային ժառանգությունից են բխում: Յուրաքանչյուր անձնավորություն, որին դուք հանդիպում եք,Նրա սիրելի հոգևոր զավակն է:

Երբ դուք զգում եք քույրության այդ վիթխարի ոգին, այն, ինչը, մեր կարծիքով, մեզ բաժանում էր, վերանում է: Օրինակ՝ երիտասարդ և տարեց քույրերը կիսվում են իրենց զգացումներով հասկացված և ընդունված լինելու ակնկալիքով: Դուք՝ որպես Աստծո դուստրեր ավելի շատ նման եք, քան տարբեր:

Այդ տեսանկյունից երիտասարդ կանայք պետք է անհամբեր սպասեն Սփոփող Միություն իրենց մտնելուն՝ որպես հնարավորություն՝ մեծացնելու իրենց քույրերի շրջանը, ում նրանք կսկսեն ճանաչել, հիանալ և սիրել:

Այդ նույն կարողությունը՝ տեսնելը, թե ինչ մենք կարող ենք լինել, մեծանում է ընտանիքներում և երեխաների խմբում: Դա տեղի է ունենում տնային ընտանեկան երեկոներին և Երեխաների Միության ծրագրերում: Փոքրիկ երեխաները ոգեշնչվում են ասելու մեծ և սքանչելի բաներ, ինչպես նրանք դա արեցին, երբ Փրկիչը արձակեց նրանց լեզուները, երբ Նա ուսուցանեց նրանց Իր հարություն առնելուց հետո:[3]

Չնայած սատանան հարձակումներ էր գործում քույրերի վրա ավելի վաղ շրջանում, Տերը բարձրացնում է քույրերին հոգևորության ավելի ու ավելի բարձր մակարդակներ: Օրինակ, երիտասարդ կանայք ուսուցանում են իրենց մայրերին, թե ինչպես օգտագործել FamilySearch -ը՝ գտնելու և փրկելու համար նախնիներին: Որոշ երիտասարդ քույրեր, որոնց ես գիտեմ, որոշում են գնալ վաղ առավոտյան փոխարինող մկրտություններ կատարելու տաճարներում՝ առանց որևէ հարկադրանքի, բացի դա լինի Եղիայի հոգուց:

Աշխարհով մեկ միսիաներում քույրերը կանչվում են ծառայելու որպես ղեկավարներ: Տերը, դիպչելով քույրերի սրտերին, ավելի մեծ կարիք է ստեղծել նրանց ծառայության համար: Ավելի քան մի քանի միսիաների նախագահներ ականատես են եղել նրա, թե ինչպես են քույր միսիոներները դարձել հզոր քարոզիչներ, հատկապես, դաստիարակող առաջնորդներ:

Անկախ նրանից, դուք ծառայել եք, թե ոչ որպես լիաժամկետ միսիոներ, դուք կարող եք ձեռք բերել նույն ունակությունը՝ հարստացնելու ձեր ամուսնությունը և ազնիվ երեխաներ մեծացնելու՝ հետևելով մեծ կանանց օրինակին:

Մտածեք Եվայի՝ բոլոր ապրողների մոր մասին: Երեց Ռասսել Մ. Նելսոնը Եվայի մասին ասել է հետևյալը. «Մենք և ողջ մարդկությունը հավերժ օրհնվել ենք Եվայի մեծ քաջության և իմաստության շնորհիվ: Առաջինը՝ ճաշակելով պտղից, նա արեց այն, ինչ պետք է աներ: Ադամը բավականին իմաստուն գտնվեց, անելով նույնը»:[4]

Եվայի յուրաքանչյուր դուստր ունի ներուժ՝ բերելու նույն օրհնությունը իր ընտանիք, ինչպես Եվան բերեց իր ընտանիք: Նա այնքան կանոր էր ընտանիքների հիմնադրման գործում, որ մենք ունենք հետևյալ տեղեկությունը նրա ստեղծման մասին. «Եվ Աստվածներն ասացին. Եկեք մի լավ օգնական արարենք մարդու համար, քանզի լավ չէ, որ մարդը մենակ լինի, ուստի մենք մի լավ օգնական կկազմավորենք նրա համար»:[5]

Մենք չգիտենք այն ողջ օգնությունը, որ Եվան տվեց Ադամին և իրենց ընտանիքին: Բայց մենք իսկապես գիտենք մի մեծ պարգևի մասին, որը նա տվեց, որը ձեզանից յուրաքանչյուրը կարող է նույնպես տալ. Նա օգնեց իր ընտանիքին տեսնել տուն տանող արահետը, երբ առջևում ուղին դժվարին էր թվում: «Եվ Եվան՝ նրա կինը, լսեց բոլոր այս բաները, և ուրախացավ՝ ասելով. Եթե չլիներ մեր օրինազանցությունը, մենք երբեք սերունդ չէինք ունենա, և երբեք չէինք գիտենա բարին և չարը, և մեր փրկագնման ուրախությունը, և հավերժական կյանքը, որն Աստված տալիս է բոլոր հնազանդներին»:[6]

Դուք ունեք հետևելու համար նրա օրինակը:

Հայտնությամբ Եվան ճանաչեց ուղին դեպի տուն՝ դեպի Աստված: Նա գիտեր, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը հավերժական կյանքը հնարավոր էր դարձնում ընտանիքների համար: Նա համոզված էր, ինչպես որ դուք կարող եք համոզված լինել, որ, եթե պահեր իր ուխտերը իր Երկնային Հոր հետ, Քավիչը և Սուրբ Հոգին կօգնեին նրան և նրա ընտանիքին, ինչ վշտեր և հուսախաբություններ էլ որ գային: Նա գիտեր, որ կարող էր վստահել Նրանց:

«Տիրոջն ապաւինիր քո բոլոր սրտովը, եւ քո հասկացողութեանը մի վստահիր,

Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորան, և նա կուղղէ քո ճանապարհները»:[7]

Ես գիտեմ, որ Եվան դիմակայեց վշտերի և հուսահատությունների, բայց ես գիտեմ նաև, որ նա գտավ ուրախություն այն գիտելիքում, որ նա և իր ընտանիքը կարող էին վերադառնալ ապրելու Աստծո հետ: Ես գիտեմ, որ ձեզանից շատերը, ովքեր այստեղ են, դիմակայում են վշտերի և հուսախաբությունների: Ես թողնում եմ ձեզ իմ օրհնությունը, որ Եվայի նման, դուք էլ զգաք նույն ուրախությունը, մինչ ճամփորդում եք ետ՝ դեպի տուն:

Ես ունեմ հաստատուն վկայություն, որ Հայր Աստված հետևում է ձեզ սիրով: Նա սիրում է ձեզանից յուրաքանչյուրին: Դուք ուխտի մեջ գտնվող Նրա դուստրերն եք: Քանի որ Նա սիրում է ձեզ, Նա կապահովի օգնությունը, որի կարիքը դուք ունեք, որպեսզի ինքներդ ձեզ և ուրիշներին տանեք ետդարձի ուղով դեպի վեր՝ դեպի Նրա ներկայություն:

Ես գիտեմ, որ Փրկիչը վճարեց գինը մեր բոլոր մեղքերի, և որ Սուրբ Հոգին վկայում է ճշմարտությունը: Դուք զգացել եք այդ մխիթարությունը այս ժողովին: Ես ունեմ վկայություն, որ բոլոր բանալիները, որոնցով կապվում են սրբազան ուխտերը, վերականգվել են: Դրանք կրում և գործադրում է այսօր մեր ապրող մարգարե՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը: Ես թողնում եմ մխիթարության և հույսի այս խոսքերը ձեզ հետ՝ Նրա սիրելի ուխտի դուստրերի հետ, Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 68.25–27:
2. Մոսիա 18.8–11:
3. Տես 3 Նեփի 26.14:
4. Russell M. Nelson, “Constancy amid Change,” *Ensign,* Nov. 1993, 34.
5. Աբրահամ 5.14:
6. Մովսես 5.11:
7. Առակաց Գ.5–6:

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցանման այլ առիթների ժամանակ: Համարը ցույց է տալիս ելույթի առաջին էջը:

ԽՈՍՆԱԿ	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Նիլ Լ. Անդերսեն	(18) Մի Դափնի պաշտպանում է ավանդական ամուսնությունը, թեև ծաղրի է ենթարկվում:
Մ. Ռասսել Բալլարդ	(78) Մ. Ռասսել Բալլարդը «հետևում է» Բարբարա Բոուենին, ում հանդիպում է քոլեջում պարի ժամանակ, սկսում է ժամադրվել և, ի վերջո, ամուսնանում է նրա հետ: Ութ տարեկան տղան հրավիրում է իր ընկերոջը և նրա ընտանիքին ծխի բաց դռներին Բուենոս Այրեսում:
Դեյվիդ Ա. Բեդնար	(87) Բեռնատարը կարողանում է հաստատուն վարել ձյան վրա, երբ բեռնվում է վառելափայտի ծանրությամբ:
Լինդա Ք. Բըրթն	(122) Երիտասարդ կինը Ֆիլիպիններում ճշմարիտ է մնում իր ուխտերին: Ճապոնացի քույրն, որն այցելում է Կորեա, ուսուցանում է միսիոներներին:
Քվենթին Լ. Քուք	(44) Վայլեյթ Քիմբալը գրում է իր ամուսնուն մահացածների մկրտության «փառավոր վարդապետության մասին, ինչպես հայտնի է դարձվել Ջոզեֆ Սմիթի միջոցով:
Հենրի Բ. Այրինգ	(22) Հեյնրիխ Այրինգը գաղթում է Ամերիկա, միանում Եկեղեցուն, ծառայում երեք հավատարիմ միսիա և թողնում իր ընտանիքին հույսի ժառանգություն: (62) Հենրի Բ. Այրինգը ձևավորվում է մանկության տարիների տղայական հերոսների ՝ իր հոր, Ահարոնյան Քահանայության ղեկավարի, ԱՄՆ Ծովահետևակայինի և բեյսբոլիստ Ջո ԴիՄաջիոյի ազդեցության տակ: (125) Քառասուն տարի անց նրանից հետո, երբ Ռուբի Հեյթը կանչվեց ուսուցանելու Քեթի Ջոնսոնին (Հենրի Բ. Այրինգի ապագա կնոջը), նա դեռ սեր և հոգատարություն էր ցուցաբերում նրա հանդեպ:
Դոնալդ Լ. Հոլսթրոմ	(53) Չնայած իր ֆիզիկական սահմանափակումներին, հավատարիմ տղամարդը Հնդկաստանից ծառայում է միսիայում և նախապատրաստում իր ընտանիքին Հոնգ Կոնգ Չինաստան Տաճարում կնքվելուն:
Ջեֆրի Ռ. Հոլլանդ	(6) Երկու քույր միսիոներներ հեռանում են առանց խոսք անգամ ասելու մի մարդու, ով հայհոյում է իրենց, ուտելիք նետում իրենց վրա և փորձում հարվածել քույրերից մեկին:
Թոմաս Ս. Մոնսոն	(66) Նավատորմի 18-ամյա նավաստին աղոթում է երեկոյան, չնայած իր խմբի անդամների կոմիզ ճնշումներին: Երիտասարդ տղամարդը վկայություն է բերում հաղորդության ժողովին, սակայն ավելի ուշ նրան տեսնում են ծխելիս: (91) Երկու կանայք դառնում են կյանքի ընկերուհիներ, երբ մեկն օգնում է մյուսին սովորել իր աշխատանքը հագուստի գործարանում: Օդանավի ուղևորները չեն բողոքում, երբ իրենց օդանավը փոխում է ուղղությունը վնասվածք ստացած տղային վերցնելու և նրան հիվանդանոց տեղափոխելու համար: Կինը զղջում է նրա համար, որ թույլ չտվեց իր հարևանին անցնել իր տարածքով կարճ ճանապարհով:
Ռասսել Մ. Նելսոն	(29) Ռասսել Մ. Նելսոնի դուստրը՝ Էմիլին քաջություն և հավատք է դրսևորում՝ քաղցկեղից մահանալիս:
Բոննի Լ. Օսկարսոն	(119) Երիտասարդ աղջիկը սովորում է մյուսներին ծառայելու ուրախությունը, երբ իր մոր հետ հոգ է տանում բազմակի սկլերոզով տառապող մի կնոջ համար: 81-ամյա քույրը կանչվում է որպես Համաստեղության խորհրդատու՝ կիսվելու համար իր իմաստությամբ, փորձով և օրինակով:
Բոյդ Ք. Փաքեր	(94) Բոյդ Ք. Փաքերը ավետարանի ճշմարտության մասին հոգևոր վկայություն է ստանում, երբ աղոթում է բունկերում Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ:
Ռոնալդ Ա. Ռասբանդ	(9) Հինգերորդ դասարանցի մի աղջիկ ընկնում է տոռնադոյի մեջ և պաշտպանվում հրեշտակների կողմից:
Լինդա Շ. Ռիվս	(15) Լինդա Ռիվսն ուսուցանում է իր դստերը, թե ինչպես կարելի է հանգստություն ձեռք բերել Փրկչի Քավության միջոցով, երբ դուստրը տեսնում է հեռուստացույցով իրեն անհագստացնող պատկերներ:
Ռանդալ Լ. Ռիդ	(56) Երիտասարդ տղամարդը ամուսնանալու փոխարեն որոշում է ծառայել միսիայում, երբ մի փոքր հասկացողություն է ստանում այն մասին, թե ով էր նա նախաերկրային աշխարհում:
Ռիչարդ Գ. Սքոթ	(32) Ռիչարդ Գ. Սքոթի տատիկի, ինչպես նաև նրա ապագա կնոջ սերն ու օրինակը օգնել են նրան իր հոգևոր առաջընթացում:
Ջին Ա. Սթիվենս	(81) Ջին Ա. Սթիվենսը հուշում է ստանում՝ առաջարկելու մեքենայով տանել մի երիտասարդ աղջկա, որն ուշացել էր իր դպրոցական ավտոբուսից: Գաթրելների ընտանիքի անդամները ամուր կառչում են ավետարանից նրանից հետո, երբ Եղբայր Գաթրելի մոտ արագ տարածվող քաղցկեղ են հայտնաբերում:
Գարի Ի. Սթիվենսոն	(84) ՎՕՍ օլիմպիացի Նոել Պիկուս-Փեյսը՝ տարիներ շարունակ վարժվելուց և նախապատրաստվելուց հետո արծաթե մեդալ է ստանում սկելետոնի մրցումներում: ՎՕՍ օլիմպիացի Թորա Բրայթը քրիստոսանման սեր է ցույց տալիս՝ գրկելով և հանգստացնելով անհանգիստ մրցակցին:
Մայքլ Ջոն Ու. Թեհ	(106) 73 տարեկան ֆիլիպինցի կինը հավատարիմ է մնում ավետարանին նրանից հետո, երբ երկրաշարժը և փոթորիկը սպանում է իր ընտանիքին:
Վիլիամ Ռ. Վոքեր	(97) Ռոբերտ և Մարիա Հարիսները միանում են Եկեղեցուն և մնում հավատարիմ ավետարանին, չնայած դժվարություններին և բաժանմանը:
Կլաուդիո Դ. Ջիվիկ	(39) Կլաուդիո Դ. Ջիվիկը սխալ ճանապարհով գնում, երբ հետևում է մեկ այլ մագլցողի:
Վ. Քրեյգ Ցվիք	(41) Վ. Քրեյգ Ցվիքը և նրա կինը սեր են ցուցաբերում միմյանց հանդեպ, երբ կինը իրենց մանուկ երեխաների հետ դուրս է ցատկում ծխով լցված իրենց բեռնատար մեքենայից:

Համաժողովը մեր կյանքի մասը դարձնելը

Այս վարժությունները և հարցերը կարող եք օգտագործել ընտանեկան քննարկում սկսելու կամ անհատապես խորհելու համար:

Երեխաների համար

- Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը, ուսուցանեց, որ մենք կարող ենք որոշել երախտապարտ լինել անկախ մեր կյանքում տեղի ունեցող բարդություններից (էջ 70): Երախտապարտ լինելը կօգնի մեզ լինել ավելի երջանիկ, բարի և հավատք ու վստահություն ունենալ Աստծո հանդեպ: Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ երախտապարտ եք: Ի՞նչ կարող եք անել ամեն օր երախտագիտություն զգալու համար:
- Բոննի Լ. Օսկարսոնը՝ Երիտասարդ Կանանց գերագույն նախագահը, պատմեց Սարա անունով մի երիտասարդ աղջկա մասին, որն իր մայրիկի հետ օգնում էի Բրենդային՝ բազմակի սկլեռոզով տառապող մի կնոջ: Սարան սանրում էր Բրենդայի մազերը, քսուկ էր քսում նրա ձեռքերին, մերսում էր նրա մատներն ու թևերը և օգնում ձգել մկանները (էջ 119): Մտածեք ծառայելու եղանակների մասին: Անգամ եթե դեռ երիտասարդ եք, շատ բան կարող եք անել:
- Երեց Լ. Թոմ Փերին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանեց, թե ինչպես է ձիապանը հաստատակամությամբ և համառությամբ մեղմորեն առաջնորդում ձիերին (էջ 100): Ձիապանը ավելի լավ գիտի, թե ինչ է անում, և ին հետևում է նրան, ինչպես Տերը գիտի, թե որն է լավագույնը մեզ համար, և մենք կարող ենք երջանիկ լինել, երբ հետևում ենք Նրան: Հաստատակամությունն ու համառությունը նման են Սուրբ Հոգու հուշումներին: Ե՞րբ եք զգացել, որ Սուրբ Հոգին առաջնորդում է ձեզ: Ինչպե՞ս եք ձեզ զգում:
- Ջին Ա. Սթիվենսը՝ Երեխաների Միության գերագույն նախագահության առաջին խորհրդականը, պատմեց մի տղայի մասին, որն

ուշացել էր այդ օրվա վերջին ավտոբուսից և քայլում էր դեպի տուն (էջ 81): Երբ դեռ երկար մղոններ կար անցնելու, նա սկսեց վախենալ և ծնկի իջավ աղոթելու: Մի քանի րոպե անց Քույր Քթիվենսը հուշում ստացավ Հոգու կողմից՝ կանգնելու և նրան օգնելու: Կարո՞ղ եք մտածել այն ժամանակների մասին, երբ Երկնային Հայրը պատասխանել է եր աղոթքներին: Ինչպե՞ս եք դուք օգնել պատասխանել ինչ-որ մեկի աղոթքին:

Երիտասարդների համար

- Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանեց, որ մենք պետք է քաջություն ունենանք ասելու ոչ, երբ պետք է դա ասել, անելու ճիշտը, որովհետև դա ճիշտն է: Նրա ելույթն ուսումնասիրելիս (էջ 66), մտածեք ձեր դժվարությունների մասին: Ի՞նչ ծրագիր կարող եք կազմել նման քաջություն զարգացնելու համար:
- Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, հիշեցրեց մեզ, որ եթե մենք սիրենք Փրկչին, կպահենք Նրա պատվիրանները և կսիրենք մյուսներին, ինչպես Նա էր անում (էջ 6): Անգամ այդ ամենն անելով, մենք պետք է պատրաստ լինենք պաշտպանելու մեր համոզմունքները քաղաքավարությամբ և կարեկցանքով: Դուք ճանաչո՞ւմ եք որևէ մեկի, ով համաձայն չէ ձեր համոզմունքների հետ: Ինչպե՞ս կարող եք հարգալից լինել, երբ քննարկում և պաշտպանում եք այդ համոզմունքները:
- Մի քանի ելույթ ունեցողներ դիմում են երիտասարդներին: Օրինակ Երեց Նիլ Լ. Անդերսենը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, մի քանի խորհուրդ տվեց երիտասարդներին, թե ինչպես հաղթահարել հոգևոր փոթորիկները, օրինակ՝ խաղաղություն գտնելով տաճարում (էջ 18): Երբ կարդաք նրա և գերագույն համաժողովի մյուս ելույթները, գրի առեք այն մտքերը, թե ինչպես կարելի է ամուր մնալ:

- Այսօրվա մեծագույն չարիքներից մեկը պոռնոգրաֆիան է: Լինդա Ս. Ռիվսը՝ Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդականը, ասաց, որ այդ չարիքի լավագույն զտիչը խոր և կայուն վկայությունն է Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին (էջ 15): Որքա՞ն ամուր է ձեր անձնական զտիչը: Ի՞նչ դուք կարող եք անել այն ամրացնելու համար:

Չափահասների համար

- Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանեց, որ մենք կարող ենք հասկանալ Քավության անզուգական պարգևը, եթե լցվենք սիրով Երկնային Հոր, Փրկչի և Աստծո բոլոր զավակների հանդեպ (էջ 91): Ինչպե՞ս կարող է այդ գիտելիքը օգնել ձեզ ավելի լավ ուսումնասիրել Փրկչի կյանքը և Քավությունը սուրբ գրությունների անձնական և ընտանեկան ուսումնասիրության ժամանակ և եկեղեցու դասերին:
- Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, ասաց, որ նա իր երջանկության համար պարտական է իր նախանախատատիկին, ով միացավ Եկեղեցուն, հավատարիմ ծառայեց և մնաց հաստատակամ մինչև վերջ, թողնելով իր ընտանիքին հույսի ժառանգություն (էջ 22): Կարող եք կազմել ձեր ընտանիքի բոլոր անդամների ցուցակը և գրել, թե ինչ ուխտեր և արարողություններ պետք է արվեն նրանց համար ուխտի ճանապարհին: Ծրագիր կազմեք, թե ինչպես օգնեք ձեր ընտանիքի անդամներին ստանալ իրենց հաջորդ ուխտը: Կարող եք մտածել, թե ինչ ճանապարհներով կարող եք ձեր ուխտերը ավելի նշանակալից դարձնել ձեր կյանքում, որպեսզի ձեր ընտանիքին ժառանգության հույս տաք:
- Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, հայտարարեց, որ դժվարությունները տանում են մեզ դեպի Սուրբ Մեսիայի արժանիքներին, ողորմությանը և շնորհին ապավինելը, ով կօգնի մեզ հեշտությամբ կրել մեր բեռները (էջ 87): Այս և 9, 18, 70, 81 և 106 էջերում գտնվող ելույթները կարդալիս գտեք այն ճանապարհները, որոնցով Փրկիչը և Նրա ավետարանը կարող են օգնել ձեզ դիմակայել կյանքի դժվարություններին:
- Երիտասարդների մայիս ամսվա ուսումնական ծրագիրը կենտրոնանում է մարգարեների և հայտնությունների վրա: Երիտասարդների հետ տանը և եկեղեցում ավետարանի շուրջ քննարկումների ժամանակ կարող եք ուսումնասիրել Յոթանասունից Երեց Լորենս Ի. Քորբրիջի (էջ 103) և Երեց Մարկոս Ա. Այդուկայտիսի (էջ 108) ելույթները, փնտրելով հետևյալ հարցերի պատասխանները. Ինչո՞ւ Ջոզեֆ Սմիթին ուղուց շեղողները հանգիստ չէին թողնում նրան: Ինչպե՞ս մենք կարող ենք ճանաչել ճշմարտությունը աշխարհում, որտեղ ավետարանի ուսմունքները անընդմեջ հարձակումների են ենթարկվում: ■



Գերագույն համաժողովին նշվել է տաճարների հարցում առաջընթացի մասին, հաստատվել են նոր պաշտոնյաներ

Անցած վեց ամիսների ընթացքում «Եկեղեցու գործն առաջ է ընթացել առանց արգելքների», ասել է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Եկեղեցու 184-րդ ամենամյա գերագույն համաժողովի իր բացման խոսքում:

Կրկին անդրադառնալով 2014թ. մարտի 2-ին Գիլբերթ Արիզոնա Տաճարի նվիրագործման հաճելի հուշերին, առաջ նայելով դեպի Ֆորթ Լաուդերդալ Ֆլորիդա Տաճարի նվիրագործմանը և կանխատեսելով 2014թ. և 2015թ. ընթացքում աշխարհի շատ մասերում տաճարների ավարտը և նվիրագործումը, Նախագահ Մոնսոնը նշեց, որ երբ ավարտին հասցվեն նախկինում հայտարարված բոլոր տաճարները, Եկեղեցին կունենա 170 գործող տաճարներ ողջ աշխարհով մեկ:

«Չնայած, որ մենք այժմ կենտրոնացնում ենք մեր ջանքերը նախապես հայտարարված տաճարներն ավարտելու վրա և մոտ ապագայում չենք հայտարարելու որևէ նոր տաճար, - ասաց նա,- մենք կշարունակենք ապագայում տաճարների համար տարածքներ գտնելու որոշումներ կայացնելու գործընթացը: Ապա հայտարարություններ կարվեն հետագա գերագույն համաժողովների ժամանակ: Մենք տաճար կառուցող և տաճար այցելող ժողովուրդ ենք»:

Համաժողովի ընթացքում հաստատվեցին Յոթանասունի Նախագահության մեկ նոր անդամ, չորս նոր Բարձրագույն Իշխանավորներ, Կիրակնօրյա Դպրոցի նոր գերագույն նախագահությունը և 42 Տարածքային Յոթանասունականներ:

Երեց Լին Գ. Ռոբինսը կանչվեց Յոթանասունի Նախագահություն:

Երեց Ջորջ Քլեբինգաթը Կիևից, Ուկրաինա, և Երեց Չի Հոնգ (Սեմ) Վոնգը Հոնգ Կոնգից, Չինաստան, հաստատվեցին ծառայելու Յոթանասունի Առաջին Քվորումում: Երեց Լարի Ս. Քաչերը Միդվեյից, Յուտա, և Երեց Հյուգո Ի. Մարտինեզը Արեսիբոից, Պուերտո Ռիկո, հաստատվեցին Յոթանասունի Երկրորդ Քվորումում:

Երեց Թեդ Ռ. Քալիստերը, ով ծառայում էր Յոթանասունի Նախագահությունում և որպես Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամ, հաստատվեց որպես Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահ, և Ջոն Ս. Թանները և Դեյվիդ Ջ. Դյուրանը՝ որպես առաջին և երկրորդ խորհրդականներ:

Տեսեք հաստատումների և ազատումների ամբողջական ցանկը էջ 26–27-ում, և գտեք Երեց Ռոբինսի, նոր կանչված Յոթանասունականների և Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահության անդամների կենսագրությունները սկսած 141 էջից:

Գերագույն համաժողովից մեկ շաբաթ առաջ Համաժողովների Կենտրոնում տեղի ունեցավ կանանց առաջին գերագույն ժողովը բոլոր կանանց, երիտասարդ կանանց և ութ տարեկան և ավելի բարձր տարիքի աղջիկների համար: Այս ժողովը տեղի ունեցավ նախկին Սփոփող Միության և Երիտասարդ Կանանց գերագույն ժողովների փոխարեն: Կանանց ժողովի բոլոր ուղերձները կարող եք գտնել 116–28 էջերում:

Նաև համաժողովից առաջ վերակազմավորվեց Երիտասարդ Կանանց գերագույն խորհուրդը, առաջին անգամ քույրեր կանչվեցին Սոլթ Լեյք Սիթիի տարածքից դուրս, ներառյալ՝ Պերույում, Հարավային Աֆրիկայում, Ճապոնիայում, Բրազիլիայում և Բրուկլինում, Նյու Յորք, ԱՄՆ: Կարդացեք կենսագրությունները և տեսեք նկարները՝ lds.org/callings/young-women:

«Փրկիչն այս աշխարհ բերեց սիրո և բարության ուղերձը բոլոր տղամարդկանց և կանանց համար», - Նախագահ Մոնսոնն ասաց գերագույն համաժողովի վերջում: «Թող որ մենք միշտ հետևենք Նրա օրինակին»: Նա վստահեցրեց Եկեղեցու անդամներին և մնացած լսողներին, որ «Երկնային Հայրը մտահոգվում է մեզ համար: Նա կառաջնորդի և կօրհնի մեզ, եթե մենք մեր հավատքը և հույսը դնենք Նրա վրա»: ■

ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ԵՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Եկեղեցու Պատմության Թանգարանը հրավիրում է Վերջին Օրերի Սրբերի արվեստագետներին ստեղծել արվեստի նոր գործեր 10-րդ Միջազգային Արվեստի Մրցույթի համար: Արվեստագետներին խրախուսվում է օգտագործել իրենց տաղանդները՝ ստեղծելու արվեստի գործեր, որոնք անդրադառնում են ցուցահանդեսի թեմային՝ «Պատմեք ինձ Հիսուսի պատմությունները»: Այս առանձնահատուկ մրցույթում գործերը պետք է կենտրոնանան միայն Նոր Կտակարանի պատմությունների վրա:

Մանրամասների և առցանց գրանցման համար այցելեք lds.org/artcomp: Արվեստագետները, ովքեր գրանցվում են, կստանան թարմացվող տեղեկություններ: Հայտերը կընդունվեն 2014թ. նոյեմբերի 3-ից մինչև 2015թ. փետրվարի 27-ը: Բոլոր գեղարվեստական մեդիա եղանակները, ոճերը և մշակութային մոտեցումները ողջունվում են: Մասնակիցները պետք է լինեն 18 տարեկան կամ բարձր: Հայտերը կներկայացվեն հանձնախմբին, և ընտրված աշխատանքները կներկայացվեն Եկեղեցու Պատմության Թանգարանում և համացանցում սկսած 2015թ. հոկտեմբերից:

ՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԿԼԻՆԵՆ LDS.ORG-ՈՒՄ

Աճող Եկեղեցու կարիքները ավելի լավ ապահովելու համար Սփոփող Միության, Երեխաների Խմբի, Երիտասարդ Կանանց, Երիտասարդ Տղամարդկանց և Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահությունները ծրագրում են ամեն տարի անցկացնել համաշխարհային ուսուցում համացանցի միջոցով: Ակնկալվում է, որ այս ուսուցումը մատչելի կլինի LDS.org-ում ամեն տարվա կեսին բազմաթիվ լեզուներով:

Օժանդակ կազմակերպությունների ուսուցման ժողովները, որոնք անց էին կացվում Սոլթ Լեյք Սիթիում ապրիլի գերագույն համաժողովի հետ միասին, այլևս չեն շարունակվի: Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները և խորհուրդները կշարունակեն ուսուցում անցկացնել բազմացից ժողովների ժամանակ՝ ըստ հանձնարարության:

Նոր ֆիլմը հնարավորություն կստեղծի *Հանդիպել մորմոնների*ն

Դուք երբևէ ցանկացե՞լ եք, որ լինի մի հասարակ եղանակ, որով կարող ենք ուրիշներին հայտնել, որ Վերջին Օրերի Սրբերը պարզապես նորմալ մարդիկ են, ովքեր գտնում են նպատակ և առաջնորդություն, երբ նրանք կենտրոնացնում են իրենց կյանքը Հիսուս Քրիստոսի վրա: Դա հենց այն է, ինչը ձեզ կօգնի անել շուտով Եկեղեցու կողմից թողարկվող վավերագրական ֆիլմը:

Հանդիպել մորմոններին ֆիլմը սկսվում է զվարճալի մի ակնարկով, թե ինչպես են ուրիշները հաճախ սխալ հասկանում Եկեղեցու անդամներին: Ապա այնտեղ ներկայացվում են վեց ընտանիք, որտեղ յուրաքանչյուրը կիսվում է անձնական փորձառություններով և նկարագրում, թե ինչպես է ավետարանն օգնում նրանց իրենց կյանքում: Հանդես են գալիս.

Եպիսկոպոսը: Ջերմեյն Մալիվանը և նրա կինը՝ Քեմբին, Ատլանտայից, Ջորջիա, ԱՄՆ, աշխատում են միություն ստեղծել իրարից խիստ տարբերվող մարդկանցով լի համայնքում, մինչ մեծացնում են իրենց երեք երիտասարդ որդիներին:

Մարզիչը: Քեն Նիումատալոլոն՝ Միացյալ Նահանգների Նավալ Ակադեմիայի ֆուտբոլի թիմի գլխավոր մարզիչը Անապոլիսում, Մերիլենդ, ԱՄՆ, և նրա կինը՝ Բարբարան, իրենց երեխաների և մարզիկների աջակցությամբ Հանգստյան օրը սուրբ են պահում:

Կոնֆետներով ռմբակոծողը. Գեյլ Հալվորսենը՝ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի 93-ամյա վետերանը, և նրա 90-ամյա կինը՝ Լորեյնը, Ամադոյից, Արիզոնա, ԱՄՆ, հիշեցնում են երեխաներին ծառայելու արժեքի մասին: Մինչև այժմ որպես օդաչու Եղբայր Հալվորսենը կոնֆետներ է նետում օդանավից, ինչպես նա արել էր Բեռլինի Օդային Փոխադրման ժամանակ պատերազմից հետո:

Պայքարողը: Կարոլինա Մարինը՝բոնցքամարտիկը Սան Խոսեից, Կոստա Ռիկա, և նրա մարզիչն

Ֆիլմում նկարահանված դերասան անդամների բաց դռների օրը Նախագահ և Քույր Ուխդորֆները ողջունում են Կարոլինա Մարինին Կոստա Ռիկայից:

ու ամուսինը՝ Միլթոնը, հավասարակշռում են իրենց դերերը որպես ամուսիններ և ծնողներ մրցումների հանդեպ իրենց սիրով:

Մարդասերը: Բիշնու և Մանգալա Ադհիկարիները Կաթմանդուից, Նեպալ, հարգում են իրենց երկրի հավատքն ու ժառանգությունը: Եղբայր Ադհիկարին ինժեներ է, ով կառուցել է ճանապարհներ, դպրոցներ և մաքուր ջրի համակարգեր, որոնք օգնել են բազմաթիվ փոքր համայնքների:

Միսիոներ մայրը: Քրեյգ և Դաուն Արմսթրոնգները և նրանց որդի Էնթոնին Սոլթ Լեյք Սիթիից, Յուտա, ԱՄՆ, պատմում են, թե ինչպես Քույր Արմսթրոնգը, լինելով անտուն միայնակ մայր, հանդիպել էր միսիոներներին: Ավետարանը, որով նրանք կիսվեցին, օգնեց նրան լիովին փոխել իր կյանքը: Նա ավելի ուշ ամուսնացավ Քրեյգի հետ, և պատմությունը հասնում է իր գագաթնակետին, երբ Էնթոնին գնում է լիաժամկետ միսիայի Հարավային Աֆրիկա, կիսվելու ավետարանով, որն այնքան օգնել է իր մորը:

Հանդիպեք մորմոններին ֆիլմը կցուցադրվի Ջոզեֆ Սմիթի հիշատակին նվիրված շենքում Սոլթ Լեյք Սիթիում, ԱՄՆ, և այլ վայրերում, որոնք կորոշվեն հետագայում: ■

Եկեղեցում սովորեցնելիս պետք է հետևել Քրիստոսի օրինակին

«Սովորեցնելիս մենք փորձում ենք հետևել Փրկչին քայլ առ քայլ»,- ասաց Կիրակնօրյա Դպրոցի նոր գերագույն նախագահ Թեդ Ռ. Քալիստերը հետևյալ համաժողովի ժամանակ:

Դա նշանակում է տալ ոգեշնչված հարցեր, որոնք օգնում են մարդկանց դարձի գալ, ասել է նա: Ավետարանը «պետք է օգնի նրանց հասկանալ և զգալ ավետարանի Հոգին իրենց կյանքում»:

Նա ասաց, որ տպավորված էր *Եկ, հետևիր ինձ* երիտասարդների առցանց ուսումնական ծրագրով, որը ներառում է վերջին գերագույն համաժողովի ելույթները, ինչպես նաև Եկեղեցու կողմից թողարկված մեդիա նյութերը: Մասնակցությունը փոխարինել է դասախոսությանը, ասել է նա, և «մեծ տարբերություն կա պարզապես դասը սովորեցնելու և դասարանի աշակերտների կարիքներին այն հարմարեցնելու փորձերի միջև»:

Նա ավելացրել է, որ *Եկ, հետևիր ինձ* ծրագիրը օգնում է դարձի բերել, և ոչ թե պարզապես տեղեկություններ տալ: «Ես կարծում եմ, որ մենք մեծացնում ենք երիտասարդների մի սերունդ, որ աշխարհի ամենալավ ուսուցիչներն են լինելու, աշխարհի ամենալավ ծնողները, - ասել է նա,- քանի որ նրանք այժմ ստանում են այս փորձառությունը որպես երիտասարդներ և կարիք չունեն սպասելու մինչև [նրանք] չափահասներ կդառնան որպեսզի պարզեն, թե ինչպիսին պետք է լինի արդյունավետ ուսուցումը և ըմբռնումը»:

Հիսուս Քրիստոսը Ուսուցիչների Ուսուցիչն է, ասել է Եղբայր Քալիստերը, և եկեղեցում մեր ուսուցանածը պետք է մարդկանց բերի դեպի Քրիստոսը: Շեշտելով վարդապետությունը պարզ և հակիրճ ձևով ուսուցանելու կարիքը՝ նա ասել է, որ «ցանկացած պահի, երբ մենք փորձում ենք հետևել Փրկչի օրինակին, մենք ճիշտ ենք վարվում»: ■

Մեր ժամանակների ուսմունքները

2014թ. մայիսից մինչև 2014թ. հոկտեմբերը Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության չորրորդ կիրակի օրվա դասերը պետք է պատրաստվեն 2014թ. ապրիլի գերագույն համաժողովի ժամանակ տրված մեկ կամ ավելի ելույթներից: 2014թ. հոկտեմբերին ելույթները կարող են ընտրվել կամ 2014թ. ապրիլի, կամ 2014թ. հոկտեմբերի գերագույն համաժողովից: Ցցի և շրջանի նախագահները պետք է ընտրեն, թե որ ելույթները կօգտագործվեն իրենց տարածքներում, կամ նրանք կարող են այս պարտականությունը հանձնել եպիսկոպոսներին և ճյուղի նախագահներին:

Նրանք, ովքեր մասնակցում են չորրորդ կիրակի օրվա դասերին, խրախուսվում են նախօրոք ուսումնասիրել ընտրված ելույթները: Համաժողովի ելույթները շատ լեզուներով մատչելի են conference.lds.org: ■

ՄՈՐՄՈՆԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔԸ ՀԱՍԱՆԵԼԻ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻՆ

Միլիոնավոր ունկնդիրներ և դիտողներ ողջ աշխարհով մեկ վայելում են Մորմոնական Հեռուստաալիքը, որը հեռարձակվում է անգլերենով և իսպաներենով 24 ժամ շարունակ, շաբաթը յոթ օր, Սոլթ Լեյք Սիթիի Տաճարային Հրապարակից, Յուտա, ԱՄՆ:

Եկեղեցու այս պաշտոնական լրատվական հեռուստաալիքը սկսել է հեռարձակվել հինգ տարի առաջ: Բազմաթիվ Վերջին Օրերի Սրբեր հաճույքով են դիտում այն իրենց ընկերանդամների և ուրիշների հետ միասին: Այն գովազդներ չի պարունակում, ներառում է երեք ելույթներ և երաժշտություն ընդգրկող ռադիոալիքներ և Մորմոնական Ուղերձներ կարճ տեսաֆիլմեր:

Մորմոնական հեռուստաալիքը գտեք mormonchannel.org, նաև YouTube, iTunes, Roku, Tumblr, Facebook և Twitter-ում: iOS և Android օգտագործողների համար նաև մատչելի են անվճար բջջային հավելվածներ:

Տեխնոլոգիան և հասարակական լրատվամիջոցները մեծացնում են գերագույն համաժողովի մատչելիությունը ողջ աշխարհով մեկ

Հլրացում ավելի քան 100000 ներկաների, ովքեր մասնակցեցին 184-րդ ամենամյա գերագույն համաժողովի հինգ նիստերին Համաժողովների Կենտրոնում Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, ԱՄՆ, միլիոնավոր մարդիկ ևս դիտեցին կամ լսեցին նիստերը 95 լեզուներով հեռուստացույցի, ռադիոյի, արբանյակային հեռուստալիքների և համացանցի հեռարձակումների միջոցով:

Մինչ Սոլթ Լեյք Սիթիի Համաժողովների Կենտրոնը տեղավորում է 21000 մարդ, գերագույն համաժողովի լսարանը տարածվում է երկրագնդով մեկ, երբ միլիոնավոր եկեղեցու անդամներ միանում են համապատասխան ալիքին: Ավելի քան 50 տարի Եկեղեցին բանավոր թարգմանում է ելույթները բազմաթիվ լեզուներով: Այսօր տեխնոլոգիաները կենդանի դիտումը հնարավոր են դարձնում ավելի քան 200 երկրներում ողջ աշխարհով մեկ:

Բացի տեղի ժողովատների հեռարձակումներից, եկեղեցին համաժողովի ուղիղ ցուցադրում է ապահովում LDS.org, BYUtv, BYUtv International, Mormon Channel, Roku, Facebook և YouTube միջոցով:

Շատերը նաև դիտում են գերագույն համաժողովը հասարակական լրատվամիջոցների միջոցով: #ldsconf hashtag թվիթերների հեղեղ է ուղակվում Թվիթեր համաժողովի հինգ նիստերից յուրաքանչյուրի ընթացքում՝ գերագույն համաժողովը դարձնելով Թվիթերում ամենաշատը քննարկվող թեմաներից մեկն այդ ընթացքում: Օրինակ, 2013թ. հոկտեմբերին 155000 թվիթերներ ուղարկվեցին գերագույն համաժողովի վերաբերյալ: (Յուրաքանչյուր թվիթը անհատական մեկնաբանություն է՝ բաղկացած 140 տառից կամ պակաս:)

Իր հասարակական լրատվամիջոցների միջոցով Եկեղեցին կենդանի գովազդներ է հղում համաժողովից բազմաթիվ լեզուներով, և դա խրախուսում է ուրիշներին կիսվել այդ ուղերձներով: 2013թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ընթացքում շատերը դիտեցին կամ լսեցին գերագույն համաժողովի ուղերձները հասարակական լրատվամիջոցներում գովազդը տեսնելուց հետո: Գովազդները հեռարձակվում են անգլերենով, իսպաներենով և պորտուգալերենով:

Համաժողովի նյութերն այժմ մատչելի են ավելի մեծ լսարանի համար: ■

Համաժողովի ելույթները այժմ մատչելի են լայն լսարանին ի շնորհիվ տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի միջոցների:

Վեբկայքերը պատմում են Ծառայության, հավատքի մասին

Վերջին Օրերի Սրբերը ծառայություն են մատուցում և կիսվում են իրենց հավատքով ողջ աշխարհով մեկ: Նմանատիպ իրադարձությունների վերաբերյալ զեկույցներ են հայտնվում քաղաքի լուրերի վեբկայքերում, որոնք մշտապես ամփոփվում են newsroom.lds.org, որը Եկեղեցու պաշտոնական աղբյուրն է լրատվամիջոցների նորությունների, կարծիք ձևավորող ղեկավարների և հասարակության համար:

Խաղաղօվկիանոսյան տարածքում Վերջին Օրերի Սրբերը ջուր, սնունդ, շղթայական սղոցներ, ջրի ֆիլտրեր, գեներատորներ և այլ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ պարագաներ մատակարարեցին՝ օգնելով տոնգացիներին Յան արևադարձային ցիկլոնի ավերածությունից հետո: Սամոայում ՎՕՍ երիտասարդները միացան երկօրյա միջկրոնական իրադարձությանը հոգևոր խրախուսանքներով, երաժշտությամբ, պարերով և սպորտաձևերի ցուցադրումով:

Բրազիլիայում Եկեղեցու անդամները, կրելով Մորմոն օգնող ձեռքեր շապիկները, աջակցեցին մաքրման աշխատանքների և պարագաներ բաշխելու գործին, որտեղ ջրհեղեղը վնասել էր տեղի հարևանությանը և բիզնեսներին՝ շատերին անտուն թողնելով: Այլուր անդամներն աջակցել են բաշխման աշխատանքներին, որի ժամանակ Եկեղեցու Մարդասիրական Ծառայությունները նվիրեցին 211 հաշմանդամների անվասայլակներ հատուկ կարիքներ ունեցողներին: Անվասայլակների շարունակվող նվիրատվությունների ընդհանուր թիվն այժմ Բրազիլիայում հասնում է մոտավորապես 700-ի:

Աֆրիկայում ազգային և միջազգային կազմակերպությունները միավորեցին իրենց ուժերը ՎՕՍ Բարեգործության հետ, որն Եկեղեցու մարդասիրական ձեռքն է, Գանայի առաջին ազգային քարոզարշավում՝ վերացնելու կարմրուկի և կարմրախտի դեպքերը, պատվաստելով երեխաներին սկսած նորածին տարիքից մինչև 14 տարեկանը: Նիգերիայում և Չինաստանում Օգնող Ձեռքերի օրը օգտակար են եղել հազարավոր մարդիկ 100 համայնքներում, երբ տարբեր տարիքի Վերջին Օրերի Սրբեր, խմբերի բաժանված, կառուցում էին կամուրջներ, տնկում էին ծառեր, մաքրում էին մոլախոտերից, ներկում էին կառույցները և մաքրում ու գեղեցկացնում էին հարևան տարածքները: Զիմբաբվեում ավելի քան 60 ՎՕՍ երիտասարդներ կամավոր կերպով արյուն հանձնեցին: Եվ Հարավային Աֆրիկայում Վերջին Օրերի Սուրբ Նոգիբել Մականդան՝ վեց երեխաների մայրը, ընտրվեց որպես Քուինսթոնի քաղաքապետ 200000 բնակչություն ունեցող քաղաքում:

Կենտրոնական Ամերիկայում ավելի քան 500 ՎՕՍ երիտասարդներ Գվատեմալայում աշխատեցին տեղի իշխանությունների հետ՝ տնկելով 1944 ծառ: Կոստա Ռիկայում ՎՕՍ ժողովատները դարձել էին կաթի հավաքման կետեր և Եկեղեցու 370 կամավորներ օգնեցին հանձնել այն միջոցառմանը մասնակցող մեծ հանրախանութներին՝ ապահովելու կարիքի մեջ գտնվողների կարիքները:

Եվ Կանադայում Վերջին Օրերի Սրբերը աշխատեցին Մոնրեալի (Քվիբեք) Քրիստոնյա-Հրեա Դիալոգի հետ՝ նախապատրաստելու տեսագրված հարցազրույցներ նախքան արժեքների վերաբերյալ կառավարության լսումները: Հարցազրույցի մասնակիցները խոսում էին ի աջակցություն հասարակության պարտավորությունների, հարգելու, հասկանալու, հանդուրժողականության և կրոնական ազատության վերաբերյալ, շեշտելով, որ կրոնը շարունակում է կարևոր դեր խաղալ Քվիբեքի շատ քաղաքացիների կյանքում:

Բազմաթիվ լեզուներով միջազգային նորությունների վեբկայքերի ցանկը տեսեք mormonnewsroom.org/newsroom-country-sites: ■

Գվատեմալայում ավելի քան 500 Վերջին Օրերի Սուրբ երիտասարդներ հավաքվեցին օգնելու տնկել 1944 ծառ:

Մեխիկո Սիթիի Տաճարի Այցելուների Կենտրոնն աչքի է ընկնում բազմաթիվ ցուցադրություններով, որոնք սովորեցնում են ավետարանի ճշմարտությունները՝ ընտանիքներն ամրացնելու համար:

Վերաբացվում է Մեխիկո Սիթիի Տաճարի Այցելուների Կենտրոնը

Վերաբացումից հետո մեկ ամսվա ընթացքում ավելի քան 30000 հյուրեր այցելեցին Մեխիկո Սիթիի Այցելուների Կենտրոն, որտեղ երկու տարի վերանորոգման և ընդարձակման աշխատանքներ էին տարվել: Բոլոր ցուցանմուշներն այժմ Իսպանիայում են և ներառում են յուրօրինակ մեդիա նյութեր, որոնք ձևավորվել են հատուկ մեքսիկական լսարանի համար: Վերանորոգված կենտրոնը նաև առաջին այցելուների կենտրոնն է, որը ներառում է ցուցադրությունների մի ողջ սրահ, որը ձևավորված է հատուկ նպատակով՝ ուսուցանելու ավետարանի սկզբունքները երեխաներին:

Այս այցելուների կենտրոնը երրորդ տեղն է գրավում իր մեծությամբ 17 նմանատիպ կառույցների միջև, որոնցից շատերը գտնվում են տաճարի հարևանությամբ կամ Եկեղեցու պատմական տարածքում: Այժմ վերանորոգման աշխատանքներ են տարվում Հռոմում, Իտալիա, տաճարի մոտ կառուցված այցելուների կենտրոնում, կետրոններ կան Անգլիայում, Նոր Զելանդիայում, Հավայան Կղզիներում և ԱՄՆ-ի ինը մայրցամաքային նահանգներում: Կենտրոնները նախատեսված են ողջունելու ակտիվ և քիչ ակտիվ Վերջին Օրերի Սրբերին, ինչպես նաև նրանց, ովքեր այլ հավատքներից են, ոչ միայն Եկեղեցու հետ ծանոթ մարդկանց, նաև օգնելու նրանց հասկանալ համոզմունքները և ցանկություն առաջ բերելու ավելին սովորել Փրկչի և ավետարանի Վերականգնման մասին: Դրանք նաև տալիս են ընտանիքներն ամրացնելու մասին ուղերձներ:

Մեքսիկան խարիսխ է հանդիսանում եկեղեցու համար, ավելի քան 1.2 միլիոն անդամներով, ավելի քան 200 ցցերով և 12 տաճարներով: ■

ՄՈՒԿ-ում իրենց փորձառության ընթացքում միսիոներները հրահանգներ են ստանում Հիսուս Քրիստոսի ավետարանը ուսուցանելու մասին:

Միսիոներների Ուսուցման Կենտրոններն օգնում են արագացնել փրկության աշխատանքը

Ողջ աշխարհով մեկ 15 միսիոներների ուսուցման կենտրոններն ապահովում են ուսուցում ավելի քան 85000 միսիոներների համար 143 երկրներից: Միսիոներները սովորում են 55 լեզուներ 1600 ուսուցիչների օգնությամբ, ապա ծառայում են մինչև երկու տարի 405 միսիաներում 150 երկրներում:

Միսիոներների քանակը խիստ աճեց, երբ 2012թ. հոկտեմբերին փոխվեցին միսիոներների տարիքային պահանջները, և այժմ ՄՈՒԿ-երը հյուրընկալում են ավելի շատ միսիոներներ, քան երբևէ նախկինում: Ունենալով առնվազն մեկ ՄՈՒԿ յուրաքանչյուր կիսագնդում, արևը երբեք մայր չի մտնում ուսուցանման ասպարեզում:

Միսիոներները, ընդհանուր առմամբ, ժամանում են ՄՈՒԿ հիմնական կրոնական գիտելիքներով, որոնք ձեռք են բերել տանը կամ Եկեղեցում ստացած ուսուցման հիման վրա: Կենտրոնները տալիս են լրացուցիչ ուսուցում այն մասին, թե ինչպես սովորեցնել այնպես, ինչպես Հիսուս Քրիստոսն է սովորեցրել և ինչպես հրավիրել մարդկանց հետևել Նրան: Միսիոներները փորձարկում են ուսուցանման իրավիճակներ, անհրաժեշտության դեպքում ստանում են լեզվի ուսուցում, ամեն շաբաթ լսում են Եկեղեցու ղեկավարների և ՄՈՒԿ-ի աշխատողների ելույթները հավաքների ժամանակ և հնարավորությունների դեպքում ծառայություն են մատուցում:

Ամենամեծ ՄՈՒԿ-ը գտնվում է Պրովոյում, Յուտա, ԱՄՆ: Այնտեղ ուսուցանվում են հազարավոր միսիոներներ 55 լեզուներով: Իր մեծությամբ երկրորդ ՄՈՒԿ գտնվում է Մեխիկո Սիթիում, Մեքսիկա: 2013թ. հունիսին այն տեղափոխվեց ավելի փոքր շենքից 90 ակր տարածք ունեցող կամպուս, որը նախկինում Բենեմերիտո դե լաս Ամերիկաս անվանումով Եկեղեցու մասնավոր ավագ դպրոց էր: Նախկին վայրը միաժամանակ կարող էր հյուրընկալել մոտ 125 միսիոներների, իսկ նոր վայրը կարող է հյուրընկալել ավելի քան 1000 հոգու:

ՄՈՒԿ-եր նաև կան Բուենոս Այրեսում, Արգենտինա, Սան Պաուլոյում, Բրազիլիա, Սանտիագոյում, Չիլի, Բոգոտայում, Կոլումբիա, Սանտո Դոմինգոյում, Դոմինիկյան Հանրապետություն, Պրեստոնում, Անգլիա, Ակկրայում, Չինաստան, Գվատեմալա քաղաքում, Գվատեմալա, Օկլենդում, Նոր Զելանդիա, Լիմայում, Պերու, Մանիլայում, Ֆիլիպիններ, Յոհանսբուրգում, Հարավային Աֆրիկա և Մադրիդում, Իսպանիա: ■

Եկեղեցին կիրառում է բարօրության սկզբունքները Ֆիլիպինները նորմալ վիճակի վերադարձնելու համար

Ամիսներ անց, երբ 2013թ. նոյեմբերին Հաիյան ուժեղ փոթորիկը զարկեց Ֆիլիպիններին, կործանելով մոտավորապես 1.2 միլիոն տներ և սպանելով ավելի քան 6200 մարդ, Եկեղեցին շարունակում է օգնել և ջանքեր չի խնայում ավերվածությունից հետո երկարաժամկետ օգնություն ապահովելու համար: Հատկապես հաջող ջանքերից մեկը ներառում է կամավորների, ովքեր սովորեցին տներ կառուցել նրանց համար, ովքեր դեռևս մնացել էին առանց տանիքի:

Փոթորկից տուժած համայնքի այս անդամները նրանց թվում են, ովքեր երախտագիտություն են հայտնել այն օգնության համար, որը ստացել են Եկեղեցուց, չնայած, որ նրանք Վերջին Օրերի Սրբեր չեն.

- Մի կին, ով փոթորկի ժամանակ ապաստան էր գտել Մորմոնական աղոթատանը, այնուհետև պարզել էր, որ նրա տունը ավերվել էր, երբ կոկոսի ծառերը ընկել էին դրա վրա: Նա և նրա ընտանիքը միջոցներ չունեին այն վերակառուցելու համար, սակայն կամավորները օգնեցին նրան կառուցել նոր տուն, և նա այժմ օգնում է մեկ այլ ընտանիքի կառուցել տուն: «Ես սովորեցի աշխատել նրանց հետ միասին, ովքեր նույնպես կարիքի մեջ են այստեղ, որպեսզի մենք կարողանանք միասին հաղթահարել [փոթորկի] հետևանքները»,- ասաց նա:
- Մի մարդ, ով կորցրել էր իր աշխատանքը, երբ այն ձեռնարկությունը, որտեղ նա աշխատում էր, ավերվել էր, այժմ սովորում է տներ կառուցել իր ընտանիքի և ուրիշների համար: «Մենք գիտենք, որ պետք է օգնենք միմյանց, որպեսզի աշխատանքը արագ ավարտին հասցնենք», - ասաց նա, ավելացնելով, որ նա երախտապարտ է Եկեղեցու օգնելու ջանքերի համար:

Նախագահող Եպիսկոպոս Գարի Ի. Ստիվենսոնն ասաց, որ աղքատների և կարիքավորների համար հոգ տանելու հետ համատեղ, «մենք այժմ նաև տեսնում ենք ինքնապահովման սկզբունքը գործի մեջ, և այն բավականին ապշեցնող է»: Նա ասաց. «Մենք փորձում ենք նյութեր ապահովել, մինչդեռ [ստացողները] կատարում են աշխատանքը: Ցանկացած մարդ, ով տանիք է ստանում, նաև աշխատում է ինքն իսկ կառուցել այդ տանիքը»:

Տեղի Եկեղեցու ղեկավարները և մարդասիրական ընկերությունների ներկայացուցիչները հանդիպում են տեղի համայնքի ղեկավարների հետ, տալու մասնագիտական ուսուցում և վկայական այն մարդկանց, ովքեր սովորել են ատաղձագործական հմտություններ: Մշտական Կրթության Ֆոնդի միջոցները օգտագործվել են 20 հմուտ ատաղձագործներ բերելու համար, որպեսզի աջակցեն ուսուցմանը, և 3000 նախագծված տներից 2000-ը արդեն իսկ ավարտված են:

Տեղի սովորողները ցուցադրում են իրենց սովորածը, կառուցելով 10 տներ, որպեսզի ստանան պետական վկայական և գործիքների տուփ Եկեղեցու կողմից, որը նրանց հնարավորություն է տալիս փնտրելու վարձատրվող աշխատանք: Շինարարական աշխատողների խիստ մեծ պահանջ է զգացվում և Կաթոլիկ Օգնության Ծառայությունները համաձայնվել են աշխատանքի ընդունել հարյուրավոր ատաղձագործների, որոնք ուսուցանվել են ՎՕՍ Եկեղեցու կողմից:

Կամավորները նրբատախտակ են ամրացնում նոր տան հենքին Տակլոբանում, Ֆիլիպիններ:

Եպիսկոպոս Սթիվենսոնն ասաց, որ Եկեղեցու 500 անդամներ հաճախել են մի ժողովի, որտեղ կրոնական ղեկավարները նկարագրել են աշխատանքի ուսուցումը և վկայականներ հանձնելու գործընթացը, «և երբ դա նկարագրվել է նրանց, նրանք ծափահարություններով և արցունքներով են ողջունել այն, իմանալով, որ նրանք կարող են տեսնել ուղի . . . իրենց ընտանիքների կարիքները հոգալու համար»:

Եկեղեցին նաև աշխատել է մի շարք այլ բարեգործական կազմակերպությունների հետ, ինչպես Ֆիլիպինների կառավարության հետ, շարունակելով իրենց ջանքերը ներդնել սնունդ, ջուր, բուժօգնություն, հիգիենայի պարագաներ, գեներատորներ, տների կառուցման համար անհրաժեշտ նյութեր, խոհարարական պարագաներ, ձկնորսական սարքեր և ցանելու համար սերմեր ապահովելու համար:

Եկեղեցին պարզեց, որ աղետներին արձագանքելու ամենաարդյունավետ եղանակը տեղում աշխատելն է, մատակարարելով անհրաժեշտ պարագաներ տուժած երկրին, որքան հնարավոր է մոտ գտնվելով աղետի վայրին: Սա ոչ միայն օգնում է համոզվել, որ համապատասխան օգնություն է ցուցաբերվում տարածքում, այլ նաև օգնում է վերականգնել տեղի վնասված տնտեսությունը:

Ողջ աշխարհով մեկ անդամներին խրախուսվում է իրենց երկրներում աղոթել աղետի տարածքում գտնվողների համար և խորհել իրենց ծոմապահության նվիրատվությունները շատացնելու մասին կամ Եկեղեցու բարեգործական ֆոնդերին նվիրատվություններ կատարելու մասին: ■

Մաքուր ջուր նախաձեռնությունը օգնում է միլիոնավորներին Աֆրիկայում

Ավելի քան երկու տասնամյակ Եկեղեցին ներգրավված է մաքուր ջուր նախագծերում,ավելի քան 100 երկրներում: Միայն Աֆրիկայում այս նախագծերը օրհնել են ավելի քան չորս միլիոն մարդկանց՝ ապահովելով ջրհորներ, ջրամբարներ և ջրամատակարարման և մաքրման համակարգեր:

Նման մի նախագիծ է իրականացվել Իդուգո կղզում, Մոզամբիկի առափնյա տարածքներում: Կղզում ապրող 15000 մարդկանցից շատերն աշխատում են ընտանեկան ագարակներում, ձկնորսությամբ են զբաղվում իրենց շրջապատող Հնդկական օվկիանոսի ջրերում կամ աշխատում են գոլորշիացած արհեստական լճակներում՝ աղ հավաքելով ծովաջրերից: Կղզում չկա հոսող ջուր, էլեկտրականություն, ճանապարհներ կամ փոխադրամիջոցներ: Կղզի մուտք գործելու համար օգտագործվում են ինքնաշեն նավակները կամ փորված մակույկները:

Դարեր շարունակ խմելու ջրի միակ աղբյուրը Իդուգոյում եղել են ձեռքով փորված ծանծաղ հորերը: Հորերը շարունակ լցվում են տիղմով և աղբով: Դրանք տալիս են կեղտոտ և դժվար ձեռք բերվող ջուր: Անձրևների ժամանակ ջուրն աղտոտվում է, առաջացնելով խոլերա, փորլուծություն և այլ հիվանդություններ:

Երբ Եկեղեցու մարդասիրական կազմակերպության միսիոներները լսեցին Իդուգոյի պայմանների մասին, նրանք հանդիպեցին այնտեղի համայնքի ղեկավարների հետ: Միասին նրանք կազմեցին ծրագիր Եկեղեցու Մարդասիրական Ծառայությունների համար, որը նախատեսում էր նյութեր, գործիքներ և ուսուցում ցեմենտով ակոսված պողպատե կափարիչներով 10 հորեր կառուցելու համար, որոնցից յուրաքանչյուրը կկարողանար մատակարարել 1000 մարդու: Միսիոներները կապահովեին հիգիենիկ և սանիտարական պայմանների ուսուցումը, և գյուղացիները կապահովեին բոլոր

Ինդուգո կղզում, Մոզամբիկ, գյուղացիները և տեղի բարձրաստիճան պաշտոնյաները մասնակցում են մի հանդիսավոր արարողության, որտեղ պաշտոնապես սկսվում է համայնքի կողմից ջրհորի օգտագործումը:

անհրաժեշտ աշխատանքը հորերը կառուցելու և պահպանելու համար:

Լաստանավով այստեղ բերվեց չորս բեռնատար մանրախիճ, 300 պարկ ցեմենտ, երկու բեռնատար ավազ, պողպատե ամրան, անհատական պատվերով պատրաստված ցեմենտի պողպատե տարրաներ: Այդ ամենը այնուհետև ոտքով կամ սայլակներով տարան կղզու համապատասխան վայրերը: Մի քանի Եկեղեցու անդամներ Քուելիմանայից, Մոզամբիկ երեք ամսով եկան կղզի՝ օգնելու համար ուսուցանման և շինարարության ընթացքում:

Հորերը այնպես էին նախագծված, որ թույլ տային անձրևաջրերին ցամաքել, սահմանափակելով ջրի աղտոտումը: Որոշ համայնքներում բնակիչները հորերի շուրջը կառուցել են փայտե ցանկապատներ և աղյուսե շավիղներ, օգտագործելով աղյուսները, որոնք նրանք սովորել են ինքնուրույն պատրաստել Եկեղեցու տրամադրած նյութերով:

Պաշտոնական արարողությունների ժամանակ ջրհորների սեփականության իրավունքը հանձնվեց յուրաքանչյուր գյուղի մարդկանց: Մի քանի բնակիչներ, ովքեր աշխատել էին հորերի վրա, արտահայտեցին իրենց երախտագիտությունը, որ իրենց նոր սովորած հմտությունները՝ աղյուսներ պատրաստելը, ցեմենտով աշխատելը, պողպատով ամրացնելը և գործիքներն օգտագործելը, նրանց հնարավորություն կտան գտնելու լրացուցիչ աշխատանք: Ուրիշներն էլ երախտագիտություն հայտնեցին ղեկավարելու հմտություններ ձեռք բերելու հնարավորության համար:

Հաջորդ անձրևային սեզոնից հետո ջրի հետ կապված ոչ մի հիվանդություն չարձանագրվեց հորեր ունեցող գյուղերում:

Համաձայն Աշխարհի Առողջապահական Կազմակերպության տվյալների, ավելի քան մեկ միլիարդ մարդ ողջ աշխարհով մեկ զրկված է մաքուր ջրից: Եկեղեցու մաքուր ջուր նախաձեռնության շնորհիվ այդ թիվը նվազում է մի գործընթացի միջոցով, որը ներառում է համայնքի անդամներին կազմակերպելը և նախագծեր իրականացնելը, աշխատուժ տրամադրելը անհրաժեշտ շինություններ կառուցելու համար, ուսուցում ստանալը և ստացված ռեսուրսները պահպանելը:

Աֆրիկայով մեկ մաքուր ջուր նախագծից բացի Եկեղեցին հովանավորում է մաքուր ջուր նախաձեռնություններ Ասիայում, Կենտրոնական Ամերիկայում, Արևելյան Եվրոպայում, Հնդկաստանում, Ինդոնեզիայում, Խաղաղօվիանոսյան կղզիներում, Հարավային Ամերիկայում, Հարավարևմտյան Ասիայում և աշխարհի այլ վայրերում: ■

Երեց Լին Գ. Ռոբինս

Յոթանասունի Նախագահություն

1997թ. ապրիլին որպես Բարձրագույն Իշխանավոր կանչվելուց հետո Երեց Լին Գ. Ռոբինսը վայելել է «ողջ աշխարհով մեկ գտնվող Սրբերի հետ ծանոթանալու քաղցր օրհնությունը:»

«Դուք անմիջապես կապ եք զգում մարդկանց հետ, որտեղ էլ որ գնաք»,- ասում է նա:

Երեց Ռոբինսը հուսով է, որ կշարունակի հանդիպել Վերջին Օրերի Սրբերին ողջ աշխարհով մեկ, մինչ ծառայում է որպես Յոթանասունի Նախագահության անդամ:

Լին Գրանտ Ռոբինսը ծնվել է 1952թ. հոկտեմբերի 27-ին Փեյսոնում, Յուտա, Ջոշուա Գրանտի և Էվելին Ռ. Ռոբինսի ընտանիքում: Նա իր կյանքի վաղ տարիներն անց է կացրել Սփրինգվիլում, Յուտա, որտեղ նա հանդել է Ջեն Նիլսոնին, ում նա ճանաչում էր մանկուց: Նրանք ամուսնացան 1974թ. հունիսի 27-ին Մանթի Յուտա Տաճարում և յոթ երեխաների ծնողներ են: Նրանք ունեն 15 թոռ:

Երեց Ռոբինսը բակալավրի աստիճան է ստացել իսպաներենի և քաղաքագիտության բնագավառներում Յուտա Նահանգի Համալսարանում և Գործարար Կառավարման Մագիստրոս միջազգային կառավարման համար Միջազգային Կառավարման Ամերիկյան Բարձրագույն Դպրոցում Արիզոնայում, ԱՄՆ: Նա Ֆրանքլին Քուեսթի համահիմնադիրը և ավագ փոխնախագահն է եղել:

Երեց Ռոբինսը ծառայում էր որպես Ուրուգվայ Մոնթեվիդեո Միսիայի նախագահ, երբ կանչվեց Յոթանասունի Երկրորդ Քվորում: Երեք տարի անց նա դարձավ Յոթանասունի Առաջին Քվորումի անդամ: Նա ծառայել է որպես Հարավային Ամերիկայի Հարավային Տարածաշրջանի և Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Տարածաշրջանի նախագահ: Նա նաև ծառայել է Հյուսիսային Ամերիկայի Կենտրոնական Տարածաշրջանում:

Այս ծառայության մեծագույն օրհնությունը Արգենտինա վերադառնալու հնարավորությունն էր, որտեղ նա լիաժամկետ միսիա էր ծառայել: Որպես երիտասարդ երեց Արգենտինայում նա ծառայել էր Ջուջույում մեկ ճյուղ ունեցող տարածքում: Երբ նա վերադարձավ այդ տարածք տարիներ անց, նա գտավ եկեղեցու ցից՝ տասնյակ միավորներով:

«Դուք տեսնում եք դա աշխարհում ամենուր»,- ասում է նա: «Սա հրաշքների օրն է»: ■

Երեց Ջորջ Քլեբինգաթ

Յոթանասունի Առաջին Քվորում

Երեց Ջորջ Քլեբինգաթը ապրում է իր կյանքը հաստատակամությամբ: Նա հավատում է հնազանդ լինելուն, պատվիրանները պահելուն և Հոգու հուշումներին հետևելուն:

Նա ծնվել է 1967թ. դեկտեմբերի 19-ին Քլաուս-Պիտերի և Դորիս Էլկ Քլեբինգաթների ընտանիքում: Երեց Քլեբինգաթը մեծացել է Զվիբրուսկենում, Գերմանիա, առանց ավետարանի ազդեցության: Պատանեկության տարիներին համերգի ժամանակ նա հանդիպեց մի Եկեղեցու անդամի և նրանք ընկերացան:

«Երբ ես այցելեցի իմ նոր ընկերոջը, ես տպավորվեցի նրա ընտանիքից»,- հիշում է նա: «Ես զգացի Հոգին նրա տանը և ցանկացա հաճախել եկեղեցի»:

Եկեղեցու այդ առաջին ժողովի ժամանակ էր, որ նա լսեց Մորմոնի Գրքի մասին: Նրա ընկերը տվեց նրան մի օրինակ իր վկայությամբ, որ այն ճիշտ էր, և Երեց Քլեբինգաթը հեռացավ ժողովներից, որոշելով, որ ինքը պիտի պարզեր դա իր համար:

«Ես հասել էի 1 Նեփիի ինչ-որ մի հատվածի, երբ վկայություն ստացա, որ գիրքը ճշմարիտ էր»,- ասել է Երեց Քլեբինգաթը: «Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին վկայություն ստանալը նույնպես վճռորոշ պահ էր ինձ համար: Իմ միսիայում ես միշտ խնդրում էի իմ զուգընկերներին թույլ տալ ինձ պատմել պատմության այդ մասը»:

Նախքան լիաժամկետ միսիա ծառայելը Կոլորադո Դենվեր Միսիայում, Երեց Քլեբինգաթը 18 ամիս ծառայեց գերմանական բանակում: Նա կնքվեց Ջուլիա Փոլթորաքի հետ Սոլթ Լեյքի Տաճարում 1992թ. դեկտեմբերի 21-ին: Նրանք ունեն երեք երեխա:

Երեց Քլեբինգաթը աստիճան է ստացել ռուսերեն լեզվի ուսումնասիրությունների գծով Ռիքս Քոլեջում և ավելի ուշ մագիստրոսի աստիճան կազմակերպչական վարքագծի բնագավառում Բրիգամ Յանգի Համալսարանում: Նա աշխատել է որպես բիզնեսի կառավարման խորհրդատու Փրայս Վոթերհաուս և Արթուր Անդերսեն ընկերություններում և Եկեղեցու մի քանի պաշտոններում:

Այս կոչումից առաջ Երեց Քլեբինգաթը ծառայել է որպես ցցի երիտասարդ չափահասների ներկայացուցիչ, երեցների քվորումի նախագահ, Երիտասարդ Տղամարդկանց նախագահ, ավագ խորհրդատու, ճյուղի նախագահ և եպիսկոպոս: Նա կավարտի Ուկրաինա Կիև Միսիայի նախագահի իր ծառայությունը 2014թ. հունիսին: Նա հաստատվել է որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամ 2014թ. ապրիլի 5-ին: ■

Երեց Չի Հոնգ (Սեմ) Վոնգ

Յոթանասունի Առաջին Քվորում

Որպես նորադարձ և ուսանող Բրիգամ Յանգի Համալսարանում Հավայան կղզիներում, Երեց Չի Հոնգ (Սեմ) Վոնգը ավելին ձեռք բերեց, քան կրթությունը. նա ձեռք բերեց հաստատուն գիտելիք, որ կա Աստված, ով գիտի «մեր կյանքի մանրամասները»:

Երեց Վոնգը ծնվել է 1962թ. մայիսի 25-ին Հոնգ Կոնգում, Չինաստան, Նգան Քան և Ֆաթ Վոնգերի ընտանիքում: Նա փոքրիկ բնակարանում մեծացող յոթ երեխաներից մեկն էր:

Աշխատանքի վայրում նա հանդիպեց Քերոլ Լուին, ով ներկայացրեց նրան ավետարանը: Երիտասարդ լսողը 1982թ. փետրվարի 14-ին մկրտվեց:

Մեկ տարի անց 1983թ. հուլիսի 9-ին նա ամուսնացավ Քերոլի հետ: Նրանք տեղափոխվեցին Լայ, Հավայան կղզիներ, ԱՄՆ, որպեսզի նա կարողանար շարունակել իր ուսումը: Քանի որ նա ուներ ուսանողական վիզա, Երեց Վոնգը կարող էր աշխատել շաբաթական միայն 20 ժամ: «Մենք պետք է իսկապես գործադրեինք մեր հավատքը և աղոթքները»,- ասել է նա իր ընտանիքին աջակցելու վերաբերյալ:

Նա ջանասիրաբար աշխատեց կրթաթոշակ ստանալու համար, ապա նա վերցրեց այնքան լրացուցիչ ժամեր, որքան համալսարանը թույլ կտար: «Դա հեշտ չէր»,- հիշում է նա: «Երբ մենք անցնում էինք այդ փորձառության միջով, մենք գիտեինք, որ կարող էինք միշտ վստահել երկնքի զորությանը»:

Վոնգերը կնքվեցին Լայ Հավայան Տաճարում 1984թ. օգոստոսի 9-ին և ծնվեց նրանց առաջին զավակը, ևս երեք երեխա հետագայում միացան ընտանիքին: «Այդ տարիները շատ յուրահատուկ էին, շատ սուրբ»,- ասել է Երեց Վոնգը:

Երեց Վոնգը բակալավրի գիտությունների աստիճան ստացավ որպես հաշվապահ և դրան զուգահեռ գիտությունների աստիճան որպես համակարգիչների մասնագետ. ապա նա կարիք զգաց «վերադառնալու Հոնգ Կոնգ ծառայելու»:

Նա ավելի ուշ Գործավար Կառավարման Մագիստրոսի կոչում ստացավ Հոնգ Կոնգի Բաց Համալսարանում: Երեց Վոնգը բիզնեսի և որակի մասնագիտական խորհրդակցության կազմակերպության հիմնադիրն է և գործընկերը, նա նաև աշխատել է նյութերի փորձարկման և ստուգման կազմակերպությունում, որտեղ սկսել է որպես գլխավոր հաշվապահ և հեռացել է կազմակերպությունից որպես գործադիր տնօրենի տեղակալ:

Նախքան որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամ հաստատվելը՝ 2014թ. ապրիլի 5-ին նա ծառայել է որպես եպիսկոպոս, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական: ■

Երեց Լարի Ս. Քաչեր

Յոթանասունի Երկրորդ Քվորում

Իր երիտասարդ չափահասության տարիների բազմաթիվ հուշումներից հետո Երեց Լարի Ս. Քաչերը սկսեց նկատել մի ավելի մեծ զորություն, որն առաջնորդում էր նրան իր կյանքում: 19 տարեկան հասակում Հոգու հանդեպ զգայուն լինելը առաջնորդեց նրան դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը, որն ամեն ինչ փոխեց:

Նա ծնվել է 1952թ. փետրվարի 12-ին, լինելով հինգ երեխաներից երկրորդը Ալբերտ և Էլեյն Քաչերների ընտանիքում: Նա մեծացել է Բլումինգթոնում, Մինեսոտա, ԱՄՆ:

Ավագ դպրոցից հետո նա գնաց Եվրոպա դահուկներով սահելու, և ավելի քան վեց ամիս հետո այնտեղ նա զգաց, որ պետք է տուն վերադառնար: Երբ արդեն տանն էր, նա զգաց, կարծես, պետք է մեկ այլ վայրում լիներ, սակայն չգիտեր, թե որտեղ: Մանկության ընկերներից մեկը ծրագրում էր տեղափոխվել Յուտա, և Երեց Քաչերը որոշեց տեղափոխվել նրա հետ: Մինչ Յուտայում էր, Երեց Քաչերը ընդունվեց Բրիգամ Յանգի Համալսարանում, սովորեց Եկեղեցու մասին և մկրտվեց:

«Երբ միսիոներները սովորեցնում էին մեզ, ես զգացի, որ դա ճիշտ էր»,- ասում է նա: «Երբ ես աղոթեցի, ես զգացի, որ Եկեղեցին ճշմարիտ էր»:

Նա որոշեց միսիա ծառայել և կանչվեց Թահիթի Փափիթ Միսիա 1973թ.: Տուն վերադառնալուց հետո նա շարունակեց ուսումը ԲՅՀ-ում, որտեղ նա հանդիպեց Փոլին Միլերին: Նրանք ամուսնացան Մանթի Յուտա Տաճարում 1976թ. հոկտեմբերի 29-ին, և այժմ ունեն վեց երեխա և 11 թոռ:

Երեց Քաչերը բակալավրի աստիճան ստացավ հոգեբանության բաժնում և մագիստրոսի աստիճան կազմակերպչական վարքագծի բնագավառում, երկուսն էլ՝ ԲՅՀ-ում: Նրա աշխատանքը ներառում էր մեծ ընկերությունների համար խորհրդատվություն ապահովելը ազգային և միջազգային մակարդակներով:

Նախքան 2014թ. ապրիլի 5-ին որպես Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամ հաստատվելը Երեց Քաչերը ծառայել է որպես ճյուղի նախագահ, երեցների քվորումի նախագահ, եպիսկոպոս և ցցի նախագահի խորհրդական: Նա նախագահում էր Շվեցարիա Ժնև Միսիայում 2000–2003թթ.: Շվեցարիայից վերադառնալուց հետո մի քանի տարի անց նրա աշխատանքը տարավ նրան Աբու Դաբի, Արաբական Միացյալ Էմիրություններ, որտեղ նա կանչվեց ծառայելու որպես առաջին Տարածքային Յոթանասունական Միջին Արևելքում: ■

Երեց Հյուգո Ի. Մարտինեզ

Յոթանասունի Երկրորդ Քվորում

1982թ. Երեց Հյուգո Ի. Մարտինեզը և նրա կինը՝ Քույր Նուրիա Ալվարեզ դե Մարտինեզը, երկուսն էլ Միսիսիպիում, ԱՄՆ, անցնում էին իրենց բժշկական ուսուցումը երկրում ապրելու օրինական իրավունքի համար, երբ դուռն անսպասելիորեն թակեցին:

Այնտեղ կանգնած էին երկու մորմոն միսիոներներ:

«Մենք ներս հրավիրեցինք նրանց, սակայն մենք ոչինչ չգիտեինք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին: Մենք նույնիսկ չգիտեինք Մորմոնական Թաբերնաքլի Երգչախմբի մասին»,- ժպտալով ասում է Երեց Մարտինեզը:

Այնուամենայնիվ, երեցների կիսած ավետարանի դասերն անմիջապես արձագանք գտան երիտասարդ զույգի կյանքում: Նրանք շուտով ընդունեցին միսիոներների մկրտվելու հրավերը:

«Եվ այդ պահից սկսած մենք այլևս երբեք հետ չենք նայել»:

2014թ. ապրիլի 5-ին Երեց Մարտինեզը կանչվեց Յոթանասունի Երկրորդ Քվորում, դառնալով առաջին Բարձրագույն Իշխանավորը Կարիբյան կղզիներից: Նա հասկանալի պատճառներով «հեղեղվեց» իր նոր հանձնարարությամբ:

«Սակայն այնուհետև խաղաղության քաղցր զգացում պատեց ինձ և հայտնեց, որ Տերը կանի Իր գործը», - ասում է նա:

Իրենց մկրտությունից մեկ տարի և մեկ ամիս հետո Հյուգո և Նուրիա Մարտինեզները կնքվեցին Սոլթ Լեյքի Տաճարում 1983թ. հոկտեմբերի 3-ին: Նրանք հինգ երեխաների ծնողներ են և ունեն հինգ թոռնուհիներ:

Երեց Մարտինեզը ծնվել է 1957թ. հունվարի 10-ին Պուերտո Ռիկոյում Հյուգո Ի. Մարտինեզ-Սանդինի և Դելի Մորալեզ-Ալամո դե Մարտինեզի ընտանիքում: Դեռ պատանեկության տարիներից նա ընտրեց հետևելու իր հոր մասնագիտական ուղին և դառնալ բժիշկ: Նա իր բժշկի աստիճանը ստացավ Պուերտո Ռիկոյի Համալսարանում (1981թ.) և ավարտեց իր ուսումը Միսիսիպիի Համալսարանում (1984թ.): Նա աշխատեց որպես բժիշկ մինչև թոշակի անցնելը՝ 2004թ.:

Իր մկրտությունից կարճ ժամանակ անց նա կանչվեց լինելու երիտասարդների Կիրակնօրյա Դպրոցի ուսուցիչ: Նա հետագայում ծառայեց որպես եպիսկոպոս, ցցի նախագահության խորհրդական, շրջանի նախագահ և Պուերտո Ռիկո Սան Խուան Միսիայի նախագահության խորհրդական: Նա նաև նախագահել է Գվատեմալայի Գվատեմալա Սիթի Կենտրոնական Միսիայում և ծառայում էր որպես Տարածքային Յոթանասունական, երբ կանչվեց լինելու Բարձրագույն Իշխանավոր: ■

Թեդ Ռ. Քալիստեր

Կիրակնօրյա դպրոցի գերագույն նախագահ

Որպես Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահ ներկայիս կոչումը ստանալուց տասնամյակներ առաջ Կիրակնօրյա Դպրոցը առանցքային դեր է խաղացել Թեդ Ռ. Քալիստերի կյանքում:

Մինչ Եղբայր Քալիստերը ծառայում էր որպես Կիրակնօրյա Դպրոցի նախագահ Բրիգամ Յանգի Համալսարանի ծխում, նա ծանոթացավ իր ապագա կնոջ՝ Քեթրին Լ. Սափորիթիի հետ, ում հետ նա ամուսնացավ 1968թ. դեկտեմբերի 20-ին Լոս Անջելեսի Տաճարում:

Նրանք երկու դուստրերի և չորս որդիների ծնող են, նաև ունեն 24 թոռ: «Շատ լավ բաներ են տեղի ունենում, երբ դուք Կիրակնօրյա Դպրոցի նախագահ եք»,- ասում է Եղբայր Քալիստերը:

Ծնվելով 1945թ. դեկտեմբերի 17-ին Գլենդելում, Կալիֆորնիա, Ռիդ Էդդինգթոնի և Նորին Քալիստերի ընտանիքում, նա հայտարարում է, որ նա, ինչպես Նեփին, ծնվել է «լավ ծնողներից»:

«Հայրս իմ եպիսկոպոսն էր, երբ ես պատանի էի»,- ասում է Եղբայր Քալիստերը: «Նա իր մոտ միշտ ունենում էր փոքրիկ քարտեր, և նա անգիր էր սովորում բառարանից դուրս գրած բառեր, սուրբ գրություններ և Շեքսպիր»:

Իր հոր նման՝ Եղբայր Քալիստերը հետամուտ եղավ իրավաբանական կարիերային: Բրիգամ Յանգի Համալսարանում հաշվապահական բաժինն ավարտելուց հետո նա հաճախեց իրավաբանական դպրոց Կալիֆորնիայի Համալսարանում, Լոս Անջելես, և մագիստրոսի աստիճան ստացավ Նյու Յորքի Համալսարանի հարկային օրենքների բաժնում: Նա աշխատանքի անցավ որպես գործող փաստաբան Քալիստեր և Քալիստեր ընկերությունում:

Իր կոչման ժամանակ Եղբայր Քալիստերը նոր էր ազատվել Յոթանասունի Նախագահության և Յոթանասունի Երկրորդ Քվորումի իր կոչումից, որտեղ նա ծառայել էր սկսած 2008թ.:

Նախքան այդ նա ծառայել էր որպես Կանադա Տորոնտո Արևելյան Միսիայի նախագահ, Տարածաշրջանի Յոթանասունական, տարածքային ներկայացուցիչ, ցցի նախագահ, եպիսկոպոս, ցցի միսիայի նախագահ, երեցների քվորումի նախագահ, իսկ որպես երիտասարդ տղամարդ միսիա է ծառայել Արևելյան Ատլանտյան Նահանգների Միսիայում:

Մեկնաբանելով չափահասների Կիրակնօրյա Դպրոցի գալիք ուսումնական ծրագրերը՝ Եղբայր Քալիստերն ասել է. «Այս ուսումնական ծրագիրն, իհարկե, շատ կարևոր է, սակայն այնքան կարևոր չէ, որքան այն, թե ինչպես են մարդիկ ուսուցանում: Ամենակարևորն այն է, որ մենք ուսուցանենք Փրկչի նման, որ մենք սովորեցնենք Հոգով և որ մենք սովորեցնենք դարձի բերելու համար»: ■

Ջոն Ս. Թաններ

Կիրակնօրյա Դպրոցի Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

Հր մանկությունից սկսած Ջոն Սերրս Թանները ուրախություն է գտել սովորելու մեջ:

Այդ ոգևորությունը տարածվել է կրթության, կարիերայի և ավետարանն ուսուցանելու նրա բազմաթիվ հնարավորությունների վրա. առաջինը որպես միսիոներ Բրազիլիա Հարավային Միսիայում և հետո որպես եպիսկոպոս, ցցի նախագահ, ավագ խորհրդատու, Ավետարանի Վարդապետությունների ուսուցիչ, Բրազիլիա Սան Պաուլո Հարավային Միսիայի նախագահ (որն ավարտվում է այս ամառ) և այժմ որպես Կրկակնօրյա Դպրոցի գերագույն նախագահության առաջին խորհրդական:

«Երբ [ուսուցումը] ճիշտ է կատարվում, Սուրբ Հոգին այնտեղ է լինում և դուք զգում եք սովորելու ոգևորությունը. ձեզ թվում է, թե սուրբ հողի վրա եք»,- ասում է Նախագահ Թանները:

Նախագահ Թանները ծնվել է Սոլթ Լեյք Սիթիում 1950թ. հուլիսի 27-ին Վիլյամ Քոթս Թաններ կրտսերի և Աթելիա Սերրս Թանների ընտանիքում: Նա մեծացել է Հարավային Փասադենայում, Կալիֆորնիա, ԱՄՆ, լինելով 13 երեխաներից հինգերորդը: Նրա ծնողները տանը ստեղծել էին հարուստ ուսումնական միջավայր, ներառելով ամուր ավետարանական առանցք: «Ես չեմ հիշում, որ եկեղեցում սովորեի մի բան, ինչն արդեն սովորած չլինեի տանը»,- ասում է նա: Նրա մեջ նաև մեծ սեր առաջացավ դեպի գրականությունը, որն ավելի խորացավ, երբ նա անգլերեն լեզվի բնագավառում աստիճան ստացավ Բրիգամ Յանգի Համալսարանում և դոկտորի աստիճան՝ Կալիֆորնիայի Համալսարանում, Բերքլի:

ԲՅՀ-ում նա հանդիպեց Սյուզան Վինդերին: Նրանք լավ ընկերներ դարձան, որն ամուր հիմք հանդիսացավ հետագայում ռոմանտիկ հարաբերությունների համար: Նրանք ամուսնացան Սոլթ Լեյքի Տաճարում 1974թ.: Միասին նրանք մեծացրել են հինգ երեխա:

Նախագահ Թանները սկսեց իր գիտական կարիերան որպես դասախոսի օգնական Ֆլորիդայի Պետական Համալսարանում: Նա դարձավ ֆակուլտետի անդամ ԲՅՀ-ում 1982թ.: Նա այնուհետև աշխատել է այնտեղ որպես օգնական, դոցենտ, անգլերենի դասախոս և որպես ամբիոնի վարիչ և ակադեմիայի փոխնախագահ:

Ավետարանի ուսուցման ամենակարևոր մասը, ասում է նա, առաջ է գալիս մի բանից, ինչը նա սովորել է իր կարիերայի վաղ տարիներին. ուսուցումը պետք է տրվի ոչ թե վախի մթնոլորտում և մղվի փառասիրությունից, այլ տրվի սիրով, գթությամբ, Քրիստոսի մաքուր սիրով: ■

Դեվին Գ. Դյուրան

Կիրակնօրյա Դպրոցի Գերագույն Նախագահություն Երկրորդ Խորհրդական

Երբ Դեվին Գ. Դյուրանը կանչվեց որպես Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահության երկրորդ խորհրդական, հնարավոր է, որ Եկեղեցու շատ անդամներ վերհիշեցին նրա փառավոր օրերը Բրիգամ Յանգի Համալսարանի բասկետբոլի թիմում:

Սպորտը, իհարկե, կարևոր դեր է խաղացել Նախագահ Դյուրանի կյանքում: Նա նույնիսկ մեկ մրցաշրջան անցկացրեց Միացյալ Նահանգների առաջնությունում լավագույն խաղացողների դեմ: Սակայն նա եղել է շատ ավելին, քան աստղային մարզիկ. նա եղել է միսիոներ Մադրիդում, Իսպանիա, ամուսին, հայր, պապիկ, գրող, բիզնեսմեն, հավատարիմ անդամ և Տեխաս Դալլաս Միսիայի նախագահը վերջին երկուսուկես տարվա ընթացքում:

Նախագահ Դյուրանը ծնվել է 1960թ. հոկտեմբերի 20-ին Բրիգամ Սիթիում, Յուտա: Նա ասում է, որ իր մանկության տունը առանցքային դեր է ունեցել կյանքի այդ դերերից յուրաքանչյուրի համար պատրաստվելիս: Նրա ծնողները՝ Ջորջ և Մերիլին Դյուրանները շնորհալի ուսուցիչներ էին:

«Իհարկե, նրանք ուսուցանում էին իրենց խոսքերի միջոցով, սակայն, իրականում, մեծ ուսուցումը, որ ես ստացել եմ տանը, ինձ տրվել է, երբ դիտել եմ, թե ինչպես են նրանք ապրել իրենց կյանքը»:

Նախագահ Դյուրանը և նրա կինը՝ Ջուլի Մինք Դյուրանը, լավ գիտեն ուժեղ ուսուցիչների կարևորությունը ապագա միսիոներների նախապատրաստման հարցում:

«[Ապագա միսիոներները] լինում են լավ ուսուցանված իրենց ծնողների կողմից տանը և իրենց ուսուցիչների կողմից եկեղեցում և սեմինարիայի ու ինստիտուտի գերազանց ծրագրերում»:

Կիրակնօրյա Դպրոցի ծրագիրը, ավելացնում է նա, թույլ է տալիս բոլոր տարիքի ուսուցիչներին և ուսանողներին «ուսուցանել Փրկչի ձևով»:

Նախագահ և Քույր Դյուրանները ամուսնացել են Սոլթ Լեյք Սիթիի Տաճարում 1983թ. ապրիլի 23-ին, վեց զավակների ծնողներ են և ունեն վեց թոռ:

Նախքան որպես միսիայի նախագահ կանչվելը նա ծառայել է որպես եպիսկոպոս, ցցի նախագահության խորհրդական, ցցի Կիրակնօրյա Դպրոցի նախագահության անդամ և ինստիտուտի ուսուցիչ:

Նա ստացել է բակալավրի աստիճան Ամերիկյան Հետազոտությունների գծով Բրիգամ Յանգի Համալսարանում և մագիստրոսի աստիճան Յուտայի Համալսարանում: Նա անշարժ գույքի ներդրումային ընկերության սեփականատեր է: ■

© ELSEPTH YOUNG, ՀԻՆԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ

Պայծառ լույսը, Էլսփեթ Յանգ

1830թ. Բաահակ Մորլին 12-ամյա Մերի Էլիզաբեթ Ռոլինսին ժամանակավորապես տվեց իր նոր Մորմոնի Գիրքը: Քանի որ այդ ժամանակ դա Քիրթլենդում, Օհայո, Մորմոնի Գրքի միակ օրինակն էր, նոր մկրտված Մերի Էլիզաբեթը և նրա ընտանիքը հերթով կարդում էին այն մինչև ուշ գիշեր: Վաղ առավոտյան նա կրկին բացեց գիրքը և հիշողության մեջ պահեց 1 Նեփիի առաջին տողերը: Կտավի վրա պատկերված լույսը խորհրդանշում է այն լույսը, որը պատեց Մերի Էլիզաբեթին, երբ նա կարդում էր:

«Խորհելով ուղերձների շուրջ, որոնք մենք ստացանք, թող որ մենք վճռական լինենք անելու մի փոքր ավելի լավ, քան անցյալում», - ասաց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Եկեղեցու 184-րդ ամենամյա գերագույն համաժողովի փակման նիստին: «Թող որ մենք լինենք բարի և սիրալիր նրանց հանդեպ, ովքեր չեն կիսում մեր համոզմունքները և մեր չափանիշները: Փրկիչը բոլոր տղամարդկանց և կանանց տվեց սիրո և բարի կամքի ուղերձը: Եկեք միշտ հետևենք Նրա օրինակին»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021098520 1 4